








Ա

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՎԵՊ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՊՐՈՖ. ՄԱՆՈՒԿԱԲԵՂՅԱՆԻ



ՅԵՐԵՎԱՆ




ԱՍՆԱ ԾՈՒԵՐ

ԽՄԲԱԳՐԵՑ
ՊՐՈՖ.ԻՐ.ՄԱՆՈՒԿԱԲԵԳՅԱՆ
ԱՀԽԱՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԿԱՐԱՊԵՏ Մ.ՀԱՆՉԱՆՑԱՆԻ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Մատենադարանի գրադարանավար Հակոբ Գոջոյանի
Վիմագրական ձեռնարկների կատարող՝ նկարիչ Ե. Գաճյոնի
Տնօրինական խմբագիր Մխոան Եփրիկի
Սրբագրիչ՝ Վաճրամ Մաճունցյանի
Վերանայիչ սրբագրիչ՝ Մ. Ալիխ-Ճաճյանցյանի
Նախապատրաստական աշխատանքներ Մուրինճյանցի
Ամբողջ հատորը շարել յեվ էջերը կազմել է Մաճովի
Տպագրել է Գոռոռիսի անվան բրիգադը
Տպագիրը կատարվել է Մաճաի Լաբոյանի դեկավարությամբ
Ամբողջ ձեռնարկը կատարվել է Պետհրատի տպարանում
Գլավլիտ. 8753, 272. Հրատարակ. 3188. Պատվեր 1707. Տիրաժ 5000.
Թուղթը վիխլոխմ գործարանի. չափը 72×105.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ, ԵՐԵՎԱՆ



Գրող. Մանուկ Աբեղյան





ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ»

1. ՎԵՊԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏ

Ինչպես այլ ժողովուրդների ավանդական վիպերի և մեր հին «Վիպասանքի», նույնպես և մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի հիմնական նյութն ընդհանրապես կազմել են պատմական իրադարձությունները, իրական դեմքերն ու անցքերը։

Ժողովուրդների և պատակարգերի կյանքում կարևոր նշանակություն ունեցող դեպքերը խոր ազդեցություն թողնելով մանավանդ նրանց շրջապատի վրա՝ սովորաբար առաջ են բերում բազմաթիվ զրույցներ, անհատականացրեն խիստ չափազանցված պատմվածքներ ու լեգենդ. ապա մի քանի սերունդ հետո կազմվում են հաճախ նաև ընդարձակ ավանդություններ։ Բացի դրանից՝ դեպքերի դրդիչ մասնակիցները, դեկավարները և ֆեոդալները իրենք էլ աշխատում են իրենց անվան հետ կապ ունեցող իրադարձությունը հավերժացնել, պատվեր տալով իրենց գովերգելու և փառաբանելու իրենց արարքները ու սխրագործությունները։ Այսպիսով առնչվում են պատմական զրույցներ ու լեգենդ, վորոնք դիր ու դրականություն չդոյության դարաշրջանում և մինչավայրում պատմական հիշատակարաններ են։

Այսպիսի ավանդություններն ու պատմական լեգենդը, վորոնք հորինվում են դանազան ժամանակներում, սկզբում անջատ-անջատ են ապրում չանպղպզված հասարակության մեջ, բայց հետագայում դրանք հետզհետե օրգանապես միացվում են։ Այս վերջին դեպքում դանազան պատմական անձերի մասին հյուսված զրույցներն ու լեգենդը համախմբվում են այս կամ այն կենտրոնական, մեծագույն ազդեցություն ունեցող կամ բացառիկ համբավ վայելող պատմական դեմքի շուրջը, և այսպիսով առնչվում և վիպական լեգենդի ու զրույցների մի ցիկլ, ապա և ամբողջական վիպասանություն։ Այսպես իրար հետ միա-

ցած պատմվում են վոչ միայն կենսաբոնական դեմքի պատմական սխրագործությունները, այլ և նախորդ ու հաջորդ շրջաններից նույն առնմի կամ անգամ այլ առնմերի նուիրանուն կամ ասքեր անունով հերոսների պատմական գործերը, ինչպես նաև ամեն տեսակի զրույցներ և ավանդություններ Այոպիսի բանահյուսական յերկերի մեջ վերանում են նախորդ շրջանի յերգերի բովանդակության ու ձեվի առանձնահատկությունները և խառնում են գեղարվեստական պատկերավորման յեղանակներն ու գույները, մի խոսքով՝ անցյալի ժառանգությունը վերամշակության և յենթարկվում, հարմարվելով նոր միջավայրին և նոր ժամանակաշրջանի ճաշակին ու քաղաքական-իդեոլոգիական պահանջներին. Տարբեր շրջանների պատկանող վիպական յերգերի բովանդակության ու ձեվի այսպիսի առեղծագործական հարաբերությունը (կոնտամինացիա) բնականաբար առաջացնում է վիպական յերկերի մեջ այնքան բնորոշ անաքրոնիզմները։

Այսպես են ծագել վիպական-պատմական յերգերն ընդհանրապես և առեղծվել սիրող դասակարգերին պատկանող հերոսական վեպերը։ Այսպես են ծագել և կազմվել և մեր հին վեպերը՝ «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», այլ և մեր նոր ժողովրդական վեպը՝ «Սասնա ծռերը»։

2. ՍԱՍՆԱՄԵՐԻ ՑԵՂ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՎԵՊԸ

«Սասնա ծռերին» պիտավոր հերոսները կազմում են յերեք սերունդ՝ Սանասար, Սանասարի վորդին՝ Դավիթ և սրա վորդին՝ Մհեր։ Մի քանի պատումների մեջ առաջ և յեկել նաև մի յերկրորդ Մհեր (Ասյուծածնվ Մհեր), իբրև Սանասարի վորդի, վորի վորդին և Դավիթը։ Մի յերկու պատումի մեջ այս սերունդներին ավելանում և Դավթի վորդի Պռոշիկ Մհերի վորդին (անունը մոռացված է), վորով վերջանում և «ծռերին» առնմը, և կամ մեկ Դավիթը բաժանվում և յերկուսի։

Յերեք հիմնական հերոսների շուրջը խմբված են ուրիշ դրվող անձեր՝ Սանասարի յեղբայր Բաղդասարը (Աբամելիք, Աբամելիք, Ադնամելիք՝ նայած պատումներին), Զենով Հովան, Ցռան Վերդո, Քեռի Թորոս, Խանդութ, Գոհար, Պարոն Ասողիկ, Խոր Մանուկ և ուրիշները։

Այստեղ չենք կարող մանրամասն կանգ առնել այն մասին, թե ինչպիսի վիպական տարրերից և կազմված մեր այս վեպի

*ամեն մի ճյուղը։ Տալիս ենք միայն համառոտ դծերով մի ընդհանուր պատկեր։**

«Սասնա ծռերի» ճյուղերից ասացինք՝ Սանասարի վեպի սկզբնական պրոյեկտն առնված է «Աստվածաշնչից», որն իր հերթին այդ քաղել է ժողովրդի բերանից, բանահյուսական աղբյուրից։ Այստեղ (Թագ. IV, ԺԸ, ԺԹ., Մնացորդաց, II, ԼԲ.) պատմված է, թե ինչպես Ասորեստանի Սենեքերիմ թագավորին, երբ նա չերկրպագելիս է եղել աստվածներին, իր որդիները՝ Ադրամելիքն ու Սարասարն սպանում են և փախչում «յերկիրն Արարատայ»։

Քրիստոնեության ազդեցությամբ «Աստվածաշունչն» ընդհանրապես քրիստոնյա աշխարհներում դառնում է սիրող դասակարգերի իդեոլոգիայի անսպառ աղբյուրը։ Հայ ֆեոդալական տներին, ինչպես նաև միջնադարյան քրիստոնյա բոլոր ժողովուրդների ֆեոդալների կղերական գաղափարախոսները ձգտում էին իրենց ֆեոդալ մեկնաների ամենքը սերած համարել «Աստվածաշնչի» այս կամ այն հերոսից։ Այսպես էին հայ միջնադարում Բագրատունիները, Արծրունիները և ուրիշները։ Ահա այս կղերական միտումի համեմատ՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորից սերած են համարել իրենց՝ Ազնյաց նախարարները, Արծրունիք և Գնունիք, ինչպես և Սիմ լեռան, այսինքն՝ Տավրոսի բարձունքների (Տարոնից հարավ) Սանասունքի (Սասունի անվան հին ձևն է) տերերը։ Սրանք իրենց Սանասունք անունը կապել են Սենեքերիմի որդի Սարասարի անվան հետ, վերջինս դարձնելով «Սանասար»։

Այս ավանդության հնությունը մեր դրականության մեջ հաստատում և մինչև Մովսես Խորենացին և Յովհան Մամիկոնյանին

---

* Ճյուղերի, ինչպես և ընդհանրապես այս վեպի մանրամասն վերլուծությունը տեսնել Մ. Աբեղյանի, «Հայ ժողովրդական վեպը» աշխատության մեջ (տպ. «Ազգագրական Հանդես», XIII, XIV, XV, XVI և XVII գրքեր,— 1906—1908 թ. թ., ապա առանձին գրքով արտատպված, Թիֆլիս 1908 թվին)։ Մ. Աբեղյանի աշխատության լույս տեսնելուց հետո ապագրվել են և նոր նյութեր են հրատարակվում են ևս մոտ 40 պատում նոր պատումները հիմնականում պարզում և ճշտում են միայն այդ ուսումնասիրության մեջ արտահայտված տեսակետները։ Այդ աշխատությունը՝ Ն. Գուլտության Պատմության Ինստիտուտի հանձնարարությամբ՝ վերամշակված և, հետը միացրած նաև հին վեպերը, «Հայ վիպական բանահյուսության» վերնագրի ներքո պատրաստության կը հանձնվի դեռ։

«Տարոնի պատերազմը»։ Այստեղ էլ Սանասունքի բնակիչները համարվում են Սանասարի սերունդ։

Մովսես Խորենացին հիշում է (II, է) Արծրունի անունը բացատրող մի առասպել, ըստ որում նա Հայոց Ամենակալ թե՝ «մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակել և հովանի ծառոյ՝ պատանւոյն ծալկացելոյ»։ Այդ ծառը հասկացվում է որթիլ և նիրհող մանուկը՝ Արծրունիների նախնի Սանասարը։ Այս հիշատակությունը ցույց է տալիս, որ Խորենացու ժամանակ արդեն առասպելային դառնում էին Հայաստան փախած յերկու յեղբայրների գործերը զարդարած են յեղել նոր միջադեպերով։*

«Սանդա ծովերի» Սանասարի և Բաղդասարի ճյուղի պատումների մեջ չի հիշվում այդ միջադեպը, բայց վերևի նախնական վարկածում այդ անպայման յեղել է։ Մեր հեքիաթներից մեկի մեջ հիշվում է, որ արծիվը (կամ Զմրուխտ հավքը = պատկական Սիմորգ առասպելական հավքը) հերոսի վրա «քնելիքը փռում ա, շվաք անում, որ դինջ քնի»։** Արդ՝ մեր վեպի մի քանի պատումի մեջ յերևան և գալիս այս հեքիաթի բովանդակությունը Սանասարի և Բաղդասարի համար պատմված։ Բայց այդ՝ յերկու յեղբայրների նախնական գործն ընդարձակվել ու զարդացել և նաև շատ ուրիշ կողմերով՝ նորանոր միջադեպեր և մանրամասներ ընդունելով իր մեջ մանավանդ Սասունի պատմության, ինչպես նաև այլ և այլ առասպելներից և ավանդություններից։ Այդ բոլոր գործերի մեջ առանձնապես աչքի յե ընկնում այն, որ յերկրի իշխողները, ֆեոդալները իրենց հավատարիմ ծառաներին վարձատրում են՝ կալվածներ և ձորեր տալով նրանց, որով և ծագում է մի նոր ազնվական տոհմ՝ իր ժառանգական Սասուն բերդով։ Մյուս կողմից, տեսնում ենք, որ, ըստ հին առասպելական հավատալիքների, յեղբայրներին

---

* Մ. Աբեղյան, «Հայ ժողովրդական առասպելները», Վաղարշապատ 1899 թ., յերես 577—581։

** Տ. Նավասարդյան, «Հայ ժողովրդ. հեքիաթ», թ. 17., Գ. Սրվանձտյան, «Մանանա», յերես 181 և այլն։

«Սանդա ծովերի» պատումներից մի քանիսի մեջ հիշվում է, որ յերկու յեղբայրներից մեկը՝ Բաղդասարը Սասունը հիմնելուց հետո հետաքրքրում, գնում է Իրան և այստեղ արանից առաջ է գալիս Իրանի փոխկրմանական հոչակավոր սերունդը՝ Զալզալի — Թոռամայ-Զալի տոհմը Զալը, որ՝ ըստ մեր վեպի, Բաղդասարի փոքրին է, ըստ «Շահ-Նամեի», անմահ է Սիմորգ թռչունի թևերի

*արված և ծովային ծագում և նրանց վրա պատմված և հին ամպրոպային աստծու կամ դիցապնի առասպելները (Պղնձե քաղաք, Վիշապ, Բառասուն Ճուդ Ծամ և այլն)։**

3. ԴԱՎԻԹ ԱՆԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՁԵՎԸ

«Սասնա ծռերի» յերկրորդ հատվածի, Դավիթի ճյուղի հիմնական մասը կազմված և գլխավորապես Սասունի պատմական հիշողություններից, բայց դա ժամանակի ընթացքում այնքան և խառնվել, այնքան և աճել ու զարդացել, նորանոր պատմական, ինչպես և վիպական-առասպելական միջադեպեր ու մոտիվներ ընդունելով իր մեջ, որ դյուրությամբ չի կենթարկվում պատմական վերլուծության։ Այդ աշխատանքը դժվարանում է նաև նրանով, որ մեզ հայտնի հայ պատմական մատենագրությունը չի հիշում մեր վեպի գոյությունը ժողովրդի մեջ, ինչպես և քիչ տեղեկություններ և հաղորդում Սասունի պատմության մասին։ Սակայն չնայած այդ դժվարություններին, հնարավոր և վեպի մեջ գործող մի շարք հերոսների անուններն ու նրանց գործերը համեմատել պատմական անուննների և պատմական յեղելությունների հետ և վորոշել «Սասնա ծռերի» գլխավոր հերոսի ճյուղի պատմական ժամանակաշրջանը, վեպի կազմության ու զարգացումը։

Մեր յերկրորդ շրջանի մեծ վեպի՝ «Պարսից պատերազմի» հերոսներից մեկի՝ Մուշեղ Մամիկոնյանի սխրագործությունների վեպը, որ պատմում և Փ. Բուզանդը, յերկար հարաստևել և և իր մեջ ընդունելով նոր տարրեր, վերածվել և մի նոր վեպի՝ «Տարոնի պատերազմի» ընդդեմ պարսիկների, որ պատմում և Յովհան Մամիկոնյանը։ Այս վեպը չունի այլ ևս այն ընդհանուր, ամբողջ Հայաստանին վերաբերող բնավորությունը, որ կա «Պարսից պատերազմի» մեջ։ Դա զարձել և Տարոնի տեղական վեպ, որի մեջ մտնում են Մամիկոնյան Մուշեղն և իր ժառանգները՝ Գայլ Վահանն և ուրիշները։ Պարսից թագավորի դրդմամբ արաբները մի քանի անգամ հարձակվում են Տարոնի վրա՝ Մամիկոնյաններին նվաճելու, նրանց սրբազան ս. Կարապետի վանքն ավերելու և այդ իշխաններին հարկի տակ դնելու համար։

---

* Մ. Աբեղյան, «Հայ ժողովրդ. առասպելները», յեր. 96—175։

Աբդարեվ Նրանք սպանում են մի քանի կրոնավորներ, բայց նրանց չեզրնք չի հաջողվում հասնել իրենց նպատակին։ Մամիկոնյանները միշտ հաղթում, կոտորում են հարձակվող թշնամիներին։ Այս «Տարոնի պատերազմին» արդեն մասնակցում են և Սահառաբի սերունդ սասունցիները։ Սասունը, ինչպես և Տարոնն ու այլ հարեվան գավառները Մամիկոնյան իշխանների կալվածներն են։ «Տարոնի պատերազմը» մեր նոր վեպի՝ «Սասնա ծռերի» նախնական ձևերից մեկն է, որ գրի չի առնված մոչ վաղ քան VIII դարը։

Այնուհետեվ մեր վեպի սարերը գանում ենք արաբացի մատենագիր Ել-Վակիդիի հաղորդած մի ուշադրավ վիպական պատմվածքի մեջ, որ այդ հեղինակն առել է անպայման հայերից։* Դա հերոսներ Տարոնն և Մուշ(եղ)ի ամուսնության վեպն է, որ Դավթի և Ծանդուխտի ամուսնության մի հին պատումն է, բավական նման մոչ միայն մեր նոր «Սասնա ծռեր» վեպի այդ հատվածի պատումներին, այլ և Տիլրանուհու վեպին։** Այս վերջին վեպին էլ, ինչպես վկայում է Ղ. Ինճիճյանը, շատ նման է եղել Ծանդուխտի և Դավթի պատմությունը, որ ամեն լավ է եղել XIX դարի սկզբներին Հայաստանում։***

«Տարոնի պատերազմի» և «Աղջիկ Տարոնի» վեպերի մեջ հիշվող Մուշեղն ու Մուշ(եղ)ը միևնույն հերոսներն են։ Վիպական Մուշեղը «Աղջիկ Տարոնի» վեպի մեջ դարձել է արդեն Սասունի Սահառաբ իշխանի որդին և իր կոչվելը և մղում մոչ թե, ինչպես հին պատումների մեջ, պարսիկների դեմ, այլ, պատմական դեպքերի ազդեցությամբ և պատմական հաջորդականության հետեվանքով, նախառումների եղած արաբների դեմ։ Հին վեպից «Աղջիկ Տարոնի» վեպի մեջ մնում է նաև Մուշ(եղ)ի վոտները՝ Ալդնի տեր Բակուրը, որ դավաճանում և հայերին և անցնում արաբների կողմը։ Դա «Պարսից պատերազմի» Աղձնյաց իշխան Բակուրն է, որը նույնպես դավաճանում և հայերին և անցնում պարսիկների կողմը։ Այսպես, ուրեմն, Սասունն վեպի հնագույն պատումի մեջ տեղ է գտել Մուշեղ Մամիկոնյանի վեպը մոչ թե

---

* Ել-Վակիդին (748—823) գրած ունի «Միջագետքի և Հայաստանի նվաճման պատմությունը», որը հետագայում հիմնական փոփոխություններն և հավելումներ չունեցավ։ Հասել է մեզ XII դարի խմբագրությամբ։

** Մ. Աբեղյանց, «Պատմություն Հայոց», I, ԻԲ—Լ։

*** Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» մատենաշարի, Անթ, հատոր II, Վենետիկ 1806 թ., երես 121։

այնպես, ինչպես ավանդված է մեզ Փ. Բուզանդի և Յովհան Մամիկոնյանի «պատմութիւններից» մեջ, այլ կերպարանափոխված, հարմարեցված դարի պատմական և վիպական իրադարձութիւններին, և արդեն հարել է Սասունում հնուց ի վեր պատմվող Սանասարի դրուագին։

Վոր Մուշեղի վեպը վորոշ զարգացման իրոք գոյութիւն է ունեցել և տարածված է յեղել հայերի մեջ, կասկածի ենթակա չեն «Սասնա ծռերի» վերջերս գրի առած չաս համառատ պատումներից մեկը՝ «Մուշեղի պատմութիւնը» (Սասունի բարբառով) ապացույց և դրանս Այստեղ հիշվում է Մշու Թաղավոր Մուշեղը, Դավթի քեռի Թորոսի վորդին, վոր ժամանակակից և Պարսից թագավորներին և կռվում է նրանց դեմ, ինչպես Մուշեղ Մամիկոնյանը Փ. Բուզանդի և Յովհան Մամիկոնյանի «պատմութիւններից» մեջ և ինչպես Մուշ(եղ)ը «Աղջիկ Տարոնի» վեպի մեջ ընդդեմ արաբներին։ Բացի դրանից՝ «Սասնա ծռերի» մյուս պատումների մեջ, վորպես դերապրումներ, լսվում է դեռ «Պարսից պատերազմ» վեպի արձագանքը։ Այստեղ հանդես են գալիս հին վեպի պարսիկ հերոսներից՝ Շապուհ արքան (Շապուհ Երկրորդ, Շապուհ արքան, Շրպլքան Քորասական և այլն), վորի դերն ընդհանրապես կատարում է Բաղդադի խալիֆան կամ Մարա Մելիքը։ հիշվում է և Մուշեղը, բայց շատ աննշան դերի մեջ։ Նրան պատմականորեն, հետևաբար և վիպականորեն, հաջորդել է Դավիթը։

Ո՞վ է այս Դավիթն և նրա հետ գործող Քեռի Թորոսը, Զենով Հովհաննն և մյուս հերոսները։ Ի՞նչ իրական-պատմական անցքերի և անուններին հիշողութիւններ են վիպական ձևի տակ պահպանված «Սասնա ծռերի» Դավթյան հյուղի մեջ։

Դա վերաբերում է դվինավորապես Սասունի իշխանութիւնն արաբական տիրապետութեան շրջանում և տևում է մինչև XIII դարի կեսերը, մինչև Բաղդադի խալիֆայութեան անկումը։

4. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական նվաճողական արշավանքների սկզբնական շրջանում, յերբ Արաբիայի անապատի բնակիչները VII դարի կեսերին դիմում են Հայաստանի վրա, այստեղ հզորանում և քաղաքական դեկավար դեր ու նշանակութիւն է ստանում Իշխունյաց նախարարական տունը հանձին Թեոդորոս Իշխունու (=վիպա-

կան Թևոր Թորոս)։ Արաբական արշավանքների սարսափի ազդեցությամբ հայ նախարարներից շատերը լքվում են, և Թևոդորոս Ռշտունին է, որ կազմակերպում և վանում լճի հարավային կողմերը նախարարներին և հենվելով Բիզանդական կայսրության աջակցության վրա՝ կարողանում է բավարարել ճակատամարտներում դիմադրել արաբների առաջխաղացմանը։ Թեոդորոսի հակաարաբական քաղաքականությունը չի տևում։ Շուտով անհնարին բիզանդական քաղաքական չկրկնվելու, միաժամանակ արաբների հաղթական արշավը դեպի հյուսիս, Իրանի նվաճումը, Թեոդորոսը, վորպես ճկուն քաղաքական, կողմնորոշվում և դեպի Արաբական խալիֆայության, ձևաք և բերում նրա վասսալության, կարվում է «Խլխան Հայոց, վրաց, Աղուանից և Սիւնեաց» վրա մինչև Կովկասյան լեռնաշղթան և ձորա պահակը և արաբների ոգնությամբ հալածում և բիզանդացիներին չկրկրից։

Այս նշանավոր անձի արարքներն իր ժամանակին անպայման նյութ են դարձած չեղել պատմական չկրկերի և ավանդություններին, ապա նա առնվել և «Սասնա ծռերի» մեջ իբրեվ Թևոր Թորոս կամ Թեվաթորոս։

Թեոդորոս Ռշտունու քաղաքականության ճկունությունը, ինչպես և ռազմական արագաշարժությունը վխտասաններին, հնազանդյում ժողովրդական ասացողներին, բացատրել են Փիլիկիան խմասում։ Հերոսի անունը Թեվա-Թորոսի վերածելով՝ նրան վերագրել են Թռչելու հատկությունն. նա մի որում Թռչում և Հայաստանի պահապան կողմերն ու չկրկրի պաշտպանության համար բերդեր հիմնում։

Թեոդորոսի քաղաքական խմասության նուչնական ընդգրկված և վեպի մեջ։ Թևոր Թորոսը՝ մանավորապես բան Մշու խմբի պատումների՝ շատ չկրկար և ապրում։ Բանի կան Ագնանց վորդիքը՝ Սասնա ծռերը, նա նրանց խնամատուն խորհրդատուն և։ Սասնա ծռերի վերջին ներկայացուցչի՝ Մհերի վորդու (անունը մոռացված) մանկան լուրը առանալով՝ նա մեռնում և «կսկիծից»։

Թեոդորոս Ռշտունու մահից հետո Ռշտունիների քաղաքական առաջնության չկրկում և և անդի տալիս նորից բարձրացող Մամիկոնյանների առաջ, վորոնք ծանր հարկահանության պատճառով մի քանի անգամ ապստամբում են արաբների, Հայաստի չկ Հյուսիսա Մամիկոնյանի վորդի Մուշեղի ապստամբությունը։

IX դարի կեսերին հայ նախարարական միջավայրում մեծ ազդեցություն են ձեռք բերում Բագրատունիները, որոնք տեր են դառնում նաև Սասունին և Տարոնին։ Դարաշրջանի քաղաքական տեսլականով այդ ընդարձակ կոչվում էր «տուն Հայոց», իսկ նրա տերը «իշխան Հայոց»։ Զգույշ և քաղաքական Բագրատունիները կարճ ժամանակամիջոցում «գնահատում» են իրենց նոր «տունը», ժառանգում են Տարոնի նախկին տերերի՝ Մամիկոնյանների ավանդները ու դիրքը։ Սասունցիները սերտ կապվում են այս նոր տերերի հետ։ Ահա որոնց իշխանության որով և տեղի ունենում քաղաքական այն խոշորագույն իրադարձությունը, որ արտացոլված է մեր վեպի մեջ և կապում է նրա միջուկը։

Վիճն և այդ իրադարձությունը։

Տարոնի և Սասունի իշխան Բագարատ Բագրատունուց, որը «ունէր յայնժամ պղխատութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց» (Թ. Արծրունի) կամ էր «հրամանատար և իշխան իշխանացս Հայոց» (Ցովհաննէս կաթողիկոս), Զաքիր (Մուտավաքիլ 847—861) ամիրապետը հարկ և պահանջում։ Այդ նպատակով Հայաստան ուղարկված Ապուսաթի դործունեության անհաջողության և մահվան Սրան հաջորդում է Զորահայր որդի Աբդնա տեր Մուսեն (ըստ արաբ. մատենագիրների՝ Մուսա իբն Զուբար), որը՝ ըստ արաբական աղբյուրների և Թ. Արծրունու՝ Բագարատ Բագրատունու փեսան էր։ Նա դենքի ուժով և ուղում էր նպատակին հասնել, բայց մեծ չարդ և կրակ նախարարներից Բագարատի կվասդուրիկյամբ և իր կյանքն ազատում է միայն իր կնոջ, Բագարատի քրոջ միջամտության։ Պարսված Մուսեյի փոխարեն Հայաստան է ուղարկվում (851 թ.) Ապուսաթի որդի Յուսուֆը։ Սա գրավում է ամբողջ Հարավային Հայաստանը բացի լեռնային Խույթից, խարեությամբ գերում է Բագարատին և շղթայակապ ուղարկում է ամիրապետի մոտ։ Բագարատի որդիները՝ Աշոտն ու Դավիթը (=վիսպական Դավիթ) ապաստան են և ապաստանում Խույթի լեռնականների մոտ։ Վերջիններս՝ առաջնորդությամբ Բագարատի կեղծյալ Թոռնիկի որդի Հովհաննի (Խույթեցի Յովհան=Զինով Հովան), որ Խույթի տերն էր,*

* Թովմա Արծրունին հիշատակում է մի տանէն Բագրատունեաց Թոռնիկայ որդի» (տեղ. 186), որից հատվածում՝ մի լեռնէն Խույթայ Յովհան», որ Յուսուֆի ապստամբ է (տեղ. 306)։ Ըստ արաբական մատենագիր ալ-Յակուբիի՝

«համադունդ ի մի վայր հաւաքեալ և զմի պինուորութիւն պինուրեալ և յանկարծակի ի վերայ սաբմաթաց յարձակեալ»,* ջարդում են արաբական զորքերը, Յուսուֆին սպանում և ապատում զերին ու ավարը։

Ամիրապետը զայրացած՝ ապատամբների վրա ուղարկում է բազմաթիվ զորքերով Բուղային, որը «... չունալ եկեալ հասեալ ի Տարօն գաւառ և իրրև զկայծակն ինն վայրկենաւոր զպարիսպն արարեալ՝ վաղվաղակի ըմբռնեալ վինէին և որդիքն ևս Բագարատայ ըմբռնելոյ՝ Աշոտ և Դաւիթ ի Բուխայէ հանդերձ այլ ևս իւրեանց ազգակցօքն ևս ի դիպահոլ պնատս եղեալ՝ ապաստակ զօրս իւր սիրէ ընդ ծովծոլս ի վերինն Տօրոսի և ընդ երիս Գաւառին [իմն Մասնոյ]։ Եւ նախ՝ զընակիսլսն ի խոխոմն վերինն զոս ըմբռնէիննն՝ տապաստ երկրի տային անողորմ սրով. իսկ զԳաւառին հնձկապուռնդն զդռեհիկս զոմանս սրոյ ճարակ տային, և զայլս ձերբակալս արարեալ առ բռնաւորն հասուցանէին՝ տոռամբք զնոսա քարշելով։ Իսկ զանձնապետս և զերեւաւորս և զդունեանն արտաքոյ այլոյն սրոհեալ վասն անօրէնն յօրէնս իւրեանց զալձուցանելոյ բան ամիրապետին հրամանի. և զայլս ևս Աշոցականս առ ի նոցանէ հրամայէր սրով վատնել»։**

Բագրատունի իշխանապետունների հետ դերի են բռնվում նաև Բագարատի յեղբայր Թոռնիկի վորդի Հովհաննը (=«ի լեռնէն Խութայ Յովհան»), վորին «ձերբակալ արարեալ... տարան ետուն կապանօք ի բանդ արքունի»— Բաղդադ, վորտեղ ամիրապետը «հրամայեաց ետ փութով ի կենաց բառնալ զդլուխ նորա առանց»։***

IX դարի կեսերին Հայաստանում տեղի ունեցած այս քաղաքական դեպքերը բավական մանրամասն նկարագրված են նաև արաբական մատենագրության մեջ։ Ցերեն նկատի չառնենք հայ և արաբ աղբյուրների ազգային-կրոնական միտումները

Յովհաննը Թոռնիկի վորդին է, իսկ բուն Տարաբերի՝ Յովհաննը Բագրատ Բագրատունու յեղբորորդին եւ Տես Prof. Jos. Markwart, «Südarmenien und die Tigrisquellen. Wien 1930. յերես 298, 495—496 և այլուր։

* Յովհաննէս կաթողիկոս, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912 թ. յերես 116—117. Թովմայ Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս 1917 թ., յերես 201—2. համմ. այս պատմ. դեպքի նկարագրությունը. Բալաձորի, յերես 15 (բնդ.)—21—22 (Քրդմ.). Ցակոբի, յեր. 14 (բնդ.)—20 (Քրդմ.), նաև Տաբարի։

** Յովհաննէս կաթողիկոս, յերես 119։

*** Թովմայ Արծրունի, յերես 306—309։

ու յուրովիրինակ մեկնաբանությունները, ապա քաղաքական, ռազմական, սոցիալական ու տնտեսական միջադեպերն ու հանգամանքները դուգադիպում են իրար։

Մեզ ենք բերում միայն դեպքերին ժամանակակից և մասնակից մատենագիր Ահմեդ Բալաձորիի * վկայությունները։

Հայաստանի պատմության համար հետաքրքրական և նախ հետևյալը. «Ձերբ փոխարքայի կողմից այս յուրկիան (Հայաստան) էր դալիս վրաց վոստիկան, նրան պատրիկները (նախարարները) աշխատում էին անտեսնել Ձեթե նրանք նկատում էին, վոր վոստիկանն անկաշառ է ու խիստ է իր արամադրության տակ ունի ռազմական ուժ և հանդիպձանք, նրանք մուծում էին հարկերն ու հայտնում իրենց հնազանդությունը. հակառակ դեպքում նրանք աշխատում էին դրդռտել նրան և արհամարհանքով վերաբերվել նրանց»։ **

Արարները նվաճված յուրկիաներից հարկ էին պահանջում բացի նյութական բարիքներից նաև վորոշ թվով «տեվահներ, տեվահոն, յուրկար արտեվանությունքներով և բարձրահասակ աղջիկներ ու պատանիներ (համմ. Մարա Մելիքի կամ Բադդադա խալիֆայի հարկահանության «Սասնա ծռերի» մեջ)։ ***

«... Մուտավաքիլը՝ հավատացյալների տերը (847—861)՝ իր խալիֆայության յուրկիտրդ տարին նշանակեց Հայաստանի կառավարիչ Յուսուֆ իբն Մուհամմեդ իբն Յուսուֆ ալ-Մերվազիին (մերվեցի), վորը դալով Թլեթ՝ ձերբակալեց նրա պատրիկ Բագ-

---

* Աբուլ-Աբբաս Ահմեդ իբն Յահյա իբն Ջաբիր ալ-Բալաձորի, ծն. Ցեպիպատասում, նահանջները պարսիկ ծագումով. մեռել է 892 թ.։ Նա դասախոսակի պաշտոնն է վարել խալիֆաների պալատում։ Ունի մի շարք աշխատություններ. յնինգարում են, վոր իր հիմնական գործը՝ «Բիլդան Ֆութուհ ալ-բուլդան» («Գիրք յուրկիաների նվաճման») գրել է իրրև պատվիրք իր տաներն համար։ Դրա մեջ հաջորդաբար նկարագրված են խալիֆայության նվաճումները Մոհամեդից սկսած մինչև 890-ական թվակ։ Համարվում է մատենագիտական աշխատի պատմագրության առաջնակարգ հեղինակություններից մեկը։ Ռուսերեն տես՝ Баладзори „Книга завоевания стран", текст и перевод с арабского проф. П. К. Жузе, Баку 1927. Բալաձորիի յուրկի վորոշ հատվածները թարգմանված են հայերեն. տես «Հանուսածք պատմութեան Հայաստանի քաղեալք յԱրաբացի պատմագրաց ի ձեռն Տաքթոր Մարթիմանայ Արեվելագիտի, թարգմանեց ի հայ կարապետ Ս. Իւթիւճեան, Տետր Ա., կ.-Պոլիս 1874 թ.։

** Անդ, յուր. 15 (ընդ.)—21 (թրգմ.)։

*** Անդ, յուր. 14 (ընդ.)—18 (թրգմ.)։

բաների, Աջոյի վորդուն, և ուղարկից նրան Սուբրա-մին-բայ (=Սամաուա, ամերիկական նավահանգիստ).

Դրանով նա դժգոհություն առաջացրից պատրիկներին, ազատներին և ազատամբներին (խռովարարներին) շրջանում. (Այդ դեռ քիչ ևր). Նրա գավառական կառավարիչներից մեկը՝ ալ-Ալլայ իբն Ահմադ անունով՝ դնաց մի վանք Սանաասունում,* վոր հայտնի ևր Աբիահ վանք** անունով, վորը Հայաստանի քրիստոնյաներք մեծապես հարգում էին և վորին բերում էին շատ նվերներ. պրավից այն ամենը, ինչվոր այնտեղ կար, և վերադարձրեց նրա բնակիչներին [մերձականերին]. Դրանով նա պատրիկների մեջ առաջ բերից ծայր աստիճանի դայրույթ և դրգռություն, և նրանք սկսեցին իրար հետ և հրահրել իրար ապստամբելու և անկախանալուս Հենց նրանք ել դրդեցին խուխենցիներին (الخوبنية) — դրանք (դյուղացի) մշակներ են, վորոնք հայտնի ևն Արիան** անունով,—ապստամբելու Յուսուֆի դեմ և դրդեցին նրանց նրա դեմ այն բանի համար, վոր նա (Յուսուֆը) ուղարկից նրանց պատրիկին (Սամաաա).

---

* Բալաձորիի արար. բնագրում (խր. 15 բնդ.) السيسجان (=Սիսաջան), վոր համարում ենք սխալ գրությունն և իբրև բնիկ ազանության հետևանք, մեքենայաբար առաջացած շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ «Պատմության» մեջ մի քանի անգամ հիշվում է السيسجان (=Սիսական նահանգ). Ուղղում ենք Սանասուն. Պատմական դեպքը տեղի ևն ունենում Յուլիում, Սասունում (Սանասունում) և Տարոնում. Համանման չի, վոր արաբները կոդոպոկում Սիսականի վանքը՝ այնպես դժգոհություն առաջացնելին խուխենցիների մեջ, վոր վերջիններս հարձակվելին և վոչնչացնելին արաբական զորքն ու սպանելին Յուսուֆին. Պարզ է, վանքի դեպքը տեղի ևն ունեցել Սասունում և խուխենցիները—սասունցիներն ել իջել են լեռներից և կոտորել թշնամիներին.

** Աբիա (Աբիահ) վանք دير الاقداح — դեյր ուլ Աբիահ) հատկանում են իրրև քաղհ-ակին բառից առաջացած, և հայ թարգմանիչ Ղ. Ա. Իւթխեանցը թարգմանում է «Սկիհյայ վանք». բայց պետք է կարծել, վոր այդ անունն աղճատված է և նույնն է, ինչվոր նեքևում հիշված Արիան-ը (ارطان). Ցեներգրում ենք, վոր այդ յերկու անվան մեջ պետք է տեսնել Մարթիա(ն) անունը, վոր է Սասունի Մարթիա կամ Մարութա-Մարթիուկ անունով հայտնի լեռը Այտոկ մինչեվ վերջերս գոյություն ուներ Մարթիա կամ Մարութա Առաքածածնի վանքը իրրև մեծ ու հայտնի ուխտատեղի, վոր և քան մեր ժողովրդական վեպի ասմունքում և Կուղբացիներն, և Թամիրը պատահաում է նրանս Աբիան Մարութայի հետ նույնացրել և պրոֆ. Յ. Մարքվարտը, հիշ. աշխ. յերես 221 – 2 հմմտ.

Ինչպես պատրիկները, այնպես էլ բոլոր խռովարարները [խուխեցիներին] ոչնչելու համար ձիավոր և հետևակ մարդիկ ուղարկեցին. և նրանք հարձակվեցին նրա [Յուսուֆի] վրա Տարոնում այն ժամանակ, երբ նա իր մարդկանց ցրել էր գյուղերում, սպանեցին նրան և գրավեցին այն ամենը, ինչ որ կար նրա ճամբարում. Այն ժամանակ հավատացյալների տեր Մուտավաքիլ ալ-ալլահը Հայաստան ուղարկեց իրրևկառավարիչ ավագ Բուղային, որը գալով Բիթլիս՝ ձերբակալեց Մուսա իշն-Զուբայրին, ժեկը նրանցից, որոնք հանակիր եյին Յուսուֆի մահվան և նպաստում եյին դրան [այդ գործին], համակրանք տածելով դեպի Բագրատը. Ապա նա հարձակվեց խուխեցիների վրա, նրանց մեջ մեծ ավերածություն գործեց և նրանցից շատերին գերի վերցրեց. Դրանից հետո նա պաշարեց Ալբակուա (الباق = = Ալբակուա), Աշոտ իշն-Համզա իշն-Զաղիք, Բասիորացյանի պատրիկին,* ստիպեց նրան դուրս գալու իր բերդից և ուղարկեց նրան Սամառա... Այսպիսով հաստատելով յերկրում մի այնպիսի կարգ, որպիսին չի յեղել առաջ, Բուղան վերադարձավ 241 (855/6) թ. Սամառա»։**

Բուղայի ձեռքով գերված հայ նախարարներից շատերը Բաղդադում կրոնափոխ են լինում և ազատություն ստանում. մյուսները, դրանց թվում նաև Խուխեցի Հովհաննը, հավատափոխ չլինելով՝ սպանվում են. կրոնափոխ իշխանների մեջ հիշվում են նաև Բաղարատն և նրա որդիները՝ Աշոտն ու Դավիթը. վերջիններս վերադառնում են հայրենիք. Աշոտը ժառանգում է հոր իշխանությունը և պատմագրերնների մեջ հիշվում է իրրևկ «կորապաղատ Հայոց իշխան», «իշխան Տարօնոյ» (Թ. Արծրունի). իսկ Դավիթը (887—894), որը կրում է «արքա» մականունը, փեսայանում է Արծրունյաց Գրիգոր Դերենիկ իշխանին, առնելով սրա քույր Մարիամին. Հետագայում ամբաստանություն հետևանքով Աշոտն իշխանազուրկ է դառնում, և Դավիթ «արքան» իր աներոջ ոչնչությամբ տիրանում է Սասունին և Տարոնին, ապա բարեհամակամ-խնամիական կապեր հաստատում Բագրատունի առաջին թագավոր՝ իշխանաց իշխան Աշոտ հետ, առնելով իր Աշոտ որդու համար նրա Շապուհ յեղբոր աղջիկը։

---

* Աշոտ իշն Համզա իշն Զաղիք Բասիորացյանի պատրիկ=Վասպուրականի իշխան Աշոտ է տանէն Արծրունյաց, որդի Համազասպայ, որդի Դավիթայ։ Նա Բագարատ Բագրատունու պինակիցն ու քեռորդին (Հոխոխմանի որդին) եւ

** Անդ, յիշեալ 16 (բնգ.)—22 (քրգմ.)։

Դավիթ «արքան» մեռնում է 894 թ.։ Նրա ստեղծած իշխանութիւնը Տարոնում և Սասունում նրա որդի Աշոտն որով չի կարողանում իր անկախութիւնը պաշտպանել անհամասեռ կրօնական ընդվզումներին։ Սրանք «իսմայիլեան մեծ իշխան» Ահմադի առաջնորդութեամբ արշաւում են Հարթավայրին Հայաստանի վրայ։ Հայ իշխանները, մասնաւորապես Արծրունիները, լքում են հայկական ընդհանուր ճակատն և անցնում արաբների կողմը։ Բագրատունի Սմբատ Թագաւորը դուրս է գալիս զորքով ի պաշտպանութիւն Բագրատունիների փեսայ, հայրենական իշխանութիւնից արտաքսված Դավիթեան Աշոտին, սակայն վճռաբեկ պատերազմում Արծրունի իշխանների դաւաճանութեան հետևանքով պարտւում է և կեանքը։ Աշոտն ընդմիշտ զրկւում է հայրենի իշխանական գահից։ Այսպես և վիպական Դավիթի որդի Մհերը, որի «Մհեր» անունը Սասունի XI դարի Մհենիր իշխանից է ծնում։

Արաբական տիրապետութիւնը, սակայն, երկարատև չի լինում։ Շուտով, X դարում, Տարոնն ու Սասունն անցնում են Բիւզանդիային, և նորից Տարոնում հիշւում են մի քանի հայ իշխաններ։

Ոգևորւելով Բիւզանդական կայսրութեան մեջ տիրող ընդհանուր շփոթութիւնից՝ X դարի վերջերին Տարոնին տէր է դառնում Ամիդի Բաղ եղ Կուրդի ամիրան (=վիպական Կուզբադին, Բաղին), ապա քրդական ծագում ունեցող Աբու Ալի իրն Մրվանը և Մրվանեանք (990—1096)։ Սրանց հաջորդում են Սելջուկեան թուրքերը, որոնք նուաճում են համարեա ամբողջ Արեւելեան և Հիւսիսային Հայաստանը։

Վերջին շրջանի քաղաքական-ռազմական իրադարձութիւններն ժամանակ Սասունի տէր եղին անկախ հայ իշխաններ, որոնք վոչ միայն ապահով եղին ասպատակութիւններից՝ շնորհիվ լերկրի անառիկ դիրքի և լեռնցի ժողովրդի քաջութեան, այլ և հաճախ ոգնութեան եղին հասնում դաշնակիցներին։ Սասունի նոր տերերը պատկանում եղին դարձեալ Մամիկոնեան նախարարութեան վերջին ներկայիններին։ Դրանց մեջ մանաւանդ աչքի յեր ընկնում Մուշեղի որդի Թոռնիկ Մամիկոնեանը։ Սրա որով Սասունը նորից հզորանում է։ Թոռնիկն ընդարձակում է իր իշխանութեան սահմանները, գրաւելով Աշմուշատը, Տարոնի մի մասը և Ճապաղջուրը. մի շարք պատերազմներ է ունենում Արեւելքից և Արեւմուտքից արշաւող թուրքերի հետ (1054—1058 թ. թ.), ճա-

կառամարտում Ջարդում և ուրացող Փիլարտոս հայ իշխանին (1072 թ.) և ապա խաբեությամբ ու դավադրությամբ հրավիրվում և Ամբ Թափը անունով ամիրայի մոտ և դաշանից ամբանտար լինում։

Նրա կյանքի այս վերջին միջադեպը նկարագրել և Մատթէոս Ուռհայեցին այսպես.

*«Եւ մինչդեռ կային ի պինարբուն, վաղեաց ամիրայն դաշանաբար (ի վերայ Թոռնկայ) և կամէր սպանանել զնա. և ոչինչ ունէր ընդ իւր Թոռնիկն, բայց փոքր դանակով հարեալ զամիրային՝ ի վայր թափեաց զփոր նորա և զայլոց ամիրայիցն բռնեալ զգլուխն՝ յիրար ծեծեալ սատակեաց. և ինքն ելեալ անվնաս գնայր ի բերդն, վասն զի մօտ էր բերդն. և ամենայն Թուրքն փախստական լինէին առաջի նորա։ Եւ յորժամ գնաց մօտ ի բերդն, մի ոմն ի Թագաւորեան կայր յայլազգեացն, հարեալ զԹոռնիկ սրով ի սիրտն զաղտաբար, և անդէն մեռանէր քաջն Թոռնիկ. և տարան զգլուխն նորա առ Փիլարտոսն։ Եւ անօրէնն Փիլարտոսին հանեալ զսակաւատակ զվնասն՝ արար գաւաթ և նուաւ ըմպէր զվնն, և զինացեալն ի գլխոյն առաքէր առ ամիրայն Մուֆարկնայ (Մրվանյան հարստության իշխող Նիզամ ադ Դաուլիա Նասր, 1061—1079 թ.), և զամենայն մարմին նորա այրէր հրով, զորս յետոյ ժողովեցին զայրեցած զսակերս նորա զան քաջի և առաւածապաշտի, և տարան Թագեցին ի դուռն սրբոյ Կարապետին։ Եւ ինաց իւր երկու որդի՝ Զորաւանէլն և Վասակ՝ ի աղայական հասակին»։**

Թոռնիկի մահից հետո Սասունը շարունակում է իր անկախության պաշտպանությունն և քաղաքական հարաբերությունները հարևան յերկրների հետ մինչև XIII դարի կեսերը։ Ճիշտ է, այդ մասին ընդարձակ պատմական տեղեկություններ չունենք, բայց այն հանգամանքը, որ «Սասնա ծռերի» մեջ հաճախ հիշատակվում են հարևան պետությունները, որինակ՝ Հադրբեջանին, Խլաթի, Մուսուլի, Զղիրա և այլ Թագավորությունները ու քաղաքները՝ Որդուկյանք (1101—1312), Զանդյանք (1127—1250), Շահի Արմեններ (1100—1207) և Աթաբեկության (1136—1225), այդ պարզ ցույց է տալիս, որ Սասունը նման հարաբերություններ ունեցել է իր հարևաններին հետ։

** Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրություն», բ. տպագր., Վաղարշապատ 1898, յերես 209—210։*

Թոռնիկի հաջորդներից հիշվում է Ճորտուանելի որդի Վիգենը կամ Վիրգենը կամ Վիգենը, որի ժամանակ Հլաթի թագավորն է Իբրահիմ Շահի (1112—1127) որդի Մխրան Շահը (1128—1185)։ Այս Իբրահիմ Շահն է, անշուշտ, պահված մեր վեպի մեջ, իբրև Հլաթի տեր Իբրահիմ աղա, որի մոտ է գնում Աբամելիքը։ Վիրգեն իշխանը (= Ճուան Վերդո), հայ պատմիչների ակնարկությունների համեմատ, չկարողանալով Մուֆաթիների Որդուկյաններին դիմադրել, ընդունում է Հլաթի թագավորի (Մխրան Շահի) գերիշխանությունը։ Վիգենի մահից հետո՝ նրա հաջորդները, մասնավորապես Շահնշահը, Մխրան Շահի մոտ արդելված է ճնում, ապա սրա մահից հետո ազատվում, վերադառնում է Սասուն, ընդհատվում Շահի Արմեն բնիկ թամուրի հետ և ընդմիշտ զրկվում իշխանությունից, իսկ Սասունն ու Տարոնը միացվում են Շահի Արմեններին տերությանը։

Թե ինչ պատմական-քաղաքական իրադարձություններ են տեղի ունեցել սրանից հետո Սասունում, այդ հայտնի չեն Սուլթ և միայն մի բան, որ Սալահադինի հիմնած Մսրա (Յեգիպտոսի) Եյուբյան հարստության թագավորները (մելիքները) XIII դարի սկզբներին նվաճում են ամբողջ Հարավային և Արեվմտյան Հայաստանը, դրավում են Հլաթի թագավորությունը, որին այս ժամանակաշրջանում յենթարկվում եր նաև Սասունը։ Եյուբյաններին այս նվաճումների մանրամասնությունները հայտնի չեն, սակայն կարելի չի անտարակուսելի համարել այն, որ սասունցիներն առանց դիմադրության չեն յենթարկվել Մսրա թագավորներին։ Իրա լավագույն ապացույցն է մեր վեպի «Ծռևերի» անընդհատ կռիվը Մսրա Մելիքի դեմ, որ պատմականորեն հաջորդել է Բադդադի խալիֆային։

«Սասնա Ծռևերի» մեջ հաճախ հիշվող Հալեբը Մսրա մելիքների — Եյուբյանների Հայաստանին իշխող մելիքների կենտրոնական քաղաքն եր։

XIII դարի առաջին կեսի վերջին սասնամյակում Եյուբյան հարստությանը Հայաստանում հաջորդում են թաթարները, որոնք Արեվելքից արշավելով Հայաստանի վրա՝ դրավում են համարյա ամբողջ յերկիրը։ Այդ ժամանակ Սասունում նորից հիշվում է հայ իշխանություն։ Թաթարների շրջանի մասին, սակայն, հարկ չկա այստեղ կանգ առնելու, վորովհետև «Սասնա Ծռևերի» մեջ նրանք հանդես չեն գալիս։ Հենց այս վերջին հանգամանքն, ինչպես և վեպի մեջ հիշված իշխանություններն ու

հատուկ անուններն ապացուցում են այն, որ մեր ժողովրդական վեպը հիմնականում կազմվել և մինչեվ XIII դարն հասել է։

Սասունցիների վեպի մեջ պահված և ահա Տարոնի ու Սասունի իշխանության վերը համառոտակի նշած պատմության հիշողությունը։ «Սասնա ծռերի» պատմական միջուկը IX դարու պատմական խոշորագույն դեպքերն են և հարևանության պատճառով արաբների դեմ մղած յերկարատև կռիվը։ Պատմական են միայն դեպքերը, այլ և գործող անունների մեծ մասը։

Վեպի կենտրոնական դեմքը, գլխավոր հերոսը դարձել է Դավիթ Բագրատունին։ Նա, անշուշտ, իր անձնական սխրագործությունների շնորհիվ դեռ կենդանության որով, յերբ Բագրատունիները դեռ քաղաքական դեր չէին խաղացել, ժողովրդական դանդաժների կողմից արժանացել էր «արքա» կոչմանը։

Վիպական Դավթի կյանքի ու գործի մանրակիցն և նրա յեղբայր կամ թե հորեղբայր Զննով Հովանը, որ պատմական դեմք է և, ինչպես տեսանք, պատմական Դավթի հորեղբայր վարդին է, Բագարատ Բագրատունու յեղբայր Թուռնիկի որդի Հովհաննեսը (= Խուբենցի Հովնանը)։*

Վիպական Դավթի յեղբայրներից հիշվում են նաև Ծատան Վերդան (կամ Վեղո, Վերթո և այլն), Խոր Մանուկ, Խոր Թուման, Ճնճղուկ կամ Ճնճղափոքրիկ և ուրիշները։ Այս անունների մեծ մասը, թվում է մեզ, թե մականուններ են և առայժմ պատմական հղգրտման չեն յենթարկվում։ Վերդան հիշվում է իբրև Դավթի ավագ յեղբայր կամ հորեղբայր, որից նա խլում է հայրական գահը։ Այս Վերդա անունը XII դարի Սասունի ճորտացնել իշխանի որդի Վերդենի հիշողությունն է, որին անաքրոնիզմով կապվել է Դավթի հետ և որի իրական դերը Սասունի պատմության մեջ նկատի ունենալով՝ ժողովրդական յերևակայությունը տվել և նրան իր բնորոշ մականունը։

Բաղդադի խալիֆան, որին պատուհասների մեծ մասում փոխանակել է Մսրա Մելիքը, վեպի մեջ ել վիպական ձևով կատարում է նույն դերը, ինչ որ տեսանք իրական պատմության մեջ։

---

* Այս, ինչպես և մյուս հատուկ անունների մասին տես ծանոթագրությունները «Սասնա ծռեր» ժող. վեպի II հատորի վերջում։

Իրական պատմության, ինչպես և վեպի առանցքն և կազմում հարկահանության յունըր։ Հայ և արաբ մատենագիրները բավական մանրամասնությամբ նկարագրում են ծանր հանգամանքների մի այդ միջադեպը հայ-արաբական քաղաքական-տնտեսական հարաբերությունների պատմության մեջ։

Պատմական աղբյուրների Ապուսեթ, Մուսե, Յուսուֆ և Բուղա անուններից միայն վերջինը՝ Բուղայի անունն և հիշվում վեպի մեջ, այն էլ կերպարանափոխված և բոլորովին այլ դերի մեջ։ Սասուն ավերող պատմական Բուղան հանդես և գալիս վեպի մեջ իբրեվ Մարա Մելիքի (Բաղդադի խալիֆայի) փահլևանի, Բաթմանա Բուղան (մի շարք պատումներում նա առաջ Սասնա Մհերի փահլևանն և յեղել), որին հանձնարարված և յեղել սպանել մանուկ Դավթին։

Այդ պատմական հարկահանների փոխանակ վեպի մեջ հարկահանության ամբողջ դեպքը Բաղդադի խալիֆայի կամ Մարա Մելիքի հանձնարարությամբ՝ դեկավարում և Խոլբաշին, Բադին, որը Կուչ, Կուղիկ կամ Խոզ մականուններն և կրում (Կողբադին, Կուղբադին, Ղողբադին, Խողբադին, Պիրաբադին, Կուղբահադին, Կուղիկ Բադիկ և այլն)։* Հաճախ սրան ընկերակցում են Մյուդին և Զաբխադին։ Այս Բադին-Կուղբադին անունը հիշողության և Մրմանյան հարատության հիմնադիր Բադ ամիրայի, որ, ինչպես ասացանք, X դարի յերկրորդ կեսին սիրում և Վանա լճի արևմտյան ափին գտնվող գավառներին։ Վեպը Բադ-Կուղբադինի անձնավորության մեջ ի մի յի հավաքել նախորդ, թևրնվա և հաջորդ շրջանների բոլոր հարկահաններին՝ Ապուսեթին, Յուսուֆին, Մուսեյին և ուրիշներին, ինչպես և վանքերն ավերողներին, վորովհետև նա էլ Մուշ քաղաքի յեկեղեցում խոզխոդել և տալիս քահանաներին։ Բայց այս կուտորածի դեպքն սկզբնապես կատարվել և Դավիթ «արքայի» որով «Մարաթա» վանքում, ինչպես ասացանք վերևում արար մատենագրի վկայության։

Հարկահանության կռվի ընթացքն էլ վեպի և պատմության մեջ դուգադիպում են իրար։ Վեպի մեջ էլ հարկահանները մի քանի անգամ փորձում են Սասունից հարկ հավաքել, բայց հաջողություն չեն ունենում։ Նրանք Կուղբադինի առաջնորդությամբ ավերում են Մարաթուկա վանքը, միաբանությունը կոտորում և

---

* Մականունները հաճախ բուն անվան հետ միացած են արտասանում, համարելով մի ամբողջական անուն։

վանքի ինչքն առ ու ավարի յենթարկում։ Դավիթն ավերման բոլն առնելուն պես՝ հարկահաններին հետապնդում է, կոտորում նրանց, կողոպտնին պատուհասում և առ ու դերին վերադարձնում։ Այս անգամ Սասունի վրա արշավում է ինքը Մսրա Մելիքը (Բաղդադի խալիֆան) անթիվ և անհամար զորքերով։ Պաշտպանությը վերջանում է Դավթի հաղթությամբ, որը մենամարտի մեջ սպանում է Մսրա Մելիքին։

Վերը բերված պատմական վկայություններն ու վեպի անպաճուճ բովանդակությունը նույնանում են. տարբերությունը աննշան է և վիպական ստեղծագործ ոգուն համապատասխան։ Վեպը, փոխանակ առանձին-առանձին հիշատակելու բոլոր դեպքերն ու դեմքերը, փոխանակ թվելու յերկրորդական դեմքերն և պատմելու նրանց մասին, պատմական ամբողջ յեղելությունը կենտրոնացրել և յերկու գլխավոր հերոսների՝ Դավթի և Մսրա Մելիքի (Բաղդադի խալիֆայի) շուրջը։

Վեպի և պատմության մեջ իրադարձությունների հիմնական առանցքը կազմող հարկահանությունից զատ՝ հնարավոր և վիպական մյուս միջադեպերի մի մասն էլ պատմական-իրական դեպքերի հետ նույնացնել, որինակ՝ Դավթի ազգակցական-բարեկամական կապը Մսրա Մելիքի (Բաղդադի խալիֆայի), որպես հավաքական անուն հետո, Դավթի ծերությունը, Դավթի սպանվելը, Մհերի հայրական ժառանգությունից զրկվելն և այլն, և այլն։*

Այսպես, ուրեմն, մեր «Սասնա ծռերն» իր հիմնական մասով, ինչպես և իր ընդհանուր բնավորությամբ, պատմական եւ բայց վեպը դարերի ընթացքում սերնդից սերունդ բանավոր ավանդվելով՝ աճել, զարգացել և նաև բազմազան վիպական և առասպելական այժեաններով ու մոտիվներով, որոնց մի մասը քաղված և ազգային առասպելներից, մյուսը՝ թափառական զրույցներից, վերջիններիս համեմատաբերությունն և հաճախ նույնությունը հարևան ժողովուրդների, հատկապես իրանի և Միջագետքի ժողովուրդների վիպաշխարհի հետ, ակնհայտ են։ Այդ մոտիվների շարքին են պատկանում, որինակ, հերոսների ջրային ծնունդը, կռիվը վիշապների հետ, մանկությունն ու մանկական չարությունները, գերբնական հզորացումը, փորձվելը վայրագ կենդանիների, քաղաքներում վակվելն և այլն։ Անշուշտ այս մոտիվների ուսում-

* Տես Մ. Աբեղյանի, «Հայ ժողովրդական վեպը», յերես 66—92 հավ.

նասիրությունը համեմատական ֆոլկլորիստիկայի տեսանկյունից մեծապես կ'ժամանակի մեր վեպի մի շարք բանահյուսական հնձառոտ խնդիրների լուսաբանմանը։ Դրանից դատ նման մոտիվները և վիճակի չեն պարզելու առհասարակ և ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական ֆորմացիաների վերնաշենքային կարգի չերեվույթներից շատերն և վորոշելու մեր վիպաչխարհի ստուիճանական դարգացումը։

5. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՆՑՈՒՄԸ ԴՑՈՒՂԱՅՈՒԹՅԱՆ

Ինչպես տեսանք, «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը Սասունի և շրջակա գավառների վրա իշխողների ավանդական հեշտաոակարանն և, հիմնված և՛ իրականն, և՛ կեղծ պատմության վրա։ Դա դեղարվեստական-վիպական յեղանակով նկարագրում և դլխավորապես Տարոնում և Սասունում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, դեպքերն ու դեմքերը մինչև XIII դարը. վերարտադրում և Տարոնի և Սասունի այլափոխված պատմությունը, յերբ Հայաստանում տիրապետում եր ֆեոդալիզմը։ Ուստի և այդ վեպը, ինչպես և ընդհանրապես բոլոր պատմական ժողովուրդների հին վեպերը, սկզբնապես արտահայտելիս և յեղել տիրող դասերի՝ ազնվականության և հոգեվորականության կենցաղը, դոյն ու դիտակցությունը, միաքն ու ոտրուանքերը, մի խոսքով՝ վիպական ձևով և բովանդակությամբ նկարագրելիս և յեղել նրանց տեսակետն ու դաղափարախոսությունը։ Դա դերազանցապես ֆեոդալական վեպ և յեղել Ձեվ այդ բնական և, վորովհետև՝ «այն դասակարգը, վոր կարող և տնօրինել նյութական արտադրության միջոցները, դրա շնորհիվ միաժամանակ նա տնօրինում և հոգեվոր արտադրության միջոցները, այնպես վոր դրա շնորհիվ նա իշխում և միաժամանակ ընդհանրապես այն մարդկանց մտքերի վրա, վորոնք միջոցներ չունեն հոգեվոր արտադրության համար» Մեր այս վեպի կազմավորման շրջանում հայկական ֆեոդալիզմը հայ հասարակության նյութական ուժերի միակ տիրապետող դասակարգն եր. ուրեմն և նա պետք և միաժամանակ տիրապետող ուժը հանդիսանար նաև հոգեվոր արտադրության բնագավառում. նա պետք և կարդավորեր իր*

* *Կ. Մարքս-Ֆ. Ենգելս «Լ. Ֆեյերբախի մասին»* [Архив Маркса и Энгельса, книга I, ГИЗ, Москва 1924 г.], *յերես 230։*

ժամանակի մոքերի արտադրությունը։ Բացի այդ՝ նրա մոքերն անհրաժեշտաբար պետք է հանդիսանային դարաշրջանի տիրապետող մոքերը նաև աշխատավոր դասակարգի համար։ Ցեխ խակաս, հայ ռամիկն ու շինականն այս ընդհանուր որենքից բացառություն չեն կազմում։ Նրանք էլ տվյալ և նախորդ ժամանակաշրջաններում չեն կարացել առանց հոգևոր սննդի։

Մեր V գրքի պատմագիր Փ. Բուրանդն արձանագրում է, որ «խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախաթաթաց և կամ շինականութեանն», «որք արտաքոյ քան զդիտութիւն արուեստին էին», շարունակում էին սիրել և վոգեվորվել հայրենի առասպելներով, յերգերով—«եւ զիւրեանց երգս առասպելաց, զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապազորդեալք»։* Պարզ է, որ նաև շինականության կողմից սիրված «երգք առասպելաց»-ը հայոց հին վիպասանության յերգերն են յեղել, որ պահպանության՝ ֆեոդալական դասի հոգևոր արտադրությունն էլին կազմում։ Ցեխ այդ հասկանալի է, որովհետև «իշխող դասակարգի մոքերը յուրաքանչյուր դարաշրջանում հանդիսանում են իրրեև իշխող մոքեր»։

Տիրող դասակարգի հոգևոր արտադրության նման անցումը շահագործվող աշխատավորական զանգվածներին՝ հատուկ է վոչ միայն մեր հին վեպին, այլ բնականորեն նաև մեր նոր վեպին՝ «Սասնա ծռերին»։ Վերջինս առեղծվելով նույնպես իշխող դասակարգին, Սասունի պահպանության միջավայրում և արտահայտվով նրա կեցության ու գաղափարները, ամենավաղ ժամանակաշրջանում անցել և շինականության, դարեր շարունակ բերանից բերան ավանդվել և զարգանալով ու փոփոխության յենթարկվելով՝ հասել մինչեվ մեր որերը։

Վեպի այդպիսի զարգացումն՝ ըստ ձեվի և բովանդակության՝ անխուսափելի և բնական եր։ Բանավոր առեղծագործության մեկից մյուսին ավանդվելով՝ հաճախ հենց մի և նույն ասացողի բերանում կրկին պատմվելիս և ասվելիս, ընդհանրապես փոփոխության և յենթարկվում։ Փոփոխությունները ավելի անխուսափելի յին դառնում և ավելի հիմնական, յերբ մի վորևե պատակարգի սոցիալական միջավայրում առեղծված քաղաքական-հասարակական ու անտեսական հարաբերությունները արտահայտող հոգևոր արտադրությունը բերանացի անցնում և «եպիկա-

* Փ. Բուրանդ, III, ԺԹ։

կան պահպանման համար անհրաժեշտ նախադրյալներ» ունեցող մի այլ դարաշրջան և մի այլ միջավայր, որը ներհակ և առաջինինն վիճակը նոր միջավայրում կարող և հարատևելի, չեթե սոցիալապես ընդունելի համարվի, չեթե համապատասխանի և բավարարի նոր միջավայրի հաշակին և գաղափարախոսությանը։ Հետևաբար պարզ է, որ վիճակի այսպես կոչված խորը փոփոխության չենթարկվի, վերամշակվի, հարմարեցվի, համապատասխան դառնա նոր դասի կամ դասակարգի ինքնամիկային, դասակարգային նոր հարաբերությունների համեմատ, մինչև որ որոշը, անհարաղատը դառնա նոր հասարակության հոգեբանության հարաղատ արտահայտությունը։ Այլ կերպ չի կարելի պատկերացնել սյուժեների և գրական տեսակների (դասակարգային իմաստով) վայրկենքային և վերելքային տեսակները, որովհետև «հասարակության հոգեբանությունը միշտ նպատակահարմար է նրա ինքնամիկայի հանդեպ, միշտ համապատասխանում է նրան, միշտ որոշվում է նրանով»։

Այդ անհրաժեշտ փոփոխությունները տեղի չեն ունենում և՛ անդիտակցաբար, վիճակային մոտիվների միացման, հարակցման կարգով ու նմանությունների դուգորդության միջոցով, և՛ գիտակցաբար, խախտելով սովոր հոգեվոր արտադրության կառուցվածքը՝ վերամշակելով բովանդակությունն ու ձևը, մտցնելով նրա մեջ նոր, հարաղատ գեղարվեստական մատակարկներ և հանելով նրանից անհարաղատները, մի խոսքով, համապատասխան դարձնելով նոր սոցիալական միջավայրի դիտակցությանը։ Այստեղից էլ անխուսափելիորեն առաջ են գալիս բանավոր ստեղծագործության համար այնքան բնորոշ պատմա-սոցիալական և կենցաղային-սովորութային խավավորումները։

Բանահյուսական տեսակներին հատուկ զարգացման այս պրոցեսը բնորոշ է և մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վիպի համար։ Մեր այս վիպին էլ չենթակա չի չեղել կառուցվածքի, բովանդակության և ձևի հիմնական փոփոխության։

Վիպական նման «ձևավափոխման» պատճառն այս է. XIV—XVI դարերում քայքայվում է հայ ֆեոդալական աղնվականությունը որպես դաս։ Վերանում են նրա հետ նաև աղնվականության դասային պրոֆեսիոնալ կերպիչ-վիպասանները, որոնք հովանավորվում էին և սոցիալական պատվեր տատնում մահացող դասակարգից։ Դասային քայքայման այս պրոցեսում «Սասնա ծռեր» ֆեոդալական վիպն իջնում, հասնում է անտեսապես և սոցիա-

լապես ֆեոդալներին ներհակ դասին, այն է՝ շինականությանը։ Այս վայրկյանին, անշուշտ, աստիճանաբար և կատարվել, մինչեվ վոր աղնվականության ավանդները պահպանող և մշակող պալատական կերպիչ-վիպասաններին փոխանակել են գեղջուկ «ասացողները»։ Այսպիսով «Սասնա ծռերի» միակ ժառանգորդն ու պահպանողը դառնում է գյուղացությունը, վոր ապագաղափարական իր դարձել չնորհիվ մի֊ֆեոդալական անվերջ կռիվներն և հայրենի ու ոտար շահագործողների կեղեքման։ Ձեվ այս ֆեոդալական վեպն իր նոր միջավայրում վերջնական «խմբագրության» և յենթարկվել՝ գյուղացական֊աշխատավորական աշխարհայեցության ուղղությամբ։ Վեպի գլխավոր հերոսները վերջնականապես գեղջկացել են և դարձել գյուղացության խոհականների և ձգտումների մարմնացումներ։

Վեպի այս զարգացման հետևանքով, սակայն, աղնվականությունը վեպից դուրս չի ընկել։ Այստեղ էլ յերեվան են գալիս նման առեղծագործական կյանք ապրող նաև ուրիշ ժողովուրդների հին վեպերին հատուկ խավավորումները տարբեր դասերից։ Մինչդեռ մեր հին վեպերի մեջ շինականությունը հանդես չի գալիս, այստեղ՝ մեր նոր վեպի սոցիալական միջավայրի շրջանակները լայնանում են, ներգրավելով ֆեոդալական Հայաստանն իր յերեք հիմնական դասերով՝ աղնվականությունն, հոգևորականությունն և շինականությունն։ Գլխավոր հերոսներն աղնվականներ են։ Սակայն նրանք լրիվ և ցայտուն չեն պահպանել իրենց դասային առանձնահատկությունները. նահատակել և աղնվականի դասակարգային նկարագիրը։ Բայց չնայած այդ հանգամանքին, վեպի մեջ այժմ էլ գոյություն ունեն մի շարք միջադեպեր և դեպապրումներ, վորոնք ցույց են տալիս, վոր վոչ հեռու անցյալում հայ ֆեոդալի գոյն ու դիմակությունը լրիվ արտահայտված է յեղել նրա մեջ։

Վորպես շատ յերկրորդական գործող անձեր, յերեվան են գալիս նաև մի քանի հոգևորականներ՝ յեպիսկոպոս, վարդապետ, քահանա (յերեց, տեր-տեր), սարկավագ և ուրիշներ։ Բայց և այնպես կղերական իդեոլոգիան, վորպես ուրիշ դասակարգի իդեոլոգիա, իշխում է վոչ միայն աղնվականության, այլ և աշխատավորական զանգվածների՝ շինականության կենցաղի և հոգեկան աշխարհի մեջ, որինակ՝ հերոսների վանք շինելը, ուխտագնացությունն, մատաղ անելը, «ցասման ժամ», պատարագ, աղոթքներ, յերդումներ և այլն։

Շինականությունն և նրա ներկայացուցիչները համեմատաբար ավելի շատ են հանդես գալիս, որպես գործող անձեր, քան հոգևորականները։ Նրանք բացառապես պատկանում են գյուղացության ամենաչքավոր խավերին, որինակ՝ վարձու մշակներ, գոբիանավորներ, աղքատ վորբևայրի պառավ, դառնապած, հոբիպապած, նախրորդ և այլն։ Բայց ուշագրավը այն է, որ ամբողջ վեպը յերանգավորված և գյուղացական աշխարհայեցությամբ, գյուղացական առեհասական և սոցիալական հարաբերությամբ։ Նրա մեջ առնված են գյուղական կենցաղային գծեր և սնդեխի միջադեպեր ու զրույցներ, վորոնք հասկանալի յեն գյուղական առեհասական կյանքի պայմաններում։ Աղնվականներն անգամ, վորքան էլ հիշվեն նրանք իրրև իշխողներ, իրենց նիստ ու կացով, մտապատկերներով և ամբողջ դիտակցությամբ, իրենց զրաղմունքով և առհասարակ կենցաղով ընդհանրապես չեն տարբերվում գյուղացիներից։ Լավագույն դեպքում նրանք կարող են համեմատվել ունևոր գյուղացիների հետ։

Գլխավոր հերոսները չքավոր, իրավազուրկ գյուղացության խղճալն են, նրա հզոր պաշտպաններն ընդդեմ շահագործողների, բռնակալների, մի խոսքով՝ առնչապար ժողովրդի պատասպարներն են։ Նրանք զգայուն են դեպի ժողովրդի պահանջները ու ամեն կերպ աշխատում են կատարել նրա կամքը։

Այսպիսով «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը, վոր սկզբնապես աղնվական վեպ և յեղել, իջել և գյուղացական միջավայրը, վերջնականապես «ժողովրդականացել», սերվել ու պահպանվել գյուղացու խրճիթում և հասել նուչնիկ մեր որերը, 1930-ական թվականները։

Ահա այս գնդկացումն և մեր «Սասնա ծռերի» առանձնահատկությունը՝ համեմատած ուրիշ ժողովուրդների դիցաբանական վեպերի և անգամ մեր հին վեպերի հետ։

Այժմ տեսնենք, թե ինչպես և արտացոլվել ժողովրդական կյանքը մեր վեպի մեջ։

6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ՄԵՋ

«Սասնա ծռերը» չի տալիս միջնադարյան Հայաստանի սոցիալական ու առեհասական կյանքի լրիվ պատկերը, չի տալիս իշխողների և հպատակ ամբիկ ժողովրդի փոխհարաբերության-

ների իրական նկարագիրը։ Վեպի մեջ հիշվող մյուս դասերն ու նրանց ներկայացուցիչները (պաշտոնական, հոգևորական, արհեստավոր) իրենց նախա ու կացով, բարքերով, ինչպես ասվեց, շատ չեն տարբերվում մյուս դյուղացիներից։ Համարյա բոլորովին նման և նաև նրանց ներքին, ընտանեկան կյանքի նկարագիրը։

Իշխող դասի՝ թագավորի, պաշտոնյաների, հոգևորականների և աշխատավոր ժողովրդի հարաբերությունները մտերմական են։ Հասարակության սոցիալական շերտավորումը, դասային առանձնահատկությունները, պաշտոնության արտոնությունները ու ամբիկ ժողովրդի կախյալ վիճակը համարյա վերացված են։ Թագավորի և ժողովրդի փոխհարաբերությունները վեր են ածված, կարծես, յերկուսանք կայացրած համաձայնության։ Յեթե վեպի մեջ անդ-ան հիշատակված չլիներին ֆեոդալական հարաբերությունները մատնող մի շարք դեպապրություններ, ապա դժվարությամբ հնարավոր կը լիներ նրա սկզբնական ֆեոդալական բնույթը վորոշել։ Աշխատավոր դյուղացու չարքաշ կյանքը դրների ընթացքում իր անջնջելի կնիքն և դրել վեպի վրա, նահապետական ֆեոդալական հարաբերությունների նկարագիրը և դարձրել դյուղացական-աշխատավորական։ Այդ դեպապրությունները, պաշտպանության սոցիալական գծերը վերաբերում են վոչ միայն Սասունին և նրա թագավորներին, իշխաններին, «ջոջերին»—Ազնանց կամ Ջոջանց տանը, այլ ընդհանրապես ֆեոդալական Հայաստանի տերերին։ Թվենք այդ ֆեոդալական, սոցիալական դեպապրությունների մի քանիսը։

Սասունի տերերն ապրում են իրենց բերդում, վոր շինել են բլրի վրա և պարսպապատած։ Բերդն ունի, ինչպես բոլոր միջնադարյան քաղաքները, «դարպասներ»։ Նրա շուրջը տեղավորված և ամբիկ ժողովուրդը—«քաղաքացիք»։ Պաշտպանները ունին նաև իրենց սեփական զրոսավայրերը, «սեյրանատեղերը», վորտեղ սարը՝ շրջապատված բարձր պարիսպներով, վոր հիշեցնում և Ծննդոց աստառն ու Խորովակերտը (Մ. Խորենացի, II, ԽԱ, Փ. Բուզանդ, III, Ը)։ «Ջոջերը» կառուցում են՝ յեկեղեցի, վանք, կամուրջ, վարձով և ձրի աշխատեցնելով դրանց շինարարության վրա ամբիկ ժողովրդին։ Նրանք ունին մեծ հարստություններ, խաշներ, ձիեր, զինանոցներ, շոմաբաշաններ և այլն։ Սասունը համարում են իրենց առնական սեփականություն—«հայրենին», իսկ իրենց՝ այդ յերկրի ժառանգական տերեր և ունեն ժառանգաբար հորից վորդի անցնող թագ և այլ իշխանական տարբե-

բառաներ վերջապես, մի քանի պատառիկների համեմատ, նրանք թափավոր էլ են հիշվում։

Ֆեոդալական կարգերից մնացած ուրիշ դերապրումներ էլ կան. կարելի չեր այստեղ հիշատակել ևս մի չիրկու տասնյակ նման դեպքեր, սակայն դրանք այլևս մեր վեպի հատկանշական դեպերը չեն։ «Թափավոր», իշխան կոչումն այստեղ անաքրոնիզմ է։ Նրանք բոլորն էլ դյուղացի չեն, համապատասխան բոլոր մյուս գյուղացիներին, տասունցիներին։

Համադյուղացիների նման նրանք զրաղվում են գլխավորապես անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, վորսորդությամբ և ապա չիրկրագործությամբ։ Վերջինս, հարկավ, չեր կարող կարևոր տեղ գրավել նրանց տնտեսության մեջ, չնչին նկատի ունենանք չիրկրի լեռնային, քարքարոտ բնույթը։ Սասունցիները, ինչպես վկայում է վեպի մեջ հիշվող պատմական դեպքերի ու դեմքերի գրեթե ժամանակակից պատմիչ Թ. Արծրունին, «զպէտս կերակրոյն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սուլ ժամանակի հաց անուանեն. և զնոյն ուտելով ոտիւք ի միջոցս պրակացն կամ երկմասնի վայտասալք սերմանեալ»։ *

Թումա Արծրունու այդ նկարագիրը մինչև վերջերս էլ համապատասխանում էր տասունցիների տնտեսական զբաղմունքին։ Մեր վեպի մեջ էլ Սասունի բնակիչների ցանքն այդ է։ Համաբյա բոլոր պատառիկների մեջ հիշվում է «կորկի արտը», «կորկի արտասերը» խիստ չքավոր պատառիկը կամ ալևորը, վոր իր չնչին քանակի մեկ հույսը համարում է այդ «կորկի արտի» բերքը։ Մի քանի պատառիկներում բացի «կորկի արտից» հիշվում է «գըլգըլի արտը», «չաղիամի արտը», վորոնց մշակույթը նույնպես տարածված է չեղել Սասունում, իսկ «ծուռ» հերոս Դավիթը հաճախ կրում է «չաղիամակներ» կամ «ալեհկիր» մականունը։ Սասունի նախալեռնային գոտում և ձորերում զբաղվում են վորոշ չափով նաև պտղաբուծությամբ. մշակում են նուռ, ծիրան, խնձոր և այլն։ Պատրաստում են նաև նռան դիբեհ։

Հողի մշակույթի տեսակարար կշիռը թե կյանքի և թե վեպի մեջ անչափ անչնչո՛ւն է համեմատած գյուղատնտեսության մյուս ճյուղերի և տեսակների հետ։ Դրանցից գլխավորներն են՝ անասնապահությունը, մեղվաբուծությունը և վորոշ չափով վորսորդու-

* Թ. Արծրունի, II, էջ

թյունն Ցեղ այդ բնական եւ Սասունի լեռնային արտոնները, ալպյան փարթամ բուսականութիւնը շատ նպաստավոր են մանավանդ անասնապահութեան և մեղվարուծութեան համար։ Ցուրաքանչյուր սասունցի ունի իր խոշոր և մանր յիղյուրայով անասունները։ Սասունցին անասնապահ եւ Ցեղ զարմանալի չէ այդ, քանի վոր ամբ ամբ միայն ամիսի ժողովուրդը՝ դյուղացիներն ու քաղաքացիները, այլ և վեպի կենտրոնական հերոս — «Քաջ Մուշեղ» Դավիթը մերթ դառնում է տավարած (նախրապետ) և հորթարած, մերթ հովիվ և դառնարած։

Սասունի մեղրն էլ հռչակված է նաև յերկրի սահմաններից դուրս։ Մանուկ Դավիթն առաքելության մեջ, Մարա Մելիքի տանը կերակրվում է հայրենական մեղր ու կարագով. Մարութա վանքի պահապան վանականների կերը «որուն մեկ մրի կարագ եր, մեկ՝ մեղր» և այլն։

Լեռներում, խոր ձորերում և դարավոր անտառներում բազմաթիվ դիշատիչ գազաններ (առյուծ, վագր, արջ, գայլ, աղվես և այլն) կան, վորոնք բնակիչներին սարսափ են պատում և ջնասներ հասցնում։ Սասունցիները կռիվը գազանների դեմ ուժեղ և կազմակերպված։ Վորսի յեն դուրս գալիս խմբերով և մենակ (Առյուծամեծ Մհերի, Դավթի, Ջննով Հովանի, Բևռի Թորոսի և համաքաղաքացիների վորսորդությունը լեռներում, մանավանդ տապես Մեծ սարում, Մեղան սարում, Ծովասարում և Ամպ սարում)։ Այդ էս հիշատակում է Թովմա Արծրունին, յերբ գրում է՝ «Ընդ ևն առաջեալ ղէնս աշտեայս հանապատ կրկիով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակին»։*

Բացի բնակչության անվտանգությունը պաշտպանելու հանդամանքից՝ վորսորդությունն ունի նաև անտեսական մեծ նշանակություն։ Մի քանի վայրի կենդանիների (նապաստակ, մայիլ, «վիրու այծ», խաղալ, «վիրու վոչխար») մսեղն ուտում են, մյուսների մորթը քուրք են շինում և հագնում։

Մեր վեպի մեջ, ինչպես և մինչեվ վերջերս Սասունում, կարեվոր տեղ է գրավում նաև թռչնորսությունը։ Դավիթը բազեով լոր է բռնում կամ նետ ու աղեղով լոր և այլ թռչուններ կոտորում, թռչնորսությամբ են զբաղվում նաև մյուս հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը, Առյուծամեծ Մհերն և ուրիշները։

Տնտեսական կյանքի համեմատ և նույնպես սասունցիների

---

* Թովմա Արծրունի, II, եւ

ընտանեկան և հասարակական կյանքը: Մինդյան որից սկսած աստիճանի «ծուռը» պատրաստվում և չարքաշ կյանքի համար: Ցեխն հաշվի չառնենք նրանց մանկության առաջին տարիները, յերբ «ծռերն» անհոգ խաղով են տարվում, այն էլ հայկական բոլոր պյուղերին հատուկ խաղերով, ինչպես՝ արնգոտան, անդուկ-պնդուկ («սանդուխչա բիր բոխչա»), ճլորիկ («ճղլոր»), ճան, հոլ և այլն, սակա 7—8 տարեկան հասակից սկսած՝ նրանք դարձակցում են իրենց ծնողներին անտեսության մեջ: Մանուկ և պատանի «ծռերը» դառնում են՝ դառնատած, հովիվ, հոթեպան, տավարած, հոտաղ ու հողագործ: Իգական սեռն էլ իր համապատասխան աշխատանքներն և կատարում՝ քարպահ, թեշիկ պըտատցնել, կովկիթ, բեր, լվացք, կերակուր պատրաստել և այլն:

Դրագիտությունը յերկսեռ «ծռերի» միջավայրում այնքան էլ տարածված չեր: Բչերն են սովորում: Դրագետ են հիշվում՝ Դավիթը, Ճանդուքը, Գոհարը, Սահատարն ու Բազդասարը և այլք: Հատուկ դպրոցներ չկան: Դասատուները հոգևոր դասից են. դասավանդությունն էլ, հարկավ, նահապետական յեղանակով և տեղն ունենում՝ Սաղմոս ասել կամ կարդալ, «Քուղեի» դրեր:

Հատկապես «ծռերի» (տղամարդ և կին) դրաղմունքն էլ չի տարբերվում մեր վերջին չրջանի գյուղացիների սովորական անտեսական աշխատանքներից: Տնից դուրս յեղած աշխատանքը տղամարդու գործն է, իսկ անամիջինը՝ կնոջ: Կանայք զբաղվում են նաև բժշկությամբ, ամուգարությամբ, գրքացությամբ:

Կնոջ և տղամարդու հարաբերությունն ընտանիքի ներսում նահապետական է: Կինը խոնարհ է և համեստ: Նա յենթարկվում է իր ամուսնուն, վորովհետև «տղամարդ վոր կա՝ գլուխ է. կնիկ վոր կա՝ վոտ է», կամ «երիկի խոսքը կոտրել չեզնի»: Տղամարդու իշխանը կարգությունն է, կնոջը՝ հավատարմությունը: Սերն ու համերաշխությունն իշխում են նահապետական այդ ընտանիքում. այստեղ վերաբերմունքն ընդհանրապես կոպիտ է և բռի, չի բացասվում անգամ կնոջն աքացի տալը: Ծնողների վատ ձգտումն ու խղճն է սերունդ ունենալը: Տղամարդու կողմից կնոջ հանդեպ անհավատարիմ լինելն «օրենքով» արդարացվում է:

«Ծռերը» — տղամարդ և կին (հերոսուհինները) զբաղվում են գինավաճառությամբ, համուտ են ասպետական — «փահլևանական» մրցախաղերի մեջ:

Ժառանգական իրավունքը հորից անցնում է վորդուն: Բոլորը յենթարկվում են ընտանիքի մեծին, ավագին: Ցեխն ժա-

ռանդն անչափահաս և, հոգեղեկույցները կամ քեռիները խնամում են նրան մինչև սրբունքի հասնելը, ապա իշխանությունն՝ հանձնում օրինական ժառանգին։ Նահապետական այս օրենքի խախտումներ սակավ են լինում։

Կրոնական պաշտամունքը, անոսխապաշտությունը «ձևերի» մեջ վառ է։ Սրբերի պաշտամունքը, ուխտագնացությունը, յերդումը, անեծքը, ոգեթքը, յկկեղեցի չլինելը սովորական յերեվույթ է։ Յերդմնազանցությունը մեծ մեղք է համարվում, հոգևոր դասը հարգված է։

Նահապետական կենցաղի պայմաններում արյան վրիժառության հետ «օրենքով» սրբագործված է «ձևերի» կյանքում։

Ընդհանրապես մեր վեպը հարուստ է նահապետական հասարակության վերաբերող կենցաղային գծերով։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ «Սասնա ծռերի» պատումներն ամբողջությամբ առած բազմակողմանի արտացոլում են վոչ միայն Սասունի, այլ և լեռնային և նախալեռնային գոտիների հայկական գյուղերի նախահեղափոխական շրջանի քայքայվող նահապետական տնտեսությունն ու կենցաղը, աշխատասեր գյուղացու գոյն ու պիտակությունը։

Բավականանանք այստեղ սոցիալ-տնտեսական այս հակիրճ նկարագրով և մի քանի խոսքով բնութագրենք վեպն ըստ ձևի։

7. ՎԵՊԻ ԱՐՎԵՍՏԸ

Աստղագնների հավաստախոսություններին համեմատ՝ մեր վեպը 40 «ճյուղ» և ունեցել, 40 կենտրոնական հերոսներ։ Թե ինչ են հասկանում աստղագնները «ճյուղի» տակ կամ վորպես են այդ 40 հերոսները, հնարավոր չեմ պատկել։ Նրանց վկայություններն այդ մասին հակասական են։ Վոմանք «ճյուղ» ասելով՝ հասկանում են վիպական ամբողջական մի հատված, մյուսները՝ մի ընդարձակ պատմվածք հերոսներից մեկի մասին և այլն։

Անշուշտ 40 թիվը վիպական չափազանցություն է, յերեվակայության արդյունք։ Համենայն դեպս պետք է մի բան, վոր մեր վեպը, գոյություն ունեցող պատումների համեմատ, ինչպես վերը տեսանք, բաժանվում է ըստ սերունդների 4 մասի, այն է՝ 1. Սանասար և Բաղդասար, 2. Մեծ կամ Առյուծամեծ Մհեր, 3. Դավիթ և Մսրա Մելիք (Բաղդադի խալիֆա) և 4. Գըղ-

ակի Մհերը «ձյուղերի» թիվը՝ ըստ վիպական հատվածների՝ ավելի յեր Հիմնական հատվածները կամ մասերն ապրելիս են յեղել անկախ, զարմանալի ասացողներից վոմանք դիտեն միայն այս կամ այն հատվածը, կամ մի քանիսը, կամ բեն բոլորը միասին են պատմում, սակայն ամեն անգամ հիշում են, վոր այսինչ տեղը վերջանում է «ճյուղը» և սկսվում է մի նոր «ճյուղ», «ճյուղը» նրանք հաճախ վերջացնում են «ողորմիա»-ով։

Վիպական մեծ ու փոքր հատվածներով են պատմվել և ասվել նաև ուրիշ ժողովուրդների դիցաղնական վեպերը, ինչպես որինակ՝ ռուսական БЫЛИНА-ները, սերբական, ֆիննական, քրդական հերոսական և սիրային վիպերգությունները։ Մի քանի ժողովուրդների վիպական յերգերը ժամանակի ընթացքում մեկ կամ մի քանի անհատ բանաստեղծների ձեռքով լի մի յեն հավաքվել, պրպտոր ձեվակերպվել, և այդպիսով առեղծվել և մի ամբողջական մեծ վիպասանության՝ դեղարվեստական միասնական կառուցվածքով, հերոսների հաջորդականությամբ և մի ընդհանուր գործողության միությամբ, որինակ՝ հին հունական, պարսկական, գերմանական, ֆիննական, ֆրանսական և ուրիշ վիպասանությունները։

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպն այլ բանի յե արժանացել։ Դա գրավոր դեղարվեստական մշակման չի յենթարկվել, գրով չի գրոշմվել անցյալում։ Ժամանակի ընթացքում դանդաղ ասացողներ աշխատել են բերանացի ձևավորել այդ կենտրոնացումը, կառուցվածքային միասնականություն առաջացնել և առեղծել մի ամբողջական վիպասանություն։ Դրա հետևանքով առաջացել են դանդաղ, իրարից անկախ ամբողջական ասքերի խմբեր և ասքեր պատումներ։ Վեպի բոլոր պատումները բաժանվում են յերեք հիմնական խմբերի՝ ա. Մոկաց, բ. Մշու և գ. Պարսկահայքի։ Բացի դրանցից՝ գոյություն ունեն խառն Մոկաց և Մշու պատումներ։ Վիպական առեղծվածության այս պրոցեսը «Սասնա ծռերի» առանձնահատկությունն և հանդիսանում։

Մեր վեպի սյուժետիկան հարուստ ու ձյտոեղ մեր առաջ ծավալվում են և՛ հեքիաթային սյուժետներ ու մոտիվներ, և՛ առասպելներ, և՛ դիցաղնական սերտազարծություններով լի յերգեր ու պրոյցներ, և՛ պատմական-իրական միջադեպեր (պատերազմ, ռազմական մենամարտեր, ասպետական մրցումներ և վարժություններ) և՛ իրական-կենցաղային պատկերներ ու առասպան-

նրա (ուխտադնացություն, «ցաւատան ժամ», ամուսնություն, ծնունդ ու մահ, պար ու խաղ)։

Վիպի հերոսները բնութագրված են ռեալիստական յուրահատկով։ Հերոսները կենդանի յին և մի քանի տարբատաւ Խորթության, մոացածին գծեր չկա նրանց հոգեկան աշխարհում։ Մանավանդ մեծ սիրով և հոգեբանորեն ճիշտ ու տարբատաւ են ներկված Դալլիի և Խանդութի բնավորությունները, մեծ վարպետությամբ՝ Զենով Հովանի բարդ զգացումները և ընդարձակ մանրամասնություններով Մարա Մելիքի (Բաղդադի խալիֆայի) ապրումները ու զավակիր ծրագրերը, և ընդհանրապես հերոսների միմյանց հետ ունեցած հարաբերությունները։

Վիպի լեզուն նոյազ պատկերավոր ու կրկնություններ, փոխաբերություններ, համեմատություններ, հակադրություններ և այլն համեմատաբար ավելի հազվադեպ են, քան ուրիշ ժողովուրդների վեպերի մեջ։ Վիպի ոճը հակիրճ է, տարուստ դարձվածքներով և ասույթներով. պատմվածքը՝ վերին աստիճանի պարզ, կենդանի և համակող։ Մեր վիպասանները, դյուզպի ասացողներն ազդում են ունկնդիրների վրա ոչ թե վառ, գունագեղ, հաճախ կրկնվող, դանդաղ առաջ շարժվող, արվեստական պատկերներով ու մտապատկերներով, այլ հերոսների հոգեբանորեն իրար հաջորդող գործողությունների պատմվածքով, որոնք դինամիկ են և զարմանալի արագությամբ են փոխվում, զարգանում։ Դա յի մեր վիպի հմայքը, դա յի նրա գեղարվեստական հիմնական արժանիքներից մեկը։

«Սասնա ծռերի» պատումների մեծ մասը վոտանավոր և, «յամբական պարզոնյա ազատ վոտանավոր անապեստի խառնուրդով և անապեստյան ազատ վոտանավոր յամբի խառնուրդով»։ Այդ վոտանավորները «սովորաբար միմյանց հետ խառն դրծ են ածվում անխախիր, բայց իրենց թվով իշխող ձևում են յամբական տողերը։ Հաճախ դրանց հետ միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապեստյան տողեր, և յերբեմն նույնիսկ յամբական տողեր ազատ վոտքերի (ազատ ասկաների) խառնուրդով, այլ և պատահում են տողեր, որոնց մեջ յամբերն ու անապեստները հավասարաթիվ են, կամ որոնք ունեն 5+5 (5=3+2 կամ 2+3), կամ մի այլ անդամավոր կազմություն, ինչպես և 4+3+3=2+2+3+3... Այսպիսի գործածությամբ այդ ազատ վոտանավորները իսկապես խառն վոտանավորներ են,

միայն վոչ թե անդամներով հորինված..., այլ պարզ վոտքերով»։*

Այսպիսի ազատ վոտանավորներով են, բայց միայն հանգերով, մեր ժողովրդական վիպական յերգերն ևս, ինչպես՝ «Մոկաց Միրզեն», «Ալան ապեն», «Նարեկացին», «կարոս խաչը» և «Ալեքսանդրոսը»։

«Սասնա ծռերի» պատումների մեծ մասն «ոչ միմյանց վոտքը լսելի յե ավելի պատմական ու նկարագրական հատվածների, ինչպես և յերգերի մեջ. ոչիմը համեմատաբար պակաս և կարճ խոսակցություններին մեջ»։* Այս վերջին հանգամանքը թեպետ բացատրվում և նրանով, վոր նոր(XIX դարի վերջերի և մեր որերի) ասացողները պրոֆեսիոնալ վիպասաններ չեն, ինչպես անցյալում, յերբ վիպը հանդիսանալով ոչերոց դասակարգի իդեոլոգիայի արտահայտությունը՝ մշակվում եր պրոֆեսիոնալ յերգիչների, վիպասանների միջավայրում, այլ և նրանով, վոր վերջին շրջանի ասացողները մոռացել են վիպը կամ ուշադրություններին հասկանալի լինելու համար՝ հաճախ ավելացնում են բացատրական բառեր, արտահայտություններ և դարձվածքներ։ Բացի այդ՝ ասացողները բանահավաքներին գրի առնելու դյուրության տալու նպատակով՝ դանդաղ են պատմել և խախտել ոչիմը, ինչպես և բանահավաքները հաճախ չեն կարողացել հարապատասխան գրի առնել և պահպանել ամբողջի ոչիմը։

Վոտանավորի չափը համեմատաբար դեպի անհավասար և միացել յերգերի և յերգախառն հատվածների մեջ։ Յեթե այդ հատվածների վոտանավորը համեմատելու լինենք «սովոր», դիտավորական, նկարագրական կտորների վոտանավորների հետ, ապա առանձին տարբերություն չենք դտնիլ դրանց մեջ։ Բերենք մի քանի որինակ յերգերից և «արձակ» հատվածներից.

«Թը ժողվի՝ մ խաղար խինդ խաբիր խամար
Նորալուկ մանուկ (ես).
Թը ժողվի՝ մ խաղար խինդ խաբիր խամար
Լա բեզդար ապա (ես)»...

---

* «Սասնա ծռեր» վիպի վոտանավորի մասին մանրամասնությունների տես՝ Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի առաջավորություն», Յերևան 1933 թ., յերես 360—370, և նույն հեղինակի՝ «Դավիթ և Մհեր», առաջաբան, այս հրատարակության, յերես 4—6։

Կամ

«Ինչ մորեն մեկնիր իմ,
Մարդու բարեվ չեմ ասի.
Եսոր գՀամատէն եմ տեսի,
Հախուց բարեվ եմ ասի,
Լգե, հախուց բարեվ եմ ասի»։

Կամ

«Բաց երեք ձիր առնիր, բաց երեք.
Վիր մեկ եր, երիր իմ երկուս.
Վիր երկուս եր, երիր իմ ութ.
Վիր ասս եր, երիր իմ քսան»...

Կամ

«Դավիթ, ասի մը՛ զարնե,
Դավիթ, ասի մը՛ զարնե,
Մեր Նորալուկ մեկ ասկ մանուկին»։*

Բնբենք մի յերկու հատված եւ վոչ յերգերից, այլապես կոչված «արձակից»։

«Քեռասուն տարի անցավ,
Գոհար խաթուն մեռավ։
Մհեր եկավ, գնր ձին խնձավ,
Գնաց, նեճիր աներ։
Նեճիրվանքաեր գՄհեր բռնեցին,
Տարան, թլեցին խուր վեր»։

Կամ

«Դավիթ լպատրակներիր, ազվիսներիր, կուզիր
Ժողվիր, առիր, խալի, լիր մանչ քաղքին։
Քաղքցիք եկան չոկըցին ուրանց գնեներիր, տարան։
Ամեն մեկ ինչքանդար կպեր,
Լպատրակ, ազվիս, կուզ՝ տարան խիտ։
Լպատրակ գինիցին խատ ուլիրուն, կերան.
Ազվիս, կուզ երին քուրք, խազան»։

Կամ

«Տավիթ լսեց Մենով Հովանի ծեն,
Հիշաց, ազոթք արաց, կանչեց.

* Վերը բերված բոլոր հատվածները յերգեր են։

«Ցա՛, խեր կենդանին,
Մարթիկա Պանդը Աստրածին,
Քաչ Պատրաստի չեմ ալ Քիլին,
Ընդլըներ կատը-կատը իլնին,
Ամեն ոգակ տաս մարթ ապանին»։
Տալիք կանչեց, ծին առաքիկեց.
Տռաքիկուն պես՝ ընդլըներ կտրանց.
Հըմեն ոգակներ ցիրուցան արաց.
Հըմեն ոգակ տաս մարթ ապաննեց,
Նորեն քշեց, ընկավ գործի մեչ.
Եվ մ՛ ել չարդ ու կատը արաց.
Զորքեր վախացան, վախտաց»։

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպը հայ հասարակության պարբայման նախընթաց եռատնների բռնմակոդմանի և բռնադակալից արտահայտության են և իր ծագումով, ինչպես ասացինք, ֆեոդալական, դարերի ընթացքում իջած հայ հահապետական դյուղի սոցիալական միջավայրը, այդ վեպը հիմնովին վերամշակվել, ձևափոխվել և համապատասխանել հահապետական դյուղի աշխատավորության դոյին ու պետակցության։

«Սասնա ծռեր» էպոսում են հայկական առասպելաբանության տարրը, այսինքն՝ բնության ու հասարակական ձևերը, որոնք անդիտակցական յեղանակով մշակված են արդեն ժողովրդի յերևակայության միջոցով»*։ Առանց այդ նախապրյալի մեր վեպը չեր կարող առաջանալ, պարզանալ, գեղարվեստորեն ձևավորվել և հարատևել։

Կ. Մարքսը՝ բնության տրիվիալ հունական արվեստն ու դիցաբանության, ասում է. «Այնպիսի մի հասարակական դարգացում, ինչը ժխտում է ամեն մի առասպելաբանական վերաբերմունք դեպի բնությունը, ինչպես և բնության ամեն մի առասպելաբանություն, որն այդպիսով գեղարվեստական համար պահանջում է առասպելաբանության անկախ մի յերևակայություն, [չեր կարող] ամենևին [հունական գեղարվեստի համար հող հանդիսանալ]»։* Գիտական սոցիալիզմի հանճարեղ հիմնադրի այս ապա-

---

* Karl Marx, „Zur Kritik der Politischen Ökonomie, Volksausgabe, besorgt vom Marx-Engels-Lenin-Institut, Moskau-Leningrad 1934, յեր, 247։ Կարլ Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, թարգմ. Թադ. Ավդալբեկյան, Յերևան 1932, յերես 57—58։

ոչ բնորոշումը լրիվ վերաբերում է նաև հայկական «Սասնա ծռերին»։ Ցեղ խակապես, Աքիլլեսն ու Դավիթը չեյին կարող պոեյտեյան ունենալ վառոդի և կապարի, Զենով Հովանը՝ ռադիոյի և բարձրախոսի ժամանակ, ինչպես և ընդհանրապես «Իլիականն» ու «Սասնա ծռերը» ռոպսդրական մամուլի և ռոպսդրական մեքենայի հետ միասին «Ցեղ մերին անխուսափելիորեն չեն վերադառնում յերդերը, դրուժյինները ու մուսաները, հետևաբար և վիպական բանաստեղծուԹյան համար անհրաժեշտ պայմանները ռոպսդրական մամուլի ժամանակ»։*

«Սասնա ծռերը» վեպն անկրկնելի յե, ինչպես «մարդս չի կարող նորից յերեխա դառնալ, այլապես նա ծաղրի առարկա կը լինի»։ Նրա հմայքը, նրա «արվեստը հետևողնք և այդ միջավայրն ու անքակտելիորեն կապված և այն հանդամանքի հետ, որ չհասունացած հասարակական պայմանները, որոնց մեջ ծագել և այդ արվեստն և կարող եր միայն իր ծաղումն առնել, յերբեք չեյին կարողանա վերադառնալ»։** Մեր դարաշրջանում նման վեպեր բոլորովին չեն կարող ստեղծագործվել։ Այդ վեպը կը մնա, որպես հայ ժողովրդի անցյալ դարավոր կյանքի մի լիաբյուն և անաղարտ հուշարձան, որն ունի իր անժխտելի թովչանքը և որը կը շարունակի գեղարվեստական հաճույք պատճառել։

Բուռն վոդևորուԹյամբ սոցիալիզմ կառուցող պրոլետարիատը, մարդկային հասարակուԹյան կուլտուրական արժեքների օրինական այդ միակ ժառանգորդը, մեծ սիրով կ'ընդունի «Սասնա ծռերը», հայ ժողովրդի «մանկուԹյան» այդ հուշարձանը, կը կարդա այն և կը վոգևորվի դաժան մելիքներին և խալիֆաներին ջախջախող, ընդհակառակն աշխատավոր ժողովրդին պաշտպանող «բատրակ» ԴավԹով։

Պրոֆեսոր ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՈՒՍԱՆՋԱՆՅԱՆ

---

* Անդ, դնբմ. բնագիրը, յերես 248=հայ Թարգմ., յերես 58։
** Անդ, դնբմ. բնագիրը, յերես 248=հայ Թարգմ., յերես 58։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԲԱՆ

1. Խմբագրությունն՝ ՀՍՀՀ Պետհրատի հանձնաժողովի հետ միասին, պատրաստել և հրատարակել է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի ցարդ հրատարակված, ինչպես և անտիպ ու նոր գրի առնված պատումները։ Կատարելով այդ յուրահատուկ աշխատանքները՝ խմբագրությունս անվերապահորեն իրեն պատասխանատու չի համարում ամբողջ հրատարակության մասին կողմի համար։

2. Ձեռնք տալի անընդհատ աշխատելով՝ խմբագրությունս ի վիճակի չի եղել հավաքելու և մանրակրկիտ քննության առնելու «Սասնա ծռերի» մոտ 65 պատում։ Դրանցից ներկա հրատարակության մեջ տեղ են գտել անհատի բոլոր լույս տեսածները։ Անտիպ պատումների նկատմամբ այլ սկզբունք է կիրառված, այն է՝ հրատարակության համար պատրաստել միայն այն պատումները, որոնք կամ բովանդակության տեսակետից նորություն են հանդիսանում, պարունակելով նոր միջադեպեր և այլ մանրամասներ, կամ նվազ չափով ուշադրավ այդ հատկությունից՝ ներկայացնում են ըստ ձևի և ոճի տեսակետ դեղարվեստական արժեք (վոտանավոր, դեղեցիկ պատկերներ, ճկուն և հարուստ լեզու և այլն)։

«Սասնա ծռերի» պատումները լույս են ընծայվում ըստ կատարողի։ Հատորների համար հիմք են ընդունված պատումների լեռնական-բարբառային հատկանիշները։ Առաջին հատորի մեջ տեղ են գտել դիմավորապես Վանա բարբառով և ենթաբարբառներով (Մոկաց, Շատախի, Նարեկի, Կաճաոի և այլն) «տված» պատումները, ինչպես և մի քանի խառն պատումներ, որոնք կրելով այդ բարբառների ազդեցությունը, կատարվածքով և բովանդակությամբ անպայման պատկանում են այս խմբին։ Յերկրորդ հատորի մեջ լույս կը տեսնեն Տարոնի—Մշու բարբառն և նրա ենթաբարբառները (Սասուն, Խլաթ, Ալաշ-

կիլու, Ապարան, Նոր-Բայազետ և այլն) պատկանող, ինչպես և վորոշ չափով մեհուսի Ցաղկահայոց բարբառով «ասված» պատումները։

Լեզվական հատկանիշներով կատարված այս բաժանումը համապատասխանում է գրմանական կերպով և պատումների բովանդակությանը։ Պատումների այդ կերկը հիմնական խմբերը (Մոկաց, Մշու և Գաղկահայոց) պարզ ցույց են տալիս, վոր մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը հիմնականում զարգացման վիպական կերկը կենտրոն և ունեցել և այդ կենտրոններից էլ դուրս գալով՝ տարածվել և յուրաքանչյուր բարբառի սահմաններում։

3. Հատորների մեջ տեղ են գտել մի քանի պատումներ, վորոնք բովանդակությամբ և ձևով քիչ են տարբերվում միմյանցից։ Այս հանգամանքը կարող և շատերին տպավես թվալ, վոր խմբագրության չեղվել և իր նախընտրած հիմնական սկզբունքից, այսինքն՝ լույս ընծայել միայն տպավոր պատումներ, վորոնց բովանդակության մեջ նորություններ կան և ձևով էլ վորոշ գեղարվեստական արժեք են ներկայացնում։ Կասկածելի կամ վիճարկելի այդպիսի պատումներն արժեքավոր են այլ առումով։ Գրանցից կերկուսը (№№ ժ և ժԱ) պատկանում են միևնույն տասցող Վարդան Մուխո-Բաղիկյանին, վորն «ասել»—պատմել և տարբեր ժամանակներում (1911 և 1916 թ. թ.) ու հանգամանքներում (տես պատումի առաջաբան, կերկ 473—4), իսկ մյուս կերկուսը՝ կերկու տարբեր տասցողների, վարպետին ու աշակերտին, հորն ու վորդուն։ Այդ պատումներից յուրաքանչյուր ցույցի համեմատության մեջ միմյանց հետ ցույց և տալիս, թե ինչպես միևնույն պատումը ժամանակի ընթացքում փոփոխության և ենթարկվում հապավման և հավելման դեռ, ինչ նորանոր ապդեցության ներքո կրում տերնդից տերունդ անցնելով կամ տոլյալական նոր միջավայր ընկնելով։ Վոչ միայն մեր, այլ և ընդհանրապես բոլոր ժողովուրդների վեպերի—եպոսների գոյացման ու զարգացման պատմության համար այդպիսի պատումները բացառիկ արժեք են ներկայացնում։

4. Պատումներն ըստ կարգի դասավորելիս՝ հիմք և ընդունված դիմավորապես պրանցման ժամանակագրական հաջորդականության կարգը։ Տեղ-տեղ խախտված և այդ սկզբունքն և երբ հաջորդում են տարբեր ժամանակներում դրի առնված մի շարք պատումներ։ Այս դեպքում դիտակցաբար և կատարված։ Այդպիսի

պատուհանները պատկանում են վիպասանական մեկ դպրոցի և հաճախ լրացնում են միմյանց բառ բովանդակությամբ։

5. Պատուհանների բնագրի վրա խմբագրությունս կատարել և հետևյալ աշխատանքը.

ա. Պատուհանների մեծագույն մասը դիտել և վորպես ազատ վոտանավոր և արձակ տպվածը կամ ձեռագիրը ստուգել և, կամ վերանայել բանահավաքների ստուգածը։

բ. Տողատակից հետո պատուհանները բաժանել և հիմնական ընդարձակ հատվածներին, յուրաքանչյուրին առանձին վերնագրեր, իսկ նրանց ստորաբաժանումներին, փոքրիկ դրվագներին՝ յուրաքանչյուրը վերնագրեր։ Այսպիսով բաժանումները դարձնում են վեպի կառուցվածքն ու բովանդակությունն ավելի դյուրըմբռնելի և կոնկրետ թե ընդհանրապես ընթերցանության և թե մանավանդ ուսումնասիրության համար։

գ. Պատուհանների ուղղագրությունը վեր և ածված նոր ուղղագրության, վորն ավելի անչափ և արտահայտում բարբառային հնչյունական հատկությունները. չորս հնչյունի համար, վորոնք գրական լեզվի մեջ չկան, ձուլել են տրված առանձին տպագրական նիշեր. դրանք են՝ ա, ո, ե և յ (անս բարբառային քերականական դիտելիքներ)։ Բնագրերների ուղղագրության աշխատանքը դյուրին չեր, յեթե նկատի ունենանք, վոր բանահավաքները չեն հետևել միատեսակ ուղղագրության և հաճախ միևնույն բառը միևնույն պատումի մեջ տարբեր ձևերով են գրել։ Դրա պատճառներն շատ են, նախ՝ բանահավաքների մեծ մասը չի հետևել գիտական ուղղագրության, համարելով այն յերկրորդական հանգամանք վեպի պատմական-գեղարվեստական արժեքի համեմատությամբ. յերկրորդ՝ հաճախ այս կամ այն հնչյունը տատանվում՝ նրանք գրել են այս կամ այն տատանումը, բայց չեն նշել, թե վոր հնչյունն և դա արտաբերում, որինակ, գրում են՝ «յինել», բայց չեն ծանոթագրում՝ համապատասխանում և այն «էն»-ին, թե «ժ»-ին. յերրորդ՝ անհույժ վերաբերմունք դեպի բարբառի ուղղագրությունը, ապինքն՝ հիմք ընդունելով այս կամ այն տատանության սկզբունքը՝ բանահավաքները հետևողականորեն չեն կիրառել այն ամբողջ պատումի մեջ, մեկ գրել են «յնկավ», մեկ՝ «էնկավ», մեկ էլ՝ «ենկավ»։ Այդ ամենի հետևանքով հնարավոր չի յեղել ցանկալի ճշտությամբ պահպանել շատ պատումների մեջ բարբառային հնչյունները։

Բարբառային հնչյունական երևույթները տատանելու

անսակնկալ ավելի արժեքավոր են վերջին շրջանում կատարած դրանցումները։ Դրանց մեջ հատուկ ուշադրության են առնված հնչյունների առոգանական առանձնահատկությունները և դրի են առնված բանահավաքների կողմից մշակված տառադարձական նշանները։ Այդպիսի դրանցումները արժեքավոր են միայն լեզվաբաններին գիտահետազոտական աշխատանքների, բայց ոչ ընթերցող լայն հասարակության համար, որը նկատի չունի գիտական-լեզվաբանական նպատակները։ Սովորական ընթերցողը մանավանդ դեղարվեստական յերկեր կարդալիս՝ չի կարող դեղարվեստական հաճույք առանալ, յերբ նա ստիպված՝ հնչյունաբանորեն պիտի վերծանի ամեն մի բառը, որպեսզի հասկանա նրա խմաստը։ Պարզ է, որ նման աշխատանքը կը պահանջի ուշադրության և յեռանդի ավելորդ և աննպատակ (սովորական ընթերցողի համար) վատնում, որով մեծապես կը նսեմացնեն գիտականորեն դրի առնված պատումների դեղարվեստական արժեքը, իսկ հաճախ էլ նման պատումները բոլորովին կ՚անտեսելին ընթերցողի կողմից։

Այդ դժվարությունները նկատի ունենալով՝ խմբագրության ձգտել և հնարավորության սահմաններում պարզեցնել նոր դրի առնված պատումների ուղղագրությունը և շնչին տարբերություններով հավասարեցնել մյուսներին, այսինքն՝ պահել և հիմնականում դրական ուղղագրությունը, իսկ հնչյունափոխության ընդհանուր յերևույթների մասին ցուցումներ և արել պատումների առաջաբաններում և «Բնթերականական դիտելիքների» մեջ։

դ. Անտիպ և տպագիր պատումների մեծ մասն անվերջ դրանցման, ինչպես և անխնամ տպագրության հետևանքով մի շարք վրիպակներ և թյուր ընթերցումներ և պարունակում։ Բարբառային հնչյուններն և դրանց տառադարձությունները հրատարակիչները հաճախ անուշադրության են մատնել և վեր են ածել սովորական դրական ուղղագրության ձևի։ Տեղ-տեղ բառերը, գլխավորապես բարբառային և ոտար, աղճատ են տպված, բացի դրանից՝ արևմտահայ բանահավաքների դրի առած պատումների մեջ ոտար բառերի համար խլխում և արևմտահայ տառադարձությունը։

Նման բոլոր տեսակի տպագրական վրիպակները, ինչպես և անճշտությունները խմբագրությունս աշխատել և ըստ կարելվույն վերացնել և տառադարձությունները միակերպության վերածել։

և. Բանահավաքների ձեռագիր պատումների մեջ կրկնվող դարձվածքները, հատվածները (այս վերաբերում է գլխավորապես յերգերին, բանաձևիներին — ֆորմուլներին կամ նախնականում յերգված կտորներին) գրի չեն առնված, այլ յերկրորդ անգամ հիշվելիս՝ ընդհատված են բազմակետերով։ Հրատարակիչները հաճախ այդպես էլ ապագրության են հանձնել։ Այդպիսի ընդհատումները վերականգնված են, հիմք ընդունելով պատումի այդ հատվածի լրիվ բնագիրը, որ մեկ կամ յերկու անգամ մինչ այդ կրկնված է յեղել։

Բանահավաքների անփութի գրանցման, դուցե ձեռագրների վոչ պարզ և դյուրընթեռնելի լինելու հանգամանքով, մի շարք բառեր, դարձվածքներ և վոճեր սխալ են վերծանված և ապագրված հրատարակիչների կողմից։ Այդպիսի թերությունները էլ ուղղված են և վերականգնված նույն պատումների մեջ կրկնված նույնանման դեպքերի հիման կամ հարց ու փորձի միջոցով տեղացիներից, յերբեմն էլ հենց պատումի ասացողներից։

6. Պատումների բնագրերների լիություն հնարա հասկանալի դարձնելու համար յուրաքանչյուր բարբառային խմբին կցված և առանձին ներածական — «Բնբառականական դիտելիքներ» վերնագրով։ Այդ ներածականներով խմբագրությունս նպատակ չի ունեցել տալու ամբողջ բարբառի մանրամասն և հիմնավորված ուսումնասիրությունը, այլ բավականացել է՝ նշելու միայն բարբառային առանձնահատկությունները՝ համեմատած հին ու նոր գրական լեզվի հետ։

7. Մեր ժողովրդական վեպի տարածման սահմանները, ինչպես և հերոսների գործողության վայրերը ցույց տալու նպատակով՝ կազմված են յերկու աշխարհագրական քարտեզներ։

8. Ասացողների միջավայրը կոնկրետ ներկայացնելու համար պատումների յուրաքանչյուր խմբին, յերբեմն և յենթախմբին կցված և հատուկ ներածություն, որի մեջ տրված են վորոշ տեղեկություններ շրջանի կամ գավառի աշխարհագրության, պատմական անցյալի, վերջին (մինչ խորհրդայնացման պատերազմը) շրջանի բնակչության հոգեվոր աշխարհի՝ ֆոլկլորի, կրթական մակարդակի և մի քանի այլ կարևոր հանգամների մասին։

Այդպիսի գիտելիքներն անհրաժեշտ են ասացողներին լրիվ ըմբռնելու և բնութագրելու համար, ինչպես և նշելու սոցիալական միջավայրի ազդեցությունները, որոնց նա (ասացողը) յենթակա է յեղել և ընդգծելու նրա առնչագործական կերո-

դուքյուններըը. Հենց այդ տեսակետից ելնելով, աշխատել ենք հնարավորության սահմաններում մանրամասն նկարագրել առարկաների կյանքը, նրանց բանահյուսական ծանոթությունների սահմանները. Տպագրվում են նաև առարկաներից մի քանիսի լուսանկարները. Միմամասնությունը լուսանկար չունի.

Ցավոք, այդ տեղեկությունները լրիվ չեն, որովհետև մեր ավագ սերնդի բանահավաքներից վոմանք նվազ կարևորություն են տվել դրանց և բավականացել են հիշատակելով միայն առարկաների անուններըը (վոմանք այդ էլ չեն արել) կամ հաղորդել են նրանց մասին մի կերկու կցկտուր տեղեկություններ.

9. Առասպելական, վիպական, պատմական և կենցաղային բնույթներըը, դեպքերն ու իրադարձությունները ընթերցողներին մատչելի դարձնելու նպատակով, խմբագրությունս բերբոր հատորին կցում է ամենաանհրաժեշտ և կարևորագույն ծանոթագրությունները. Անշուշտ հնարավոր եր շատ ավելի ընդարձակել և մանրամասնել ծանոթագրությունները, պատմահամեմատական լեզվանակով մեջ բերելով հայ և ոտար առասպելներից, վեպերից ու հավատալիքներից բազմաթիվ զուգահեռ օրինակներ, սակայն այդպիսի աշխատանքը շատ կ'ընդարձակեր ծանոթագրությունների շրջանակները. Խմբագրությունս նպատակն ավելի կոնկրետ և կեղև նա ցանկացել է հավելյալ դիտելիքներով բավարարել մի կողմից ընթերցողին՝ հաղթահարելու կարդալու ժամանակ հանդիպած դժվարությունները.

Ծանոթագրությունների համար կարևոր մի շարք բառեր, անուններ, ինչպես և սովորույթներ տեղ են գտել Բ. հատորի վերջում՝ բառարանում, հատուկ անունների ցուցակում և առարկայական ցուցակում.

10. Մեր ժողովրդական վեպն ուսումնասիրող բանասերների, ինչպես և դրողների ու դրականագետների հետազոտական աշխատանքները դյուրացնելու նպատակով՝ կազմված և վեպի բոլոր պատումների դրվագների ու միջադեպերի համաբարբառ, այսինքն՝ մի վերնագրի տակ համախմբված և բոլոր պատումներում կեղած միևնույն նյութը. Այս կերպ ընթերցողն, առավել ևս ուսումնասիրողը, հնարավորություն կ'ունենա, հարկավոր դեպքում, գտնելու տանդյակ պատումներում կեղած միևնույն միջադեպի տարբեր նկարագրությունն ու դեղարվեստական ձևավորումը.

Հենց այդ կապակցությամբ կազմված և նաև «Տատոս Ծակրի» յուրաքանչյուր պատումի ճյուղավորությունը վերջինս

արտահայտված և վոչ թե գրաֆիկ ձևով, վորը հնարավոր չէ յուրաքանչյուր դեպքում կոնկրետ և ակնարկ նախկայացնել պատումների բարդ ու խճճված լինելու հետևանքով, այլ շարադրական յեղանակով, այսինքն՝ տրված և յուրաքանչյուր պատումի հակիրճ ամփոփումը, հիշելով բոլոր գլխավոր հերոսների ազգակցական կապերը։

11. «Սասնա ծռերից» անցյալում յերգվել են ավելի ընդարձակ հատվածներ, քան XIX դարի վերջերին և նախկայում Ասացողներից վոմանք բոլորովին չեն յերգում, սակայն նրանք հավատացնում են, թե իրենց վարպետները մի քանի կտորներ յերգելիս են յեղել։

Վեպական յերգի յերաժշտական յեղանակները, վորոնք սերընդից սերունդ անցնելով՝ հաճախ խոր հնության կնիք են կրում, անշուշտ, մեծ նշանակություն ունեն յերաժշտագիտական տեսակետից, ինչպես և վիպական շեշտի, ռիթմի և չափի վերլուծության համար։ Մեր բանահավաքները հաճախ չեն կարողացել կամ հնարավորություն չեն ունեցել նոտագրելու յերաժշտական յեղանակները. քչերն են ձայնագրել, իսկ վոմանք էլ ձայնագրածը կորցրել են։

Ներկա հրատարակության մեջ լույս ենք ընծայում մի շարք յերաժշտական կտորներ, վոր ձայնագրված են յեղել անցյալում և վերջին շրջանի բանահավաքների գրառումների ժամանակ։ Նոտագրված յեղանակները քիչ են։ Անհրաժեշտ է այստեղ նշել, վոր ըստ ասացողների և բանահավաքների հավատարիմ ցուցմունքների՝ պատումների յերգերի մեծ մասը մեկ յեղանակով է ասվում։

12. Վեպի պատմական միջավայրը, ինչպես և ասացողների արվեստի բնույթն ավելի կոնկրետ պատկերացնելու համար հրատարակության մեջ լույս են ընծայվում մի շարք նկարներ։ Դրանց մի մասը քաղված է մեր միջնադարյան մանրանկարչության և վերաբերում է հայ և հարևան ժողովուրդների կենցաղային առարաններին, մյուս մասը վեպի ձևավորման վերջին շրջանին պատկանող և վեպի մեջ հիշվող արտադրական գործիքների, յերաժշտական նվագարանների, տարազի ու զենքերի լուսանկարներն և գծանկարներն են։ Նկարներին կցվում են նաև շատ համառոտ ծանոթագրություններ։

13. Հրատարակությունն էլ ավելի մատչելի և գիտականորեն լրիվ դարձնելու համար կազմված են՝ Բառարան, Ասարկայական

ցանկ, Հատուկ անուններուն ցանկ և մեր վեպին նվիրված կարևոր ուսումնասիրությունների ու հրատարակությունների մատնանշություններ։

Այս մատենագրությունը սպառիչ չէ։ Աշխատել ենք՝ հնարավորության սահմաններուն մէջ հավաքել այս վեպի ուսումնասիրության համար կարևոր գրականությունը։

Կարևոր ենք համարում մի քիչ ևս տալ խոսք էջ առնել խմբագրական աշխատանքի այս վերջին հատվածի մասին։

Այն բառերը, որոնք գրական են, թեպետ և հազվագյուտ, բայց կարելի չէ դոնել գրական հայերենի բառապաշարում, սակավ բացատրությամբ, տեղ չեն գտել։ Մեր բառարանում հատուկ ուշադրության են առնված ոտար և բարբառային բառերն ու դարձվածքները, նմանապես բառերի բարբառային անատոլիական ձևերն ու խմառանները, որոնց բացատրությունը միշտ կ՚օժանդակի ընթերցողին վեպի բնագիրները հասկանալու։ Մի շարք բառեր, որ տեղ են գտել բառարանում, որոշ դեպքերում անհրաժեշտ և համարվել նշանակելու նաև բնագրերների տակ՝ ծանոթությունների մեջ։ Դրանք գլխավորապես այն բառերն են, որոնք մոռեմոռ և յերկիմաստ գործածված լինելով, կարող են դժվարացնել բնագրի ըմբռնումը, օրինակ՝ «մի», որ նշանակում է՝ «մեկ» և «մեր», «մեղ» և այլն։

Առարկայական ցանկի մեջ նշանակված են գլխավորապես տեխնիկական տերմիններն, իրավական հասկացողությունները, վեպի մեջ հիշվող բարքերին ու սովորույթներին վերաբերող բառերը և առասպելական անուններն ու տարբերանները։

Վերջում տալիս ենք նաև «Մատնա ծռեր» ժողովրդական վեպի պատումների ժամանակագրական կարգով դասավորությունը, որից հայտնի կը լինի, թե որ պատումը, որ բանահավաքը, որտեղ և երբ է գրի առել կամ տպել։

Գրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ
Կ. ՄԵԼԻՔ-ՈՍԱՆՋԱՆՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈԿԱՑ, ՇԱՏԱԽԻ, ՍՊԱՐԿԵՐՏԻ, ԴԱՎԱՇԻ ՑԵՎ, ՀԱՑՈՑ ՁՈՐՒ

Սույն հատորի մեջ ամփոփված են «Մասնա ժողով» ժողովրդական վեպի այն պատառիկները, որոնք դրի են առնված Մոկաց, Շատախի, Սպարկերտի, Դավաշի ցեղ. հայոց ձորի բնակիչներից։ Այդ պատառիկները յուրահատկությամբ, ինչպես և չափով մոտիկ են միմյանց, անշուշտ, այն պատճառով, որ այդ հինգ գավառակներն իրենց աշխարհագրական դիրքով իրար մոտ ու սահմանակից են։ Բոլորը գտնվում են Վանա լճի հարավային կողմում, Արեվելյան Տիգրիսի կամ Շաոի հովտում։

Մոկը կոչվում էր հին Հայաստանի նահանգներից մեկը, որ ընկնում էր Ազձնիքի արեվելյան կողմում, հյուսիսից և արեվելքից սահմանակից էր Վասպուրականին, իսկ հարավից Գոգճայքին (Գեղդուաց ավազան)։ Ծովհաննէս կաթողիկոսն այս նահանգը կոչում է «խոշորիկ և գժուարաժայռ և ամուր ավազան» (էջ 292, Ղուկ. հրատ.), իսկ Թովմա Արծրունին դրում է՝ «էլբինա բազմաբնակ և վաստակ անառատախիտ ունի երկիրն Մոկաց» (էջ 458, Ղուկ. հրատ.)։ Այս լեռները Տավրոսի մեծ դռատ հյուղերն են։

Մոկը նահանգի գավառներից մեկն էր Առանձնակ Մոկս, որ հավանորեն նույնն է մեր ժամանակի Մոկաց յերկրի հետ։ Սրա մեջով անցնում է Մոկս գետը, Արեվելյան Տիգրիսի ազ վտակներից մեկը, որ սկիզբն և առնում Մոկոր հին Իշտունիքից (արդի Գավաշից) անջատող լեռներից։ Այդ գետի վրա էի Մոկս գյուղաքաղաքը, Մոկաց յերկրի կենտրոնը, որը բաժանված էր վեց փոքրիկ թաղերի. դրանք են՝ Գաշտի թաղ, Անձղոնց թաղ, Աբրհամենց թաղ, Քաղքի թաղ, Ջաղցի թաղ և Մանասկանց թաղ։ Սրանցից առաջին հինգը հայաբնակ էին, իսկ վերջինը՝ քրդաբնակ։

Մոկս գյուղաքաղաքի Գաշտի թաղի բնակիչ Վարդան Մուխե-Բաղիկյանից են գրի առնված № № ԺԱ և ԺԱ պատումները, Ջաղցի թաղի բնակիչ Մանուկ Հարությունյանից՝ № ԺԲ պատումը։

Այս գյուղաքաղաքից դեպի արեվմուտք, մոտ մի ժամ հեռավորության վրա գտնվում էր Գինեկանց (Գինեկանց) գյուղը, որի բնակիչներն էին № Ա պատումի առաջող Նախոն և № Բ պատումի առաջող Ջաստինը։

Ապա Մոկս դեպի արեվմտյան վտակ Ածնջու ջուր դեռատի ափին գտնվող Առինջ գյուղից էր № Զ պատումի առաջող Ղազար Հովակիմյանցը։ Այս Առինջ գյուղից են յերգել և № Է պատումի առաջող Մախոյի ծնողները, և առաջողն ինքն էլ

---

* Գ. Ղռնեցյան, «Ատրպատական Հին Հայաստանյաց» Վենետիկ, 1822 թ., էջ 132։

մի առժամանակ այտեղ և տպրել, ապա իր ծնողների հետ փոխադրվել և Շատախի Ղրխուրլար գյուղը:

Մոկսից հարավ համանուն գետի վրա յի Հալին գյուղը, որտեղից եր № Ի պատումի ասացող Քուման Գևորգյանը:

Մոկսից արևմուտք բնկնում և Շատախ գավառակը, իսկ որանից արևմուտք՝ Նորգյուղի գավառակը: Շատախը հին Մոկսց նահանգի մասն և, իսկ Նորգյուղը վաղուրյանի հին Անձևացիք գավառն և, որը մեջ և Հոգաց վանքը:

Շատախ գավառակում պետք ե՛հիշել Առևո գյուղը, № ԺԹ պատումի ասացող Մկրտիչ Հարությունյանի ծննդավայրը, ապա Հինենց գյուղը, որի բնակիչներ են յեղել № ԺԹ պատումի ասացող Մանուշակ Զաքոյանը, № ԺԱ պատումի ասացող Գրիգորը և № ԺԲ պատումի ասացող Ադիլ Ղարիբյանը:

Շատախի Կաճևա գյուղի բնակիչ եր № ԺԶ պատումի ասացողներից Թաչո Մուրադյանը, իսկ Ամո Զաքոյանը Հինենց գյուղացի յեր կաճեացի յեր նաև № Իե պատումի ասացող Հովան Զոհրաբյանը:

Մոկսից արևմուտք բնկնում և Սպարկերտ գավառակը, որը հին Մոկքի մի մասն և, մեջն ունենալով Ալպարանից սուրբ Քաչի վանքը, որը հները դնում են Մոկքի մեջ: Սպարկերտ գավառակի Բաղնից գյուղի բնակչուհի Փառվիից և որի առնված № ԺԸ պատումը:

Գավաշ գավառակը հին Ռշտունիքն և, Մոկսց յերկրից հյուսիս, Վանա ծովի հարավային կողքերին: Այդ գավառակի արևմտյան սահմանի վրա յի Ընձաքիտար լեռը, որը հնատեղում կոչվել և Կապուտաղն, իսկ մեր արևելում Կապուտկող, ինչպես և վեպի մեջ:

Գավաշում են՝ Տեղող գյուղը, որտեղից եր № ԺԲ պատումի ասացող Ցեղիպատ Հակոբյանը, և Նարեկ գյուղը № Ի պատումի ասացող Զաքոպատ Տեր-Մխիթարյանի հայրենիքը, Հարբերդ գյուղը, որտեղից եր № ԻԲ պատումի ասացող Գրիգորը Փոխանը, Բողնիս գյուղը № ԻԳ պատումի ասացող Համբարձում Գրիգորյանի ծննդավայրը: Գավաշցի յեր նաև (գյուղն անհայտ ե) № ԻԱ պատումի ասացուհի Մարգարիտ Սարգսյանը:

Ռշտունիքի կենտրոն վասպանից արևմուտք, Վանա ծովի հարավ-արևելյան կողմում, Վան քաղաքից 7հարավ ընկնում և հանրաճանաչ Հայոց Ձորը: Այս գավառակի Անկուան գյուղից եր № ԻԳ պատումի ասացող Կազարյան Թաման:

Գարեգին Սրվանձտյանցը 1884 թ. (այս հատորի № Ա պատումի դրի առնվելուց յերկու տարի առաջ) հրատարակված «Համով-Հոտովշ-ի մեջ համառոտ նկարագրում և այս լեռնային գավառակները: Այտեղ գնում ենք հետևյալը.

«Շատախ, Նորգյուղ և Կավերկատ գաւառք միացնալ Գաւառապետութեան է Շատախի քով, վանէն 16 ժամ հեռի. կլիմքը՝ լեռն և ձոր, օդը՝ ջերմ և ցուրտ, անառուտ, ջրալից, ունի սեղ-սեղ և փոքրիկ հովիտներ, բարձրաբերձ ապառաժներ և քարանձաւներ: Ակունք Տիգրիսի կամ Շատ գետոյն կը բղխին Նորգյուղէն, որոյ ջուրը Շատախու միջով կ'անցնի և իր մէջն ունի բաւական կարմրախայտ ձուկն առատ առատ: Այս գաւառներէն կը մնուցանեն ընտիր և բազմաքիւ ոչխար ու այծ, մանաւանդ չուխա կամ չիլիկ, յորմէ կ'առնուն դիւրաքիկ. (նոյնը ունի նաև Ջուլամերգ). կը զբաղին գոյնգոյն և քանձր

ու բազում ազնիւ շալիք, քաղախիկ, ոչոյ և այլն Նորդուզայ կը վերաբերի հաշուառուց Հոդուց վանքը։

Անուանի են Շաատախի ընկոյզ, մեղր և այլ և այլ մթերքներ։ Բնակչաց բազմաթիւ մասն կը կազմեն Հայք, ապա Քուրդք, ապա Ասորիք՝ Նորդուզի կողմեր վարժարանք Հայոց 7, աշակերտք՝ 487։

Մոպս, Մամատանք և Սպարկերտ գաւառք Դաւառադլուխն է Մոպս աւանը, վանէն 18 ժամ հեռի։ Սպարկերտը այժմ կը վերաբերի Սղերտին՝ բազիղոյ կուսակալութեան ենթակայ։ Դիրքը այս գաւառաց լեռնային, ամուր և բարձր ու խոռոչ անտառներով և մեծամեծ ժայռերով Օղը՝ ցուրտ և ձիւնի Ջուրն ազնիւ և առատ, բնակիչք կարի քաջառողջ կը մնուցանեն բնաւիր աչխատ և չուռ այծ, առատ և պատուական մեղր ունին։ Անուանի են մրգեղէնները՝ խաղող, չամիչ, ուռւ, ընկոյզ, տանձն և այլն։ Հոս ալ պետուական շալ և սրոյ կը գործեն և կը շինեն «բուռ-բուռ» կօշիկներ, — նոր մոդով և կանոնով հիւսուած կօշիկ է, տակն ամրոզ բնանիւթով, ձիւնի և քարի վրայ քալելու յարմար։

Մոկաց լեռանց շղթայն մի և նոյն է, որ Կէվկէնն, Ջուլամէրգէն, Նորդուզէն, Շաատախէն ձգուելով կու գայ, այն է՝ Տաւրոս, և կը չարունակէ դէպ ի Բաղէշ։

Մոկաց գաւառի մէջն է Փուդկոյ ս. Գէորգի վանքը՝ որ այս կողմի ս. Բնաւոթգոնն է, միակ ապաստանարան ուղևորաց բուքերու և փոթորիկներու. հրեսէն, հռչակաւոր իւր աթոռոցովն Սպարկերտի մէջն է՝ Ապարանից ս. Յակոբ հոյակապ վանքը, որ այժմ դարձեր է Քրդաց ձեռքը խոտի մարագ։ Ջրոյ մեծ վտակ մը կը բաղխանայ Մոպսէն՝ համառուն, որ կ'օժանդակէ Տիգրիսին։

Բնակիչք Մոկաց, Մամատանաւ և Սպարկերտաւ՝ են Հայք և Քուրդք։ Մոկաց, Շաատախու և իրենց մերձակայ գաւառներէն երթեւեկ Աշիրաթներ կան բազմաթիւ և բազմացեղ, որք Մուսուլայ կողմերէն կու գան ամառը և ձմեռը կը մեկնին...

Այս գաւառաց Հայոց Ազգ. դպրոցներ լաւ է. գլխաւորապէս Մոկաց մէջ, ուր կայ վարժարան 2, աշակերտք՝ 91։

Հայոց Ձոր, Ռոտան և Գաւազ գաւառ։ Հայոց Ձորը վան քաղաքի գաւառն է, և Ռոտանը Գաւաշին միացած, յորս մէւտիրներ կը նամին Գաւաշի գաւառապետութեան է։ Ձոր գիւղի խանը, վանէն 9 ժամ հեռի. խակ մէւտիրները՝ Ա. 4 ժամ, Բ. 6 ժամ։ Առաջք կ'իջնան վանայ հարաւակողմը, ծովափնեայ։ Այս գաւառաց նահը պարապի պէս բարձրացած են Նորդուզի, Շաատախու և Մոկաց քարաքեռներէն։ Հայոց Ձորը հովիտ է, և Ռոտանը գետ ու Շամիրամայ ջուրը իւր միջով կ'անցնին։ Ռոտանն ու Գաւաշը դաշտային և լեռնային են, ջրաւէտ և օգտաւէտ, դիակերը յաճախ մրգաբեր և անպտուղ ծառերով զարդարուած, բայց երկիրը ոչ հաւասար սրտագործ։

Ազգային նշանաւոր և նուիրական յիշատակներով լի են այս գաւառները։ Հայկայ ճակատամարտն և յաղթանակի ձորը։ Աբգահամ Ռոտոմանոցի վանքն ու շիրիմը, Վարդ Գաթրիկի գերեզմանը և այլն։ խակ Ռոտանայ մէջը՝ ամենազանազանութեան եղիշէի գերեզմանը ս. նշան վանքին մէջը, Գագկայ և Գուրգենայ բերդը՝ Ռոտանայ կառավարին վրայ, ծովափը, ուր քարերու վրայ խոշոր տառերով քանդակեալ գան կը կարդացուին անուններ Գաւաշն է Իշտունիք,

ուր է Նարեկացի վանքը, Աքաոս լեռը. հոն ծովուն մէջը իւր շէնքով և գիրքով հիանալի տեսարան Աղթամարցոյ ալիքներով կը ծփայ, և հանդէպ Առաքը իզդին և այլն։ Բնակիչք ասոր գաւառաց են Հայք և Քուրդք։ Արժարանք Հայոց 12, ուսանողք՝ 566։»

Այս գաւառներն ունին 14 վանք Ազգ. զրացումն՝ վանքերէն հեռի յեղած գիւղերու մէջը կամ է»*

Հայոց Ջոքը հնուէն առանձին գեր չի կատարել, իսկ Իշխաններք և Մոկք ունեցել են իրենց առանձին իշխաններն ու յեպիսկոպոսական վիճակներք։

Իրրև լեռնային ամուր յերկիրներ դրանք, մանաւանդ Մոկքը, յերկար դարեր պահել են իրենց ինքնուրոյնութիւնը և համեմատաբար ամէն կարգեն լինելով ուրիշ կողմերից՝ ապրել են իրենց փակված կեանքով։ Քրեռնային յերկար ամիսներին տեղի բնակչութեան մատոյց անունդը յեղել և հին ամանդութիւնը, վորով հարուստ և այս շրջանը հին դարերից ի վեր։ Մովսես Խորենացու «Հայոց Պատմութեան մէջ»** արդէն գանում ենք Առամ Մոկացու մասին զրոյցը, վոր անպայման ժողովրդական ծագում ունի։ Այստեղ Մոկացիք ծագրվում են իրրև քարերի մէջ բնակվող դեվեր։

«Էր երբեմն գինւոյ հրամանաւոյ յուսոյ յանդղնադոյնս արշաւել ընդ խորատարտաս և ընդ վիմուտս տեղիս. յորմէ կասել սկսաւ Շապուհ։ Իսկ Առամայ Մոկացոյ եկեալ գնաց՝ ասէ. «Գինի, գինի, առաւտածորդիդ Պարսից, եթէ այր իցես։ Եւ նա ասէ. «Դու երկիցիր, զի ի քարինս գիւաց է յանդուգնել»։ Դարձեալ յայնժամ ժամու գիւղացաւ ի շամբս կիննդս որպէս հրով, և Շապուհ ոչ համարձակեալ ի քաւուն քաջարշաւ լինել, մինչև շրջապատեալ հուրն և նորա գնայեցուածոն յերիտս բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երիվարաւս Միւս անգամ ասէ Առամ. «Առաւտածորդիդ Պարսից, ահա հայր քո և առաւտած, ընդէր գանգիտանաս։ Իսկ Շապուհ ասէ. «Թողեալ ի բաց զկատակերգ յանցանել ընդ հուրդ զարձն զրեղ, որ և ես գիտի քո քանզի յատաջելն՝ ձիս իմ խրտչէր։ Ցայնժամ այպանեաց գնա Առամ՝ ասելով. «Մինէ և այդ քարինք էրկն, զի ես յատաջեցից. և արդ՝ եթէ զու զՄոկացիս կոչես գիւազդիս՝ ես զՊատանդանաղ կոչեմ կնամարդիսն։ Եւ մտրակեալ գերիվարն իրրև ընդ հովիտ ծորկանդ անցանէր ընդ հուրն, գիրժուցանելով զՇապուհ։ Եւ յետ այնր գիտացեալ, եթէ նմա չուռ ո լինի՝ անցեալ ի Մոկացն գնայր յաշխարհ»։

Այս գովասանկերի հարուստ բանահիւսութիւնը, ինչպես և ուրիշ կողմերինը, անուշադրութեան և մոռնված յեղել Վրբան հայտնի չե, առաջին անգամ Աբրահամեան վ. Սեդրակեանը, ինչպես 1872 թ. գրած առաջաբանիդ յերևում է, Վերնջակու Ապրահամեանի վանքում հետս տարվան ընթացքի մէջ մուտքիկ Մշեցիներին և Վանեցիներին գրաւոլիքամբ ժողոված ասկավաքիկ յերգերը» հրատարակում է 1874 թ. Եզմիածնում «Քնար Մշեցոց և Վանեցոց» վիրագրով։ «Վանեցի» անունով այստեղ կոչված են վերջիններքը — Գավաշցիներքը և Մոկացիներքը, վորոնք գրաւում իրենց ամենատարբ Վանեցի չեն անվանում, և յերգերն էլ մեծ մասամբ Գավաշի և Մոկաց յերգեր են, ինչպես Թ. յերգը Գավաշի յերգ է, իսկ մյուսներքը՝ ընդհանրապես Մոկաց։

---

* Գարեգին Սրմանեանցից, «Համով-Հառաչ», 1884 թ. էջ 87—91։

** Մովսես Խորենացի, «Հայ. Պատմ.» Գ. գիրք, գլ. Ծե։

«Եկին, եկին Մոկաց խաբանէք,
Կրախանանաոր նանանոր.
Մոկաց խաբանէք են քնարով,
Կրախանանաոր նանանոր։
Եկին, եկին Սեղա լաճէր,
Կրախանանաոր նանանոր.
Սեղա լաճերն են խանչարով,
Կրախանանաոր նանանոր։»*

Այդ «Մոկաց հարսանեաց» են ահա մինչեւ մեր ոտները յիշգել իրենց բանահյուսութիւնը, իրենց յիրկրի լեռներն ու կիրճերը և անցյալ հերոսներին։

Ահա մի կտոր նրանց հարսանեաց պարերից.

«Մոկաց աղջիկ պետ պետ քաջիկ,
Դեղ չիր լուացիր, արեվը առար...
Տ'եղնեմ աղջիկ, սեյրան տ'ենեմ.
Տ'իջնեմ կալիր, հերան տ'ենեմ։
Սիրող չունիմ, պատճառ կ'ենեմ,
Ադաբ լաճու խոզին խանեմ...
Տակ մ' եղ կարեմ, բուռ մ' եղ փնջեմ,
Ադաբ լաճուն սեր որսիկեմ։
Տո ադաբ լաճ,... ամ Մոկացիս...
Վայ Մոկացիս,... քամ Մոկացիս...։
Հինգ եզ ունիմ յոթ ուխտն ուղով,
Կաթ կը կթեմ գոմշու տիկով։
Եգիր մ' ունիմ քո նամանակ,
Գառուդ բաներ նեցուկն ի տակ,
Երթամ, քաղեմ կոզուիններով,
Բերեմ, լըցնեմ կաբասներովս։»**

Աչապես և ուրիշ յիշգերի մեջ Մոկացիները յիշգում են իրենց քնութիւնը։ Ահա Մոկաց լեռների բարձր գագաթի՝ Առնոսի մասին.

«Առնոան եր սարերաց բարքմբար,
Թուխ ամպերն եր գարամիլ,
Սրխտակ ամպերն եր սարսափիս...»***

Մոկացիք, նույն իսկ Մոկաց կանայք, մինչեւ մեր ոտները պահած են և վիպական յիշգերը՝ «Մոկաց Մխըզա», «Ասլան ադա», «Գարոս խաչ», «Ալիք-սիրանոս», «Նաբեկացին». վերջինս՝ նաև Գավաշցիք։

Նրանք պատմում են և «Շահ-Նամեից»։

---

* Սեդրակյան, «Ռնար Մշ. և Վան», եջ 40։

** Սրվանձտյանց, «Համով-Հոտով», Կ.-Գորիս 1884, եջ 305 հմ.

*** Գաբր. Հովսեփյան, «Փշրանքներ», Թիֆլիս 1892, եջ 25։

Շատ բնական է, որ Մոկքի և Ալաշկերտի այդ բնակիչները հին ժամանակներից ի վեր յուրացնելին և զաղթացնելին նաև «Մասնա Ծռերը»։ Այսոհ, այս հատորի մեջ ամեն դրանց պահած պատումներն են դրված։

Կան մի քանի ուրիշ պատումներ էլ, որոնք այլ կողմերից են դրի առնված, բայց ծագում են Մոկացիներից։ Ճարդ ունենցած հետաքրքրություններ այն յեղակացության հասած եմ, դրում է Ս. Հայկունին, որ Մասունա Դավիթ և Մհեր դյուցազնական վիպը Մոկացի դպրոցներ ստեղծած են հետո դավաներ, նաև փորը մասամբ կռամանցի և Ռշտունի դպրոցներ։ Մոկացի պաղտիսականներն ու զաղթականներն էլ նույն դերը կատարել են։

Այս դավառակներից հարուստ բանահյուսությունը դեռ շատ քիչ նը դրի առնված, յերբ իմպերիալիստական պատերազմի հետևանքով այստեղի բնակիչները 1915 թվին անդառնալի յեղան։ Նրանց ժառանգները այժմ ցրված են Արևելյան Հայաստանի զանազան կողմերը և ուրիշ տեղեր։* Դեռ կարելի յե նրանցից հավաքել բանահյուսության ինացորդներ։ Մի 10—15 տարի ևս, և վոչինչ։

---

* Մեր ունենցած տեղեկություններից համաձայն Մոկսի, Շատախի, Ալաշկերտի, Գավաշի ու Հայոց Ձորի բնակիչներից նեղակատում ապրում են Արևելյան Միության հետևյալ վայրերում.

ա. Արևելյան Հայաստանում.—Յերևանում, Վաղարշապատում և Աշտարակում. Աշտարակի, Բաստրեկյարի, Եռմոյանի և Վեդիի շրջաններում.

բ. Արևելյան Միության այլ վայրերում.— Թամբովում, Նովոսիբիրսկում և Կրասնոդարում, յերբեմն էլ ուրիշ քաղաքներում մի քանի տուն։

Հիշված դավառներից բնակիչները մի փորձից մասն էլ ապրում և Արևելյան Միությունից դուրս, այն է՝ Ամերիկայում և Իրաքում։

ԲԱՐԲԱՌՈՒԱՑԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄՈՎՍԻ, ՇԱՏԱԼԻ, ՍՊԱՐԿՍԻՏԻ, ԴԱՎԱԶԻ ՑԵՎ ՀԱՑՈՑ ՁՈՐԻ ՊԱՏՄՈՒԻՆԵՐԻ

1

Մեր նպատակը չի այս հրատարակության մեջ լրիվ և ամբողջությամբ ուսումնասիրել և բերել բարբառների քերականությունը, այլ միայն համառոտ լուսաբանությամբ այդ բարբառները մատչելի դարձնել ընթերցողներին, վորպեսզի արանք մեծ դժվարություններն չհանդիպին հատորումս ամփոփված պատումները կարդալիս։ Բայց և այնպես, վորոշհետև քերականական համառոտ վերլուծությունն էլ հազիվ թե կարողանա բացատրել քերականական բոլոր նրբություններն ու դժվարին բառաձևերը, ուստի անհրաժեշտ գտանք բացի դրանից՝ հատորներն վերջում ջնել նաև դժվար հասկանալի բարբառային բառաձևերի այբբենական ցուցակը, ինչպես նաև այնպիսի բառեր, վորոնք իրենց փոփոխության պատճառով դյուրությամբ չեն հասկացվում, որինակ՝ անվոր (անուշտվոր, անուշտով), ասած (ասամած), խաք (հավք), խև (հևի), խնոք (նայինք, հայինք), հրատան (այրանոց) և այլն։

2

Ձիշտ քերականության կազմելը դժվարանում է նրանով, վոր բանահավաքներն առհասարակ պրի առնելու ժամանակ չեն հետևվել դիտական ճշտությամբ պատահայտելու բարբառային հնչյուններն ու քերականական ձևերը։

Բացի այդ՝ նրանցից յուրաքանչյուրը հետևվել և առանձին դրության յ հզանակաների, վոր սահմանված ենք ջեզ հատուկ պահելու։

Տառերի համապատասխան հնչյուններին համար պահել ենք ընդհանրապես արևմտահայ գրական լեզվի սովորական պատասանություններ։ Գրական լեզվի մեջ ջեզած կարևոր բարբառային հնչյուններին համար դրած ենք ամեն հնարավոր պայմանական նշանները.

ա) «ա» բերանի առաջակողմյան «ա»-յի պատասանության համար, ինչպես, որինակ՝ ախպուր, ամպէ, Տաղիի, ասից և այլն։

բ) «ա», ինչպես դերմաներեն ö, ֆրանսերեն «ը», որինակ՝ յուս, յուկնալ, պուր, Հավան և այլն։

գ) «ա», ինչպես դերմաներեն ü, ֆրանսերեն «ա», որինակ՝ երգեն, ուս, բալըրալուսիկ, աուռ, հաւրիչ, դլխուն, յուցով և այլն։

դ) «ժ»* ձայնով «ղ», այսինքն՝ «ղ» հնչյունը հետը միացած ձայնը, ձայնավորների հնչյունը, մինչդեռ գրական ավոգրական «ղ»-ն անձայն է, բոլ բնական տոմսուն, որինակ՝ Յակոբ, Յարձակ և այլն։

Բոլոր այն դեպքերում, երբ «ղ», «ի», «ը» հնչյուններին հաջորդում են ձայնավոր հնչյուններ, նրանց նախկին դերը պահպանում են, այսինքն՝ «ղ» հնչում է ղ, «ի» հնչում է յ, «ը» հնչում է ը։

Բայց այդ ժամանակներում և այսօր էլ «ղ», «ի», «ը» հնչյունները հաճախ ընդունում են ուրիշ հնչյունների դեր։ Այսպես՝ «ղ» հնչում է ղ, ի, ը, ու, ո, ա, ե, ի, ը, ու, ո, ա, ե, ի, ը, ու, ո, ա, ե

(աբէ, յեկ), ենեք, ենա (անէ), երէ (աբեցի, աբէ), երեք (աբեք), եան, եաց (ասաց)։

$$ա > ը$$

Քըլեց (Քալեց), շըլակեմ, բաց, բաա, կը յոգկընան, երկըքեն, խըրկաա (հանքեան)։

Այսպես և վերջի հնչափածը, որինակ՝ շախկը (շախակ), բալը՝(բալա), չորը՝ (չորա)։

$$և > ա, այլև և > ա$$

վար, վար (վեր), խաա, խա, խաա, խա (հետ, միասին)։

$$և > ը$$

մըր (մեր), վըր (վեր), մըզի (մեզի), մընակ (մենակ), Քը (Քե, ինչպես գրվում և նաև արտասանում), չըմ ասեր, ասըց, Քալըց, չըս գիտը։

$$և > ի$$

դըշիր, ուղիր, մարդիկ, ծընկնիր, իրիս, հիրիկուն, միր (մեր), ծիր (ձեր), խրկիկ (որկոր), ըլըրկաւ, ծիծիկ (ծնծղայ), պիրիմ (բերեմ), արվիկ, երիկ ես (արել ես), իրի, միծ (մեծ), վի (վիր), իր (երբ), խիտ (հետ)։

Շատախի ինքնատիպ բարբառում բոլորի վերջավորութիւնների մեջ, այլև ուրիշ դեպքերում «ե» ձայնավորն անփոփոխ և միատեսակ, որինակ՝ պիրեմ, պիրես, պիրենք, պիրեն, հըրեկը, «համեր պռնեց, խառնեց ուտաց, աչկեր (աչքեր), գիշեր և այլն։

$$է > և, այլև է > և > ը > ա$$

գաղեք (գնացէք), սոպանէք (սպանէք) (վերջի «ք»-ը բմայնացած), մենջ > մըջ, մընչ > մանչ (մեջ), կ'ասե > կ'ասը > կ'ասա (կ'ասէ)։

$$ո > ի$$

ապվիս (ապուէս), մարդն ի (մարդն է), կ'ըսի, կը պիրի։

$$ը > ա$$

Այսպես մեզմ № իմ պատուհասում (Գավաչ). գաղոխ (գլուխ), գաննալ (գնալ), գալորել (գլորել), կա գնեք (կը գաք), կ'անդնի (կ'ընկնի), չկընի (չի լինել)։ Այսպես պատահում և նաև՝ չամ (չեմ)։

$$ի > և$$

ձեձ (ձիճ), անբա (անբան), կջավ (իջավ)։

$$ի > ը$$

դըշիր (դիշեր), վրդ (վիզ), արբա (անբան), ծրծ (ծիծ), հիվը՝ (հիվանդ), կռապաշտը՝ (կռապաշտի), Քահատրը՝ (Քագավորը—Հայոց Ջոր), գրպնը՝, ասը՝, ինը՝ (անի), կ'ասը՝ (կ'ասի), չրմ ասներ, ասնրմ, շընրցը (շինող), շինրցըն, հագնիցըն (հագնողին), գացրն, տրվը՝, մը գարնեն, մը վախանեն, մը հա՝ (մի հայիր)։

«Մոկաց բարբառով բառերու մեջ գտնված ամեն «ի» տառը «ը» կը փոխվի, իսկ տառը հաջորդ բառն արտասանած խառնե առաջի «ի» ունեցող

բառին, իսկ յիրը բառերն հանդարտ և պարզ կը հնչէ, «իւ»-ի մերձ ձայն մը կը հանեն» (Մարգիս Հայկուհի)։

Որինակներըը բերում ենք № Լ պատուհիկ, որոնց մեջ, սակայն, նշաւէքյատկ չէ պահված այդ կանոնը. «տանը՛ս խաղցըցէ՛ս», «տունը՛ս բերիս», «տարը՛ր դրիր», «ձեռ քալը՛ց, ենու հոլ բանիցը», «իս չասը՞մ՝ ենի չըմ տանը՛մ խիտ», «տարը՛ն մուտցին կրակի մեջ», «քալը՛ց դրը՛ց հոր տակը», «շունն, որվըն հոր ձեռ»։

$$\text{ի} > \text{յև}$$

տրեկ (տիկ)։

$$\text{ո} > \text{ը}$$

քը, քրխ, քրդ (քոդ), քը լա, քրխ կա, քրդ կրքեա։

$$\text{ո} > \text{ա}$$

քա, կա (կո), գրծ, բաց, Համան, պալար (բոլոր)։

$$\text{ո} > \text{ու}$$

նուր, խուր (հոր), քու, քուխ, քուդ (քոդ), բուղուր, խուս, կուա, ծուց, չուրս, փուր, փուս, խուդ (հոդ), ուխաշար, վուվ (ով), ուրուրոց, խմուր։

$$\text{ո} > \text{ա}$$

յար (լոր), բաբար, խնձար, նար, շնարք, շար, գաւախ, ծար։

$$\text{ո} > \text{ու} > \text{վ}$$

Այսպես մնայն դրարար «ո» բառը, որը նշանակում է «վար» (շագիաղ), որի-նակ՝ «Տաւ 'վ եղնեք գառնանը՞գառ»։

$$\text{ու} > \text{ո},\ \text{այլև}\ \text{ու} > \text{ո} > \text{ա}$$

դրլոխ, դրլոխ, քոր, քոզք, քոխա (քուղք), տոռ, շոտ։

$$\text{ու} > \text{ա}$$

հարիշ, տաւ (դու, դուք), կաւ գա, տաւռ, շուտ, ճար, տարա, ալխր։

$$\text{ու} > \text{բո}$$

տրան (տուն), մրոխ (մուխ)։

Այսպես մնայն № Լ պատուհիկ։

5

ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

$$\text{այ} > \text{ա} > \text{ա}$$

աս, ամ (այս), աս, ամ (այդ,) ան, ան (այն)։

$$\text{այ} > \text{է} > \text{և}$$

խևք (հայք), ծաուն (ծառայն), գերեխան (գերեհայն), կիխան, գևք (գայք), կը տեք (տայք), կը կշտանիք, տան մ՛ (տղայ մը), փաթան մ՛։

Անասովոր կերպով պատահում և նաև՛ թանձր (հայն, հայր)։

Շատախոսում այս «հ>յ» առաջ «ձ», «ի», «ը» հնչյուններով չէին փոփոխվում, այլ արտասանվում են իրրև հատկապես հնչյուններ։

$$այ > ը,\ այլև\ այ > ա > ը$$

ինձ կը (ինձ կայ, ինձ է), տասնամյակ ինձ կը (տասնամյակ ինձ է), պաճուճ, պըճուճ (պայճուճ)։

$$աւ > ա,\ այլև\ աւ > ըա$$

մաու (մաւա, մաա), առաուտուն (առաւաւտուն, առավոտուն), մըա (մաւա, մաա) (միայն № Ը պատահմամբ)։

$$նա > ա$$

պրհնակ (պրհնակ), հիշա (հիշնա)։

$$նա > ն > խ > ը$$

ախմ (անաւ, անէ), պաթխմ, պաթխմ (բանական), գնաղխը խ (գնացնակ է), անխըր (անհնակ), շինխց, շինըց (շինանաց, շինանց)։

$$նաւ > նօ > յո$$

յոքի (նաւքին, նօքին)։

$$նէ > իւ > ի\ կամ\ նէ > ն$$

անբրանդութիւնն, անպիտութիւնն (անպիտանութիւնն), անպետութիւնն, հաւրանաւքին։

$$իւ > ու > ի$$

ուբ, ուր (իւր), ուոր (դիւր), նրանի (արիւն), անպուր (ապրիւր), ուան, ուանի (սիւն)։

$$ոյ > ու > ի,\ այլև\ ոյ > ո > ի$$

բիրիւու, պիրիւի (բիրիոյ, բիրիւ), խաղալի, շրջիւի, խոզուա, լուսի, լուա, էօա, լաա (լոյս)։

6

ԿԻՍԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ *

$$յ > հ$$

հխա (յնա), հխա Ճաց (յնա Ճաց), կը հիշա (կը յիշե), Հովհան, հաղքից, հաճախից (յաղքից)։

$$յ > վ$$

խավու (հայու), խավաց (հայոց)։

Մի յիրկու պատուժմ մեջ «յ»-ն պահում և իր հնչյունը հետևյալ բառերի մեջ յարե, յարիք (դրացար՝ յարե, արե, արիք)։

---

* Տես Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Վենետիկ 1931, եջ 89 և հաւ։

7

ԲԱՂԱՁԱՁՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ձայնով բ, գ, դ, ձ, ջ, ղ բաղաձայնները դառնում են անձայն՝ պ, կ, տ, ծ, ճ, չ, թ, որինակ՝ խոսթաղեր (հոբելեպտյը), պան (բան), սխպուր (ազբիւբ), պերան (բերան), պլիրկս (բերկս), պլբռնկս (բռնկս), խպաց (եբաց), պռլեր (բոլոր), պռնդը (բաթթը), կըլոխ, կռան (գառն), կը կըրը (կը գրե), կնաց կնկ, տաւ, տուռ (դուռ, դուք), վորպի (վորդի), տաւս, տաւր կը գա՞, տանտամ, Տամվէք, ամա, ատ (այդ), տաֆ իմ ձիւռ խուրջվէս, ծի (ձեր, ձեզ), ծի (ձի), ծեն (ձայն), Ծենով Հավան, էկը գա մրնչ ծեսաց, ծեք, (ձեք), ծուր (ձոր). հուռ, ճաւր (ջուր), սխճիկ, սխչիկ (ագջիկ), ճաճ, ճաչ (ջոջ), հերճիվ, իճի (իջիր), տաւր մ՝ ել իճնիմ. խրկել, հորոխկել (ղրկել, ուղարկել), սխատց (սեղաց, սեղի), «քըխ տանի», հաֆատց (հաղթեց), ինչքա՞

Առաջին դեմքի յնզականի համար «ձ»-ն պահում է իր հնչյունը, որինակ, ձի, ձը, ձիկ, ըղձի՜, վորովհետեվ նա ծագում է ընձի բառից. «ն» անդայինից հետո ձայնով հնչյուններդ պահվում են

$$ն > խ$$

խեր (հայը), շնոխք (շնորհք), խուղ (հող), խնոք (հայիոք), խազար, «խեղեղ ի՛լինը», «Մատնա ծին խանախաս եր», «հանամ դքի խանիմ երիքյանկան»

$$ւ > ը$$

բռնիը ի, պռնիը ի (բռնել է), քրտնիը ի (քրտնել է), «աատամքիը քաշիը, պորիկիը ի»

$$կ > յ$$

Այսպես և բացառապես Հայոց Ձորում և Գավաշում, որինակ՝ սխչիյ (ագջիկ), ապկ, ապկներ (ագռիկներ), մեյաղ, իրկյ (էրկիկ), մանիշայ, ժամանայ

$$չ > շ$$

աշկ (աչք), իշ (ինչ), իշ կը, մեշք, մըշ

$$ք, նք > յ՞$$

Ձիր երկաներս ճուճ-պլոր կ'ենեք յեղ-չորթան՝

10. Մսրամելիի զորահավաքը, սրտավառիչ խոսքեր հարկ պահանջելը

Կոզբադին դնաց մոտ Մսրամելիք, ասաց.
— Մսրամելիք, Դավիթ գյոթն տալվան խարջ չտուր.
Ասաց՝ Քա Մսրամելիք ինչ կ'անի՝ թըխ անի։
Մսրամելիք զդալալ եքից քաղաք,
կանչեց ասքեր ժողվելու, ասաց.

«Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար*
Նորալեկ մանուկ (ես**).
Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Լա** բեղդար ազա (ես).
Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Լա թուխ մորուս (ես).
Թը ժողվիմ խազար խինդ խարիր խամար
Սըլտակ մորուս (ես)»։

Ասաց, ժողվեց, զըմեն թոփ երավ,
Ասքեր կապեց, եկավ վեր Սասմա քաղքին։
Մընչ դաշտին զոր չտեղ բ-խեվախ եղար,
Ջուհակի խրկեց Ջենով Հովանին։
Ասաց.— Ջենով Հովան,
Իմ յոթ տալվան խարջ կը տաս՝ տու խաթրով.
Թը չես խաս, կը կամ, Սասմա քաղաք ավրեմ,
Տանեմ Մսրա քաղքի քամակ, նոր քաղաք չինեմ։

11. Դավիթը գերադասում է կռվել քան հարկ տալ. Սասիայի ծաղրը

Ջենով Հովան ասաց.
— Մենք չենք կարա կռիվ անի,
Թը կռիվ անի՝ Դավիթն և.
Կայնի՝ Դավիթն խարցնենք։
Դավիթ ասաց.— Ձես չեմ խաս իմ խոր խղճնեն.

---

* Ձերգ և՝ Մ. Ա.

** Ես, լա չերդի չափը լրացնող բացականչություններ՝ Մ.Ա.

Ինչ կ'անեն՝ քըխ անեն։
Զհնով Հովան Դավիթին ասաց.
— Դաւվիթ, վոր ընցկուն ի,
Ես գլիը կը կ'ան, քլին վայր մեր քաղքին, ավրեն։
— Խրդրեր, ատ ձնացիր, ձիր տան քնեք.
Ցես կ'երթամ, կռիվ անեմ խլխուն։

Խրդրեր կնիկ չանա ետու Դավիթին, ասաց.
— Դաւվիթ, վոր կ'երթաս, կռիվ անես,
Չմարամելիք սպանես,
Ետու ձախ ձուն բի, անենք մեր այից գիդ։

12. Դավիթը Պառավի խորհրդով հարեղբորից առնում և իր հոր ձին ու սարքը

Ընցկուն Դավիթ հնրս նկավ,
Եվ գլիը հնոր քուն չտարավ։
Խլխուն եկավ, գլիը նետ ու աղեղ առնց, գնաց։
Վոր եկավ գնա, Պառավ ասաց.
— Դավիթ, հեռը տ'երթաս։
Դավիթ ասաց.
— Տ'երթամ, Մարամելքի կռիվ անեմ։
— Տաւ ինչ ունես. նետ ու աղեղով տ'երթաս,
Մարամելքի կռիվ անես։
— Հրպա ինչ անեմ, ձի չունիմ, քուր չունիմ։
Պառավ ասաց.— Դրդոս քի տանի,
Ախոռս չիր՝ տաւ ին խոր տղին ընես։
Քաւ խեր ուներ՝

Քուռկիկ Ջալալին,
Քուր կեծակին,
Գլխուս Գաւին,
Գաղին Խարուխին,
Քամարն ի Մեջքին,
Մարուքա Բանձրիկ Ասպարաժին,
Նաչ Պառարագին, ինչ վայր ալ քեվին։

Դավիթ ասաց.— Պառավ, վորտե՞ն ի։
— Քաւ տուն ավրի, քաւ խրդրոր մոտն ի,

Համա խրողբիր խաֆրով չ'իտաս են բանիր՝
կ'երթաս, քի խրողբոր փողաստ կը բռնես,
կայնես, զորովին կ'առնես։

Դավիթ գնաց մոտ ու՛ր խրողբիր,
Չձեռ եփալ, խրողբոր փողաստ բռնաց,
Թափ տուս՝ վոտքիր գետնուց կտրավ։
Ասաց.— Խրողբիր, կ'ուզեմ քեզնե՝

Մարութա Բանձրիկ Աստվարածին,
Իմ խոր Հայ Պատարագին, ինչ վեր ալ թիվնես
Բուռվիկ Ջալալին
Թուր կենդանին,
Գլխու Գեղին,
Բամաքն ի Մեջքին,
Կապկն Խարուկին.

Կը տաս՝ խաֆրով տուր,
Չես իտա՝ կայնեմ, զորովին կ'առնեմ։
Խրողբիր ասաց.— Դավիթ, քի բերան կոտրիր.
Են քի պիտցած բանիր չի, քև ուտաս կա։
Են տարին, վոր քի խիր մեխիր,
ՋԲուռվիկ Ջալալին ու՛ր ես չեմ խանիր,
Մարամելքի հախուն Հայոց մըչչ դամին։
Մարամելքի հախուն ու՛ր շարիր եմ,
Մեռ խոտ, հարդ, գարին լե հերդիտու չեմ տվի։
Կ'երթաս, վոր արժան ես՝ կարող ես,
Տու՛ր վեր քեզ կը բացվի։

Դավիթ գնաց, քացու մ' եղար պատին, պատ քանդեց։
Գնաց, ձեռ տը ակր ձիան քամկին,
Ձին աքուց մ' հոտ, չառնց Դավթին,
Առնց պատին՝ պատ շրջվավ։
Դավիթ ելաց, դուռաց, ասաց.
— Ցես ինչ անեմ, Բուռվիկ Ջալալին,
Ցես դիտեր՝ վոր ու՛ր ձիս* ապատիր հոտ կավուց։
Ածու հրամանքիվ ձին լեզու եկավ, ասաց.

* Ձիս — ինձ Խմբ.

— Դավիթ, վոր եղպես ի, չես քի՝ տու ձը տես.
Ինչ քու խեր մեսիր ի,
Քու խրոլբերքեր ձի չի պախած,
Ձը դուսաղի պես ի պախած.
Կ'ելնես, լավ թիմաբ ըմ կը տաս ձիս
Դավիթ ելավ, ձեռ եաու ձիս քամկին.
Ենքան խավեր ծրտած ին ձիս քամկին,
Մեկ թիզ ծերտ եր ընդի Քուռկիկ Ջալալի քամկին։

Ելավ, դձին քաշեց, խնծավ,
Եբեր, խրոլբոր դռան կայնեցրցուց։
Խրոլբեր դնաց, եբի՝ դԳլխու Գոմին,
Քամարն ի Մեջքին,
Կապեն Ֆարուկին,
Թուրն ի կնճակին.
Ասաց.— Դավիթ, Ֆաչ Պաապարպին,
Կու սանդղի մեջին։
Կ'երթաս հեռչով սանդղին,
Քու չոքեր կը զարկես գետին,
Քու Ասված կը կանչես.
Թը տու լև քու խոր պես արդյոր մարդ ես,
Կ'ելնաս, կը կու վեր քու թևերին,
Կը կայնի Ֆաչ Պաապարպին։

Դավիթ դնաց, չոքեր եղար գետին, ելաց, դռռաց։
Աածու հրամանքով Ֆաչ Պաապարպին
Թռավ, եկավ Դավիթ վեր ալ թևերին։

13. Դավթի պիճավառումն յեվ հարեդրար ախոռամբր

Խնծավ գՔուռկիկ Ջալալին,
Գլոխ եդի Գլխու Գոմին,
Ֆագավ գկապեն Ֆարուկին,
Կապեց Թուրն ի կնճակին,
Քամարն ի Մեջքին։
Ենու քամար քառասուն փաթ եկավ բոլոր մեջքին.
Թուր կնճակին իջավ, գնոնու քիչ կ'երթիր.
Գլխու Գոմին ընցկուն մնծ եկավ,

Վոր քառասուն լիար բամբակ հդի մնջ,
Նորին գնաց գլխուն։
Ելավ, տան քամկին կայնավ,
Ականջ եդավ, ասաց.
— Նայինք՝ խրոդիկ ինչ ա՛սիր
Խրոդիկ ասաց.

«Ախոն, խաղար ախաս
Մըր Բուռկիկ Ջալալին.
Ախոն, խաղար ախաս
Մըր Գլխու Գեամին.
Ախոն, խաղար ախաս
Մըր կապեն Խարուկին.
Ախոն, խաղար ախաս
Մըր Բամարն ի Մկջքին.
Ախոն, խաղար ախաս
Մըր Թուր Կեծակին.
Ախոն, խաղար ախաս
Մըր Խաչ Պատարագին.
Ախոն, խաղար ախաս
Մըր Նորալուկ մեկ տակ մանուկին»։

— Խրոդիկ, քի բերան կոտրիկ, ասի ձի չհիշիկ.
Վոր ասի ձի չեր հիշացիկ,
Հառաջ յես քե տը սպանիկ,
Նոր երթիր կռվուն։

12. Բուռկիկ Ջալալինի խրատը Կարճ աղբյուրի չնվ սյուճի մասին

Առաց, քշից, գնաց մըչ դաշտին։
Առջու հրամանքիվ ձին լեզու եկավ, ասաց.
— Դավիթ, կ՛երթաս՝ քի խոր կաթնաղբյուր կա,
Վորտեխ յես կայնեմ՝ վե կը կռա իմ քամկին։
Գնաց, կայնավ վոր կաթնաղբյուրին։
Դավիթ մոտացիր եր՝ վե չեկավ.
Գիտցավ, թը ձին պաղրավ.

* Ցերպ եւ Մ. Ա.

Զանգուն եղար, ձիու կողաշար կոտրվեց,
Ձին ըսըկավ, ասաց.
— կարամ զքե տամ երիքականՙ երիցիս.
Ինչպէ՞ս ը՝ տա՛ իմ խոսք շա՛տ մոռացար.
Համա քո խոր խաթրին չեմ խոսա՝
Վոր եստեղեն կ'երթաս,
երկրեմ սուն մը լե կա մընչ դաշտին անկված.
Ջո՛ թուր կը քաշես, են սա՛ն կը զարնես՝
Թը քո՛ թուր են սուն կտրեց՝ կ'երթաս կռիվ.
Թը չկտրեց՝ հիտ կը դառնաս։

15. Մանուկ Դավիթը խժռում և դարբնագործության ջուրը, դառնում և ուժգին յեղ կտրում Ճերկաթի սյուները

Դավիթ լե վեր եկավ,
են կաթնագործի ճա՛ր
Եսու ձիու կողաշար՝ լավացավ։
Ենտեղ ճա՛ր խմավ, խաց կերավ,
Ընկավ վա՛ր են կաթնագործին, քնավ։
Մեկ՝ սհաթ քնավ, եղավ, տեսավ,—
Տեսավ՝ ենպես ի լցվի,
Ենպես ի խաստացի,
Ենպես ի զորութա՛ն, ուժ առի,
Վոր չափալամիշ ի եղի։

Ելավ, ա՛ր Գլխու Գա՛ռին՝
են քառասուն լիտր բամբակ, վոր դրիր ես մեջ,
Տա՛ս եթալ, նորեն դնաց գլխուն.
Թուր կնճակին՝ դնտուց քնչ կ'երթեր՝
Կապից, խառավ խես չոքերուն.
Ջամարն ի Մեջքին, վոր քառասուն փութ կը կրեր մեջքին,
Կապից, մեկ փութ եկավ։

Ելավ, գնին խնծավ,
Ջլից, գնաց ի սա՛ն մոտ.
Թուր քաշից, եղար են սա՛ն,
Թուր սուն կտրից,

Կալամ վըր կալամին կայնավ,
Շուռ չառնց, վոր իմնեը գետին
Դավիթ ելաց, ասաց.

«Ձևռնէ՛կ, տա՛ կռուռը կենեը,
Վոր գարկեցի, ետուր չկորնց.
Աչքի՛կ, տա՛ խավար կենեը,
*Վոր էսա բանեը յես չտեսնեը»։**

Ասաց, — ձեռ կոտրավ, աչք խավարավ։
Աձուռ հրամանքիվ ձին լեզու եկավ, ասաց.
— Քո բերան կոտրվի, տեր իմ,
Քանի մ' ուզե Աձուց։
Դավիթ երգեց ասաց.

«Ողջնաչ, բարերար Աստած,
Քո հրամանքն եր չատ.
*Հրամանք ենես՝ հարավ-քամին (եր**) իմնեը,*
*Էսա սուն լե հիրարուց կորը ենեը»։**

Աձուռ հրամանքիվ հարավ-քամին վոր եկավ,
Սուն շուռ եառավ, մե կորը ետեխ ընկավ,
Մե կորը ենտեխ ընկավ։
Ասաց.

«Ձևռնէ՛կ, տա՛ կանաչ ելնեը,
*Աչքի՛կ, տա՛ լուսով ելնեը»։**

Աձուռ հրամանքիվ ձեռ սաղացավ,
Աչքեր լե լուսավորվան։

16. Դավթի վախը. Գևռակիկ Զալալիճի հաջալեբը. բօճամիճների բանակին իմաց տալը յեվ հարձակումն ու կոտորածը

Զին խնծավ, քշեց, գնաց,
Ելավ Լեռա սարի գլուխ։
Ինչ կը տեսնա,— իրիկնեց՝

* Ցնդգ. նու Մ. Ա.
** Եր — բացականչություն յերգի մեջ։ Մ. Ա.

Վոր քանի մ՚ առաջ երկինք կա,
Մարամբիք ընդհուն չադր՚ը-խեվաթ ածի մրնչ պաչին,
Դավիթ վոր տեսավ՝ վախացավ, ասաց.

«Որհնաձ, բարերար Աստած,
Քի հրամանքն եր չատ.
Ցես իմնչքա անեմ։
Երանք եվնեն բամբակ (եր),*
Ցես լե եվնեմ կրակ (եր),
Չեմ կարա դանոնք երեցըցի.
Երանք եվնեն գարնան մառաչ դառներ,
Ցես լե եվնեմ գարնան քաղցած գելեր,
*Չեմ կարա դանոնք կարեցըցի»։***

Չին ասաց.— Դավիթ, մի վախենա.
Քանի մ՚ քի թուր կարա,
Ընդհուն իմ պոչով որ կարեմ դանոնք.
Քանի մ՚ քի թուր կարա,
Ընդհուն լե իմ աքուց որ կարի դանոնք.
Տեր իմ քամկից վե չկա՜ա, չհաբվիա։
Դավիթ լե ասաց.— Ի՞նչքա անեմ,
Թը գաղտիկ երթամ,
Տ՚առանն՝ Դավիթ գող եկավ, գող գնաց.
Թը գաղտիկ չերթամ,
Ցես էնոնց մոռանն կը վախենամ։

կանչեց, ասաց.

«Վով քնիր եք՝ հարթուն կացեք.
Վով հարթուն եք՝ երկեք կայնեցեք.
*Վով կայնիր եք՝ ձի*** ճակեր կապեցեք.*
Վով ձի ճակեր կապիր եք՝ ձի ձիանք թամբեցեք.
Վով ձի ձիանք թամբիր եք՝ երկեք խնձեցեք,
*Ձասեք՝ Դավիթ գող եկավ, գող գնաց»։***

---

* Եր — բացակայություն չկզբ մեջ Մ. Ա.
** Ցերգ են Մ. Ա.
*** Ձի — ձեր Ն մբ.

Ասաց, քշեց, գնաց մընչ ասքըրին
երկու գլուխ գնաց, եկավ,—
Արնեն խեղդեղ եկավ,
ընտնց լիչեր տարավ
Թանի մ' Դավիթ սպանեց,
Ընդհուն Դավիթ ձիու հետչիվ կռատրվանը

17. Սյնվորի խրատը

Մեկ մեծ, փիր, ախտիար խալխոր քըմ կըներ մեչքեր.
Ասաց.—Ճամբախ ավեք, երթամ հետչիվ Դավթին,
Մե խոսք ասեմ, նսա ասքեր ապառնեմ կռվուց.
Գնաց հետչիվ Դավթին, ասաց.—Դավիթ, փռշա, փռշա.
Դավիթ բարկացավ, ասաց.
— Փռշա ոռն խս, խնդվոր.
Տել չես ասս տարվան ոդա չեմ.
Ի՞նչ փշռաքծեն եմ արի՝ ոռն ձի փռշա կ'ասես.
Ասաց.— Դավիթ, խոզուդ-արևվուդ մեռնեմ.
Ցես քե չեմ ասի փուշա.
Մեր լեզուն թարս ի՝ չես կ'ասեմ փռշա,
Ցանի ճամբախ ավեք, Դավիթ տեսնամ, խոսեմ խնդ
Դավիթ լե ասաց.— Դե խոսի.
— Դավիթ, ոռն ընչու նսա մարդեր կը սպանես,
Ամեն մոր մեկ են.
Մարամելիք զորով ի բերի.
Վոր ոռն կարիճ ես՝
Գնա, խնդ Մարամելքին կռիվ արա.
Դավիթ ասաց.—Վոր մեկեն ի ենու չազը՛ր.
Ծալվոր ասաց.— Ենա ճուչ կանաչ չազը՛ր.

18. Մարամելիքը Դավթին խաբում չեվ ձգում և հոի մեչ

Գնաց, Մարամելքի չազրի ոռն գազրավ, ասաց.
— Մարամելիք կանչեք՝ իկա, կռիվ անենք.
Ամամախ ի՝ ենու մախ եմ բերի.
Անգրող ի՝ ենու գրող եմ բերի.
Դավիթ մեր եկավ, ասաց.

— Մսրամելիք քնած է.
Ցոթ որ կը քնի, ահլ նսա իրեք որ ի քնի։
Ասաց.— Ջեմ պիտի. սը խանեք վի՝ կոխվ անենք։
Ելան չիշ քցեցին կրակին,
Տվին Մսրամելքի վոտաց.
Մսրամելիք մըչ քնուն կանչեց, ասաց.
— Ո՛խ, շան դելեր, իմ տեխ խորտա չիք չինի.
Լյու կըներ՝ ձիս կը կծեն։
Դավիթ՝—Իլի վիր,— ասաց,— լյու չի, յես իմ։
Մսրամելիք վիր չելավ, ել ըմ քնավ։
Դոր գայթնի խոփ կրակացըցին,
Տվին Մսրամելքի վոտաց։
Մսրամելիք ասաց.
— Ո՛խ, շան դելեր, իմ տեխ խորտա չիք չինի.
Լյուներ ձի կը կծեն։
Դավիթ կանչեց, ասաց.
— Մսրամելիք, իլի վիր, յես սուլ կոխվ անենք։

Մսրամելիք իլավ վիր։
Վոր գԴավիթ տեսավ, փչեց,—
Ենու մաքե Դավիթ սը թռներ,— ասաց.
— Դավիթ, արի նսա՝ խաց ուտենք,
Խաբար տանք, նուր ևշենք, կոխվ անենք։
Դավիթ երավ ձիուց իջներ՝ ձին կը փախներ։—
Ձին իմաստուն եր, գիտեր՝
Մսրամելիք գայդախ քառասուն նիտ խուր եր փորի,
Երկըքեն թոռ քցի վեր բերնուն,
Թաղիսներ փուխ վեր խորուն,
Վոր Դավիթ գեր, նսաեր, ընկներ մըչ խորուն։—

ՁԴավիթ խաբնցին, ձիուց բերին վե.
Ձին ըռիկ երավ, փախավ,
Գնաց, ելավ սարի գլխ։
ՁԴավիթ նստացուցին վեր խորուն,
Ընկավ մըչ խորուն, երկըքեն թոռ եկավ հիրուր։
Մսրամելիք ասաց.
— Ե՞ն եր, ինչ սը խետ ձի կոխվ ենեք.
Թըխ կենա ենտեխ, չուր վոսկորքեր փախ

19. Ջենով Հովանի յիրազը յնվ խոսքը ձիերի հետ

Ջենով Հովան գլխը երազ տեսավ.
Մարա ասող պայծառ եր,
Սառմա ասող մժղավիր եր,
Քնուց ելավ վիր, ասաց.— Կնիկ, իլի վիր.
Ձես տեսա՝ Մարա ասող պայծառ եր,
Սառմա ասող մժղավիր եր,—
Դավիթ ձեռաց գնաց,
Կնիկ ասաց.— Առաված քի առն ավրի.
Քոն քե կը քնես, երազ հալդին կը տեսնաս,
Ջենով Հովան ել ըմ քնավ։

Դոր երազ տեսավ
Մարա ասող շատ պայծառ եր,
Սառմա ասող մժղավիր եր, կոխն եր անցնելու,
Ելավ վիր, ասաց.— Կնիկ, իլի վիր.
Ձես տեսա Մարա ասող շատ պայծառ,
Սառմա ասող կոխն եր անցնելու,
Կնիկ ասաց.— Քի առն ավրի,
Տու ընչոն չես քնա.
Տու հաղ չիծողիր՝ յես քնես,
Ջենով Հովան ել ըմ քնավ։

Դոր երազ տեսավ՝
Մարա ասող եկավ,
Սառմա ասող հառս կուլ
Ասաց.— Կնիկ, իլի վիր, Դավիթ սպանեցինս,
Կնիկ ասաց.— Ո՞խ, ատի ընչոն չես քնա.
Ո՛վ դիտի՝ վիր կնկան ծաց պառկի, քեֆ կ՛անի,—

Ջենով Հովան ըզրկավ.
Քացու մ՛ եզար կնկան.
Կնիկ ելավ, ճրագ կպուց,
Ջենով Հովան ասաց.
— Իմ ասպարներ բեր.— Կնիկ եբեր
Ջենով Հովան խոզավ,
Գնաց, գոմն ատու երաց,
Ձեռ հառս վեր Սըվտակ ձիու քամկին,—

Սրվաակ ձին փոր հառ գետին
Ասաց.— Սրվաակ ձին, հէփ ձի կը տանես,
Դավիթի կովուն խաղցնես
Ձին ասաց.— Շուր խլիսուն
Ձենով Հովան ասաց.
— Հարամ ըլնի ենա իմ յեմ, վոր տվիր ես քու
Գնաց ձեռ հառ կարմիր ձիու քամկին,—
կարմիր ձին էլ փոր հառ գետին
Ասաց.— կարմիր ձին, հէփ ձի կը տանես,
Դավիթի կովուն խաղցնես
Ասաց.— Շուր սհաթ ըմ,
— Հարամ ըլնի իմ պախէրը, վոր քե պախիր եմ,
Դոր գնաց, ձեռ հառ Սեվ ձիու քամկին,—
Սեվ ձին փոր չհառ գետին
Ձենով Հովան Սեվ ձիու պոխ պագնեց,
Ասաց.— Սեվ ձին, հէփ ձի կը տանես,
Դավիթի կովուն խաղցնես
Ասաց.— Վոր ատ կարաս քե վեր իմ քամկին բռնես,
Վոտդ թվես գանգուն,
Շուր մեկ էլ վոտդ շուռ տաս մեկ էլ գանգուն,
Ցես քե կը խաղցնեմ Դավիթի կովուն

20. Դավիթը Ձենով Հովանի խրատով չելնում է հարից

Ձենով Հովան էլավ, Սեվ ձին խնժավ,
Վոտ եղիր գանգուն,
Շուր մեկ էլ վոտ շուռ հառիր մեկ էլ գանգուն—
Սեվ ձին խրեղեն եր—
Էլավ, Լեռա ասրի պոխ կացնավ
Բուռակիկ Ջալալին Ձենով Հովան տեսավ,
Խրխնջալավ եկավ մոտ
Ձենով Հովան վախացավ. ասաց.
— Դավիթ սպանած ի, ձին փախի, ելի հասիր
Ձենով Հովան կանչեց—
Ձեն ընկավ սար ու ձոր—
Ասաց.— Դավիթ, հեռատես ես,
Հիշա Մարութա Բանձր Առավարաժին,
Ախչ Պատարագին, ինչ վեր քի ալ ելնին

կանչեց, ձեն ընկավ Դավթի ականջ։—
Զասես՝ Դավթի ազա յեր,
Ջիսեր ենու զրուքմեն։—
Դավթի լսավ, կանչեց, ասաց.
«Յա Մարուքա Բանձր Աստվածին,
Ասչ Պատարագին, ինչ վեր իմ ալ թևիին»։
Ասաց, դիր ըմ գինք թափ հասուր.
Ասծով գինվլի կատրքեր երկնուց եկան տակ։
Դավթի եվավ թռավ խորու բերան.
Մարամելիք ել չգիտցավ մոտենալ։
Ջենով Հովան կանչեց.
— Դավթի, արի հասեխա։
Դավթի ենու կանչելով գնաց մոտ խրոդրեր,
Համա ձին ըռըկեռ եր՝ չեր իկա ձեռ։
Ջենով Հովան յանդամիչ անելավ գնաց, երե։
Դավթի խեծավ, ասաց.
— Խրոդրեր, ասի գնա տախ քաղաք,
Յես երթամ Մարամելքի կռիվ։

21. Մարամելքի չել Դավթի ժեմամարտը. Դավիթը ապանուժ ե Մարամելքին

Գնաց, խառավ մոտ Մարամելիք, ասաց.
— Մարամելիք, են ախր ձի խափեցիր,
Մկա ել ինչ ա՛նեես։
Մարամելիք ասաց.— Դ՛արի, նառի։
Ասաց.— Յես չեմ նառի, կռիվ անենք։
Մարամելիք ասաց.
— Կռիվ զորով, թը նորքիով ի։
Դավթի ասաց.— Նորքիով ի։
Վոր նորքիով ի, նորաթ վերն ի,
Ճուչ յես եմ, թը ասի։
Դավթի ասաց.— Նորաթ քեզն ի։

Դավթի գնաց, մեյդնու միջին կայնավ,
Մարամելիք գնաց, եկավ, զեր զերդ եղավ,—
Թող զագրավ վեր Դավթին,

Երիքսական իրես բռնեց,
Աստց.— Դավիթ խոզ ես, խոզ դարձավ,
Դավիթ ասաց.— Մարմաելիք, տես յես եստեխեն եմ,
Դնա ել ըմ զար քո զարը,
Մարմաելիք իրեք տիր եղար,
Թող եսու վեր Դավիթին,
Աստց.— Դավիթ խոզ ես, խոզ դարձավ,
Վոր թող իջավ գետին, Դավիթ ասաց.
— Մարմաելիք, կա յես եստեխեն եմ,
Դոր նորաթ խոտավ ձի։

Մարմաելիք ասաց.
— Դավիթ, յես մոհլաթ կ'ուզեմ քենեն։
Դավիթ ասաց.— Հինչ կ'ուզես։
— կ'ուզեմ, վոր քառասուն գող խուր փորեմ։
Դավիթ ասաց.— Փորի։
Մարմաելիք ասաց.
— Յես երթամ, ընկնեմ մըչ խորուն,
Քառասուն ջաղլի քար քաշեմ վեր*եմ,
Քառասուն դըղած գոմշի կաշի ես առնեմ,
Բցեմ վեր ջաղլի քարին։
Դավիթ ասաց.— Բցե.
Ընցկուն կ'ուզես՝ արա։
Մարմաելիք ել ընցկուն ասաց՝ ավեց։

Դավիթ գնաց, եկավ, վոր գեր գերդ զարներ,
Դավիթի մեր եկավ հեռջեվ, ասաց.
— Ձե՞ քե ձեձ* եմ ավի,
Եդ մեկ դարը ձի խաթեր։
Դավիթ խաթըր արեց։
Մեկ ել գնաց, եկավ՝ ոը զարներ,
Դոր՞ Մարմաելքին քուր եկավ հեռջեվ, ասաց.
— Դավիթ, ինչ տեր տղա յեր,
Յես քե ընցկուն չկիր եմ վեր իմ քամկին։
Եդ մեկ դարը ձի խաթեր։
Դավիթ խաթըր արեց։

* Ձեձ — ձիթ։ Ն մ բ.

Դավիթ ինաց, Աւաղ, են մեկ դարբ,
Գնաց, վոր եկամ տը գարներ,
Մարամելքի քուր եղ ըմ եկավ հեռվեվ, ասաց.
— Դավիթ, եղ մեկ դարբ լե տաս ձի խաթեր,
Ասաց.— Գնա դեն, փուչա գաղր.
Ցեան եմ, Աւաղ, եսա մեկ դարբ,

Դավիթ գնաց, եկավ,
Աձու անուն ետու,
Հիշեց զՄարութա Բանձրիկ Աւավարածին,
Ախչ Պատարագին, ինչ վեր ու բ աչ բեվին,
Չու բ մեկ գյուղ եզար,
Վոր եզար, Աձու հրամանքիվ,
Զքաւատուն գոմշու կաշին կարեց,
Բաւատուն ջաղցի քար լե կտրեց,
Մարամելքի գլխու գավաթ լե կարեց,
Մարամելիք կանչեց, ասաց.
— Դավիթ, կու յես տել եատեխն եմ,
Դավիթ ասաց.— Մարամելիք, քե թեմի տուր մեկ
Ինչ Մարամելիք գինք թեմի եատու,
Մեկ կատր ընկավ եատեխ, մեկ ենտեխ,

Դավիթ զՄարամելքի ձախ ձուն առեց,
Երեր, եատ խրոդրար կենկան,
Ասաց.— Խրոդրր կենիկ,
Տու ձի չանա ավիր են որ.
Ա՛ռ, կու բերիր եմ ձուն.
Ո՛անես աչեց դեղ, ինչ կ՛անես՝ արա,
Չինով Հոլան չատ ուրախացավ.—
Ենի կը սիրեր զԴավիթ,

Բ

ԴԱՎԻԹԻ ՄԱՀԸ

22. Դավիթը ճօճնվում և Ջմշկիկի հետ, բայց լսելով գուսանների գովքը՝ գնում և խանդութիւն առնելու

Մեկ տարի մ' վրա անցավ,
Ջենով Հովան ասաց.
— Դավիթ, առ գմեն ազատությիր Մարամելքի ձեռեն.
Տ'երթամ, քե կնիկ ուզեմ։
Գնաց Ջմշկիկ Սուլթան ուղեց Դավթի խամաթ։*
Ջմշկիկ Սուլթան լե շատ գինքալ փեհլվան եր.
Տել չեր պատկվիր։
Համա երկու կաղոզան եկան,
Խանդութ խաթուն Դավթի խմաթ գինվացին։
Ասաց.

«Թ'ենուր սիպկութենն կը խարցնես,
*Բանց գարնան ձին ատաք և, լզո **, տատակ և.*
Թ'ենուր կակղութենն կը խարցնես,
Բանց բամբակ կակուղ և, լզո, կակուղ և.
Թ'ենուր ընքներ կը խարցնես,
Ղալամով քաշիր ին, լզո, քաշիր ին.
Թ'ենուր աչքեր կը խարցնես,
Ջենու կիխեններ, լզո, չենու կիխեններ.
Թ'ենուր ճակատ լենութ կը խարցնես,
Յոթ ակուտ և, տել մեկ հավել և, լաքո, տել մեկ հավել եր։ ***

Դավիթ նստ յերդ լսեց, ասաց.
— Երդղներ, ել չեմ երթա տես Ջմշկիկ Սուլթան,

---

* Վիպասանը «Ջմշկիկ» անունը մեկ-մեկ «Ջմուշկիկ» եր արտասանում Մ. Ա.

** Բացականչություն յերդի մեջ։ Մ. Ա.

*** Յերդ եր։ Մ. Ա.

Տ'երթամ տախ Յանդուխ խաթունս
Որողբեր ասաց.— Դաւիթ, եսա յոթ տարի եղավ,
Քառասուն փեհլիվան նստած ին հետդիվ ենու տուռս.
Տու լե կ'երթաս հետդիվ ենու վանդալին.
Թը քե ազիա հառու՝ կ'երթաս.
Թը չհառու՝ կը դառնաս, կը կնաս

23. Սիրո խնձոր. Դավիթը ու դռնապան Համատլը

Դավիթ գնը ձին խնծավ,
Բշնց, գնաց, հետդիվ Յանդուխ խաթնի վանդալին
Յանդուխ խաթունն՝ վոր աչք ընկավ,
ՉԴավիթ տեսավ՝ ուրախացավ.
Ուրախութենե խնձոր մ' եղավ Դավթին
Դավիթ գնձոր բռնեց վեր ձիուն,
Յետացավ վեր խնձորին

Առեց, քշեց, գնաց մոտ ենու դռնըպանին
Դռնըպանի անունն Համատլ եր.
Մեկ պռունկ կախվիլ եր սրտին
Դավիթ՝ վոր տեսավ, վախացավ,—
Ինչ մոբեն եվիլ եր, մարդու բարիվ չեր ավի,
Հախու բարիվ հառու Համատլին
Համատլ լե քառասուն տարի
Ենտեխ դռնըպանութենն եր արի,
Մարդու բարիվ չեր ասի.
Ին որ գԴավիթ վոր տեսավ,
Վախացավ, հախու գբարիվ առեց
Դավիթ ասաց.

«Ինչ մոբեն մեկնիլ իմ,
Մարդու բարիվ չեմ ավի.
Եսոր գՀամատլն եմ տեսի,
Հախուց բարիվ եմ ավի,
Լմի, հախուց բարիվ եմ ավիր»*

* Ձերգ եւ Մ. Ա.

Համոզել սաաց.

«Քառասուն տարի դժնդպանութիւն եմ արի,
Մարդու բարով չեմ առի.
Ասոր գԴաւիթն եմ տեսի,
Հախուց բարովը եմ առի,
*Լաւ, հախուց բարովը եմ առի»։ **

Դաւիթ սաաց.— Որննայ և Սաման,
Ջե՞ տուն լե հախուց իմ բարով առար,
Թըխ յես լե հախու քիզ բարով տամ.
Վոր տուն հախուց իմ բարով չառներ,
Տ'երներ կոլ, ընկներ իմ սիրտ, ձի սպաններ։

25. Դաւիթն ու փափելամցիները

Ընցկուն սաաց, քշոց, գնաց.
Խասավ են քառասուն փեհլիվանի մոտ։
Են քառասուն փեհլիվան, Խանդութ խաթուն ապով,
Ոխտը տարի ենտեխ նստիր էն.
Խանդութ խաթուն մարդու խոսք չեր տվի։
Վոր Դաւիթ գնաց, Խանդութ խաթուն խնձոր եզար Դաւիթին,
Ենոնք շատ ըռըկան, սաացին.
— Մենք յոթ տարի ետեխ ենք,
Մզի տղա չետու.
Սատա Շաղկմակեր Դաւիթ նուր եկավ ետեխ,
Տել չի տեսի՝ խնձոր եզար ենոր վեր ձիուն։

Դաւիթ գնաց, ենտեխ նստավ։
Բերին, խաց քցին՝ վոր ուտին։—
Ենոնք գյադակ սուջերին պատրաստիր են,
Ամեն մեկ գյոր թուր քցիր է սուջերի տակ։—
Յոթ տարվան նատն գինին բերին, դրին, խմին։
Ենոնց թաս լե քանց ճուչ տաչա եր։
Մեկ լցին, տվին Դաւիթին,— խմավ.
Մեկ ել լցին, տվին,— Դաւիթ սաաց.
— Աղբերներ, եղպես չը՛նի,
Բերենք, սրով խմենք.

---

* Տեղ և՝ Մ. Ա.

Վով կը սարխուշնա՝ թըխ պառկի.
Վով չսարխուշնա՝ թըխ քեֆ անի—
Հըպա ենոնք կարծեն խեա Դավիթ գինի խմեն,
Յոթը տարվան նռան գինին—
Ամեն, ամեն մեկ սարխուշցան,
Իրանց տեղեր պառկան։
Դավիթ ալ խոմաթքաբին ասաց.
— Ելի, նա սուֆրեն վիրճռ,
Մեղք նա խացեր կոխեն։
Ծառեն ելավ, սուֆրեն վիրուց.
Տեսավ ըմեն փենջվանի հետչեվ թուր ակլորած,
Դրած սուֆրի տակին։
Դավիթ ձեռ եառռ, թրեր ըմեն ժողվեց,
Եառռ ծնգան, կոտրտեց,
Ինչ վոր մարդ բան ըմ քիրըվի կոտրի,
Եառռ ալ ծառին, ասաց.
— Տար, քնել մեր ձիու խուրջին.
Լավ պողվատ-դամուր է,
Չենենք մեր ձիու նալ-բզմար՝ լավ է։

25. Դավթի ու հաճդուխի հաճդիպումը

Դավիթ գընը ելավ, գնաց Հանդուխի խաչին առն,
Ենոր կչուին պառկավ չուր խլխառեն։
Խլխառն ելավ վեր՝ ա՛ երթնը, լվացվեր.
Հանդուխ խաչուն ճալ սարավ, ըլնց Դավթի ձեռաց։
Դավիթ գրկեց գՀանդուխ խաչուն՝ որ պաղներ։
Հանդուխ խաչուն չեղող պաղներ.
Բարնցքի մ՝ նզար Դավթի բերան,
Աբուն-արնճալ բերնեն եղավ առա։
Դավիթ ասաց.— Հանդուխ, կանչիր եմ Ալամծ,
Ձուր խլխառն, քանի մ՝ ասող երկինք կա,
Ընցկուն չազը՛ը-խելավ բուլուր քի քաղքին պարնեն,
Չըմեն քի խոր գլխու դուշման եղնեն։
Ինչ մրազ երավ, Ալամծ կառարեցր—
Են ժամանակ արդար մարդ չեն,
Ինչ մրազ ենեն՝ Ալամծ կը կառարեր—

6. Դավթի կռիվը Խանդութի բռնամիների հետ

Զուր խլխուն, քանի մ' ասող երկինք կա,
Ընդկուն չաղը՛ր – խավաթ բռնեցին
Բուլուր Խանդութ խաթնի խոր քաղքին,
Հըմեն Խանդութ խաթնի խոր դուշման,
Խլխուն Խանդութ խաթուն ասաց.
— Վռիվ ա՛նըթա կռիվ
Են քառասուն վեհլման ասացին.
— Վռիվ ա՛նըթա կռի՛վ.
Աղեն վիր ավիր ա՝ են ա՛նըթա կռիվ։
Թը կ՛ուզես խաբար մի ասուր, մենք երթանք կռիվ։*

Դավիթ խլխուն եկավ,
Ձիուկիկ Ջալալն խնծավ, դնաց կռիվ։
Աջու եղար, ձախու եղար, կես ասքար ջարդեց,
Հիրկուն եկավ մոա Խանդութ խաթուն։
Մեկ 'լ որ եկ ըմ գնաց կռիվ.
Զկըցան Դավթի կռիվ անեն։

27. Պարոն Աստղիկի գալուստն ու Դավթի պատվերը Խանդութին

Դուշմաննեն խորհուրդ արին,
Հալաբա թագավոր հրոդկեցին Սասմա քաղաք,
Մոա Զենով Հովան,
Ասացին.— Մենք հիմացիր ենք՝
Սասմա քաղաք չատ կտրիճ վեհլման կա.
Մեկ վեհլման ճամբեխս իկա՝ հատեխ.
Իսա տեխ մարդ ըմ կա՝ չատ կտրիճ ի,
Ենոր սպանի՝ մենք քեզ յոթ քաղաք վեզքեզ կը տանք։

Ցատն վերդոյն մեկ տղա կըներ,
Անուն Պարոն Աստղիկ։
Պարոն Աստղիկ ձին խրեղեն խնծավ,
Զին թեվավոր եր, մըչ երկինք, մըչ գետինք,

* Մեզ՝ Մ. Ա.

Թռավ, գնաց, խառամ կռմռուն
Դավիթ հիմացավ, ճանաչից դՊարոն Ասողիկ.
Հիրկուն ևկավ, Ծանդուխթ խաթնին ասաց.
— Ցես վազ չեմ երթա կռիվ,
Ծանդուխթ խաթուն լև ասաց.
— Վոր ուն չես ամաչի, յես կ'երթամ կռիվ,
Դավիթ ասաց.— Դե ուն հերդվցի,
Վոր յես երթամ կռիվ՝ ուրբա չկենաս,
Տուռ չբանաս, հերդիս չբանաս,
Նուր յես կ'երթամ կռիվ,
Ծանդուխթ խաթուն ասաց.
— Լավ, յես չեմ կենի ուրբա, իմ ուռս կը շինեմ,
Նստեմ ետեխ, իմ քարգահ քաշեմ,
Ալխուն Դավիթ եկավ գնաց կռիվ։

28. Դավթի հետ Պարոն Ասողիկի կռիվը ու Ծանդուխթի չերգը

Դավիթ գնաց, կռիվ արեց չուր կեսօրին,
Կռիվ արեց խետ Պարոն Ասողկան,
Թրե շառավիրք եղար մըչ հերդիսին
Ծանդուխթ խաթուն տեսավ՝
Լուռ ևկավ մըչ ենու հոդին,
Ասաց. «Ես ինչ բան լ.
Ամպ չի՝ անձրևի չինկի.
Գըլեր չի՝ կենձակ չիտա»։
Ծանդուխթ խաթուն չդիմացավ,
Ելավ, փանջարեն եբաց, իրիշկեց.
Տեսավ՝ մեկ մը ձին խրեղեն խենձի,
Վայր Դավթի գլխուն ինի կը ֆռա,
Զհավլուհնի ֆուր կը շարժի,
Կրակ կը թափի վայր Դավթի գլխուն։
Ծանդուխթ խաթուն իմասուն կարդացվոր եր.
Գիրք եգի ենաեխ, գիրք կարդաց.
Տեսավ՝ Դավթի խրողրոր ուղեն եր,
Ինչ ֆուր կը շարժեր վայր Դավթի գլխուն,
Կրակ կը լցեր վայր Դավթին, կ'երթեր հանդենդը.

Դավիթ ենոր բան չեր անի,
Ամանդուխ խաթուն երդեց, ասաց.

«Երդեր, որ ես կիր բարով, խազար բարով.
Կրակ թափեցիր վեր մեր Դավիթի գլխուն,
Կրակ թափեցիր վեր մեր Դավիթի գլխուն,
*(Լա) Տուն ավրեցիր Ամանդուխ խանըմուն»։**

29. Դավիթը սպանում է Պարոն Աստղիկին

Դավիթ ենոր ձեն առեց, ասաց.
— Վա՛յ, քո կենկան բախտ կոբի.
Ես գիտեր՝ որ չինար տուն ինի։
Դավիթ ըռըկավ,
Ջոր նետ-անեզ դեմ երավ
Պարոն Աստղկան ձիու փորուն,
Ջիու փոր ծակեց,
Պարոն Աստղկան գլխու գագաթ վեր տուս հատ։
Պարոն Աստղիկ ընկավ գետին, ձեն հատը, ասաց.
— Ա՛խ, ես մեր աղգակնի դարբերն ի՝ ձի խաատվ.—
Ինի չեր ճանաչի ղ Դավիթ։—
Դավիթ ասաց.— Ծո՛ւ վրի իս։
— Ես Պարոն Աստղիկ, Ջհան Վերզոյ տղեն եմ։
Դավիթ ասաց.— Ես իմ աչքեր քոռցուցի.
Մեր աղաթ են ի, վով մեռնի,
Գլուխ դնի վեր աղգակնի ծնգան,
Ասդին ասա Աածուն։

Դավիթ ղ Պարոն Աստղկան
Գլուխ եդի վեր ու ծնգան.
Պարոն Աստղիկ քոռց ընկավ, խոզին հատ։
Վոր Պարոն Աստղիկ խոզին հատ,
Դավիթ հաչ դնաց,
Աքեր եկան, ղ Դավիթ բռնեն։
Դավիթ ձին, Բուռնիկ Ջալալին,
Բուլուբ Դավիթին կայներ,

---

* Տե՛ս և Մ. Ա.

Զեքող գԴավիթ բռնին,
Զուր Դավթի հաշ եկավ գլխուն,
Ելավ, գձին խեծավ, գոչուն ցրվեց։

30. Դավթի յեվ Խանդուրի մեճամարտը

Ենոր հիրիուն Դավիթ չեկավ մոտ Խանդուխ խաթուն,
Խանդուխ խաթուն գիտցավ, վոր Դավիթ սպանիր ևն.
Գլխուն ելավ, մարդու շորեր խազավ,
Զեր ձին խեծավ, զեր սիլահներ կապեց, ասաց.
— Երթամ Դավթի ջանդակ ջոկեմ, բերեմ, թաղեմ,
Խանդուխ խաթուն գնաց,
Ջրբե՛մ կը գարներ, լեշեր վերուցեր,
Վոր Խաչ Պատարագին տեսներ,
Դավթի լեշ ճանաչեր։

Դավիթ ենտեխեն՝ շորեր փոխիր՝ եկավ,
Ին գԽանդուխ խաթուն կը ճանաչեր.
Խանդուխ խաթուն գԴավիթ չեր ճանաչե.
Դավիթ ասաց.— Ո՛, վիր հետեվ կան կը կա՜ս.
Ին մարդ՝ ինչ տու կան կը կա՜ս,
Ին յես սպանիր եմ։
Խանդուխ խաթուն ասաց.
— Վոր տու գին մարդ սպանիր ես,
Յես տու կռիվ տ՛անենք.
Յա յես գքե ալ սպանեմ ենու տեխ,
Յա տու ձի ել սպանես։

Երկուս խասան հիրուր, կռվան
Դավիթ գԽանդուխ խաթուն եզար գետին.
Զոքեր եզար վեր սրտին
Խանդուխ խաթուն ասաց.
— Ամեն, ձի մը՛ սպանի, յես կնիկ հարմաս եմ։
Դավիթ ասաց.— Յես գիտեմ տու կնիկ հարմաս ես.
Եսիկ են ավուր թիրին,
Ինչ տու են բռունցքին գարկիր իմ բերան,
Արուն-արնաճու եկավ տու։

Խանդուխթ խաթունն ասաց.— Դավիթ, ո՞ւր իս,
Դավիթ ասաց.— Ախ, յիմն իմ,
— Վոր ընցկուն ի, ձիս թող,
Տեսար, Դավիթ, քառասուն փեհլիվան.
Ցոթ տարի կա՝ ենռևիս նստած,
Մարդու աղիա չուվի.
Ինչ ուն եկար՝ քե տվի,
Դավիթ, ձի թող ուն,
Դոր յես քե կնիկ, ուն ձի երիկ
Դավիթ թող եռու։

31. Դավթի վերադարձը Սասուն, Ջմշկիկ Սուլթանի հետաքրքիր ի մեծամասն չիշ Դավթի չերդումը

Ելան եկան Խանդուխթ խաթնի սարևն,
Խանդուխթ խաթունն ասաց.
— Դավիթ, եսռևիս նստենք, ուտենք, խմենք, քեֆ անենք
Դավիթ ասաց.— Չե, յես լև Սասմա քաղքի տերն եմ.
Չե, տ'երթանք Սասմա քաղաք
Ինչ կըլեր, չկըլեր, բոլուր ծախնեց.
Մյուս քարվան կապեց, եկավ տախ Սասմա քաղաք։

Ջմշկիկ Սուլթան եկավ,
եկավ հեռչեվ Դավթին, ասաց.
— Դավիթ, ընչե՞ս, յես խորտա չե՞ր,
Ձի ուղեցին քե, ուն ձի չխաղնար,
Վայր ձի գնացիր, Խանդուխթ խաթունն բերիր,
Դե ար' յես ուն կռիվ անենք,
Ցա յես քե ար սպանեմ,
Ցես լև, Խանդուխթ խաթունն լև ինանք որբավարի.
Ցա ուն ձի սպանես,
Նուր երթաս, Խանդուխթ խաթնի ծոց պահկես
Դավիթ ասաց.— Ջմշկիկ Սուլթան,
Հիվը կ'ենևիմ քի մոռևն.
Կնիկ հարմատ կա խտա ձի.
Թող յես երթամ իմ տունն,
Ընչուր ուխ որ լմանա,

Ցես կը կայմ, քի կռիվ անեմ։
Ջմշկիկ Սուլթան ասաց.
—Թե հերդվցի Մարութա Բանձր Աստվածին.
Քաչ Պատարագին՝ ինչ վեր քի աչ թևվին,
Ինչ ուխ որ լմանա՝
Ցես կը կայմ քի կռիվ,—
Վոր Թողնեմ տուն երթաս։
Դավիթ ասաց.—Մարութա Բանձր Աստվածին,
Քաչ Պատարագին՝ ինչ վեր իմ աչ թևվին,
Ինչ ուխ որ լմանա,
Ցես կը կայմ, քի կռիվ անեմ։

Ասաց, առեց դՔանդուխ խաթուն,
Եկավ Սասմա քաղաք։
Ինչ Քանդուխ խաթնի ծոց պառկավ,
Քաչ Պատարագին, վոր հերդում եր արի,
Մոռացավ.— դնաց ուխ տարի։

32. Մհերի մանկական չարությունները յևվ ժողովրդի դժգոհությունը *

Ինչ տարին թըմըմավ,
Ամած տղե մ' եռու Դավթին.
Անուն եղի Մհեր։
Ինչ խալխի տղեք տարով կը մեծանին, Մհեր՝ որով
Ինչ ամսով, Մհեր՝ ահաթով։

Տարին վոր թըմըմավ,
Մհեր ելավ դնաց մըչ քաղքին կան կը գըներ.
Ջբարսի ծառեր կը կոռեր,
Քաղքի տղեք կը խեծուցներ,
կը շարեր վեր բարուռ ծառին,
Ծառու ծեր կը թորկեր։
Ինչ ծառը՝ ծեր կը բարձրացներ,
Քաղքի տղեք, ամեն մեկ ճիժ,

* Առաջին տպագրության մեջ այստեղ դրված և յետոյ «Մհեր» վերնագիրը՝ խմբ.

Մեկ մահլա կը թլեր,
Քաղքցիք եկան մոտ Դավիթ, ասացին.
— Քո ազին քամբեհ արա,
Չմեհ ազից կարեց,
Դավիթ խրատեց, Մհեր խոր ականջ չեռուր,

Ճուչ գետ ըմ Սասմա քաղքի հեռչևից կ'երթեր.
Մհեր ուք ըլից՝ կարմռունջ կապեց վեր են գետուն,
Վոր մարդիկ կ'երթեն՝ վեր կարմնչին ինի կ'երթեն,
Մհեր կ'երթեր, մարդեր կը ոփեր, կ'ասեր.
— Շան վորդիք, յես կարմռունջ կապիր եմ,
Մի խամար եմ կապի.*
Ընչռե վեր իմ կարմնչին ինի կ'երթեք,
Մարդիկ կը դառնան, գին,
Զարկին, ջրով ընցնեն.
Մհեր կ'երթեր, կը ոփեր, կ'ասեր.
— Շան վորդիք, յես կարմռունջ կապիր եմ,
Մի խամար եմ կապի,
Տուք ընչռե կը տեք ջրուն,
Ձեր գեր ոանի, մեզ ընկնի իմ վիզ,
Քաղքցիք էլ մ' եկան մոտ Դավիթ դանդաղ.

33. Դավթի յեվ Մհերի կռիվը, եռանգության միջամտությունը յեվ հոր անեծքը

Դավիթ գնաց, զՄհեր ոփեց,
Մեկ ճլբխաի մ' եղար Մհերին.
Տղեն ելավ Դավիթ փոդպաս.
Ախեր, ազեն առան հիբուր,
Զարկեցին հիբարաս.
Ենպես կռիվ արին,
Թող ելավ, ենոնք բռնեց.
Ընչ արընին կարմըրցան.

Ջուհաի ովին Ջանդուխ խաթնին, ասացին.
— Ջանդուխ խաթուն, իլի վեր.

* Մի — ձեզ, ձեր: Ջ մ բ.

Դավիթ Մհեր հիրաւ առած՝ տպանեցին,
Ճանդուխթ խաթուն ելաւ, իրիկնեց.
Ի՞նչ իրիկնեց, տեսաւ.—
Տեսաւ՝ վոր ինչ երկու սար
Կ'երթան, կը գան, դիմդիմն հիրաւ,
Եղպես ի Դավիթ, Մհեր առած հիրաւ.
Մարդ չէր կարա մոտենար.
Ճանդուխթ խաթուն առեց կանչի, ասաց.

«Դավիթ, աւի մը՛ դարնե,
Դավիթ, աւի մը՛ դարնե,
Միր նորալուկ մեկ ատակ մանուկին»։*

Դավիթ չը դարնե,
Համա ընկի հայր խոպու բառավանչեն,
Հայր ախռւ կը դարնե Մհերին.
Ճանդուխթ խաթուն դոր ասաց.

«Մհեր, աւի մը՛ դարնե,
Մհեր, աւի մը՛ դարնե,
Միր քուխ մորուս Դավիթին»։*

Մհեր իակի չլսաւ.
Ճանդուխթ խաթուն դոր կրկնց.

«Որհնալ, բարեբաղդ Ասլաժ,
Քի հրամանքն եր չլսա.
Հրաման ենեա՝ Գաբրել հրեշտակ վեր իջներ,
Ձեր, տղեկ մեմեկից հետ կարեր»։*

Ասծու հրամանքիվ Գաբրել հրեշտակ վեր իջավ,
Ձեռ հառու, դեմեր, տղեն հետ կարեց իրարուց,
Ինչ որ երկու դիք կռվին,
Մեկ երքա, հետ կարաւ.

Դավիթ կանչեց, ասաց.
— Մհեր, վոր աւի քեռ ձի կռիվ արիր,

* Ծերգ ևն. Մ. Ա.

Զի ամանչըցըիր մըննչ խալխին,
կանչիր եմ քաղցրիկ Աւետ,
Քո մոտն ժառանգ չընկնի ոսկ,
Քե մախ չընկնի, չուր Տրխառուս կա դառաստան։

Աստու հրամանքով,
Հրեշտակ Մհերի միջոց եըակ քաշեց,
Վոր ենու մոտն ժառանգ չընկնի ոսկ մըչ աշխարքին։

32. Ձմօկիկն ապաւում ի Դավիթ. խաղդութ իւրմասպան ի լինում

Ես անեծք եսու, ելավ եկավ ոսկ,
Ինչ կոխվ արին խնա Մհերին,
Մըննչ սրընին կարմրցիր եր.
Ասաց.— Քանդուք խաթուն, ճար բի, լվացվիմ,
Դավիթ զոր չորեր եխան՝ սը լվացվեր,
Աչք առեց վեր որ աչ ինվին,
Քաչ Պաստարպին սեվացիր եր վեր աչ ինվին։
Ասաց.—Քանդուք խաթուն,
Ին չեր Մհերի դարբեր՝ կը զըեր վեր իմ գլխուն,
Ին Քաչ Պաստարպին եր, ձի կը դարներ,
Կնիկ, յես ա՛երթամ տախ Ձմշկիկ Սուլթան,
Հերդում արի ուք որ՝ դնաց ուք տարի,
Կնիկ, յես դնացի...

Ասաց, ելավ խնծավ գԲուռկիկ Ձալալին,
Գնաց, խաստավ հեռչավ Ձմշկիկ Սուլթանի տարին,
Ձմշկիկ Սուլթան տեսավ,
Վոր Դավիթ գնաց հեռչավ ենու տարին,—
Մտավ, քիրեն վառեց,
Գոյթնել խոփ եքից կրակին,
Դավիթ մտավ Ձմշկիկ Սուլթանի բախչեն.
Ջոր խալավքեր եխան,
Մտավ, մըննչ հավուղին լոդացավ,
Ելավ ոսկ, որ խալավքեր սը խագներ,
Ձմշկիկ Սուլթան վանչարեն ինի
Զգոյթնի խոփ ֆռացրեց,

Եզաբ վէր Դավթի քամիկին,
Սրտին ինի նոու տայրս
Դավիթ — ասէ, քո անուշ ջան սաղ ըլնի — մեռամ։

Ջուհամի բերին Յանդուխ խաթնին՝
Դավիթ սպանվավ առանց կռիվ։
Յանդուխ խաթուն լի մնվ թաս գինիր խմավ,
Դավիթի կսկիծու Յանդուխ խաթուն լի մեռավ։

Գ

Մ Հ Ե Ր

35. Առտահաւած Մհերը ծնողների գերեզմանի վրա. ծնողների խոհուրդը

Մհեր ինաց հեթը՛մ,
Ձենով Հովան գՄհեր ափեց,
Ել չպախեց, ասաց.
— Մհեր, կոնդ ես, խնա քո խեր կռիվ արիր,
Իլի, գնա միր քաղքին,
Մը դպրի միր քաղաք։
Մհեր նլավ գնաց,
Վէր խոր գերեզմին կայնավ.
Ելաց, ասաց.

«Ծներ՛կ, վ՛ իննչխ անեմ,
Ծներ՛կ, վ՛ իննչխ անեմ,
Ասոր ձի Սասմա քաղքին
*Բնհրաբր ի խանած»։ **

Ածու հրամանքիվ ձեն ընկավ խոր գերեզման,
Գերեզմնից ձեն նլավ, ասաց.

«Վորդի՛, վ՛ իննչխ անեմ,
Գացիր մնչալն ի ձեռնես.
Գացիր մնչալն ի ձեռնես,
Թափիր մաղերն երեսու
Գնա Հալաբա քաղաք,
Լաճ, քո խաց թխուկ և,

* Ծնրգ և։ Մ. Ա.

Լա, քի խաց ֆխուվ և,
Քի կևրակուր եխուվ և»։

Մհևր ենքան ելաց,
Ել ձեն չելավ խոր գևրեզմնևն։
Դոր գնաց վեր մոր գևրեզմնին.
Ելաց, ասաց.

«Մևրվի, վ' ինչխ անևմ,
Մևրվի, վ' ինչխ անևմ,
Ասոր ձի Սասմա քաղքին
Բևհրար ի խանած»։

Ասծու հրամանքիվ ձեն ընկավ մոր գևրեզմանն,
Գևրեզմնևն ձեն ելավ, ասաց.

«Վարդի, վ' ինչխ անևմ,
Գացիր դավրանը ձևռնևս,
Գացիր դավրանը ձևռնևս,
Թափիր մազերն ի գլխևս։
Գնա Հալաբա քաղաք,
Լա, քի հոգին ավլուվ և,
Լա, քի հոգին ավլուվ և,
Քի չորիր փոուվ և»։

Ենքան ելաց, ել ձեն չելավ գևրեզմնևն,
Եղա մևկ խոսք ելավ։
Սասմա քաղքին տեղս ելավ, գնաց, ասաց.

«Վարդմանծ, բարևբար Ամանծ,
Ձև չեմ գիտի Հալաբա քաղաք,
Ձև չեմ գիտի Հալաբա քաղաք,
Ձև տեղ ազա չեմ, չես հաւր երթամ»։

36. Մհևր ազաւոտմ և պառավին

Գնաց խառավ մևկ ճամբևի մեջին,
Տեսավ՝ պառավ մանծևլ շերեփ բռնի ձեռ, եկավ։

---

* Ցևրդ ևն Մ. Ա.

Մահը ասաց.— Պառավ, հո՛ւր տ'երթաս։
Պառավ ասաց.— Հո՛ւր տ'երթամ.
Ցես լսիր իմ՝ Դավիթ սպանած իմ,
Դավիթ յոթ տղա ձի սպանիր է.
Ցես լսիր իմ՝ Դավթին մեկ տղա կա՝ անուն Մահր,
Տ'երթամ, երկու հատ մածնու շերեփով
Ձարկեմ վայր Մահրի գլխուն,
Սպանեմ, վոր իմ սիրտ խոշնան։
Մահը ելավ, պատառավ բռնեց,
Վոտ եդի վայր վոտաց,
Ձպառավ ճղեց, երավ երկու կտոր,
Եթալ ենտեխ, գնաց։

37. Մահրճ ու Գոհարի մայրը

Գնաց, տեսավ՝ մեկ տեղաց մուխ ըմ'կ'ելնի։
Հերի տակ եր. գնաց են հերի տակ։
Տեսավ՝ մեկ պառավ նստի, խաց կը թխի.
Ծծեր թալեր վայր թեվքերուն.
Ծծեր լինչխ շան լակոտ հերթար կ'առնուն։
Մահը վախացավ, ասաց.
«Թը դայռակիկ թըլլեմ, ենու ծծեր բռնեմ,
Տ'ելնի կիլ, ընկնի մըչ իմ սրտին.
Թ'աչքիրա անեմ, վախենամ՝ ենի ձի հապխի»։
Բամկի տեխեն դայռակիկ թըլլեց,
Պառավու ծծեր բռնեց, քամեց.
Արուն-արնաճիր եկավ տուս ծծերեց։
Պառավ ասաց.
— *Ա՛խ, յես հիմացիր եր՝ Դավթի սպանիր են,*
Ես Դավթի զարմի զորբերն է՝ ձի խառավ։
Ասաց.— Իմ ծծեր թուղ տուր.
Մեկ աղջիկ ունիմ, անուն Գոհար խոշուն,
Յոթ տարի ելավ՝ Հալաբա թագավոր
Թրի վրայ է՝ չեմ խոս ենոր.
Թուղ տուր, իմ աղջիկ տամ քեզ։
Մահը թուղ եառավ։

38. Միերը տեսնելի մշակ չեվ Հալաբա թագավորի գինվոր

Ասրցրնց Հալաբա քաղաք.
Գնաց քաղաք, ելավ տերտերուչ մշակ,
Ինդ վնց որ Աստց, զոշում կը հավաքեն.
Նորաթ բերին վեր տերտերուչ,
Տերտեր ասաց.— Ցես տերտեր եմ, չես ինչէ երթամ կռիվ,
Մհեր ասաց.— Տերտեր, չես կ'երթամ,
Տերտեր ասաց.— Վերդին, առ պզտիկ ես,
Տու կռիվ գնաս, զքե սպանեն,
Քո մեղք ընկնի իմ վիզ,

Ալխասեն Մհեր ելավ վիր.
Մեկ անթաթոց մ' եթալ հաց քեվ,
Ելավ գնաց կռիվ,
Զի չկար, տեսավ, որ մեկ մեծավոր ենտեխեն եկավ,
Մհեր ասաց. «Ցես Մհեր ըլնիմ, ձի չունիմ»,
Եզար են մեծավոր, ձիուց երի տակ.
Ենու ձին թեծավ, քշեց կռվու հառաջ,

39. Միեր ու Գոհար կոտորում են Հալաբա թագավորի զարբ. նրանց ամուսնությունը

Գոհար խաթուն՝ որ աչք ընկավ, զՄհեր տեսավ,
Ուբախությեն վախավ հեռվեվ,
Գնաց, մտավ հաց սարևու
Մհեր չև գնաց, մտավ ենտեխ
կերան, խման, իրանց քեֆ արին չուր խլխաուն
Ալխասեն Գոհար խաթուն ասաց.
— Մհեր, գնա, Հալաբա թագավորին սատ՝
Գոհար եկի ռայիդ. Գոհար խաթուն կ'ասեր՝
Ինչքան մարդ ենու քաղաք կա, կուն իմ խել.
Վով կարա քեվել վերուցի, չեմա քաղաք
Վոր ով կարա քեվել վերուցի՝
Զկա, չես չեմ իկա,
Մհեր գնաց, ասաց Հալաբա թագավորին,
Եկավ մոտ Գոհար խաթուն,

Հալաբա թագավորի տալալ ընկավ քաղաք,
կանչեց ասաց.— Հայ-հէ՛յ,
Վոյ կարա քեզ վերուցի,
Կա՛ն թագավորի խելը
Գոհար խաթուն Մհերին ասաց.
— Ինչուը ենու խելու հիա քաղքին կարի,
Տա՛ դնա, հետևմանց դմբր, կարի,
Յես լի հառչվանց զարկեմ, կարեմ,
Մհեր դնաց,
Վոր խելին հիա քաղքին կարավ,
Մախսուդ ձեաց հետուց, առեց սպանել
Գոհար խաթուն հետևվուց սպանեց.
Զուր Գոհար խաթուն՝ Մհեր ասաև հերար,
Աչքը ըմեն կոտորեցին,
Գնացին, մտան Գոհար խաթնի սարին,
Մհեր յոթ որ, յոթ գիշեր գո՛ր խարանիս երավ,

40. Մհերը հորից դուրս և գալիս պառավի ոգնությամբ

Թառատն տարի անցավ,
Գոհար խաթուն մեռավ,
Մհեր ելավ գո՛ր ձին խնճավ,
Գնաց, նեձիր աներ,
Նեձիրվանքաեր զՄհեր բռնեցին,
Տարան, թլեցին խուր վեր
Մեկ շիմար պառավն բան չիքեր, մեկ աղջիկ կըեր,
Պառավ ասաց. «Իմ աղջիկ տանեմ,
Բցեմ խուր վե մոա Մհեր,
Վոր իմ աղջկան մոտեն ապե մ' ելնի,
Ելնի փեսլվանութ՛ան անի, մենք լի ապրինք»,
Պառավ առավ գո՛ր աղջիկ,
Տարավ, եքավ խուր վե մոա Մհեր,
Մհեր գաղջիկ ճղեց, արավ երկու կտոր, քալ վեր,
Ելավ, գշրիդ պառվու աղջկան մեջքեն արձրևեց,
Կապեց հա՛ր մեջք, ասաց.
— Մարև, ձի քաշե սա՛ր,
Մհեր շատ ծանրը եր.

Պատավ չեր գիտի՝ Մհերն եր, ասաց.
— Մհեր, քո չնորհքին մեռնեմ,
Ինչվա իմ աղջիկ շուտով ընցիուն ծանդրացավ
Բաչեց, ևկան խորու բերան,
Տեսավ՝ Մհերն եր, ճանկվերով եկավ տախ Մհեր,
Ուզեր, թլեր մընչ խորուն գՄհեր,—չկրցավ թլել
Մհեր եկավ, գպատավ լև եֆտալ մընչ խորուն,
Սալ եգի վեր բերնին։

41. Դևեն բուլացումը Միհրի առաջ

Մհեր եկավ, կ'ուզեր, վոր գնա.
Վոր գոտքեր կը թլեր՝ կ'երթեր մընչ խորուն.
Ծող հեռչեվ Բուլացիր եր,
Չեր դադրի հեռչեվ Մհերին։
Գնաց, մտավ Ալթա հերի տակ։

Քանի մ' որ անցավ, մեկ մարդ ձիավոր երի.
Մհեր գնաց, հետ ձին խլեց.
Եկավ, գձին խեծավ,
Կ'ուզեր եկ ըմ վհետվանութեան աներ։
Ձին խեծավ, քշեց մընչ գաշտին.
Գևերն հեռչեվ Բուլացիր եր,
Ձին կը խրվեր մընչ խողին.
Ծող չեր դադրի հեռչեվ Մհերին։

42. Միհրի սպոբը չեվ Վանա Բարի մեջ վակվելը

Մհեր քսան տարի
Ալթա հերի տակ սպոթ երավ, ասաց.

«Մ'վ Տեր Աստած,
Իմ խոր անեծք ձի խասիր ի,
Իմ մեջաց երակ քաշիր ի,
Իմ մտանն ժառանգ չընկավ մընչ աշխարքին.
Ձի եկ տախ չկա,
Զուր Քրիստոս կե դատաստանու։

Մվ Տեր Աստած,
Զքիզ եմ կանչիր.
Տու ընդունն ենես,
Զի ձգես վանա քար,
Զուր Քրիստոս կա դառաստան,
Իմ խոգու ճարը ենիս։

Աստած հրամանք արավ,
Զինիկ մարմնավոր եվալ վանա քար,
Զուր Քրիստոս կա դառաստան։

23. Վերջաբան

Կ'ասեն՝ ամեն Համբարձման դիշեր
Մհերի քարի տուռ կը բացվի.
Մարդ չի տեսնի, հրամանք չկա՝ մարդ տեսնա։
Մեկ տարվան խարս ի տեսիս
Են խարս կով բերի նախիր,
Վորթիկ փախիր, հետով վորթիկան գացիր, ընկիր են քար։
Քարի տուռ բացվի, Մհեր քարի միջեն ելիր ի։
Խարս եկի տուն, խարար տվի.
Զուր գացած ի ենտեխ, տուռ փակվիր ի։

Ել հրամանք չկա՝ մարդ տեսնա,
Զուր Քրիստոս կա դառաստան։

ՄԻ ՄԻՋԱԴԵՊ ԴԱՎԹԻ ՎԵՊԻՑ*

ՀՀ. Դավիթը ճոռոգում է Մաուրթա վանքը. Մաուճելիից ավերում է, սարկավագը բոթ է բերում. Դավիթը ջարդում է Մաուճելիի զորճ յեվ ավերում Ցուա բաղաքը

Զմարութա բանձր Աստվաթածին Դավիթ վոր նորոգիր եր,
Դրիր եր միջին՝ քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ,
Քառասուն ավագ սարկավագ, քառասուն սարկավագ։
Ենոնց թային կը տեր, վոր ենտեխա ուտեն,
Ժամ-պատարագ ենեն, դոդա ենեն Աստուց։
Դավիթ լև գնացիր եր քեզ անելու
Հեռա ազատ լաճերաց, ազջկտերաց։

Մարամելիք եկավ վ՚ար Աստվաթծնեն, քակեց, ավիրեց.
Սպանեց զքառասուն եպիսկոպոս, զքառասուն վարդապետ,
Քառասուն ավագ սարկավագ, քառասուն սարկավագ։
Մեկ սարկավագ մենակ ազատվիր եր,
Մտիր եր լեշերու տակ։
Են սարկավագ եկավ,
Ժամու շադիկ թաթխեց մընչ արընեն,
Առեց, եկավ մոտ Դավիթ։

---

* Այս միջադեպը առաջին ապագրության մեջ ունի հետևյալ վերնագիրն ու ծանոթությունը՝ «Պատմ Դավթի» հյուղից—հատված։—

«Մակացու պատմելով առյն Դավիթ առանձնահատկությունն և յեկել յավ թռչել, ցատկել, ուտել և կռվել և «Բալան Դավիթ»։ Մինչև իսկ յերեխա ժամանակ, յերբոր ծնողները նրան ձեռքերին խաղացնելիս են յեղել, նա գիտի վերեմ յերկինք և թռչում և կրի իջնում յեղել» (տես և առաջաբան)։ Մ. Ա.

Այս միջադեպը, սակայն, առանձին հերոսի չի վերաբերում, այլ ինչպես հետո գրի առած փոփոխակներից յերեսում է, վերաբերում է ԹՂոր Դավթին, որ այստեղ, ինչպես և ուրիշ պատումներում, «Բալան» մակդիրն ունի։ Խ մ բ։

Դավիթ նստիր եր, յոթ տարվան նռան գինին
կը խմեր խնա ազատ լաճերուն, արջկաներուն,
Սարկավագ երգեց, ասաց.

«Դավիթ, վիր իլի, Դավիթ, վիր իլի.
Սպանած ին քառասուն եպիսկոպոս,
Սպանած ն քառասուն վարդապետ,
Սպանած ին քառասուն ավազ սարկավագ,
Սպանած ին քառասուն սարկավագ.
Դավիթ, վիր իլի, Դավիթ, վիր իլի»։*

Դավիթ զսարկավագ տեսավ, ասաց.
— Հշկացեք, իմ սարկավագ եկիր ի,
Աստվածնա ինչն ի պակաս՝ կ'ուզի.
Ծունկն ի պակաս, թև ձեռքը,
Սարկավագ ասաց.
— Վոչ խոնկն ի պակաս, վոչ ձեռքը,
Ընկերուն ասաց, Դավիթ՝ յարխոչ եր՝ չլսավ,
Սարկավագ ժամու շապիկ,
Ինչ թաքխիր եր մըչ արըննին,
Թալեց հեռչով Դավիթին,
Դավիթ, վոր տեսավ, ենու բարկութին եկավ.
Ելավ կայնավ, ասաց.
— Ազնվ լաճեր, ազն աղչկաներք
կերեք, խմեք, քեֆ արեք,
Ցես գնացի...

Դավիթ գնաց,
Տեսավ, վոր Մարամելիք եկիր ի,
Զմարութա Բանձր Աստվածին քակիր ի,
Զեռ ձգեց, մեկ երկար բարու ծառ քաշեց,
Գնաց վեր Մարա քաղքին,
Մարամելքի ասքեր ըմեն սպանեց,
Զքաղաք ավիրեց,
Մեկ կառու մ' պրծավ,

---

* Տե՛ս և Մ. Ա.

Թռաւ, եկաւ համբրին գլոխ.
Մեկ ծառ քաշեց, նոու պալանտրակ,
Են կառուն եկ եբի տակ։
Դարձաւ, եկաւ, եկ ըմ գՄարուքա Բանձր Աստուածին
Նորոգեց։

Ամեն քաղաքացու համար

Թեմա հայի և մշակ

Խաչատուր Ջուխակ
Մշակ

Տպագրված է Խաչատրյանց
տպարանում



Խապուենց Չաւիկ

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին՝ 1899 թ. հրատարակության առաջաբանից բերում ենք հետևյալ հատվածը.

...Կարևոր ենք համարում այստեղ նկատել, որ ընթերցանության համար հարմար գտանելինք մեր վարքանաթը վոտանավորի ձևով շարել, մանավանդ որ յուրաքանչյուր տողում լրանում է մի միտք և բացի այդ կան ամբողջ հատվածներ, որտեղ պարզ չեզրի չի չափը։

Մենք աշխատել ենք, որքան հնարավոր եր, ամենայն ճշտությամբ արտահայտել Մոկաց բարբառի հնչյուններըբ այնպես, ինչպես մենք լսել ենք Զատիկից, թեպետև նկատելու չի, որ նախ այդ հնչյուններըբ մասամբ հատատուն չեն, չնչին փոփոխումներով (եսաց — սաց, նչը — ինչը և այլն). մենք հարմար ենք գտանել այդ փոփոխ հնչյուններին մի ձեվ տալ։ Ցերկրորդ՝ ի նկատի առնելով Զատիկի յերկարատևյա պանդխտությունը Պոլսում, մենք չենք վտահանում պնդել, որ այստեղ պահպանված լինելին Մոկաց բարբառին հատուկ ճշտություններըւ*

Մեր ընտրած վերնագիրը վերաբերում է համար արտահայտում և ժողովրդի հայացքը յուր հերոսներին վրա, որոնք, ոժտված լինելով անասելի ֆիզիկական ուժով, կռվում են «խավիլխաններին» մի առանձին ցեղ...

«Մատոյենց անուց Զատիկը, մոտ 50 տարեկան, մեջտեղ հասակի տղամարդ է՝ դեռ բոլորովին առույգ դեմքով, լայն կրծքով և կլոր յերեսով, ծածկված սեվ կոշտ մազերով. աջվվի քիթը տալիս և նրան վեհանձն և համարձակ արտահայտություն Ընայելով տարիքին, նրա գլխի մազերը, կուշ մորուքը և պայտաձեվ բեղերը դեռ բոլորովին սեվ են. ընդհանրապես նրա տեսքը առողջության և ուժուր կազմվածքի տպավորություն է թողնում։ Նրա հայրենիքն է Մոկաց (կամ Մոկս, ինչպես ինքն և անվանում) գավառի Գիննեկանց գյուղը. գլխավոր պարապմունքն է յեղել դաշտային աշխատանքը և կռավարժությունը Դավթի «Սասնոյ ծռեր» և ուրիշ շատ հեքիաթներ նա սովորել է տատներից տարեկան հասակում նույն գյուղի բնակիչ Գրիգորից, որը այն ժամանակ արդեն ծեր եր և որը մի անգամ յեղել է Պոլսում։ Զատիկը ևս քանի տարի

---

* Ընդհատ բանահավաքն այս հայացարարության՝ լեզվական նույն ձևերը տարբեր տառերով են արտահայտված, օրինակ՝ տատը — տատը, նչը — ինչը, մը՝ սպանը — մի ձգը, վար — վրը, ձբ — ձը, կուշ գնանք — կը գնանք և այլն։ Այս հրատարակության մեջ պահվում է առաջին տպագրության ձևերը։ Խ մ.

կան հասակից կրկնել և յերկարամյա պանդխտություն, յերկար անդամ բախտ փորձելով Պոլսում, փորձել նա անց և կացրել նախ 3, ապա 2 և, վերջապես, ամբողջ 8 տարի, բանելով Ջրաղացում։ Վերջին 4 տարին նա անց և կացրել հայրենի դյուղում, վրտեղից նա յեկել և նշմարածին 1898 թ. Զատիկին։ Այժմ նա ծառայի պաշտոն և վարում Գևորգյան ճեմարանում։—Մեր դրի առած վարքականները կրկնել ենք ամեն յերկար անդամ և յերկար անդամ էլ Զատիկը պատմել և բառացի, առանց նկատելի փոփոխություններ։ Բացի այս «նաղլից *» նա դիտե ուրիշ շատ հեքիաթներ, որոնք նմանապես մենք դրի յենք առել։

Բ. Խ.

Դրի առնողն առաջաբանի մեջ հիշում է, թե՝ «պատմողը — Մակար Զատիկը — Աբեղյանի «նաղլ» ասողն», նույն դյուղի բնակիչ Նախոյի ուսուցիչն և յեղել։ Այս առիթով պիտի նկատել հետևյալը.

Զատիկը նշմարածում ապրող մարդկանց մեջ, ինչպես պիտանի, համարվում եր «վարպետ» պատմող, որովհետև պիտեր շատ հեքիաթներ ու նաղլներ և սիրով պատմում եր։ Նա իր գիտությամբ և պատմելու արվեստով պարծենում եր, մինչդեռ Նախոն համեստ եր և սակավ եր պատմում։

Նախոն իր պատումը պատռոն և չիրխատարդ հասակում սովորել և ծնողներից, բայց լսել և և Զատիկին Սրանով են բացատրվում Նախոյի և Զատիկի պատումների նմանություններն և տարբերությունները։

Դրի առնող Բ. Խալաթյանը Զատիկի պատումը լսել և ընդհատել մոտ նամերի ձևովի նրա պատումը վերանայել ենք և շատ տեղեր փոխել։

Բ. Խալաթյանը մի քանի պայմանական նշաններով ցուցում և արել բառբառային հնչյունների մասին, բայց նա հետևողական չի յեղել և այդ նշաններով հաճախ չի նշանակել բարբառային առանձնահատկություններ։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆԵՐ

* «Նաղլը» ժողովրդի անտակետով ճշդրիտ անցքի պատմություն և (= անուս. быль ևամ быличка), որում և պահպանվում և «հեքիաթից», իրրև հնամարտություններից դուրկ ավանդություններ։ Բ. Խ.

II

ԴԱՎԹԻ ԿԻԹԱՐԸ ՄՄՐԱՄԱԳՐՔԻ ՀԱՅ*

1. Նախերգանք

«Դառնամ դողդմին տամ Մելքսեթ քահանային.
Դառնամ դողդմին տամ Մանասարին.
Դառնամ դողդմին տամ Բադդասարին.
Դառնամ դողդմին տամ Մհերին.
Դառնամ դողդմին տամ Թբուան Դավթին.
Դառնամ դողդմին տամ Զևնով Հովանին.
Դառնամ դողդմին տամ Ցրուան Վերպին.
Դառնամ դողդմին տամ Պարոն Աստղին.**
Դառնամ դողդմին տամ ականջ կրողի
Խոր մոր խոզային»***

---

* Առաջին տպագրության մեջ այստեղ կա միայն այս վերնագիրը՝ «Թբուան Դավթի» և մ. թ.

** Այս մի շարք հերոսների անուններն, որոնց հիշատակվեն ոտքերի մեջ տալիս պատմողը («բռաբցողը»), ցարդ շրջում են ժողովրդի մեջ. մեզ պատմել են և մենք մասամբ առաջին անգամ լսել ենք, որ ոտանավոր ամեն մեկը ունի յուր առանձին վարիանտը, որոնցից ամենատարածվածներն են Դավթինը և Փոքր Մհերինը։ Բ. Խ.

*** Ձերգ ևս Բ. Խ.

2. Միհրի վարդիճները — տաճկի ձրագ՝ Մարամելիք յեվ հայի ձրագ՝ Դամիք

Մհեր, Մարամելիք դասաարբայ ին,
Մարամելիք մեռավ,
Մարամելքի կնիկ խրկից հետեվ Մհերին, ասաց.
— Գնա ասանդ, իմ բեհեն քու խոտ իլնը՝*,
Մհեր ասաց.— Տ'երթամ.
Մհերի կնիկ ասաց.— Մ'երթաս
Մհեր ասաց.— Տ'երթամ,
Մհերի կնիկ ասաց.— Մ'երթաս
Ան ալլադ ի. ան'ն երթաս, որ խառնվիս զգաներ
Մհեր ասաց.— Տ'երթամ,
կնիկ ասաց.— Տու երթաս,
Ընչիվ քեռասուն տարի —,
Տու իմ գողվենք որ չգան։

Մհեր գնաց Մարամելքի կնկան մոտ,
Խաւալավ դկնիկ, կնիկ ելավ տղով,
Տղե մ' ելավ, անուն իդի Մարամելիք
Հերիւի տղեներ տարի կը ջանջանեն,
Մարամելիք որե կը ջանջաներ.
Ձերըզե տղայ եր
Մարամելիք ջանջացավ, գնա ելավ,
Մարա տեղ գնֆիվ երավ։

Մհեր մտածից.
«Ես տաճկու ճրագ վառիցի, խայուն ընգրցի»։
Մհեր Մարա տեղեն ելավ,
Եկավ Սասմա տեղ, կնկան ասաց.
— Կնիկ, իս տաճկու ճրագ վառիցի,
Խայու ճրագ ընգրցի.
Թողնիմ, իս գնամ քու գողվենք.
Բալքի Սասմած մի գտակ ըմ տա,
Խայու ճրագ չընցնի։

---

* Մակաց բարբառում վերջին վանկի «ը» (մոչ հագ) ձայնավորը խոնարհման և հոլովման ձևերի մեջ չնչավում և. այսպես նաև՝ գերը՛գ, չագը՛ր և այլն։ Խ մ ք.

Կնիկ ասաց.— Իս անա իմ երի՝
Զուր քնառուն տարի տուի իմ գողվինք ու չգտա.
Մհեր ասաց.— Տարի մ' գիշեր խաբինք,
Մեկ՝ ցերեկ խաբինք,
Քնառուն տարին լըմանա,
Իս գամ քու գողվինք.
Տարի մ' գիշեր խաբիցին,
Մեկ՝ ցերեկ խաբիցին,
Քնառուն տարին լըմացըցին.
Կնիկ ասաց.— Տու գնա իմ գողվինք.
Առաված մի զավակ ըմ ա,
Իս էլ, տու էլ ու մեռնինք,
Մեր տղեն ու կենա վըր ցըղին.
Մհեր ասաց.— Քըղ իլնը, քըղ կենա վըր ցըղին.
Մեկ տիրող ըմ ա'իլնը՝ մեր տղին.

Մհեր գնաց կնկան գողվինք,
Կնիկ ելավ տղով,
Ին ար, ին ամիս լըմացավ.
Մհեր ասաց խրոդքեր.
— Ջենով Հովան, մի* զավակ ըմ ա'իլնը՝,
Միր զավակի անուն դնեք Դավիթ.
Միր զավակն էլ առնեք՝
Մարամելքի կնիկ տիրը՝.
Մինք երկուան էլ ու մեռնինք.
Տղե մ' ելավ. Մհերն էլ, կնիկն էլ մեռան.

3. Դավիթը Մարամելքի տանը. նա բռնում է Մարամելքի հոլը

Ջենով Հովան տղի անուն իդի Դավիթ.
Տղեն առից, իդի Թոբրեն, եֆտալ Թիվ,
Տիկ ըմ մեղր, մեկ՝ կաթագ նըրթե,
Ջ'Դավիթ առից, գնաց Մարա քաղաք.
Տարավ Մարամելքի կնկա մոտ.
Մարամելքի կնկան ասաց.

* Մեկ՝ Խ ա ք.

— Ա՛ս Մհերի ապէն է, կը տիրէ՝
Զինովի Հովան զարձավ, եկավ տուն։

Մարամելքի կնիկ գԴավիթ տիրէց՝
Դավիթ ջան ջացավ, ֆռա եկավ՝
Որին մեկ՝ մոր հասց.
— Մարամելիք կ՚երթա հալե* կը խաղա,
Ըզդի եղ տանը՝ ուր խնա, իս թամաշա ենիմ.
Մարամելքի մեր Մարամելքին հասց.
— ԶԴավիթն ել տար խա քի, թամաշա ենի։
Մարամելիք հասց.— Ըմ տանի.
Տանիմ՝ հալ դիպնը՝, ապանը՝,
Մեր հասց.— Հետու տեղ դի.
Տա հալե խաղցնք, Դավիթ թամաշա ենի։

Մարամելիք Դավիթ առէց, գնաց.
ԶԴավիթ հետու տեղ իդի.
երկու ֆերըզ իդի պահացող՝
Զերթա, քան ըմ վե ինկնը՝ տակ, մեռնի,
Մարամելիք առէց մարդիը,
Գնաց հալու տեղ, հալե խաղաց,
Դավիթ ընցկում իրիշից, բա մ՚ չտեսավ.
Ընկավ, անտեղեն իրի։
երկու ֆերըզ կախվան Դավիթ մընե,
Դավիթ չկրցան զանֆիթ ենենու
Դավիթ երկու ֆերըզ վեր բինթ բերթե քեշից,
Մընչիվ տուն իրի։
Դավիթ ընկավ,
Գլխե իդի գետին, պառկավ անտեղ։
Մարամելքի մեր հասց.
— Ընչո՞ւ ընկար, եկիր։
Հասց.— Մարամելիք ըզդի տարավ, գառան տեղ իդի,
Իս բա մ՚ չտեսա. առի ձեն կու գիր**.
Իս ընցկում իրիշից, բա մ՚ չտեսա, իս ել իկը։
Մարամելքի մեր ընկավ,
Հիրկուն Մարամելիք իրի։

* Թաղիքից գնդակ, որը նետում են «քաշելի» (փայտի) հարվածով։ Բ. Խ.
** Ջաղիկի ասելով, խաղի ժամանակ նմագում էլին աշուղներ։ Բ. Խ.

Մսրամելքի մեր հեռվից չկայնավ.
Ըսըկեր եր, նաեր եր արեանդ
Մսրամելիք եսաց.
— Տա՛ ընչո՛ւ ըսըկեր իս, նաեր իս ապուեդ,
Զըս կո՛յնես, իմնը՛ հեռվից ձէ։
Եսաց.— Ընչո՛ւ համար գԴավիթ
Զատրար հա՛լը՝ տեղ, թամաշա ենես։
Եսաց.— Մո՛րե, ան կառամաժի ապգե չի,
Ասոք մարիկ չենի. հա՛լ գընե, ապանի,
Հա՛ բիշ մարդիր ա՛ըսին՝ եկավ խացի կերդ,
Մսրամելիք իրեն խաց ապով եառ ապանիլ.
Զի ամոթ և իմ մարդիրու մըննե,
Առավոտուն կը տանիմ։

Առավոտուն Մսրամելիք հեկավ,
Դավիթ առից, գնացին հա՛լի տեղ։
Հա՛լի քա՛ր յոթը գա՛զ խրոնդկացեր իր։
Դավիթ գնաց, մտավ հա՛լատունը,
Ինչ երին, Դավիթ ման չեկավ։
Մսրամելիք ըսըկավ, եսաց.
— Հա՛լ գալկեցեք, թըզ գա՛ սպանի.
Հիփ իլի, ա՛ըլնե ձի գլխացավանք։
Հա՛լ վիրաց գարկիցին, եկավ։
Դավիթ ձեռ խառ՝ գհա՛լ բռնից,
Եգարկ, եսաց.— Հա՛լ, սաջար հա՛լ.
Երկու խարիր մարդ հեռվից հոլին սպանից։
Մսրամելիք Թուր քեշից, իրի,
ԶԴավիթ ալ սպաներ։
Մարդիր եկին հասաջ, չկ՚ծղին,
Ըսըցին.— Անիկ տղայ ի, բա՛ն չգիտե։
Դավիթ հա՛լատնեն հեկավ,
Մընչիվ առուն չկայնավ։

4. Մսրամելիքը փորձում է Դավթին կրակով յեվ վոսկով

Մսրամելիք մարդեն երավ,
Հիրիկվան առուն եկավ։
Մեր եսաց.— Ընչո՛ւ համար մարդեն երիր իս։

Եսաց. — Մարև, իս քի ըսըցի,
Դավիթ չըմ տանը իմ խեռ.
Ըսըցի՝ ան կառամաժի ապդև յի,
Ձասք մարիկ չենի։
Տարի խեռ՝ մըռավ հայռաւնս
Ինչըդ ևրը՝ ուշս չնկավ.
Իս ևլ ասը՝ հայ դարկեցեք, ինդ գա, ապանի։
Հայ բոնից, եվալ,
Երկու խաբիր մարդ հետջիվ ապանից.
Իս իմ մարդերուց ամչըցայ։
Մեր եսաց.— Վռըդի, ան ադայ ի։
Ան բանիր չի դիտի։
Եսաց.— Մարև, ասի կ'ըսիս՝ ադայ ի,
Ձևլք բան չի կըտրի.
Սինի մ' վոսկի, մեկ՝ կրակ լից, դի հառաջ.
Մը հինք՝ ձեռ ու սա դաս վոսկին, քե՝ դաս կրակ.
Թե ձեռ իսու դաս կրակ՝ տխմար ի.
Թե ձեռ իսու դաս վոսկին՝ չար ի.
Տը դարկիմ, ապանիմ։

Սինի մ' վոսկի, մեկ՝ կրակ լցին,
Դրին Դավթի հառաջ։
Դավիթ սաս պարդից դաս վոսկին.
Հրեշտակ երկնուց իջավ,
Սաս կանից, տարավ իդի վըր կրակին։
Կրակ կպավ սաս.
Սաս իդի վեր լիդվին, լեզուն իրիցավ.
Ելավ Թըլոր Դավիթ։

5. Մարամելիք պատիրում է ապանել Դավիթ. սա հարցում է Քերիզներին յոր միասին վերադառնում են Սասուն

Մարամելքի սիրտ չտաքցավ վերին,
Եսաց.— Մարև, Դավիթ տը ապանիմ.
Մեր եսաց.— Վռըդի, մը ապանի,
Ախու մեղք քու վիզ մի ձգը.

Հաբողկը՝ թըզ երթա ուր խոր քաղաք,
Մարամելիք հելավ,
Երկու ֆեըզդ իբի անաեղ, ասաց.
— ՋԴավիթ կը տանիք Բաթմանա կարմիջի վերեն,
Ջինեցիք, կուժ ըմ անու արըշեն առիք, բերիք,
Իա խմիմ, իմ սիրտ խոմանա

Երկու ֆեըզդ առին Դավիթ, տարան
Դավիթ կ'ընկներ ասր-ձայր հիտիվ հավքերուն,
Հիտիվ ջանավարնիրուն,
Մըննիվ հիրիկուն կան կը դեր
Շարաթ մ' երկու գնացին,
Որ ըմ չըսըցին.— Տա՛, Դավիթ,
Տա՛ նեղացիր իս, տա՛ ծարտավ իս, տա՛ անոթի իս.
Որ ըմ չի խարցըցին
Գնացին Բաթմանա կարմիջին մոտացան,
կանչիցին.— Դավիթ, հերի երթանք,
Դավիթ ասաց. «Աստված խեր ենը՛.
Ախիկ երկու շարաթ կա՝ կը գա՛նք,
Որ ըմ ձի չեն կանչը.
Ասոր ընչո՞ւ խամար կը կանչինք»
Դավիթ գնաց ֆեըզդքերու մոտ,
Ասաց.— Աստված խեր ենը՛,
Ա քա՛նի որ կա՝ կու գա՛նք,
Տա՛ք ձի չեք կանչի, չեք ըսի՝
Տա՛ անոթի իս, տա՛ ծարտավ իս, տա՛ նեղացիր իս.
Ասոր տա՛ք ինչ ձի կը կանչեք
— Ֆա՛ խոր քաղքին մոտ խոսանք,
Տանինք, քա՛ խրտրեր թասլիմ ենինք,
Դառնանք, գա՛նք մենք,

Գնացին կարմիջի մոտ.
Մեկ ընցավ, մեկ մըննաց Դավիթի հետիվ.
Դավիթ ասաց.— Ընչո՞ւ խամար
Մեկ կ'ընցնեք իմ հառաջ,
Մեկ կը մնեք իմ հետևե՞
Ըսըցին.— Ընցիուն կ'ենինք,
Տա՛ չվախանաս կարմուջի վերեն,

Գնացին կնա կարմիջին.
Մեկ՝ հեռչվենն դարձավ Դավիթ վերին,
Մեկ՝ հետիվենն դարձավ
Դավիթ ասաց.— Աա ինչ ա՛նիք,
Դավիթ ձեռ մ՛ եվալ անու փողպատ,
Մեկ՝ եվալ անու փողպատ,
Տը ովեր հերուբ, քըլեր չա՛ր,
Ասաց.— Տա՛ք չեք գետը մարդ քըլի չա՛ր,
Իս ձի նդանց ասաֆ, ամա՛ք նուբնն մարդ քըլեցիք չա՛ր
Երկու ֆեըրդ ըսըցին.
— Ասըծու սիրուն, ամա գմի չքլիս չա՛ր
Մարամելիք մի* ասաց.
«Տարիք Բաֆմանա կարմիջի վերին,
Դավիթ գինեցիք, կուժ մ՛ անու երընեն ուռիք,
Անու չանդակ քըլեցիք չա՛ր,
Աբուն բերիք, իս խմիմ, իմ սիրտ խուշաս,
Տա ապես մարդ իս, մենք ենենք մարդ կ՛ուզինք.
Ամարն ել մենք քա՛ խոր ֆերըզնեքն ինք,

Դավիթ ասին, գնացին, տարան տուն,
Քրոջքեր տուն չեր.
Քրոջքա կնիկ չճանչցավ.
Ասաց իատու, կերավ,
Դավիթ չբասավ մընչիվ հերիկուն,
Հերիկուն քրոջքեր տուն եկավ,
Գնաց, Դավիթ գլեխ պապնից,
Դավիթ վերին խընդացավ, ուրախացավ,

6. Դավիթն ուրաշած ու ճախրոզ չեվ Ջենով Հովանի հաց բերելը

Մեկ ժամանակ ըմ վերին ընցավ,
Քրոջքեր ասաց.— Դավիթ,
Ձքի ենիմ ուլաշած, գնա, ուլիր տար, երբժար
Ջենով Հովան գնաց,

* Մեկ՝ Ա մ բ.

Գողվըան սոլ եաու կար, կոս մ' ել եաու կոսիլ,
Առից իրի, առավոտուն եաու Դավիթին։
Դավիթ սալիր խապով, կոս բռնից ձես,
Ուլիր առից, տարավ գաշա։
Խրողբեր եաց.— Ուլիր տար գաշա երբծա,
Մընչիվ իս քի խաց բերիմ։

Դավիթ գուլիր առից, գնաց գաշա.
Ուլիր երավ գաշա, ընկավ տար ու ձոր,
Ինչ չանավար կըներ, ժողվից, իրի,
Ուլիրու մեջ երավ, հետչիվ կայնավ։
Խրողբեր խաց տարավ, մոտացավ։
Դավիթ եաց.— Խրողբեր, հետու երի,
Ուլիրու մոտ մի գա, ուլիր կը փախին։
Խրողբեր իրի ուլիրու մոտ, տեսավ՝
Ինչ չանավար կըներ, ամեն ել բերի,
Ուլիրուն մեջն ի երի։
Լպտարակ փախավ, Դավիթ հընկավ հետևվեն,
Տարավ ան տար, իրի ան ձոր,
Իրի, ուլիրու մեջ երավ։
Խրողբեր եաց.— Երի, խաց կի։
Դավիթ նստավ, խաց կերավ, եաց.
— Խրողբեր, նա սիվ ուլիր Աստված ոխնի,
Նա բոզ ուլիր Աստված անիծի՝
Ըզդի շատ կը չարչարին, շատ կը փախին։
Խրողբեր եաց.— Ան բոզ ուլիր Քրդ երխան։
Դավիթ եաց.— Անու տեր ձնի ուլ ա'ուզր'.
Ջը ուլ չկա, իս տամ անու տեղ.
Իս անու չուհար ինչըդ ար տամ։
Ձենով Հովան գարձավ եկավ տուն։
Հիրիկվան Դավիթ ուլիր, չանավարնիր,
Առից տարավ, երավ քոդքի մեջ։
Սոլիր ննկանդար կարվեր ին, ըլեր ին ծընկնիր.
Կոս մաշեր իր, ձեացեր իր կռատուն, ընչ բռներ իր։

Իշխան մարդիր գնացին մբա Ձենով Հովան.
— Տի՛ նա ծուռ երիր իս ուլարած,
Չանավարնիր, ուլիր իրաուց չը ֆոկիր։

Զենով Հովան ասաց.
— Առավոտուն քեզ ուլիը չը տանի։
Զենով Հովան Դավթին ասաց.
— Ուլիը մը տանի, ուլիը գքի շատ կը տանջենն.
Նախիր տար, երա դաշտ,
Պառկի անտեղ, քընի,
Մընչիվ իս քի խաց կը բերիմ։
Խրողքեր գնաց, պողվըտեն սոլ մ' ետու կար,
Պողվըտեն կոռ մ' ետու կոռիլ,
Ահից, երի, առավոտուն Դավթին խոռ։

Դավիթ սոլ խապալ, կոռ ձեռ բռնից,
Նախիր առից, գնաց դաշտ,
Նախիր երավ դաշտ։
Դավիթ ընկավ սար-ձոր կան երի.
Ինչկանդար առջ, դել, պըլընդ, առուծ,
Ինչկանդար ջանավար կա, ամեն ել ժողվից, երի,
Տավարներու մեջ երավ։
Ջանավարներ Դավթի հախուն կայնած ին.
Տավարներ ջանավարներու հախուն կայնած ին.
Դավիթ հառաջ կայներ ը։
Զենով Հովան խաց տարավ Դավթին.
Երիշից, տեսավ՝ քընի մ' տավար ին,
Ընցկուն ել ջանավար բերի,
Լցի տավրի մեջ, դաշտ լիք երի։
Խրողքեր տեսավ, վախացավ, կանչից.
— Դավիթ, երի, խաց տար, կի.
Ծերացիր իմ, չըմ կերի գայ ադեղ։
Դավիթ ասաց. «Ահա, իմ խրողքեր վախացավ»։
Դավիթ գնաց, խաց առից, երի, կերավ։

7. Զենով Հովանի ետևազգուշացումը յեվ Դավթի կանչը ետևիրը բազմացնելու մասին

Խրողքեր գարձավ, երի տուն,
Խարար երավ քաղքին, ասաց.
— Ելըցեք, ձիր գոնիր չինեցեք,

Դավիթ ընդկուն ջանասար բլրէն, տավրի մեջ լայ՝
Գան մընչ քաղքին, քաղաք տ՚ավրինա

Հիրիկվան Դավիթ առից տավարնիր, ջանասարնիր,
Իրի, քաղքի մեջ իլից.
Տեսավ՝ մարդ քաղքի մեջ չկա.
Դավիթ կանչից, եսաց.

«Ելցիք, ձիր դռնիր բացիք,
Ձիր տավարնիր տեղ երիք.
Թե մեկ եր, երիր իմ տաս.
Թե տաս եր, երիր իմ քսան.
Թե քսան եր, երիր իմ քառասուն»

Մեկ տուս չելավ.
Մնկանդաս կանչից, մարդ չտեսավ,
Եսաց. — կ՚ըլնիք, չկո բարով չիլնիք,
Դավիթն էլ ուր կ՚ափանակ կործից ուր գլեխ,
Պառկավ անտեղ, քընավ մընչիվ առավոտուն
Ինչ խարամ եր՝ գնացին, խալալ՝ մնացին.

Իշխան մարդիր եկան,
Ձենովվ Չովանի մոտ գնացին.
— Ձենովվ Չովան, տուր դմի տավրն որ կարիս.
Հըմէն ճար ու համրանք չանք ի ավի, ձին գըտի հըմէնս։

22. Մանուկ Դավիթը նպաստարյուրի վրա բնելով՝ դառնում է հզոր յեղ կտրում է Ճերկաթի սյունը

Դավիթն ե, ձին կը քշի, կ'երթա.
Կ'երթա, կը խառնի կաթնաղբուր։
Հնաւ ձին կանդնի.
Դավիթ մեկ ըսըքեր կը գարկի.
Վուր ըսըքեր կը գարկի,
Ջիւն չնա ցավ կը տա, կ'ըսի.
— Դավիթ, քի կը տամ երեզական դեմ, քի կը վառեմ։
Դավիթ կ'ըսի.— Ես կը խաղամ քու փուրի տակ։
Կ'ըսի.— Ի կը գարկիմ դեմէն, կը յվրեմ։
Կ'ըսի.— Ես կը խաղամ քու քամակ։
Կ'ըսի.— Քու նրիթռներ քի ինչ չարիչաք երաց։

Վուր սկուն եաց, ընկալ Դավիթ մ'իսկ.
Դավիթ ձիու երկու ականջի մէջ պատնից։
Ջիւց եղալ տակ, հաղ ձեռ, իրիս էվաց։
Ջիւս գամ բերնեն խանից։

Ըզինքը նսեմ ենաե, խաց կ'երամ.
Զին ել ենաեղ կրնծայ։
Խաց կ'երամ, պրծամ, ենաե պահկամ, քնամ։
Ինամ, ակռխամ, տըսամ՝
Ինչ ի ճեացի՝ քեմար կառվի.
Ինչ ի ճեացի՝ ենու բշկոժքիր հըմեն կուռեին.
Ենու շլվար՝ վուր յոթ անդով կապիր ի,
Ինչ ի ճեացի, վուր կապիր կառվին.
Զամեն ել սկուն ի կքիր,
Են գիտի՝ վուտ բրին ի,
Բշկոժքիր հըմեն կը պոծուցի.
Զամեն գոռով քեշի վուտից գա.
Քեմար մեջքեն կը հարձրկի.
Կ'երակ թիվքիրուց կը խանի.
Խաչն թիվքիրուց կը հարձկի։
Կոտիկ գըվխուց կը թալի։

Եգա բանրակ հըմեն կոտիկից կը խանի, լցի գետը՛ն,
Կոտիկ անջախ, գոռով մտուցի գըլխի։
Կ'երակ Աբմանեն կը խազնը,
Բշկոժքիր անջախ կը գա, կը բըշկոժի։
Քեմարն մեկ փաթ կը բիրի,
Անջախ հիրար կը խաուցի։
Շլվարն կը խազնի, հալա ուր նեղ ի։
Զամեն, բանրակ հըմեն կը խանի, գարտըկի,
Անջախ կը մանի վուտ։
Թուր կեծակին կը կապի,
Մեկ ենու բաժնովն ի, հալա կարճ ի։
Խաչ պատրաստեն կը դնի վար աչ թիվին.
Ինչպես մեկ խուի դնիս վար պուտկի բերնին։
Ել չքեթրի, ել հիրուր չանը.
Եղավ մեկ ենու թիվով, ել խով չենի։
Դավիթ ըլավ, փառք տվից Աստըծուն։

Զին եկավ, կանգնավ Դավթը՛ մոտ։
Դավիթ գամ դրից բիրան, ըլավ խիծավ։
Խնգացավ, քշից, գնաց։
Ճամբեն տիտավ՝ մեկ երկըթե սուն կը ճամբեր մեջն ի։

Դավիթը մտեն իլիր եր.
Վոր երկրքին սուն տեսավ,
Քրեխտոր խուսք միտն ընկավ։
Դավիթ գիուր քեշից,
Ինչքամ գոռ կըեր, գիուրն դանից.
Վուր դանից, գերկրքին սուն կտուից, մեջեն ընցավ։
Երկրքին սուն, չե վուր սուր մեջեն ընցավ,
Չհաժըվավ, վուր կտուր ընկներ տակ.
Վրըն կտուր, ցածրը կտուրըն վերա կանգնավ։
Դավիթ չիմացավ, թե թուր կտուիր, ընցիր եր.
Գըտի, թե թուր չը կտուիր։
Դավիթ լացից, ետաց.

«Ջեռնիկ, դու կուտուր կիներ,
Վուր քի ինքան գոռ չկըեր,
Վոր երկրքին սուն կտուեր»։

Ես վահան եվ արդար մարդ ինչ գրուցեր,
կը կատարվեր ետու խուսք։—
Դավիթ ձեռ թուլցավ։
Մեկ եվ Դավիթ տեսավ՝ քամի մ՝ եկավ։
Եղա քամին փըթոթըրիկի պես՝
Եկավ, գարկից երկրքին սուն, սուն չուռ առավ։
Դավիթ գնաց, կ՝ըրչիլ երկրքին սուն.
կը տեսնա՝ գարկած տեղ թուր կտուր, ընցիր է։
Նայր հիմացավ,
Դառցավ Աստված կանչից, ուր ձեռ տվեց.
«Ջեռնիկ, դու կանանչ կիներ»։

23. Դավթի վախը բռնամիներից. ձիու հաջակերը. հարձակումն յեվ օգտվելը

Դավիթ գձին քշից,
Դաղրու գնաց կռիը տեղ։
Մեկ գըլխին գնաց, եկավ ասկյարը մեջ, գառցավ.
Ինչպես մեկ քիմ բլոհ մեկ տեղ ըլնը,
Մարդ վուտ գանի վերա, խառուցի,
Ենպես եդա ասկյարըն սկսն հըմեն կը խըճողը։

Դավիթ տխասվ եղա անապին ասկեր, նաքան չաղը՛ր,
Եղա ջանդակնիր սկուն կոլոնվան, շըշկռավ։

Ջին հիմացավ՝ Դավիթ շըշկռավ,
Զը՛ան. քե ուր թալի՝
— Դավիթ, նաց, ինչքան քի թուր կառի,
Ենքան իմ վուտաց հնաչնվ կը մհանին.
Ինչքան քի թուր կառի,
Ենքան իմ պուչի մաղիր կը ապանին.
Ինչքան քի թուր կառի,
Ենքան իս իմ բերնով կը ապանիմ.
Զընը՛ վախենաս, կռիվ նրա։

Դավիթ սկոն կռիվ կ'ենի. խաչ մխա* չկըգի։
Երկու պըլին ել կ'երթա, կը գա.
Ելի ձին կ'իմանա՝ Դավիթ շըշկռավ։
Ջին Դավիթը՛ մոտեն ըռըկավ, գնաց,
Ակռըվ որթալաղ տեղ կանգնավ։
Ջին կանգնավ, ել մարդ չապանը։
Վուր ձին կանգնավ,
Ենքան ասկեր թափան Դավիթը՛ վերա,
Համա կը զանին. վհատավ կը զանին,
Բռըռով կը զանին, թրով կը զանին։
Ենու շուրիր թուր չկառի։
Ջընջըլ կը թվին ձիու վրին,
Թիվքիր կայիմ կը կապին։
Դավիթ ենաև չաա խեղճ կ'ըլնը։
Ջին ել ըսկի ձեն չկաա։

24. Ջենով Հովանի առտպատմակաւմը չիվ զրույցը ձիերի հե-

Չիվան պըշիր կ'ըլնը գա.
կը տխանա՝ Դավիթը ասաղը մժվաղիր է.
կ'երթա առեն, կ'ըսի.— Կնիկ, ըլե, ձրնդ երա.
Դավիթը՛ ասաղը մժվաղիր է.
Դավիթ չաա նեզ տեղն է։
Կնիկ կ'ըսի.— Տնավեր,

* Ավելացնում ենք «մխա», տես 1422–23 տողերը. Խմբ.

Դավիթին ել նեղ ումն կ'ընկնը.
Են ինչ գա ասիր, իս հավատացիմ,
Բա, խրոխտը ի, սըրտ վերա կը ցավի.
Մեկել կը վաղի գա, կը տիանա դահա՝
Քանի կ'երթա, Դավիթը՝ ձաղը կը մժվաղի.
Մեկել կը գա առնի, կ'ըսի.
— Կնիկ, կնիկ, իլի, ճրագ երա,
Կնկան վերա գոռ կ'ենի.
Կնիկ կ'ըլնի, ճրագ կ'ենի,
Իրա Չալամի կռիվ կ'ենի.
— Գա չըս Թուդնը՝ քընիմ,
— Ա՛խր, ուտար ապչըկ իս, գա սըրտ չցավը.
Ա՛խր, իմ երուն ի, իմ սըրտ կը ցավը.

Չալամ կ'ըլնը, կ'երթա ձիանքտիրու մեջ.
Ձեռ մեկ ձիու քամկը՝ վերա կը ուս, կ'ըսի.
— Գա ըձը՝ հիփ կը խաացնիս Դավիթը'նս
Կ'ըսի.— Վաղը եսա գալ
Կ'ըսի.— Իմ, վաղը եսա գալ,
Իս Դավիթը՝ ինչին խաանիմ.
Նաչին խաանիմ, քե չանդակին խաանիմ,
Կ'երթա մըկել ձիու մոտ, կ'ըսի.
— Ըձը՝ հիփ խաացնիս Դավիթը'ն,
Կ'ըսի.— Վաղը կես սրին,
— կես սրին իս Դավիթը՝ նաչին խաանիմ, քե լեշին խաանիմ,
Կ'երթա, մըկել ձիուն կը խաբցու.
— Գա հիփ սը խաացուցիս ըձը՝ Դավիթը'նս
Եսաց.— Աբիվ առնիլուն
Եսաց.— Աբիվ առնիլուն,
Իս Դավիթը ինչին խաանիմ,
Գնաց մըկել ձիուն մոտ եսաց.
— Գա ըձը՝ հիփ խաացըցիս Դավիթը'նս.
— Աչք խփիս, բանաս, քի կը մոռըցըցիմ Դավիթը'նս,
Չալամ ձիու գըլխա պագնից,
Չին խաանից, քոռալ քամակ, քշից,
Չին եսաց.— Չալամ, քա աչքիդ խփիր.— Խփից,
Մըկել եսաց.— Չալամ, քա աչքիդ բաց.— Բացից,
Հալա մուխ գըշիր եր,

25. Դավիթը Հովաճի խրատով ազատվում է օձաբաներից

Դալարալըզ ընկիր ասկյարը մեջ.
Զինքդիր հըմեն տեղ կ'երթա.
Ետունց ձինքդիրուց Հովան վախեցավ,
Եվ չը կ'ըլնիցավ քիր գձին, երթիր ասկյարը մեջ։
Ջիու վերնվեն Հովան բռաց.
— Դավիթ, Դավիթ, ասաց,
Եան, քաչ Պատրաստին վերա իմ աչ թիվին.
Վրե՞ չըշկռիր իու
Հովանի ձեն ել շատ ի. շատ ձեն կա վերա։
Վուր շատ գաղը՝ տեղեն բռաց, Դավիթ լավ։
Դավիթ վախեցավ. չե՞ վուր խաչը՝ անուն ավից։
Նուրեն Դավիթը՝ միտք ընկավ, ասաց.
— Եան Հովանի ձեն ի. ըմ, իս մոռցիր իմ։
Կանչից.

«Ձա Մարութա Բանձր Աստրածին,
Քաչ Պատրաստին վար իմ աչ թիվին»։

Դավիթ գիխիգիր սկուն թաղ տալու բաչտան
Ձինչլգիր կառավան։
Հընաև, վուր գինչլգիր կառավան,
Ձին ել խոպացավ։

26. Չարակաճի խրատը

Մեկ մարդ ել՝ յոթ տղա կըներ ենու.
Մեկըք ըղյոթ տղեն ել գնաովին բիրիր կռիվ։
Ընաև, ետա յոթ տղի խեր,
Հայր տղեք շատ կ'ուզեր, ասաց.
— Ինն ել խիա տը գամ, վորտև ծի ապանին,
Ըձը՝ ել խիա Թը ապանին ենտևդ։
Ջե՞ վուր Դավիթ ընկավ ասկյարը մեջ,
Ասկյար կը կուտուբի։
Ջաանու կ'իրչկա ետա մարդ.
— Ա՛յ վախ, այ վախ, իմ տղեքն ել տը ապանի, ըսիր։
Ետա մարդ խիլք ա՛ երաց տղեք հապավ.
Ասկյարը՝ միջեն վազը՛ց, եկավ։

Ձե վուր ասկեր շատ ի,
Ճանըախ չըն իտա, կը բռուա, կ'ըսի.
— Ճանըախ ուվեք, իս ա'երթամ Դավիթը մնա
Ճանըախ ուվըն, եկավ, Դավիթը՝ տոտացավ,
Բռուց. «Փեշա, փեշա»
Դավիթ վուր լսավ,
Ձին քշից, տոտացավ եկա մալդուն, ասաց.
— Ամլմ'ւր, իս հալա ջանիլ ոդայ իմ,
Իս ինչ փչաուիքին իմ երը,
Դա ըձը՝ կը կանչիս՝ փեշա, փեշա
Ամլմըրն ի, կ'ըսի.
— Դավիթ, կորըան իմ քա դըլխին.
Ին չըմ ըսի՝ փեշա.
Ասկերին կ'ըսիմ՝ փեշա, փեշա,
Վուր ըձը՝ ճանըախ տան, գամ քի տոտանամ, խաբար տամ
— Ամլմ'ւր, ասաց Դավիթ, ինչ խաբար ար տաս
Ասաց.— Դավիթ, կորըան իմ քա դըլխան,
Ին գալման կա ենա գալը մեջ չաղըր ի գարկիր, նամր-
ենա, գնչհա, ենա ջանջ չաղըր ենուրն ի
Եղա ասքեր կը տխանաս.
Հըմենն ել գնալեն բիրիր ի.
Շատեր կան, մորեն մեկ չեն.
Շատեր կան, տաս հատ, են ել գնալ բիրիր ի.
Ապա վուր գա երթաս, քա գալման ապանիր,
Եգա ասկեր հըմենն քի գալա ա'ենին, ար խնդանան.
Հըմենն մեկ ուր տուն ա'երթաս
Դավիթ եգա խաբլալուն կը լսի
— Ամլմ'ւր, կ'ըսի, դու ադեկ շարաթ ըձը՝ երը,
Ին խաբար ա'ենիմ.

27. Դավթի յեվ Մելիքի անհամաձայնը. Դավիթը սպանում է Մելիքին

Դավիթ կը քշի գնչին, դողրու կ'երթա չաղրքիր.
Կ'երթա, Մելըքի չաղըրը՝ հառնչ կը կանգնըր
Կ'ըրիչա՝ չաղըրը տակ լինի, դոշակ կալոնած ի,
Մելըք ել պառկիր ի.
Ինկաիր ել նստած մոա.

Նա ինչ սըրտ կը մաժէ,
Նա ինչ գըլխէ կը մաժէ,
Նա ինչ վուշքիր կը մաժէ.
Մերն ալ կու նսամ գըլխու հասկէ։
Դավիթն ի, կը սխռնա գմերն,
կ'ըսէ.— Մերիկ, բարին քի։
կ'ըսէ.— Առաջու բարին, Դավիթ,
Իմ քաղցը ադնն, ձիուց կէս տակ։
Ջե վոր մեր կը սխռնա՝ ձին, գինք հըմեն կրուն ին.
Նսամեղ չոտ կը վախենա։—
Դավիթ կ'ըսէ.— Մարե, չըմ կէնա տակ։
— Դավիթ, կ'ըսէ մեր, կէս տակ.
Մկա գու անոթի իս, ծարաւ իս,
Մե քիչ խաց կի, ջինչ կ'ըլնը։
— Մարե, կ'ըսէ, քընեն չնորհակալ իմ.
Իս խաց ալ իմ կիրիր, ջուր ալ իմ խմիր.
Մելըքին խոն վի, թը խարար մ' առ։
Ըս որ իս իկիր իմ, Մելըքի խոքին տ'առնըմ.
Առանց կրպի՝ ինու մախ իմ բիրիր։
— Դավիթ, հասց, քու ջուջ ախալերն ի։
— Ելի իմ ջուջ ախալերն ի.
Իս գըտիմ՝ իմ ջուջ ախալերն ի, համա խոն վի։
Հասց.— Գնալ ի, մեղք ի, թը քընեն հալաւ
Հասց.— Ո՞ֆ, իմ գըլխու ցավըցիր, խոն վի։
Մերը կ'ըլնը, եգա գուխնը՝ խուփ կը դնը կրակ,
Տաքացըցի, կը դնի Մելըքի վուտաց վերա։
Մելիքն ի, կ'ակախի.
— Եգա ինչ լա եր՝ ըձը՝ կծիցս։
Ըրա Մելըք քնալ չեր.
Եգա մերն ի՝ ֆանդ կ'ենի, խուփ կրակացըցի,
Վուր Դավիթ սխռնա, վախինա, ըսի՝
«Եղ ինչ զոռա մարդ ի Մելըք,
Վոր կ'ըսի՝ ըձը՝ լա կծիցս
Ապա ինչ մեր հասց Դավիթն,
Դավիթ ինչ հասց մոր.
— Մելըք քնալ չի, հըչար ի։
Հըմեն լսիր ի, պիտի։
Մելըք մեկ ձեռ դրից հաս աչքը՝ վերա,

Մեկ ձեռ դրից մըկկել աչքը՝ վերա,
Աչքիր սրբից, ակոն ըրչկից,
Տեսավ՝ կորըճ մարդ մի ձին խիժիր,
Երբնի մեջ շաղաղվիր ի,
Կա ուր չաղըրը՝ գլուխ կանգնիր ի
Ետաց.— Եգա վձրն ի
— Կանգնը՝, ետաց Դավիթ,
Առանց մախ իս՝ քի մախ իմ բիրիր,
Առանց գլուխ՝ քա խուքին ու՝ առնըմ,
Ետաց.— Դավիթ, գա չը՞ս Թուղնը, իս ձին խիժնիմ,
Ետաց.— Մելիք, ըլե, ձին խիժի.
Իս քա պես բիտախտ չըմ.
Լվացվի ել, Թե անոթի իս, խաց ել կի.
Թե ծարծավ իս, ջուր ել խմի.
Գա շուրիրն ել հալա խաքի,
Գա Թադարըրք սես, նաւր երբ՝ իմ խիտ կռիվ,
Մերն ետաց.— Մելի՛ք,
Դավիթն մեզա երե, քա ախպերն ի
Մելիք ըռըկավ, ետաց.— Չե, հետոր ի.
Ցան ես գԴավիթ կը սպանիմ, յան Դավիթ ըձր.

Մելիք վոնչ չաւր խմավ, վոնչ խաց կերավ,
Ըլավ հմմա, ուր ձին քեշից,
Ելիժավ, Թուրն բռնից ձեռ,
— Դավիթ, ետաց, լիռնըղ կովինք,
— Իմ չաւչ ախպերն իս, ետաց Դավիթ, գի՛ գըտիս,
Ետաց.— Դերծով գանինք մեմեկուս,
Ետաց.— Վուր սկուն ի,
Գա իմ չաւչ ախպերն իս,
Հըմեն մեկ իրիք գըրը ու գարկի.
Հաուչ գի՛ գարկ, վուր գա քան գը չաւչ իս,
Դավիթ կը կանգնը գաշտը՝ մեջ,
Մելիք Դավիթ՝ մոտեն կը գատացըցը գձին,
Թուր կը քեշի, կը բռնը ձեռ,
Են տեղեն հեռատ մ՝ կը քշի ձին,
Դավիթն ու գարկի, Դավիթ կ՝ըսի.

«Ցա Մարութա Բանձր Աստվածին,
Ինչ Գատարատին վեր իմ ալ Քրիստոս»

Մելքէ վուր եղա տեղեն կը գա, աչքիր կարմըիր էր
Չի վուր Դավիթ ենու գաշման է,
Քանի ենու զոռ կա, զիուրն ել զարկի
Հաչ Պատրաստին,—
Ծառա կ'ըլնիմ ենու քաքամաքին,—
Ըզինք կը տա զիմաց Քրիստու
Թուր չդնը՝ խաչին,
Սկի զոռ չի տա Դավիթըն
— Մելիք, հասց Դավիթ, եղա մեկ զարր
Հասց.— Հա, մեկ
Հասց.— Մելիք, մեկ ել զար
Մելքէն ի հառաստամ, հասց.
— Իմ ձիու մանգղիլ քիչ եր.
Բա, ձիու մանգղիլ չատացըցիմ,
Ձիու մանգղիլ զատացըց Դավիթ մռաւն,
Զատը՝ գնաց, ըռըքեր զարկից ձիուն,
Զին քշից վար Դավիթըն
Հաչ ելի զինք Քրիստ Քրիստ զեմ,
Ելի Դավիթըն բան չէլավ
Հասց.— Մելի՛ք, եղա կրկե.
Հասց.— Հա, Դավիթ, եղա կրկե
Հասց.— Մելի՛ք, չո՛ւա կրա, մեկ զարըն ել զարի
Մելքէ մանգղիլ չատա զատացըցուց.
Ըռըքեր զարկից, չուա եկավ, մեկ ել Քուր զարկից
Հաչ ելի զինք հատուր Քրիստ զեմաց.
Սկի Դավիթըն բան չէլավ
— Մելի՛ք, զա պրծար, հասց Դավիթ. էմ զերն էր
Հասց.— Հա, ախպեր, քա զերն էր
Մելքէ հասց.— Դավիթ, զա խլին կը ասա,
Իս կրիամ չազըրըդ տակ պահիմ,
Դա զա, ըձի՛ զարկիս
Հասց.— Հա, գնա, պահի
Մելքէ կը զա ուր չազըրըդ տակ, մոր կ'ըսի.
— Իս իրիք զարըդ Դավիթըն զարկի,
Դավիթ՛ն սկի բան չիրաց,
Դավիթ կը զա հասե, որ զարկի
— Մելի՛ք, կ'ըսի մեր, մոր եղա խուրըդ մեջ,
Մելքէ կը մտնի խուրըդ տակ.

Քառասուն գիմշու կաշը կը դնը վերա,
Քառասուն ջաղչը՝ քար կը դնը վերա,
Լեռնվքիր կը քեզի քարկոծ վերա։
Մերն կ'ըսի.— Իմ ազեն, Դավիթ,
Հասնչ քի կ'ըսիմ՝ մի զարկի.
Վուր կը զարկիս, երի, գար
Դավիթ գիտի՝ ինչ երիր իս
կը գա, ախպա ջաղչի քար,—
Ձե վոր խուրձ երբեմ դրած սկոն բանձրացիր ի,—
Լեռնվ քեզած քարերուս վերեն,
Ըլտի, վուր ենքան Մելըքի ջանդակ չի։
Ապա մեր հետս կանդնուկ իս
Դավիթն ել չըսի՝ Մելըք խանեք գաս, ախպամ։
Դավիթ գնուր կնճակին կը քեզի,
Համա քուր կը վիրցի, կը բերի,
Վուր որ զարկի, ել չզարկի, կ'ըսի.
— Մարե, եղա մեկ զարը ավիմ քե խաթըր,
Վուր դու ըձը՝ պախիր իս։
Մեկ ել քուր կը վիրցի, վուր զարկի, կ'ըսի.
— Ասաված, եղ ել ավիմ քե խաթըր,
Վուր իմ կռիվ քու ձևռնոցը իս
— Մարե, հասց Դավիթ,
Ըձը՝ ճեացիր ի մեկ զըարը։

Մերն եղա կնկտիրուն,
Եղա չավար քեչոզքիրուն կ'ըսի.— Շո՛ւտ չավար քեզեք,
Փուղը՝ տիրուջ.— Շո՛ւտ փուղ փչեք,
Նաղարա զարկողքիրուն.— Շո՛ւտ նաղարա զարկեք,
Աղջկըտիրուն.—Շո՛ւտ ձի քաֆկտիր բռնեք ձի ձեռ, խաղցեք,
— Կնկտիր, դու ել ձի քաֆկտիր բռնեք ձի ձեռ,
Ձորտա խաղցեք, բալի Դավիթ ըրըշկա,
Ձի ախպա, չգըտի Մելըքի տեղ,
Դավիթը՝ գարը հետս չառնը՝։
Ապա Դավիթ գըտի.
— Եղա ըձը հագնիլ կ'ինըն.
Կ'ըսի՝ ըձը չըշկացնին
Դավիթն ի, գար քուր կը զարկի.
Վուր կը զարկի, ջաղչը՝ քար կը կոխի.

Քառասուն գիմչի կապըն կը կապը,
կը տանը, Սիվ Ջաբ կը կայնացըցի։
Դավիթ կ'ըսի.— Մարե,
Բացեք հետ, իս ախտամ գՄհլըք։
— Դու գնա, մինք կը բանանք, կ'ըսին.
Ջին կը քշի, կը գա, քարը՝ վերա կը կանգնը։
Ջեռ կը տա, լսնով կը Քլի գէն,
կը ախնա՝ ահագին քարիր,
Հըմենն ել Քրի հետզհետ կտռտված ի,
Քարի կտուրքիր ձեռ կը Քլի, Քալի գնն,
Տխնա՝ գիմչու կաշիք,
Հըմենն փառչա-փառչա երած ի։
Մհլըքի ջանդըկի մեկ յան ժեռ կուռըվիր ի,
Ձկա, ցվրվիր, հանդունդ — Սիվ Ջաբ գնացիր ի։
Մեկ ձեռ, մեկ յան ժեռ մնացիր ի։
Դավիթ հաբ աչքիրով ախտալ, հավատաց։
Եատց.— Մարե, իս կ'երթամ, մնացեք բարով,
Իմ ախպեր Մհլըք գաք խանդք գաս։

28. Մեղրի զորի ցռումը

Դավիթ ձիու գըլուխ կ'ենի,
Ջաղըրից կ'ըլնը գաս,
կ'երթա ասկյարը մեջ, կ'ըսի.
— Ծի հըմենուն իրին ավիմ.
Մեկ-մեկ ծի տնիր գացեք,
Իմ ջանին զուռա երեք,
Իմ խոր-մորն ել ողորմի ավեք։
Ծի խոլեն ել բախշիմ ծի։
Եգա ասկյար Դավիթըն չատ զուռա կ'ենին, կ'ոխնին,
Համա չըն ավարնա, Քեն Մհլըք ապտուռկ ի։
— Ախ, Դավիթ, կիըրան քի գըլխուն,
Դորխա գի գինա, Աասլած քի խիտ,
Աասլած քի բան հաղուզի,
Աասլած քի սաղջանուքեն ատ,
Աասլած քի են խոր-մորըն արքայուքեն ատ։
Դավիթ են ասեղ չատ կը խնդանա,

Փառք կը տա Աստծուն,
Ու ձին կը քշի դեմ Սասուն։

Եղա ասկերի դլխավուրքիր
Ասկերը՝ն խլին չըն ինա,
Վուր մեկ-մեկ ուր տուն գա.
կը բռնան.— Ե՛յ, մեք երթա.
Երթանք, Մելըք ախտանք,
Մհա՝ սուրթ ի, թե ապրթ ի։
Մեկ մեկու կ'ըսի.— Ենուհց խոսքն ի, երթանք, ախտանք։
կը գան եղա փաշէք,
Մելըքի չադըրի տակ կ'ըրիշկին.
Մեկ խոտ աղջիկ շրխտ կապած մեջքին,
Կախած ի եղա խուրուձ մեջ,
Ջիլըփի ջանդակ, մեկ պզտիկ կաուր ի ճտացիր ի.
Կ'ըսին.— Աղջիկ, շրխտ կապի։
Աղջիկ շրխտ կապից ձեռաց,
Խոտ կը լա, խոտ կ'ըսի.— Քիշէ՛ք։
Քիշին, խանին դուռ։
Կը խանին, ախտան՝ մեկ կաուր ի ճտացիր ի.
Են կաուրն ել ինչպես վաւրուկ ի.
Ինչպես կրակի մեջ փետ դնիս,
Վաւրը՛, սիվանա, սկոն սիվացիր ի։
Վիրուն, են կես ջանդակ կը բիրին տուն։
Եղա փաշէք ել կը բռնան ասկերըն.
— Մեկ-մեկ ձի տուն գացե՛ք։
Մելըք ապանվիր ի, ձի տուն գնացե՛ք.
Մելըք ապանվիր ի, ապանվիր ի, գնացե՛ք ձի տուն։
Գնացին հըմին մեկ հոլ տուն։

29. Դավթին դիմավոխելը

Ջե վուր Հովան գին ասկեր հըմին ախիր ի,
Հըմին չադըրքիր ախիր ի,
Գնացիր ի հուր քաղաք, ժողովրդու ըսիր ի.
«Ենքան չադըր կա, ենքան ասկեր կա»։
Ժողովուրդ ասիր ի.
«Ա՛խ-վա՛խ, ախ-վա՛խ, ախ-վա՛խ, որ ապանին Դավթըն,

Գա՛ն, հըմեն մի կնիկ, աղջիկ ալ առնին.
Ա՛խ-վա՛խ, ախ-վա՛խ, Տեր Աստված, դո՛ւ ճար եղա՛»։
Եղա քաղքը մարդն ել են բարձր սարը՝ դըլա՛խ
Կարակոլ ի դրած, ի՞նչ հապա՛խ.—
Ըրչկին ճանբախ, թե Դավիթ կը գա՛, յան ասկա՛ր կը գա՛,
Վուր շուտ գա՛, քաղքը մարդիկըուն խաբար առ՝ հա՛ըլինց
հաղ ևնին։

Եղա մարդկիը՝ գա՛ըրին կա,
Գա՛ըրինա՛վ կ'ըրչկին դաշտը՝ ճամբա՛խ։
Տիառն՝ կա՛ մեկ ձիավուր եկավ.
Կարաղոլն կ'ըլնը վե՛, քաղքը՝ վե՛ կը վազնը.
— Մեկ ձիավուր եկավ, եասց,
Հավասա վոր Դավիթ ըլնը։
Հա՛ևանին* ըսին.— Դավիթ եկավ,
Հա՛ևան ըլավ, ա՛ներթա Դավիթը՝ հառնի՛։
Են գեղական՝ մարդ, կնիկ, խալխա՛ը, պառավ, ձիժ-ըլի՛ժ՝
Հըմեն գա՛յին Դավիթը՝ հառնի՛։
Դավիթ ըրչկից, տեսնա՝ չո՛ւչ ասկա՛ր ի կը գա՛.
«Ջանը՛մ, կ'ըսի, եղա ասկա՛ր ի՞նչ ի.
Ըձը քա՛նի՞ մ' գա՛շման կա, կը գա՛ն վար ըձը»։
Դավիթ ձին կը քշի, կ'ըսի.
«Ձի՛, դնա՛, Աստված ի՞նչ երթը ի»։
Ձին քշի, մոտանա, կ'ըրիշկի՝
Հա՛ևան կա՛ հըմենու հառնին ի։
Կ'ըրիշկա՝ ուգա՛, աղջիկ, գեղական՝ հըմեն եկած ի.
Կը բա՛ռա.— Ախպա՛ըր, դո՞ւ ել իկիը իս իմ խոտ կռիվ՝
Ախոխպեր կը բա՛ռա.— Դավի՛թ,
Մենք իկիը ինք, քա՛ վերա կը խնդանանք.
Վուր մենք փառք կը առնք Աստըծուն՝ սալամաթ եկա՛ը՝
Դավիթ կ'ըսի.— Եղա կնկտիր հընչի՛ եկած ի։
— Դավի՛թ, կ'ըսի, ինչ դա՛ գնացիր,
Զա՛ր մկա եղա շիվալըքիր կը լըն, Աստված կը կանչին,
Կը վախենան՝ Մըլրա Մելըք քի սպանի.
Տաճկընիր գեն, քաղքը՝ մարդիկ՝
Հըմեն սպանեն, կնկտիր առնեն.
Վոր քա՛ դալ լսան, հըմեն խնդացան, ուրախացան.

* Տպված է «Հնվարին», ուղղում ենք «Հա՛ևանին»։ Խմբ.

Ջուչ, պատիկ քու հապով եկան,
— Դե, դառցեք, գնացեք, ըմբը դուզա եկեք.
Մեկըք սպանիր իմ. դե, դառցեք, դե, դառցեք,
Եզա խնդճ մարդիր եկան,
Արխայլին տնիր նստան.
Ել սկի չըն վախենա,
Դավիթին ել եկավ, ուր ուզն նստավ։

30. Գառավի հոգատարությունը

Եղ Գառավ ըլավ, եկավ Դավթը՝ մոտ, նստց.
— Դավիթ, բարի՛վ եկիր, Դավիթ, բարի՛վ եկիր,
— Աստծու բարին քի, Գառավ։
— Տխմար, վուր իս քու հըմեն ճանրաթա չանք ավիմ.
Ապա վոր իս քի չըսեր,
Դու բիրիկ ծառ մ՝ առիր եր,
Կ՝երթեր Մեկըքի վերա կոխի,
Տխմար, կոխի քանի մ՝ դոռ ի.
Քու խոր խաթրը՝ խամար քի հըմեն բան չանք ավըմ,
— Գառավ, նստց, ըմբը քինե մինաթ ի.
Կը գաս, ըլնըս ըմբը մեր. ըմբը մեր չունիմ,
— Դավիթ, իս ելի քի մեր իմ. իս կ՝երթամ իմ ուզն.
Ինչ բան լսիմ, ելի կը գամ, քի կ՝ըսիմ.
Սկի մի վախենա, Դավիթ, ծլիս, ծտկըս.
Ջուր մկա պատիկ եր, ջու չացար.
Մոտս եր, խելքըվացար։
Ել բառե մի նստի.
Կը գնիս վար Չոմանին, կ՝ըսիս՝
«Իմ խոր հնդեն պատռատա,
Վուր իս կ՝երթամ, իմ խոր հնդեն նստիմ.
Հըմա խորտա պատռատա»։
Քու խոր տանդըխքեր են տեղն ի.
Քու ձեռնով քու խոր շուրիր կը խանիս,
Ծալիս, դնիս տնդուկ,
Թուրն քու ձեռնով ել կախիս,
Մեկ մարդ ել կը բանիս քու հառիչ, քի ախանչ ենը՝.
Մեկ մշակ ել կը բանիս, քու ձին խորտա պահիս։
Դավիթ, ձեացի բարի, իս կ՝երթամ։

31. Դավիթը ճտռում է հոր տեղը

Դավիթ Չոլանին կ'ըսի.
— Չոլան, իմ խոր հոգևն պատրաստի.
Հըմա խորթա պատրաստի,
Լխեվ, դոշակ շտա ֆալ, բարձիր շտա ֆալ.
Իս տ'երթամ, իմ խոր հոգևն ալ նատիմ։
— Ին, կ'ըսի, մկա կը պատրաստիմ.
Եղա Սասունա ճրագ չուր մկա ընցուվ եր,
Մկա Սասուն ճրագ վառվավ.
Ապա չպատրաստիմ.
Քու երածն, վոր դու երթիր, իս շտա կը խնդանամ.
Վոր դու սկոն կտրըճ իս,
Իս գըտամ, վոր ախչար հըմին իմն է.
Իս կը խնդանամ, վոր դու ասիս, ծիծղանք։

Գնաց, հոգևն պատրաստից,
Թե Դավիթ մեկ բան է ըսիր,
Չոլան գնաց, երկու բան իրի։
Հոգևն խորթա պատրաստից,
Եկավ Դավիթ, հասց.
— Չոլան, կանգնը՛, երթանք։
Դավիթ, Չոլան գնացըն հոգևն.
Դավիթ հասց.— Ձրոխալեր,
Մեղք է, դու ըձը՛ խաց բիրիս, չուր բիրիս.
Մեկ խաս մարդ բռնիս իմ հառնչ, ըձը՛ խաց, չուր բիրի։
Դու իմ խոր տեղն իս, խաց, չուր բիրիս, չըմ ուտի, չըմ խմի.
Մեկ մարդ ել կը բռնիս, ըձը՛ չախի.
Մեկ մարդ ել կը բռնիս, իմ ձին չախի, պախի։
Չոլան գնաց, բռնից, իրի, հասց,
— Դավիթ ծի ինչ կ'ըսի, ենու խոսք տ'ենիս։

32. Դավթի ձիու մտակը

Մեկ մարդ ել բռնից, ֆե.— Դավիթը՛ ձին ալ չախիա
Դավիթ հասց.— Ձրոխալեր,
Հախ ինչ իս ավը եղա մարդիկուն։
Հասց.— Ամիս խինդ մենիքի։

Եսաց.— Իս ամիս կը տամ տաս մեջլիֆի վուակիւ
Հիվան թուղից, գնաց տուն։

Դավիթ եսաց.— Մշակ, գնա, իմ ձին ջրի.
Սափուր ծո, գնա հաղրաւր, անուշ ջուր բի,
Պըղնձ կնահղն ի, դի հառջևվ, իմ ձին թը խմի։
Մշակ առից սափուր, գնաց հաղրաւր, լիք ջուր երաց,
Եկավ, գնաց փայախ, լցից պղինձ,
Վիրուց, տանը՛, դնը՛ հիռջիվ ձիուն, վոր խմի.
Ձին մեկ ուր պըլնի թախթըփից.
Վոր թախթըփից, եդա մշակ խելքամաղ ըլավ,
Ընկնիվ գետըն, մեռավ։
Դավիթ կանգնավ՝
«Մշակ չիրի, մկա բան մ' իլիր իր։
Գնաց, տխավ՝ մշակ հէրկեն պառկիր ի.
— Տո՛ մշակ, տո՛ մշակ, կը կանչի։
Մշակ սկի ձեն չիտաւ։
Մեկ քիչ պաղ ջուր լցից հերսի վերաւ*
Մշակ աչքիր բացից,
Դավիթ ձեռ տվից, կայնացըցուց։
Եսաց.— Մշակ, ինչ ըլավ քի։
Եսաց.— Դավիթ, իս կ'երթամ իմ տուն։
— Վրե՛ կ'երթաս, մշակ.
— Ախր, քո ձին մեկ որ ըձը՛ կը սպանի,
Պըլնե թախթըփից, ենուռ զարըից իս վախեցա,
Ինչ եր՝ իս մեռներ, էլ մ' դու խասար։
Եսաց.— Ե՛, հիմար ձին,
Եդա մարդ իս բանիր իմ, քի ջուր տաս,
Քի գործը՛ տաս, քու քամակ աղեկ քիմըլի։
Դու ինչի չըս թուրկիս։
Իս բալքի հուրիչ տեղ կ'երթամ,
Դու կը մնաս անոթի, ծարավ,
Քի գործը՛, ջուր տվող չըլնը.
Հա, ճանչի եդա, զքի պախացող ի, խորթա ճանչցիս։
Դավիթ կ'ըսի.— Մշակ.
Պըղնձ վիրուս, տար դի հիռջիվ։

---

* *Երևսիս։* Խ մ բ.

Եսաց.— Ես կը վախենամ։
Եսաց.— Մի վախենա, ամբ, դի՛
Մշակ զպրընձ վիրուց,
Ջին հիա քնչվավ, պղընձ դրից հիջխիվ,
Ջին եկավ, խմից գնա՛ր։
Ջին էլ բան չենը։
Մշակ գնաց, գա՛րը իրի, դրից մաուր,
Ջին հիա-հիա քնչվավ, ապա երի, կերավ։
— Մշակ, եսաց, ձին վուր գա՛րըն կ'ուտի, խորտա կը քա՛րիա։
— Դավիթ, եսաց մշակ, դա՛ կ'երթաս, ես կը վախենամ։
— Ջե, եսաց, էլ իմ ձին քի բան չըսի։
Գա՛րն կերավ, պրծավ,
Մշակ ձիու քամակ ու քա՛րեր, հա՛ կը վախենար։
Ջի գա՛ր քամակ հա՛ կը մոտացըցներ,
վոր մշակ քամակ քա՛րի։
Մշակն ի, հոշիկ-հոշիկ ձեռ կը դնի վար քամկին,
Հա՛ կը քա՛րի, քիրա՛ց կը դնը,
Ջին էլ բան չենը, քա՛րի, կը պրծնի։
Վուր քա՛րա՛ց պրծավ, ձին ձեն չավից, ավիլ իրի, ավից,
Զոռա խալիչե մ' էլ քնչից վար քամկին։
Ըլավ ծծդաց, խնդացավ, եկավ Դավիթ հնդին,
Եսաց.— Դավիթ, քա՛ ձին էլ ձը չզարկից։
Եսաց.— Էլ մի վախենա իմ ձիուց,
Դա՛ երթաս, իմ ձիու փուրու տակին էլ քընխա,
Փա՛ վևրա վուտ չդնի, քի կը պախի հալա։

33. Խշտաճճերի ասեճորյա այցը Դավթին

Մնաց հևվարին։
Են գեղի իշխանքաիր հըմեն ժողևան,
Եկան Դավիթը՝ մոտ, Դավիթը՝ հնդին։
Դավիթ եսաց.— Վրե՛,
Հըմեն որ չըք իզա՛, հևսոր իկիք։
— Ջուր հևսոր մի ճրագն ընցուկ ևր,
Հևսոր Սասունա ճրագը վառավ,
Մինք հըմեն որ ու գա՛նք,
Հա՛ քա՛ մոտ ու գլուցինք։

Մեկ-երկու շարաթ հա կ'երթեն, կը դրուցեն,
կը գեն հարսինց անոր եղա քաղքը՝ իշխանքաթիր։

Բ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԻԹ

32. Դավիթը չի խաբվում Ջենով Հովանի կնոջից *

Հովանի կնիկ կ'ըլլը,
Շաքըլամա խաց կը թխի դաղաուի,
Խալ կը մուրթի, կ'խիի,
Մեղր, կարագ, յոթ տարվա գինին կը պատրաստի,
կ'ըլնի ուր խորոտ-խորոտ շուրիը աղնկ մը կը խապնի,
Աչքիը կը գեղի, պակիը կը խանի,
Խորոտ-խորոտ կունդուրնք կը խապնի։—
Հովան քնաւ կ'ու —
Հովանի կնիկ կ'առնը եղա բանիր,
Մուտ կը վառի, կը գա Դավիթը՝ հյուրն։
Դավիթին ել գան շնիր, քնիր կ'ու
կնիկ կ'ըսի.— Դավիթ, ելլը՛, գան բաց։
կ'ըսի.— Ին վրձվ կա, կա գան բանամ։
կ'ըսի.— Քու խրիխատը, Հովանի կնիկն կամ։
Դավիթն կ, կ'ըլնը, գան կը բանա։
կնիկն կ, կը գա հյուրն, կը նստի.
— Դավիթ, կ'ըսի, կա քի շատուց չտըսիր, քի կարոտով եր.
Ըզմ կորցիր անուշ-անուշ բան շինիր,
Հազր եղայ կ, քու խամար բերի։
Հենաց կը բանա, գնը՛ հետդիվ Դավիթըն,
Կուժ մ' գինի, մեկ կիգա,
Ին ել կը գնի հետդեվ Դավիթըն։
Դավիթ մխաք կ'եներ, թե.
«Ըզձը մեր չկա, ես իմ մոր տեղն կա։
Շատ մանգաթ կը բանը.— վոր գա,— իմ մոր տեղն եր,—
Հետը ըզձ՛ ճանչցար, եկար իմ մոտ։

* Թրք առնդն ունի հետևյալ վերնագիրը՝ «Կնկան բազդ չկա» ՀՄ բ.

Եսաց.— Դավիթ, կորցան իմ քի,
Սասնա մեջ քու պես՝ վոնչ եղիր ի,
Վոնչ կ'ըլնը եվ քու պես տղաս—
Ասա Դավիթ չըր գնացիր կռիվ,
Հեթիմ տղայ եր, պահացող, ականջ արող չկըիր,
Մկա վոր գնաց կռիվ, եկավ, լցվավ
Դավիթ սկըն ի եղիր,
Մարդ կ'ըրիշկի, Դավիթց կ'ամչընա,
Վուր կը տիանա ենու խորտա աչքիր,*
Կարմիր երիսքիր, խորտա քիթ-բերան—
Դավիթն ի, գայր խաց կ'ուտի,
Նռան գինին կը խմի—
Ե՛, յոթ տարվան գինին,
Դավիթն եվ չաո կը խմի—
*Կը խնդանա, կ'ըսի.— Համբ.***
Հասար իմ երիսխտոր կնըկ ըձը՛ իքրամ ի երիր
Ա՛ղեկ կը խմի. Դավիթ կը տարխուչնա,
Գըլխի կը դնը վար բարձին, քնի.
Եվ չկերի, վուր գրուցի
Չիվանի կնիկ դԴավիթը՛ երիսքիր կը պապնը,
Ճակատ կը պապնը՛, կ'ըրիշկի՝
Դավիթ քնիր ի, ըսկի խաբար չի ուր մոտինա
Կ'ըլնը, կ'երթա տուն, հալա Չիվան քնուկ
Եղա Չիվանի կնիկ տուվրով,
Մեկ շաբաթ սկնա գնաց, եկավ
Են մեկ որ միտք երաց, եսաց.
— Իս եղա յոթ տարվան գինին վրի՛ կը տանիմ.
Դավիթ կը խմի, կը պառկի, քնը՛.
Իս ենու մոտին ինչ կը խոսկանամ,
Են մեկ որ կ'ըլնը, մեկ տարվան գինին կը տանի.
Գինին եվ քիչ կը տանի
Կ'երթա հնդին, կը նստի.
Եվի անուշ-անուշ բանիր կը տանի,
Դնը՛ Դավիթը հառնի.
Գինին եվ կը դնի հեռվիվ Դավիթը՛ու

---

* Ավելացնում ենք՝ «կը տիանա» Հ մ ք.

** Տպված է «իմ», ուղղում ենք՝ «համբ» Հ մ ք.

Դավիթ գայ խաց կ'ուտի,
Ձայը գինին կը խմի.
Դավիթը գըլխի չըլռնի գինին. Դավիթ չքնի
կնիկ կը նստի Դավիթը գիք.
Ձեռ կը թվի, Դավիթը՝ վիզ բիբի, գրկի
կ'ենի վուր Դավիթը՝ իրիս բիբի, պագնի
Ձի՞ վուր նստավ Դավիթը գիք
Դավիթ ընտե ըռըկավ,
Ձիուցից՝ գիրիս պագներ եր
Եսաց.— Դա իմ մոր ուղն իս.
Իլի, նստը՛ ենա տեղ, իս գա գրուցինք
Եսաց.— Դավիթ, վրե.
Իս քա մոր ուղն իմ, իս ուտար աղջիկ իմ.
Ծարագա իկի, քա խրնխպեր տաիր իմ.
Դավիթ, քի՞ ինչ
— Վոր դա ուտար աղջիկ իս, վրե՞ իկիր իս ադա
— Իս քա խրնխպեր Չնվանի կնիկն իմ
— Ե՛, իմ մեր, խրնխպոր կնիկ մեկ ի.
Են ել իմ մերն ի. Ինչ ֆարդ կա ենաե
— Դավիթ, դա չըս գըտի՝ իս ուտար աղջիկ իմ.
Եսքամ ժամանակ քա խրնխպոր ձեռքի հառչըն եր,
Մկա քա խրնխպեր չըմ ուզի, ղքի կ'ուզիմ
Դավիթ կը ինա մտածիլով.
«Իս մկա ըլըմ գանիմ, սպանիմ,
Իմ խրնխպեր գանգատ ա'նի,
Թե՝ Ձիմ կնիկ սպանից Դավիթ.
Թե չսպանիմ, եղա կնիկ ձրնե չդադարի»
— Իմ խրնխպոր կնիկ, կ'ըսի Դավիթ,
Ըլի գնա, իս քնիմ.
Ձայը վաղ, վաղ իս քի բան կ'ըսիմ
Ձափից, դրից ճամրեսու

35. Պատմի խոսքը՝ ամուսնության չնվ հանգստի մասին

Առավոտուն չայա Դավիթ կ'ըլնը,
կ'երթա վար հաղրբին, կը լվացվը,
կը նստի ենաե, հա դուշունմիշ կ'ըլնը

Տեսավ՝ են Պառավ դևհա ենառև իրիվաց,
կանչից.— Ե՛, Պառավ, երբ եառես, երբ եառես
Ձեռնով երավ, Պառավ ըլավ եկավ ենառեղ,
Ըլավ, Հեվանի կնիկ ինչ երիր եր,
Հըմեն Պառվուն եառց,
Եառց.— Պառավ, դու իմ մոր տեղն իս, հընդուց քի կ'ըսիմ,
Եառց.— Դավիթ, իս Հեվանի կնկան մեղք չըմ ղընիս,
են ժամանակ դու պատիկ եր.
Մկա եղիր իս քանն տարեկան, քանըթինգ տարեկան,
Հալա աղաղ մնացիր իս,
Վեր գքի տինես, խիլք կ'երթա գըլխուց,
Կ'ուզիս, դու, քու ծուց պառկիս,
Ե՛, Պառավ, բա ինչ ենիմ, կ'ըսի Դավիթ,
— Դավիթ, դու ել կնիկ ըմ բի, փոսակվիմ.
Վուր քի կնիկ ըլավ,
Ել մե կնիկ չկիրի քի խակառ ընկիր.
Մկա վեր քի կ'իրըշկա, խիլք կ'երթա
Մարդ չկիրի Ջահել աղին ըսի՝
Դու հաքան խորթա իս.
Սորա կ'երթա, յար կը բռնի,
Դավիթ, իս հառիջ քի տ'տահր՝ գնա, կնիկ բի.
Դավիթ, սկնա բան կա աշխատ, հա.
Խորտա, քի հապով կնիկ ըմ բի,
— Պառավ, եառց, ըձը՛ հապով կնիկ՝
Թե՛ գնաի, իս չըմ կերի,
— Դավիթ, եառց, քի գոլայի կորըճ կնիկ՝
Ատնդուիք խաթունն ի.
— Մարե, վորտեղն ի Ատնդուիք խաթունն, իս չըմ գիտի,
— Կո՛, Ասյա քաղաք, Իրանա խուղը մեջ,
Ենա քանց գքի կորիճ ի, քանց քի խորտա ի,
— Մարե, Ասյ վեր Թարաքն ի,
Եառց.— Դավիթ, խա խարցու Ասլաք, գինա.
Վոր կ'երթաս Ասլաք, խարցու Արճեշ, գինա.
Վոր կ'երթաս Արճեշ, խարցու Բևրկրի, գինա.
Վոր կ'երթաս Բևրկրի, խարցու Արաղեն, գինա.
Համա խարցուցկլով խարցուցկլով գինա Ասյ

36. Դավիթը գնում է խանգութիւն առնելու. նրա տատակերութիւնն ու գերթան անելը։

Դավիթ, վոր իվի հազրըվի վերա,
Լվացվիր ի, խաց չկիրիր ի։
Կ'ըլնը կ'երթա հաւր հնդեն.
Մնգուն կը բանա, շուրիր կը խաղնի,
Թուրն կը կապի հաւր վերա,
կը գա, ձին գուս կը քիշի,
Գամ ձիու բերան կը դնի,
Ձին ձիու քամկին կը գարկի,
Վոնչ խրթխրոր խարար կ'ենի,
Վոնչ ել խաց կ'ուտի,
Անուշի ճանրախ կ'ընկենի։
կը գա, կը խիծնի ձին,
կը խարցուցի՝ ժլտի, գա գոր իս,— կ'երթա։
Կ'երթա Ժլտի, կը խարցուցի Աբճիշ.
Չընդգա կը խարցուցի.— Բերիրի վոր տեղն ի։
Կ'ըսին.— Նգա ճանրախ բռնը՛, գինա։

Դավիթն ի, կ'ըլնը, գա Գերծոթա գաշտ։
կը տխռնի նստի, գաշտը մեջ գա քան կ'ենին։
Դավիթ շատ կը քաղցածանա.
Ճար կը կտրվի վերա, ել չդիմանա,
Մեկ գա քնի մ' մոտ կ'երթա.
— Բարաջոզա՛մ ծի, գա քնվա՛ը, կ'ըսի։
— Աատրծու բարին, գա խազտր բարվի։
Կ'ըսի.— Գա քնեճի, իս քաղցած իմ։
Կ'ըսի.— Իս գա քան չըմ կերի քուդնը՛.
Դե, նստուկ, արտը՛ կուշտն ի խացիր.
Նստուդն ել կանանչ շատ կա.
Ձին քուդ նստի, քը երնծա,
Գա ել կուշտ խաց կի, գինա քա բանին։
Դավիթ կ'երթա արտը՛ կուշտ, ձիուց կ'իջնի,
Գամ ձիու բերնեն կը խանի,
Ձին նստուդ կը քուդնի.
Ըզինքն ել խաց կը քիշի հասնի,
Չխաց հըմեն կ'ուտի։

Գայթնովուրքիրն էլ կես որին գայթան կը թուղնըն,
Գինացըն, վուր խաց ուտին.
Գինացըն, տխան, վուր ձիավուր հըմեն խացիր կիրիր ի
Հենառ գայթնճին կը մնա շիվար,
Կ'ըսի ընկերուչ.— Ես յոթ ավուր խաց բիրիր եր.
Եղա մարդ հըմեն կիրիր ի, փրթած չթուղիր ի
— Գնա, կ'ըսի մշկուն, խաց բեր
Դավիթ ենառ կը լսի.
— Գայթնճի, կ'ըսի, քու արա քանի գայթնի տեղ ի
2210 *Կ'ըսի.— Քանասուն գայթնի տեղ ի*
Կ'ըսի.— Դու գնացիք, ձի խաց կերիք.
Դու գնացիք, ես ձի արա կը վարիմ,
Գայթան թուղիք եսառի,
Գայթնովուր կ'առնը գայր մարդիր,
Կ'երթա տուն, խաց ուտի

Դավիթ զգայթան կը կապի ձիուն.
Կ'ըլնը կը խիծնա վար ձիուն.
Կը տանի գայթան, կը բիրի.
Կը քշի զգայթան եզա արտը մեջ,
2220 *Ե՛, ամառվան չուր գետըն ի, չերքին ի, գյոլ ի.*
Քիչ ի մնացիր՝ արտ պռծընի,
Կ'ըսիշկի՝ ձին չնա ի քրտընիր ի
Կ'ելնի տակ, հայր քայֆիկ կ'առնի,
Ջիու քրտինք աղեկ մը կը սրբի, կը թուղնի.
Ջին կ'երթա կանաչը մեջ, կ'երևնա՝
Դավիթ ձեռ կը թրի, գայթնի գլուխն կը բռնի,
Կը քնշի, տանի ևն գըլյուխ, կը բիրի ևն գըլյուխ.
Ջոր մանճկալ կը գա, գարտ կը պռծըցի,
Մանճկալ կը գա, կը տխնա, մնա շիվար
2230 *Դավիթ կ'ըսի.— Մանճկալ, քու արտ պռծավ*
Կ'ըսի.— Հա, կանանչիս, պռծար
Կ'ըսի.— Դե, մնացիր բարով, ես տ'երթամ
Կ'ըսի.— կարըճ տուր,
Երբ, երթանք տուն, խաց կի, նուր գնա,
Մկա ելի քաղցացիր իս
— Չե, կ'ըսի, տուն չըմ իդա
Կ'ըսի.— Վուր տուն չըս իդա, կանգնը՛,

Ճամբեմ, խաց բերիմ, ճամբաս չանուքմանաս
— Մանճիկս, կ'ըսի Դավիթ,
Ուր ակոն ի, իս իմ ձին տանիմ,
Բանդըմանու մեջ կը լվամ.
Ջուր իս իմ ձին լվամ, կը գամ։

Դավիթ գձին կը տանի,
Գետու մեջ քամիկ ըմ կը լվա.
Կ'ըլնը, գին կը դնի վար քամիկին,
Ջուռ դոլանքաիր աղեկ մը կը քնչի, կապի,
Գամ կը դնի բիրան, կը խիծնի, կը գա.
Կ'առնի գխաց, կ'ընկնի ճանբաիս, կ'երքա։

37. Դավիթ չիվ ուզնկաններեն ձիերը, Դավիթն չիվ ուզնկաններեր

Գինաց, գինաց, խարըշըկլիվ խառավ Մոյա քնզաք։
Ուր խառավ Մոյ, խարըշըկից.
— Ծանդուխ խաիանը՝ առուն վրեն ի։
Մեկ մարդ հընցավ հետևեվ, տարավ, չանց տվից։
Դավիթ ետաց.— Դուռ բացեք։— Դուռ չբացին։
Դավիթ գարկից, գուռ ջարդից, մտավ նիրա։
Դուռ ուր բացից, ըրըշկից՝ քնռատուն ձի կապուկ ի.
Հըմենի հետվով գերը լցած ի. կե կ'ուտին։
Դավիթ գեր ձին ել տարավ են ձիանքաիրու մեջ։
Տեղ մ' չեր ուր ձին կապեր։
Դավիթն ել գեր ձին քուդից եզա ձիանքաիրու մեջ։
— Ջին, քե կանաս, գերըն խլի, կե, ետաց.
Քե չկանաս, հա կաց անուքը'։
Ջին ուր մտավ եզա ձիանքաիրու մեջ,
Եզու հախու հըմեն փախան, ժողման մեկ տեղ։
Դավիթ իրըշկից, ուր ձիանք հըմեն փախան,
Ջին ել գնաց ենոնց ձիանքաիրու մըրքին,
Ջենաս գերիք խլից մռաին, քաշնա կերավ։

Դավիթն դրից գինքն քաբանձին,
Վե ըլավ վիրին կաթ։
Մեկ հոթախը գուռ բացից, մտավ հոթախ.

Տխամ՝ քառասուն մարդ հենան նստուկ ի.
Քառասուն թուրն էլ պատից կախած ի.
Ըղինքն էլ նստավ ենան.
Եսաց.— Դու վրե՞ նատիր էք սդա.
Եսաց մեկ մարդ.— Իկիր ինք սդա,
Հըմենն էլ Ջանդուխ խաթունը՝ հապով իկինք.
Ջանդուխ խաթուն մեկը՝ էլ խուռք չտվիր ի.
— Շուտա՞ց ի, վուր դու իկիր իք սդա.
Եսաց.— Ես մեկ ամիս իկիր իմ.
Շատիր կան՝ ատրուվ նստած ի սդա.
— Բա, Ջանդուխ խաթունն ծի չըսի՝
Վրե՞ իկիր իք դդա.
— Չէ, կ'ըսի, մեկը՝ խիա խակի խաբար չտա.
Է՛, վուր սկնի մ' ժամանակ
Դու էսու նստիր էք, ծի խաբար չի ավիր ի,
Ապա դու նստիր էք դդա, ինչ.
— Ապա ինչ ենինք.
Եսաց.— Կ'ըլնը Ջանդուխ խաթունն ծի չուզը,
Ենու հապով ծի չտա պրուց.
Հըմենն մեկ ծի տուն գացինք,
Կանդնիր էք դդա, ինչ.
— Վրե՞ երթանք մի տուն.
Կանդնիր ինք, ըրըշկինք, ախանանք՝
Ջանդուխ խաթունն զրկն կ'առնի.
Ջանդուխ խաթունն ակի մի վերա չխաբցնի.
Դավիթ ենան հոր հապով միտք կ'ենի.
— Է՛, կ'ըսի, դու գինացիք մոտ, ասեք՝
Ցան մեկ առ, յան գաստուր առ, քը երթան,
Նստած էսու ինչ կ'ենըն,
— Ամ, դու դուռ կը բանանա.
Վ՚որ կըխչի դուռ բանա
Վոր մարդ՝ վոր դուռ կը բանա,
Են գնի Ջանդուխ խաթունն կը զարկի, են մարդ կը սպանի
Են գնի Դավիթ կը կանդնը, կ'ըսի.
— Ես դուռ ու բանամ, ա'երթամ նիրս,
Քը Ջանդուխ խաթունն ըզը՝ սպանի

38. Դավթի ու խանդութի առաջին հանդիպումը

Դավիթ գնաց գնաովին կը բանա, կ'երթա նիրա
Ջանդուխ խաթունն կ'ըրիշկի.
Տիտավ՝ մեկ մարդ երի.
Շատ կորիճ մարդ ի, խալը խորտա ի
Եսաց.— Ե՛յ մարդ, քու անունն ինչ ի
Եսաց.— Իմ անունն Դավիթ ի
Եսաց.— Դավիթ, հետև նասիր
Տեղ չանց ավից. Դավիթ գնաով գինաց,
Չոս թվից Ջանդուխ խաթունի դըլեխ,
Գրկից, ննու իրիս մեկ գայիմ պագնից,
Սկզն պագնից, ննու բիրնը՝ տեղ կապտացավ,
Ջանդուխ խաթունն ըրկավ,
Մեկ շամտա մի ննու իրիսին գարկից.

39. Դավիթը կոտրում է ուզնկաձների բերը

Դավիթն էլ ըրկավ, ըլավ եկավ հնդեն,
Էն մարդիրուն մոտ նստավ.
Ձե, վուր Դավիթ գինաց Ջանդուխ խաթունի մոտ,
Եղա քնոտուն մարդ մե մեկու ըսին.
— Դավիթ Ջանդուխ խաթուն մի ձևռնեն ա՛ստնի.
Ե՛, ըսա ինչ ենինք
Հըմեն մեկ ծի Թուր քնինք,
Դրեք ծի Թաղը՝ տակ, նստեք վերա
Վուր մուխ կը ստա, եղա մարդ կը քընի,
Ըլենք, դանինք, սպանինք
Դավիթ, չե վոր կը նասի հնդեն,
Կ'ըրիշկի՝ կալուն պատից կախուվ ի, սկի Թուր չկա
Սկնա կ'ըրիշկի, կ'ըսի.
«Եղա Քրիր վրե պախենա
Վոր մեկ տեղ կ'ըրիշկի, Քրիր չխանա
Չոս կը ստա Թաղըն, կ'ըրիշկի Թաղը՝ տակ.
Մեկ Թուր ննաև կը սխռնա, Թուր կը վերցի
Թաղըս կը վերցի, կ'ըրիշկի,
Քրիր հըմեն էլ կը սխռնա

Թրիր հըմեն կը ժողվի,
Հըմեն իրարու վերա կը դնի, կուտակ,
Կը դնի կատուքիր խորճին, կ'ըսի.
«Տանիմ ըձը՛ խամաթ,
Ենիմ նալ-բիվեռ. իմ ձիան պակաս է»։
Չխորճու բերան կը կուպղը, կը դնի ենաու
Եղա քնասուն մարդ մեկ-մեկը՛ իրիս կ'ըրիշկի.
Մեկը չկըշնա ձեն խանի։

20. Խոնդութը առնում է խառված Թավթի սիրտը

Խանդութ խաթունն կը գա,
Թավթը՛ ձեռնեն կը բռնը.
Հենդաց կը քնշի, վուր տանը՛ հուր ողնա
Թավթի ըռըկիր է, չերթա
Եղա մարդիր ենաու կ'ըրիշկին.
Գնանի մ' Խանդութ խաթունն
Ձեռ կը թվի Թավթը՛ն, քնշի,
ՉԹավթի չկերի գիտնուց կայնացըցի
Կ'ըսի.— Թավթի, վրե՛ չես ելգա՝
Կ'ըսի.— Ըմ եկա. էս ալ կանգնիմ,
Իմ ձեն խիծնիմ, երթամ իմ տունս
Խանդութ խաթունն Թավթը՛ն կ'աղաչի.— Երթանք տունս
Տեսավեր, քնչքան չուտ կ'ըռըկիս, երթանք իմ հնդկներս
Երկու խարար կա, իս քի կը տամ,
Ելի կ'երթաս, գնա,
Հա, գնում քի չըմ բռնի։
Թավթի կ'ըսի.— Ըմ եկա՝
Կ'ըռըկի, կը գարկի Խանդութ խաթունին, դմշկըվի դնը.
Կը գա, հուր ձին կը խիծնի, կ'ընկնի ճամբաս։

Թավթի վար ձիուն հա կը գա, հա ականջ կ'ենի,
Կ'ըրիշկի՝ մեկ ձեն կը գա, հա կը բնաս.
— Թավթի, Թավթի, կանգնը՛.
Կանգնը՛, չես իս լսո՞մ
Թավթի ձիու վիրիվեն՝
Մկնա գառնա, կ'ըրիշկի,

Կը տեսնա՝ Խանդուխթ խաթուն
Բիբլիկ հետևէն կը վազը։—
Ե՛, հազար ժամանակ Խանդուխթ խաթուն
Բիբլիկ վուտ գիտը՛ն չդրիր,
Մկա բիբլիկ դաշտը մէջ կը վազեր.
Վուտ հրմէն ըլիր ի երուն,
Վուտ վորտեղ դնի, վուտաց տեղ լիք երուն կ՚ըլնը։—
Վուր Դավիթ կը տեսնի, կը դառնա վերա։
Վուր Դավիթ կը դառնա վերա,
Խանդուխթ խաթուն կ՚ըսի.
— Դավիթ, տնաշէն, քո՞նը մ՚ակոն չուտա կ՚ըսըկիա։
Դավիթ կ՚ըսի.— Իս Սասունա քո հապիվ եկի.
Ես քան ճանրաթա իս եկի, խաստա քու մոտ,
Մեկ դիր քու իրիս պագնի.
Ըսպա են սիլեն դու ըձը՛ զարկեցիր, հալաթի կ՚ըսըկիա,
կ՚ըսի.— Դավիթ, դու բան չըս տեսիր,
Հալա դու ջհել իս։
Իս քի լոմա չըմ ենի,
Վոր դու հալա չըս տեսիր։
Դու են քոռասուն մարդ տըսար,
Վոր իկիր են տուն, նստիր են։
— Հա՛, հասց Դավիթ, տըսա։
Հասց.— Շատիր կան՝ մեկ տարը՛ իմ տուն նստած ի.
Մեկն ել են մարդիրուց ըձը՛ չտեսիր ի։
Դու գնալու բաշտան եկիր,
Մեկ բարիվ ել չտվիր։
Իս քի ըսի՝ նստի.
Դու ըձը՛ անպատիվ եղիր,
Իմ խիտ խարար չառիր, չտվիր,
Սկնա գնում դու եկիր, իմ իրիս պագնիր։
Մարդ սկնա բան չենի։
Ախր, դու տըսար՝ իս քի ձեն չտվի։
Վոր դու նստեր, խարար տենք,
Իսն ել քու խուսք կը լսեր,
Դու ել ըձը՛ կը չարքեր,
Մի խուսք մեկ կ՚ըներ.
Վուր իմ խուսք քի դուր գեր,
Ջու խուսք ըձը՛ դուր գեր,

Ձեռս, մեկ մեկը՝ կ'առնենք,
Ես գաղթ յան Հոյ կը նսեմնք,
Յան կ'երթենք Սասուն
Ետաց.— Բան չկա, ելը՝ խիժի ձին,
Տանիմ գքի Սասուն
Ետաց.— Դավիթ, ապա իս քի խուսք մ' ասմ,
Ելի տ'ըռըկիս
Ետաց.— Չե, չըմ ըռըկիս
Ետաց.— Դու սկնա ըձը՝ բիբիկ՝
Վուր ըձը՝ առնիս, տանիս Սասուն,
Ե՛, խալխիը ինչ տ'ըսին
Խալխ տ'ըսին՝ Դավիթ գինաց,
Դաչտը՝ մեջ հեքիմ մի գնտավ,
Առըց, նկավ բիբիկ
Ետաց.— Ապա ինչըխ ենինք
Ետաց.— Ա՛խր, ինն ել տան տեր իմ,
Դարձի, երթանք մի տուն,
Երկու որ կը ճտանք,
Իսն ել իմ հետ կ'ենիմ,
Իսն ել մեկ ձի կը խիժնիմ

Հոլբարտի խիտ կը դառնան տուն.
Կը ճտա չոր խըլտատն

11. Թահի ճամակը հառնդութին

Մըկնել ինչ տըսնան.—
Կը տխանան՝ Աչմու չահը շատ կուչում
Ճամխիը Խանդութ խաթունի վերա.
«Խանդութ խաթուն գոտով քիշնք, բիբիք»
Խըլտատն չոր թուղթ մ' կը բիբը'ն.
«Խանդո՛ւթ խաթուն, կը գո՛ս, երե.
Չգես, կուչում կը գա, գքի գոտով կը բիբի»
Հենտան Խանդութ խաթուն կը գըրի.
«Իս չըմ ֆգա, շատ կորըճ եք,
Իկեք, ըձը՝ գոտով տարեք»
Թուղթը կը դարձընի հետ

22. Խանդութը պատուհանից դուրս է շպրտում կռվից հրաժարվող ուզկաճներին

Խանդութ խաթունն կ'ըլնը, ինչ կ'ենի.—
Մարդ կը ճամբեի են քեռասուն մարդու մոտ, կ'ըսի.
— Վէր կ'երթա, կռիվ կ'ենի, իս գեն կ'առնիմ։
Եզա քեռասուն մարդ կ'ըսին.
— Վրե՞ մինք երթանք.
Վէր Խանդութ խանըմի ծուց պատկիր է,
Թը են երթա կռիվ։
Եզա մարդ գառնա, կը գա,
Խանդութ խաթունը՛ն կ'ըսի.
— Վէր Խանդութ խաթունը ծուց պատկիր է,
Թը են երթա։
Դավիթ կ'ըսի.— Աղեկ, իս տ'ըլլամ, երթամ։
— Դու մ' երթար, իս տ'երթամ, ասաց Խանդութ։
— Չէ, ասաց, իս տ'երթամ, դու կնիկ իս։
Ամոթ չի՞ ըձը գուրա, իս ձիամ, դու երթաս։
— Ի'երթաս, պինա, ասաց.
Վուր քի սպանին, քու չանդակ դուր գնաըննի։—
Չէ Ալաչ Գատրատաին թիվի վերայ է.
Ակնա մուտ դանիս թղթի վերա,
Ինու տեղն բայլու կ'ենի։—
Դավիթ թիվը կը բանա հետո.
Կա՛, ինչպես Մահ Ալաչ թիվի վերա։
— Գինա, որսա, կ'ըսի Խանդութ.
Կը գամ, կան կը գամ, գնաըննիմ։
Դավիթ կ'ըսի.— Իս կ'երթամ.
Եզա քեռասուն մարդ խան դուս ըղուց.
Վուր կռիվ չենին, վրե՞ կանգնիր ին։

Խանդութ կը գա, են քեռասուն մարդ խանի դուս.
Գալու բաշտան են քեռասուն մարդն ել կը կանգնին։
Խանդութ ել դուս չբանա, խանի դուս.
Փանջարի դուռ կը բանա,
Մեկ-մեկ թիվքիր կը բռնի,
Փանջարից կը չփռտի դուս.
Ըզմէր կ'ընկնի գետը՛ն, կը մեռնի։

— Վայ-վայ, կ'ըսի, եղա մարդիը իկեր ին, ըձը տանիմ
Խանդուխթ կը դա.— Դավիթ, կ'ըսի, խանի դուս,
Դավիթ կը դա, կ'ըրխշկի.—Ա՛ն, հոդևն մարդ չկա,
Խանդուխթ կ'ըսի.— Դավիթ, փանջարից ըրըշկի,
Դավիթ կ'ըրխշկի. ինչ փանջարից թիւը ի,
Սկուն տապկացիը ի, ձեացիը ի գետը՛ն, հըմեն մեռած իր
Դավիթ հենաե կը ծծդա, կ'ըսի.
«Փառք քի Աստված, իմ կնիկ քան պի ել կարիճ իր»
Դավիթ ձեռ կը թիւ, Խանդուխթի ձեռ կը բռնի,
կ'ըսի.— Դե՛, ձեացի բարով,
— Երթաս բարով, Աստված քի քան հաչողի։

43. Խանդուրը Դավթին ձանապարհ և դնում ի մարտ

Դավիթ կը դա, գնին քեչի, Խանդուխթ կ'ըսի.
— Վայ, իմ մանե դնացիը ևր,
Դավիթը՛ գնին քեչիը ևր դուս, վուր Դավիթ խնծնևր։
Հետիվ Դավիթըն կը վազի, կ'ըսի.
— Դավիթ, Դավիթ, կանգնը՛.
Ես գամ, քի գնին քեչիմ դուս,
Դավիթ ենաե կը դադրը։
Խանդուխթ կը մոնի թավլեն,
կը տրնան՝ ենա քնատուն գնին ել
Փախած ի վրեն քունճ, կծկըված ի,
Ըրն կըշխընա դուս փախնըն.
Դավիթը գնին մեկ սարը՛ գրա՝
Կա փայխը՛ մեջ կանգնիը ի։
Խանդուխթ ձեռ թիւց, գիու վիղ տը բռնևր, քեչիը դուս,
Ջին ըրըշկից, չճանչցավ, վրդ չավից.
Ջդըրնե սկնա թիւց,
Խանդուխթ իրե, թոբփալին դպավ գետեն.
— Վախ, Դավիթ, եսաց, քի գնին ըձը՛ սպանից,
Դավիթ մտավ ներս, դԽանդուխթ գրկից, եսաց.
— Ե՛յ գնին, Աստված քի ֆնհմ կտա.
Վրե՛, մարդ կնկան կը գարկի.
Դու չըսաս՝ կնիկ ևր.
Ա՛խր, իս դաս կանգնած ևր։

2510 Կ'ըսէ.— Յանդո՛ւթ, ձեռ տուր, քեզի դա՛ռս
— Ա՛ռ, կ'ըսէ, մինաք ունիս՝ բձը' քո ձիով առս ապահի՛ր
— Ջե՛, կ'ըսէ, ձին ալ ձեն չառաբ, քեզի դա՛ռս.
Նա գլաւիր՝ դա՛ռ ուտար եր
Գինաց, ձեռ տվից ձիու գըլա՛խ, քեզից.
Ձին բան ալ չերաւ, գին գրից վերա՛ռ
Դավիթ գինաք զոլանքաիր քեզից, կապից,
Ըլաւ խիծաւ, գինաց կռիվ.
Գինաց, խառաւ կռիւս մեջ։

22. Թշնամու ջարդը յետ Դավթի ու հաճդուքի հաճդիպումը կռվի դաշտում

Յանդո՛ւթ մեռաք երաց. «Ապա ես ինչ ենեմ»։
2520 Սկոն ազամարդու չուր խաղա՛վ,
Վուր սկի մարդ սկնա չուր չտըսիր եր
Ձին ալ քեզից դա՛ռս, ապեկ գին լըդի վերեն,
Խիծաւ, հա՛ռ թուր բանից ձեռ.
Դավթը ճամբեա՛վ չդնաց,
Մեկ հա՛ռիւ կողմն գինաց, խառաւ զոչուա՛ին։
Յանդո՛ւթ կը ասենա դԴավթի,
Վուր ինչպես մեկ անուքի գել ընկեր մեջ գառնիրուն,
Զգառնիր մե-մեկ խեղդի, քլի,
Ենպես Դավթի ընկի եգա զոչուա՛ի մեջ,
2530 Հըմա ջերգա՛վ կը ջարդի, կը դա՛ռ
Յանդո՛ւթն ի, թամաշա կ'ենեի։
Ջե վոր Դավթի ասկա՛ր կը ջարդի։
Ըրըշկից, ասաւ՝ զոչուն կը փախնի։
Եահ ամանց գինքն ալ գինաց.
Ջինքն ալ մեկ յանեն ջարդից.
Ջարդից, գինաց, մոտացաւ Դավթըն։
Եաց. «Ես Դավթը՛ խա՛ռ կռվի՛մ,
Տըսնանք՝ Դավթի ինչ կարըճ մարդ ի՛»։
Ջե վոր գասկա՛ր ասաւ են ձիաւուր.
2540 Նռա հրոջիվեն փախան.
Վոր փախներ, կ'ընկներ Յանդո՛ւթի ձեռ.
Մեկ յանեն ալ են կը ապահեր։

Խանդոյթ մոտացավ Դավթըն՝
Շատիր կըներ՝ շկըռներ, Դավթը՝ վերեն կը փախներ.
Շատիր կըներ՝ շկըռներ Խանդոյթը վերեն կը փախներ՝
Դավիթն ել փախնուղը կը դներ, կը սպաներ.
Խանդոյթն ել փախնուղը կը դներ, կը սպաներ՝
Դավիթ ենաներն եկավ,
եզա ձիավուր են տեխներ՝
Էն փախնուղն փախավ, սպանվուղն ել սպանվավ՝
Եղ Դավիթ, եղ ձիավուր
Գնացըն դախ մե մեկը՛, մեկ մեկը՛ զարկին՝—
եզա կնիկ ինչ շանուրդի եր՝—
Դավիթ վոր Թուր սկներ կը բերեր,
կնիկ պինք կը թվի Դավթը՛ խոսվ,
Դավթը Թուր կը դներ գետին՝
եզա ձիավուր Թրը՛ բերներ
Զղըմըշի զարնի Դավթըն.
Թրը՛ քամկով մեկ զարը կը քեշի Դավթը՛ քամակ՝
Դավիթ կը զվռի վուր ենուս,
Տը զարկի մեկել յան, ելի կը զվռի քամակ՝
Ջուր կես որին սկներ Խանդոյթ զԴավիթ կը չարչարի՝
Դավթը՛ ձին ապա չի նեղանա.
Խանդոյթը՛ ձին քրտընքի մեջ լվացվիր ի՝
Խանդոյթ են գնա կը վախենա, կը բռնա.
— Է՛, ձիավուր, մարդուքեն սկուն չի, վուր ձիով կռվըն.
եզա մարիֆաա ձիուն ի, քոն չի՝
Վոր դու կարըն մարդ խա,
իջնինք տակ, ձիանք Թուղնընք,
Իս, դու գնալաշ կպնընք՝
Կ՛ըսի.— Շատ աղեկ՝— Կ՛նչնեն տակ՝
Երկուս քիշերբա կը բռնին, չուր մուխ կը տա.
Մե-մեկու կը տանին, բերին՝
Դավիթ կ՛ըսի.

«Ցեր Մարութա Բանձր Աստվածին,
Ինչ Պատրաստին վոր իմ աչ Թվին»՝

Ախլու պես դեն մարդ կը վիրցի,
Քամկը՛ վերա կը դնի գետին՝
— Դավիթ, Կ՛ըսի եզա մարդ, ըձը՛ մի սպաներ՝

Կ'ըսի. «Ցա՛, եղա մարդ ինչ գըտի՝ իմ անուն Դավիթ ի»։
— Մարդ, դու ըձը՛ կնքիը, իմ անուն գըտիս
Եղա շուշուա կը թվի, հայր յախին կը բռնի,
Հոգը փուղպատ կը ճղի, դոշ կ'իրիվա,
Երկու ծըծ կը թռնին դուս.
Ջեռ կը թվի գըվխին, դդակ-մդակ կը բիրի տակ,
Ետու նամուշ ալ կ'իրիվա։
Դավիթ կ'ըրիչկի, կը տիտա՝ Խանդութն ի.
Կ'ըսի.— Աստված քու տուն ավըրի,
Դու ընչի՞ ըձը՛ եղքան չարչարանք տվըր։

45. Խանդութի ամուսնացնելն իրենից ուժեղի հետ

Հընաև Խանդութ Դավիթը՛ կը պատմի։
— Դավիթ, կ'ըսի, եկան իմ խոր տուն,
Ըձը մեկ թագավուրու տղը տարան։
Հոգը մեջ ըձը՛ գրըն.
Իմ մարդն ալ, են ալ եկավ.
Հոգի մեջ հիրարու հանած երընք։
Վուր սկոն ձեռ թվիմ, մարդի թիվ քեչիմ,
Վուր բիրիմ, դնիմ իմ կշտը խիտ,
Համ մեջք կուտուավ, համ թիվ չարդավ.
Մարդ ընկավ, մեռավ։
Են թագավուր ասաց՝ «Վախ, եղ խարտ մարդատպան ի»։
Ըձը եղու մեկ ալ ճամբեխն, իս եկա իմ խոր տուն։
Իմ աղրերքիը իմ խիտ կռվան՝
«Վրե՛ գինատիր, թագավուրու տղեն սպանիր»։
Ջձը անեն դուս խանինա
Իմ խեր ըլավ, մեկ ձի տվըց ձը՛,
Մեկ խորճի ուտկը տվըն ըզձը՛.
Իմ խեր ասաց՝ «Ի՛մ աղջիկ,
Գինան, քու գըլուխ պախի,
Քու աղրերքիը քի կը սպանին»։
Իան ալ եկա, եղա դաշտը մեջ իմ տուն չնի.
Իս ան հրը՛, ըսի՝
«Վեր կը գա, իմ քամակ կը դնի գետըն, իս գեն կ'առնիմ»։
Հետո դու եկար, ըզձը՛ բռատա եկար, քու խիտ կռվա.

Վոր դու իմ քնամակ զարկիր գետը՛ն,
Մկա ըզձը՛ դուր կը տանիս, տեր,
Իս կը գամ քի խեղ։

Ըլան ակին տուն։
Են մարդիկրու քնուսուն ձիանք ենտիղ ին։
Ինչ բան կըներ Խանդութի խաթմունը՛ տուն, հըմեն բաացին.
Վախտուն ձի էլ Խանդութը՛ն կըներ, ենու ձիանք էլ բաացին.
Խարիր ձին էլ բաացին, ական դախ Մասուն։

46. Զենով Հովանի չեվ իր կնոջ մահը

Դավիթը՛ անուն չատ ջանջացավ.
Ուր անեն ըլավ մեկ պատիկ թագավոր։
Հովան ըլավ գինաց Դավիթը՛ մոտ.
Հովանի կնիկն էլ գինաց,
Խանդութի խաթմունը՛ մոտ, ետաց.
«Երթամ, տխանիմ, վուր եսքան կը գովան,
Ինչպես կնիկ ի, վուր Դավիթի իրի»,
Գինաց, տըտավ գԽանդութի,
Վոր մեկ խորոտ, ջանջ կնիկ ի։
Սըրտ պատռավ.
«Էլ Դավիթի ըձը՛ չառնը, ետաց. ըլ բան ի»։
Եկավ տուն, ընկավ խըվանդ։
Իրիք որ խըվանդցավ, վերա չուրսը՛ մեռավ։
Գնկա կակըծու Հովան էլ մեռավ։
Վուր Հովան մեռավ, Դավիթի չատ լացից.
Երկուսն էլ տարավ, պատարագով խուրից,
Եկավ, մխամիտ ուր տուն նստավ։

47. Ջահի բերդությամբ Բապը Ջրեվկին Դավթին ճամակով հրավիրում է ի պատերազմ

Մեկ տարը՛ սկնա ուր տուն նստիր ի.
Խարար չի՝ ախշար ինչ կա, ինչ չկա։
Աչմու շանն ի, ըլավ թեկ ավից Բապը Ջրեվկին.
Ետաց. «Մեկ մարդ Մասունա եկավ իմ խուղը մեջ.

* Բանահավաքն այստեղ ունի «Բապը Ջրեվկի» վերնագիրը Խ մ.

Եղա մարդու անուն ել Դավիթ կ'ըսին,
Ջիմ ասկերն հըմեն ջարդից, սպանից,
Ձանդումի խաբեն կըներ ձոյ քնզաք, չամ խորտա եր.
Եղա մարդ գնացինն գձանդումի առըց, տարավ»։

Բայե Ջրենկ եղա խուսքից հավատարում չեթաց.
Կանչից վազիր-վաքիր, ժողվից, իրի ուր գիվան,
— Շահու քուղի, եաց, կարդացեք,
Տխնանք՝ ինչ գրուկ ի ինե. ծի խիլք կը կտոխ՝
Մեկ մարդ խարիր խազար մարդ կը սպանի։
Վուր գքուղի կարդացին, հըմեն ենաե ծզդացին.
— Սուտ բան ի, Թագավուր, վրե՞ կ'ավատաս.
Մինք մեկ ել չընք ավատար.*
Եղա վոր լսիր, վոր տխիր է։
Թագավուրն ել կը վիրցի.
— Ջանը՛մ, Թագավուրն ել սուտ կ'ըսի։
— Աղեկ, կ'ըսին, մինք ել գըտինք՝ սուտ չըսի.
Հազա խիլքի բան չի։
Վոր սկոն ի, մեկ Քուղի գրինք Սասուն,
Ետրցումս ենինք՝ սուտ ի, Քե ազուրի, ենգնա կ'ավատանք։

Կ'ըլնըն, Քուղի մ' կը գրին Սասուն Դավիթը՛ն.
«Դավիթ, մինք լսիր ինք, գու գոռբա մարդ մ' իս։
*Կը գնաս, երի մի** կռիվ.
Վուր չըս իգա, ասկեր կը քեզիմ քու վերա.
Քե երկիր քարքանդ կ'ենիմ,
Ինչ կա-չկա, Քաղնիմ, լոգկիմ, բերիմ»։

48. Խանգութի պատասխանը Ռապը Ջրենկին

Քուղի ասը՛ն, բերին Սասուն, ավըն Դավիթը՛ն։
Ե՛, Դավիթ չգիտի կարդալ։
Տանի, Ձանդումի՛ նչանց կը ատ Քուղի, կ'ըսի.
— Ձանդո՛ւմ, եղա ինչ Քուղի իս։
Ձանդումի խաբեն գՔուղի կը կարդա, կ'ըսի.
— Դավիթ, եղա վճռվ ի բերիս։

* «Մինք մեկս ել չինք հավատալ»։ Ետ մ.
** Մի — մնու։ Ետ մ.

Կ'ըսի.— Երկու խաա մարդ,
Կ'ըսի.— Տնր են երկու մարդ հոգին.
Մի կըռվը խիտքիր, աղեկ պատիվ երա՝
Դավիթին ալ չգըտի՝ ինչ բաս* ի.
կը տանի, աղեկ պատիվ կ'ենի,
կը ձնա չուր լուսանն, Յանդուխտ Թուղթ կը գրի.
«Մինք քի զարար մը չընք ալի. մինք քի չընք ճանչնա.
Մինք քի ինչ ինք երի, վուր կը գաս մի վերա կռիվ.
Մինք քու անուն չընք լսի. քու դավին մի խիտ ինչ ի.
Մինք քի ինչ ինք երի, վուր կը գաս մի վերա կռիվ
վուր դու կը գա՛ս, ինակ մի գա, չըս կ'երի Դավիթ՝ վրա.
Չուրըդ Թագավուր ալ խիտ քի րի մի վերա.
Թը են ալ գա, հոգնի քիս,
Յանդուխտ զԹուղթ կը ծալի, դնի վազքերի մեջ,
Կ'ըսի.— Դավիթ, գինա,
են երկու մարդուն աղեկ շուր խազցու.
Թուղթն ալ առ, տասը վուսկի ալ առ.
Երկու ձի ալ առ, թը խիծնին, երթան
Սկոն Ճամբան կը դնի. եղա մարդիր կ'երթան
Յանդուխտ Դավիթըն սկի բան չըսի՝ եղա ինչ Թուղթ եր
Եղա մարդիր զԹուղթ կը տանին, կը տան Թագավուրին

49. Պապը Ծրինկի առաջարկը Սասունի վրա յեվ յերկարդ ճամակը Դավիթին

Թագավուր հոգը վազիր, վազիլ կը ժողվի.
ՉԹուղթ կը կարդան, կը զարմանան, կ'ըսին.
— Չոր մկա հալա շահու ասկրն ի չարդի,
Մինք չընք նվաստա.
Մկա կ'ըսի՝ երկու Թագավուր իկնք
Եղա ինչպես գուրա մարդ ի
Կ'ըսին, Չինիմաչինա Թագավուրին ալ խարար տանք,
Գա, երթանք Դավիթ՝ վերա կռիվ
Վազիր, վազիլ կ'ըսին.— Թագավուր, ամուխ չի,
Մինք Չինիմաչինա Թագավուրը՝ն խարար տանք.
են ինչ ի, երթանք մեկ, մեկ մարդու վերա կռիվ

* Տպված է «պակաս», ուղղում ենք՝ ըստ ձեռ.

Թագաւուր կ'ըլնը, չամ ասկեր կը ժողվի.
Քանց աստղ երկինք ասկեր կը ժողվի
Թուղթ կը դրը, համբխի վար Դավիթըն.
«Իս ևկա. մի կռիվ Մշու դաշտ ա'ըլնը»։
Թուղթ կը բերին, կը տան Դավիթը ձեռ.
Դավիթ թուղթ կը վիրցի կը աս Խանդութըն.
Խանդութ խաթուն ի, Դավիթըն կ'ըսի.
— Եգա երկու թուղթ քու վերա երի.
Մեկ հառնչ, մեկ մկա
Իս գրի՝ «Դու երկու թագաւուր դիք,
Զըք կերի Դավիթը վերա
Բալքու թագաւուր վախենա, չգա կռիվ.
Մկա ասկեր առիր, իկիր ի քու վերա կռիվ.
Մշու դաշտ ա'ըլնը կռիվ։

50. Դավիթը պատրաստվում է կռվի չնվ պատվիր է տալիս Խանդութին լինելիք վտդու՝ Միհրի մասին

Դավիթ կ'ըսի.— Դու վրե ըձը' չգա չըսիր,
Իս երթիս, չիտուղնիր Մշու դաշտ գիր։
— Իս չըր գը'ի՝ որ դեն.
Թուղթ նկավ, իս քի խաբար տվը։
Դավիթ, ասաց, կ'ուղիս՝ խեն էլ գամ.
— Չո, ասաց, ասկեր ըձը' քեզի երաց, դոր մնաց քի.
Դու որ գաս, ինչ ենես.
Ես քեզնե մ' ասկեր իս չըմ կերի կուտուր։
Էլ Դավիթ չկանգնավ.
Ըլավ, հաբր հզոց երաց, կռվը շուրիր խազավ,
Քին քեզից գաս, գեն դրից վերա, խիծավ.
Ետաց.— Խանդո'ւթ խաթուն, մնացի բարով։
Զըզնիմ, չիմանամ իմ հիտիվ գաս.
Դու իմ հիտիվ գաս, իմ կենիկ չիս.
Աստված ողորմած ի, մի վախենա։

Դավիթ ձին քշից, տ'երթեր.
Ապա Դավիթ գըտիր՝
Խանդութ խաթունին ապա տ'ըլնը.
Ետաց.— Խանդո'ւթ խաթուն,

Վուբ ըձը՛ ատա ըլավ,
Անուն դնիս Մհեր.
Իմ պապկի անուն գնոր՛ն չիմա։

51. Դավիթը հաղթում է Բապը Յերևցկի բանակին յեվ ճոա բազաքում ճոր իշխանություն է հաստատում

Դավիթ ձին քշից, գնաց.
Գնաց Մշու դաշտ. ինչ տըսնա.—
Ամպը հիռչով չադրքիր գարիած է.
Հալա խոխին ասկյար կը գա։
Դավիթ կ՚ըսիշկի՝ քանց ասող երկինք ասկյար կը գա։
Դավիթն ել հաքամ ժամանակ՝ իկի տուն,
Տարին լմացիր է, կռիվ չերի։
Բռնաց.

«Ճա Մարութա Բանձր Աստրածին,
Ախչ Պատրաստին վար իմ աչ թխիին»։

Համա քշից ասկյարը՛ մնչ։
Ամպը սկուն կուտուրից,
Երուն եղավ, պչանդակնիր քշի, կը տանի։
Դավիթ վուր հնու ասկյար կուտուրից,
Են ասկյարի գըլխավուրքիր
Թիկ ավրն ուրինց թագվուրը՛ն,
Թե. «Են մարդ գասկյար հըմին սպանից,
Մի հավարին մարդ համբախ, մի հիմդար համբախ»։*
Թագվուր վուր լսից, գարմացավ,
Եսաց.— Դարձնք հետ, կռիվ մնք ենը։
Ապա հնոնք փախան,
Համա Դավիթ ձեռ չքնչի.
Ընկիր ի հետևքեր, կը կուտուրի,
Կանչի.— Ե՛յ, կ՚ըսի, մի փախնեք, ել չըմ սպանի.
Ըձը՛ ծի թագվուր նշանց ավնք։
Հետեն կ՚ասըն.— Գնա մի քաղաք,*
Հետեն մի թագվուր կը գնաըննա։*
Դավիթն ել ըղձին քշի,

* Մեր։ Ի մ բ։

Կ'երթա Բարը Ֆրենկի քաղաք,
Մարդ կը ճամբէի.
— Ասիք ձի թագաւուրըն, գա՝
Թագաւուրն է, կ'ըլնը, կը գա, կը սխտնա՝
Կա՛ մեկ մարդ ձիու վերեն նստուկ է.
Սկսեր մարդ վրնչ անուն չունի է, վրնչ սխիր է.
Կը վախենան, դառնան, վուր փախնի՝
Դավիթ ձին կը քշի վերա,
Թագաւուրըն կը բռնի, կը գարկի, կը սպանի՝
Մնացողը, քաղքը մէջ վուր ապրիր է,
Դավիթ ենոնց համար թագաւուր կը դնի.
Ձաֆի ճաչ մարդիր կը սպանի,
Պատիկներ տեղ կը դնի, կ'ըսի.
— Քանի գա ժիր եք, կռիվ մի՛ք երթա՝
Ձեր եղա քաղաք մեկ-մեկ ուր տեղ կը դնի,
Ձեր ճաչ պատիկ կը ճանչնան,
Դավիթ չաբս տարըն կը թըմբմի՝
Ենոնց կը թամբնի.— Վուր գա նեղ կ'ընդնիք,
Ըձը՛ թաղի գրեք, ճամբեք, իա կը գամ՝
Ապա եղա քաղաք հրմեն
Դավիթէց կը վախանեն, կ'ըսին.— Դավիթ,
Ձեր մինք մեռնինք, քեզ խուսք տ'ենինք՝
Դավիթ կ'ըլնը, կը գա Սասուն՝

32. Դավթի վերադարձը յեվ հոր ու մորդու կռիվը

Մի ասա, Դավիթը մի ազա իլիր է.
Ձեր տարըն թմբմիր է, մոր ասիր է.
«Ըձը՛ խեր չկա»՝
Ասիր է. «կա»՝
Ասիր է. «Իմ խեր հա՞ր է»՝
Ասիր է. «Գնացիր է կռիվ»՝
Դավիթ կը գա, կը խասնի Մշու դաշտ՝

Մհեր իրենչ է երիր.—
Մոր մառեն գիզուկ գնացիր,
Մեկ ձի խիժիր, վուր երթա, գխեր գնարնի՝
Մհերն է, ձին գեռ կը քշի, երթա, խասնի խոր՝

Կ'ըսի. «Իմ խեր մեռակ ի,
Քաղնիմ իմ խոր, չգարկին, սպանին»,
Կ'երթա, Մշու դաշտը կը խլրացըցի,
Մեկ ճայ, անվերի սարը մէջ, մարդ չկա, խալխ իր
Կը տեսնա՝ մեկ ձիավուր եգա սարից կը գա,
Մհեր չվախանա, ձին կը քշի հառնէջ.
Կ'երթա, խաո եգա ձիավուրը՝ կռիվ կ'ենի,
Ապա վուր Դավիթ խաչի անուն չտա,
Չկերի կռիվ ենի,
Դավիթ կ'ըրիչկի, տեսնա՝
Մեկ խորտա ազի մի ձիուց կ'եջի.
Կ'ըսի. «Եգա ազին ըզձը չգը՛տի,
Բեզհատմ ի, խո զեն չըմ սպանի.
Եջնըմ, եգա ազին տը բանըմ,
Ջիւքիը կապիմ, թլիմ ձիու թարկ, տանիմ Սասուն
Դավիթ կը գա, ձեռ կը թլի, վոր զազին բանի,
Մհեր Դավիթըն կը վիրցի, գարկի գետը՛ն.
Սկոն քամիկը՛ վերա կը գարկի
Դավիթ գըտի՝ ըզինք տը սպանի, կ'ըսի.
— Կարը՛ճ ազա, գա՛ ըզը տը սպանիս.
Բա, գա՛ իմ Մհերի ջուդար ինչըմ տը տաս
Մհեր ենաե կ'ըսի.— Քո՛ անուն ինչ ի
Կ'ըսի.— Իմ անուն Դավիթ ի
Կ'ըսի.— Վուր գա՛ Դավիթն ես, գա՛ գո՞ւր ես գացիր
Կ'ըսի.— Գացիր եր կռիվ խաո հայրիչ թագավուրի
Կ'ըսի.— Ապա վրե՞ փախար, եկիր
Ենաց.— Ջե, չըմ փախիր ի, ենու թագավուր սպանիր իմ
Ենաց.— Վոր գա՛ Դավիթն ես, քո՛ տուն գո՞ւր ի
Ենաց.— Իմ տուն Սասուն ի
— Բա, քո՛ հնկերն անուն ինչ ի,
Որ ազա իլիր ի, գա՛ լաիր իս
Են գախ Դավիթը սրտան կ'առնի, են գախ կ'իմանա,
Կ'ըսի.— Հա՛, լաիր իմ
— Անուն ինչ ի
Ենաց.— Անուն Մհեր ի
Են գախ կըզվը, խոր ձեռք կը պագնի.
Հիրասի վերա կը խնդանան, կը գան Սասուն

53. Մհերի վտառոդությունը Բռիքների հետ յեվ նրանց սպանելը

Ամանդալի խաթունը՝ խեր լսիը ի,
Թե Ամանդալի գնացիը, իրիկ երիը,
Տեռու տղա իլիը, ետու իրիկ շատ կաըըճ ի՝
Հայր տղենիրուն կ'ըսի.
— Ըլեցեք, դինացեք, ըրըշկեցեք՝
Ծի քուրդ հալ ինչ ի՝
Մարդու խալ կուրսըվի, խոխ կան կը գա,
Նա, խո, ծի քո՛ւրն ի՝

Աղիըքիը կը կանգնին, ուրինց հող կ'ենին,
կը գան Սասուն, քուրդ մոտ, յոթն աղիերն եր
Ամանդալի խաթունն շատ կը խնդանա.
Երկու շաթաթ գնասալը չատ, վոր երթան,
Հըմեն որ, սար կա, Սիվ սար, կ'երթան նևջիը կ'ենին՝
Ամուր մեկին Ամանդալի կ'ըսի Մհերին.
— Մհեր, գա՝ կերթա սպանես վիրու ուխշար՝
Մհեր կը ծծզա.— Մարե, կ'ըսի,
Հըմեն որ իս կը սպանիմ.
Ապա վոր իս կը սպանիմ,
Իմ քեսիք հա կը պառվինա՝
— Մհեր, վորդի, վոր կը սպանես,
Ա՛ռ, փախի, երի՝ իս ալաբնամ՝
— Մարե, կ'ըսի, իս հետոր
Մե ջանջ վիրու ուխշար բերիմ՝

Կ'ըզնըն, կ'երթան Սիվ սար՝
Քեսիք ետուն կը նայըն, Մհեր կ'երթա,
Մեկ խաս ճանչ վիրու ուխշար կը գարկի.
Վոր կը սպանի, կ'առնի, կը գա՝
Քեսիք կ'իրիշկին՝ Մհեր ուխշար առըց, գինաց.
Կ'ըզնկնին հետևվին, կը գան, կը խառնին, կ'ըսին.
— Մհեր, գա՝ մե՛ղ չկի, գա՝ չըս կերի՝
Կ'ըսի.— Ըձը բան չկա ծի խոխ, իս կերիմ չկի՝
Կ'ենին-չենին, չըն կերի Մհերի ձեռնեն առնի՝
Ծոքն ել գիրու ուխշարը ձեռ կը թլին,
Վիրուն, տիրին գետը՛ն՝
Ապա քեսիքն ել կաըըճ մարդ ին՝

Մհեր եւ կ'ըսէին կը հառաչէ,
Ձեռ կը թէլի վէր քեռս փողպատին,
Համա մեկ-մեկ կը տիւ գետը'ն.
Վար կը տիւ գետը'ն,
Քաւ մեջք կը թաղվը խուղը' մեջ,
Ձիւրս ուխտար կ'առնը, կը գա տուն,
կը տանը, դնը մօ հառեջ,
Դավիթն եւ քնէր ի,
Խանդուխն եւ կ'ըսէ.— Դավիթ, հըլի վէր,
կը խնդանա կ'ըսէ.— Դավիթ, ասա,
Մհեր ինչ վիրս ուխտար ա' ի բիբիր,
Դավիթ աչքիր կը բանա, կ'ըրիշկի, կը տխնի՝
Մեկ զառա ուխտար մը սպանիր,
Բիբիր, գրիր ի տան մեջ,
կ'ըսէ.— Մհեր, քաւ քեռիք հա՞ր ին,
— Իս վիրս ուխտար առը, եկա տուն.
Իմ քեռիք, ընկան իմ խոհին, եկին,
Եկինք, ե, եսաև, քաղքը գըլխա.
Մխա կ'ենին գիւրս ուխտար ձրնեն խլին.
Իս ինչ երթամ, ձրնեն չդադարան,
Իրեն եւ ամեն մեկ մե յեն չփռամիմ,
Ձիւրս ուխտար առամ, եկամ տուն.
Դավիթ եսաց.— Վայ-վայ,—
Ձեռ գարկից չուքը' վերա,—
Խանդո'ւխ, քաւ աղրիրքիր սպանիր ի՞
Ձո Դավիթ գմհեր չարբիր ի,
Գըտի՝ ինչքամ գախամ ի՞—
Խանդուխ չավաառաց.
— Եղա ճիւ ինչըն իմ աղրիրքիր որ սպանի՞
Դավիթ կ'ըլնը, կը վազնի դեմ Մհերի քեռիք.
Խանդուխն եւ Դավիթ' խոտ կ'երթա՝
Վար կը մոտանա, կ'ըսէ.
— Դավիթ, կո՞ իմ աղրիրքիր կը ծծդան՝
Ձո վար Մհեր գարկիր ի գետըն, գաբրուվ ի,
Բերանքամիր բացվիր ի, ատամքամիր սպառակ կը տան.—
Խանդուխ գըտի՝ կը ծծդան՝
Դավիթ չուտա կը խառնի,
Ձեռ կը թէլ վուր խուղին գուս քեշի,

կը տխնամ՝ մեռուկ ի անիր.
վէր կը թըլլի, տխնամ՝ հըմեն եղ մեռուկ ի
— Ջանդո՛ւթ, կ'ըսէ, շո՛ւտ արի,
Քու աղբիւրքիր հըմեն մեռած ի
Ջանդուխ կը խառնէ, տխնամ՝
Աղբիւրքիր հըմեն մեռած ի
Ըզա կ'ըլնըն, կը զառնան տուն։

54. Հար չեվ վարդու չերկարդ կռիվը. հար ամենը

Դավիթ կը գա տուն, կը հանռատի Մհերի վերա.
Մեկ շամախ կը զարկի Մհերը հիրսին,
Մհերն ի, ձեն չառա.
Մեկ եղ կը զարկի, էլի ձեն չտա Մհեր։
Դավիթ կ'ըսէ.— Ես իմ շամախ,
Երկրիս կըտին զարկեր, շուտ կ'առներ.
Ետա անասիր ինչքան զոհ ի
Կը հանռատի, մեկ շամախ եղ կը զարկի։
Մհեր կ'ըսէ.— Ջերիկ,
Մեկ քի խաթըր, երկուս քի խաթըր,
Իրիքին եղ ինչ խաթըր
Կ'ըսրկի, ձեռ կը թըլի խեր.
Կը բռնը գխերն, կը վիրցի, զարկի գետը'ն.
Ձեր չար մեջ կ'ընկնը, կ'երթա խառը մեջ։

Դավիթ կ'անիծի.— վա՛յ Մհեր,
Առաւտուց կը խնդրեմ, դու անմահ ըլնըս.
Քու ժառանգ գոնա չըլնը.
Քու տեղն եղ քարը մեջ ըլնը.
Դու քու աչքով ախպար չտեսնաս.
Վոր դու ախպար տխնաս, ախպար ո'ւզրխա։

55. Դավթի մահը, Մհերի ամենայացումը. Խանդութի վերադարձը Խոյ. Սասունի ավերումը

Ջանդուխ կը տխնամ՝ Դավիթ չուրցավ.
Ձեռ կը տա, վուր գ'Դավիթ խառնի.
Տխնամ՝ մեջը, հըմեն ուզուր ջարդըվիր ի։

Խանդակի կը խուղնը գԴավիթ,
Կ'ըսէիկի դախ Մհեր, Մհերն ալ չկա.
Մհեր կուբսըվիր ի վերեվէն,
Կ'ըլնը, գԴավիթ խանի,
Կ'երքա, մեկ-մեկ զաղրերքիր կը բերի.
Տեսեր քիր, իշխաններքեր կը բերի,
Տեղ կը տա փուբրի, հըմեն ալ կը տա խուբրի.
Ետա Դավիթը վուսկիք կը խարջի,
Նրանց անտեսությունը միջակից բարձր է եղել. ունեցել են 3 ջրագաց, 4—5 կով (վոչխար չեն պահել) և մոտ 10 փեթի ցորեն ամող եմի պատճառ։ Մանուկենց տունը հողագործությամբ չի հայթայթել իր ապրուստը։ Նրանց դլխավոր զբաղմունքը եղել է արհեստը։ Մեծ եղբայրը՝ Հուսիփը վորմնադիր եր, «պատ կը չարեր», միջնեկը՝ «ճաղըրպան» եր, իսկ ինքը՝ «ես տասը տեսակ դործ կ'անեի»— «բոստան, գործ (չուխահանություն), խրդար կը քաշեի» և այլն։

Նրա հիմնական արհեստը չուխահանությունն է եղել, և նրանով էլ այդ արհեստով է հայթայթում իր որվա պարենը։

1913-14 թ. թ. Նրա կեղրոնները բազմանում են։

Վրա յի հասնում համաշխարհային պատերազմը և նրանք դաղթում են Այսրկովկաս։ Այստեղ սկզբում մի ու. ժամանակ նա ապրում է ՆՀմինածում, ապա այնտեղից անցնում է Նոր-Բայազետ Նորագյուղ գյուղը։ 1916 թ. Նոյեմբ վերադառնում է ՆՀմինածին, այստեղից էլ գնում, հաստատվում է Աշտարակում, վորտեղ ապրում է մինչև օրս։

«Մոմի տաքին կուլի, էխաշկե կ'անեյինք, ապա ամերկայինների նպատակը կը տատանվեր»,— պատմում է Նաւ Շուտով նպատակ կտրում են և նա անցնում է Ամերկումի չուխահանոցը, վորտեղ էխատատուքին ու գործ կ'աներ։ Ամերկումի չուխահանոցը լուծարքի ենթարկելուց հետո՝ նա մի ու. ժամանակ իր անխտիրն արհեստանոցն է պահում, ապա անցնում է Հայտնարկոոպի չուխահանոցը, վորտեղ գլխավոր վարպետ, և մինչև օրս էլ այնտեղ է աշխատում։ Նա այժմ էլ դազդահներ է շինում և գործ անում։

Մանուկ Բիձան մի հատարյալ չռեմարան է ֆոլկլորի. գիտե հարյուրավոր հայհոյանքներ և քրդերեն հեքիաթներ ու վիպեր, յիրեր ու խաղեր, առակներ ու առածներ, հանելուկներ ու ժեղրու պատերգ։ Հայ լինի, հայհոյանքը կը պատմի. քուրդ լինի, քրդերեն։

Պատմում և աշխույժ կենդանի, հետաքրքրական։

Ուշադրությունը թեթևացնելու և աշխուժացնելու նպատակով նա մերթ ընդ մերթ ընդհատում է իր պատմվածքը և մի «ծպտուս պահ» կամ առակ ասելուց հետո՝ շարունակում է։

Մանուկ Բիձան սիրում է ասել, խոսել, կատակել. Ուրիշների նման գնալ չի ծախուձեռ. ինչ որ գիտե, ուրախությամբ պատմում է. առ մի դիմ է, որ հասուկ է պրոֆեսիոնալ ասացողներին։ Ցեմ իրեք, նա իր դիտացածը, իր անցուդարձը հաճախ է պատմել և հայրենիքում. Մոկաում է այսպես։

1911 թ. նա մեծ քանակությամբ յիրդեր ու խաղեր է հասել և բազմաթիվ «խնքաթներ» և գրույցներ պատմել պրոֆ. Հ. Աբրելյան, յերբ վերջինս Մոկաում ֆոնոգրաֆով ֆոլկլորիստիկ նյութեր էր հավաքում։

Մի շարք բաներ պատմել է նաև հանդուցյալ ազգագրագետ Ցերվ. Լալայանին։

Մեր հարցին, թե ինչպես է նա հիշում այդ յոլորը, նա պատասխանեց. «Գիշերները պարապ կը նստինք, կը պատմինք հուր յեանա»։

Մոկաում նրա, ինչպես և № 10, 11 պատումի ասացող Վարդան Բաղեկյանի հավաքատեղին յեղել է փութկապան Ճահենի կամ փութկապան Մանուկի անները, որտեղ մոկացիները հավաքվելիս են յեղել և գիշերները լուսացնելիս։ Բացի այդ՝ Վարդան Բաղեկյանն ու Մանուկ Բիձան մի շարք տարիներ յեղել են Փութկու նպատակների ժողովողներ, ապա ուրեմն շրջել են վանի, Բիթլիսի վիլայեթներում, հանել են անդամ Դիարբեքիրում։

Մանուկ Բիձայի հայերին «խնքաթներից», յերդերից ու խաղերից հիշենք մեկին հետևյալները՝

1. «Սասնա Ծռեր» (գրքեկու գրքին կ'ըսեմ, տասը բերդի կ'ըսեմ)։
2. «Մակաց Մրկոնն» (ձենը, մեկ հուրս խաբար գըտիմ)։
3. «Ալան ալոնց»։
4. Բազմաթիվ պարերգեր ու առակներ (դրի յենք առել մի քանիսը)։
5. «Սըլտան Մուրադը» (3 հեքաթ), «Գևորգ Քաջամորդ» և այլն։

Քրդերին գլուցածներից հիշենք՝

1. «Փայալի փաշա», 2. «Հաւասատ և Զալէ», 3. «Մամո Զինո», 4. «Զըմբուլ Ֆրուշ», 5. «Ման Դըմ-Դըմ», 6. «Մխամանքո Մզնգարեն» և այլն, և այլն։

Վերոհիշյալ, ինչպես և այլ չհիմարկածա քրդերին վերաբերը Մանուկ Բիձան պատմում է նույնպես հայերին, սակայն՝ «քրդերին յերդեր չեն, անոնք կը պահեն հայերին խոսքով բան»։

Այս նյութերը մեծ մասը դեռ չի տպագրված։

«Սասնա Ծռեր»-ի այս պատումը Մանուկ Բիձան լսել և «պատիրեցել» է նա գժվարանում է ասել, թե որ պահն է յեղել նրա վարպետը. նրա ասելով՝ շատերն էլեն պատմում և շատերից է նա լսել։

Պատումիս մեջ վորոշ կետերներ Մանուկ Բիձան յերդում են. Ընդհանրապես ծանր ու տխուր յերգահանգներ են. Առում են՝ ժամանակին նա հայտնի յերգիչ և յերգել, մանավանդ մեծ հաշակ և ունեցել նրա «Մոկաց Մրկոնն»։* Ներկայումս նա այդ կետերները չերդում է ծերունական զգոջ ձայնով։

Մանուկ Բիձան ծեր և. թոքերի բորբոքում հիվանդությունից նոր

* Ֆոնոգրաֆով գրի չի առել պրոֆ. Հ. Աբրելյանը 1911 թ. Կ. Մ.-Ո.

առողջացած լինելով, մեր գրչի առնելու ժամանակ գժվարությամբ եր պատմուժուռացկոտ և գարձել. անդ-անդ անդումներ և անուժ, ապա հիշում և և խնդրում, վոր տեղը գնենք Մեզ թվում և, վոր գրանով ևն բացատրվում վեպի ընդհանուր արևմտյից յեղած չեղումները

Մանուկ Բիձայի մտքենի լեզուն կրել և այլ և այլ բարքառների ազդեցությունը Մլևնուչն վոնը կամ բառը նա ասրքեր ձևվերով և տարբեր հնչյունեներով և առում, արինակ՝ ասաց, ասից, ասեց, նասց, քասց, քսեց, քսից, կ'ըսը, կ'ասը, կ'ասե, կ'ըսե և այլն Տեղ-տեղ նա իր տուբքն և տալիս գրական լեզվին կամ Աշտարակի բարբառին, տեղ-տեղ նախնականեն քրդերեն և այլ տարբ բառերը հայացնում և և այլն

Պատմելե գրի առնելու ժամանակ ինձ օգնում եր Կուլտուրայի Պատմության գիտական աշխատակից Արամ Ղանալանյանը,* վորը կարողացավ հատցնել մյնչև ջնարհզրար ափսոսանքը, ապա հիմանդության պատճառով ընդհատեց աշխատանքը Շարունակությունը գրի յեմ առել յես մինակ

Կ. Մ.–ՈՂԱՆՋԱՆՑԱՆ

Բանահավաքի տոպատումը վերանայել ևնք

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

* № 18 պատումի բանահավաքը Կ. Մ.–Ո.

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

1. Նախերգանք

Ձավթի խնբ՝ Միծ Մհեր Սանասարի տղեն իւ
Ձավթի խնբ՝ Միծ Մհեր ըսած է՝
Ուվ միը պատմուքին անե, մի ողոմի ասու

«Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ կակիդ քաքավորին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Ձեղյա քհանին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Սանասարին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Դալի Բաղդասարին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Միծ Մհերին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Ծինով Հովանին.
Ձառնամ զողոմին ասամ,
Վոր ու ասամ Ջահել Ձավխին»*

* Ձերդ եւ գ. Մ.–Ռ.

2. Գուրդ բնկն առնում և իր վարդու համար Գագիկ թագավորի աղջկանը

Կակիդ Թաքաւորի ախչիկ մ' կ'իլնէր
Ամուր մեկին քանի մ' խաւս ախչիկ կ'առնէր,
Կ'երթա Ախթամարա ծովի հատ կաղն գտնէր
Վոտտանա քարդ բնկ ըմ կ'իլնէր
Են բնկը՝ ադնն էլ կը գա կաղն գտնէր.
Կակիդ Թաքաւորի դախչիկ կը տեսնա.
Վոր կը տեսնա, սիրահար կ'իլնէ վերենա
Վոր կ'երթա տուն.— Հայրիկ, կ'ասի,
Մե ախչիկ տեսէր իմ ծովհատի.
Են ախչիկ տ'առնես ձի.
Են ախչիկ Վանա Կակիդ Թաքաւորի ախչիկն է
Ինե կ'ասի.— Տգա, մինք քարդ ինք, ենիկ խաչ է,
Ուր ախչիկ ինչբե որ առ ձիկ
— Չե, կ'ասը, զռռալ նա, խաթրով նա, են ախչիկ տ'ուզիս
Անգամ չըհար կ'ողորկի Կակիդ Թաքաւորին,
Կ'ասը.— Բա ախչիկ որ առս ձիկ,
Են էլ կ'ասը.— Չի կարելի, յես չըմ հաւա—
Անոնց ուժ հավիլ կ'իլնի քանց Կակիդ Թաքաւորին—
Բնկ կ'ասը.— Կակիդ Թաքաւոր,
Խաթրով իլնի, զռռալ իլնի, դախչիկ որ առա
— Բնկ, կ'ասը Կակիդ Թաքաւոր,
Յես խա քի կռիվ չըմ ձնի,
Յես խա քի պայման ըմ կապիմ.
Կ'ասը.— Յես խա քի կը բաղըշիմ.
Բ'ախչիկ կը առա յիմ ադնն,
Ծոդամ ըմ կը տնես խիտ,
Յեղյա քանանեն կը տնես խիտ,
Յես կը առնիմ մա ձիկ.
Մե պզտիկ եկեղցի մ' չինինք.
Բ'ախչիկ Ստա ար ոսկնքով,
Յիմ ադնն Ստա ար ոսկնքով.
Չի մինք քարդ ինք, տուն խաչ

3. Սանասարի չիվ Բաղդասարի ծնունդը Հարեվ կդզում. Ցուցիր գնում են, մի ամայի տեղում իրենց համար տուն են օթևում

Կ'երթան, տարի մ' կը մնան հնաւնխ.
Ախչիկ խաբար կ'անը կակիդ թագավորին,
Կ'ասը.— Ձեռ ըսաի չիմ մընա.
Դիշերվան գամեն կը պիրիս, դի խանիս տուս.
Վոր կը խանի տուս, ախչիկ կ'ասը.
— Ձի մը տանի Հախթամար, դի տար Հարեվ.
Ախչիկն ել վոր կ'երթա, ծոցվոր կ'իլնի.
Ճամփեն կը մնա իրիք-չորս տարի պահուկ.
Ճամփեն կը պիրի երկու տղե մ' ջըմը'կ.
Մեկի անուն Սանասար, մեկի՝ Բաղդասար.

Տղինիր որական կը մեծանին.
Տաս տարի մ' վերա կ'ընցնի.
Տղինիր մե-մեկու կ'ասին.
— Մինք նսա տեղ չինք մնա. մինք նսա տեղ ինչ ա'անինք.
Մինք նսա կղզու մեչ, նսա ծովու մեչ չինք կանա մնա.
Տ'իլնինք երթանք հայրիչ սահմանն, հայրիչ խոր.
Կ'իլնին կ'երթան չոլ-չատան տեղ ըմ.
Տղինիր կ'ասին.— Մինք չինք երթա հայրիչ գեղիր,
Մինք նսա տեղ մե խամա տուն կը շինինք.
Ծոս գարկին, ուրինց խամա տուն կը շինին.
Ճոճ-ճոճ քարեր կը պիրին, կը շինին.

4. Ալեվոր տան տնուցը դնում ի Սասուն

Սանասար կ'ասի Ցեղյա քահանին.
— Ցեղյա քահանա, ու մալհազա անինք,
Տըսնինք՝ մեր տան անուն ինչ ու տնինք.
Եվարին մըչ մահլըղին կը տեհանան՝
Մեկ խալխալը մարթ ըմ կը գա.
Ցեղյա քահանին տեհնա Սանասարին, կ'ասի.
— Նսա խալխալը մարթ ըմ պիրինք մեր տուն մեչման,
Տեհանանք՝ ինչ անուն կը կընանի մեր տան համար.
Կ'իյան, նսա խալխալը մարթ կը պիրին ուրինց տուն.

Ալլահուն մարթի կը ձնա, գիշեր ենտեխ կը քընի·
Աբլհասն վոր կ'իլնին վեր, Սանանասր կ'ըսը.
— Ա՛լլահ՛ը, իլի վե՛, երթանք, միր տան պալտր կան պանք·
Թամաշա արը՛, անուն ըմ տիր միր տան·
Կ'իլնին կ'երթան տան չուբա պալտր կը գըվըռին·
Ալլահ՛ը վոր կը տխնա են քարիր պատ շարած՝
Կ'ըսի.— վա՛, ետա ինչ տասում քարիր էն...
Կ'ըսը.— Ել անուն մի՛ տիր, բա՛ս ը·
Միր տան անուն ար ձնա Սատուն·
Դեր տղեկիր կը սկսին հայհոյ անիր չինել·
Ժամ կը չինին, ժամտուն կը չինին, կ'իլնին խաչապաշտ·
Ենպես կ'իլնի անուն կը տառնան, կը գանգիննան·

5. Աշգուզի թագավորի աղջկա ճամակը Սանասարին՝ բերողը ձգում և Բաղդասարի յերդիման

Ա՛ղըբում մեկ խանըմ ըմ կ'իլնի·
Ենու անուն կը լսը, կ'ասը·
«Ենտա մարթու անուն կտրիճ ի,
Յես ենու թուխտ ըմ տը հորոզկիմ,
Են գա, յես խավանիմ, գան առնիմ»·
Խանըմ թուխտ ըմ կը գիրի, կը տա մարթու մ', կ'ասը·
— Ա՛յ մարթ, տար, թը՛լ Սանանասրը՛ հայդա՛ վեր·
Են մարթ, վոր կը պիրը՛, չճանաչը·
Կ'առնի, կը թալը՛ վեր Բաղդասարը՛ հայդա՛ վեր·
Բաղդասար խըլհասն կ'իլնը, կը տխնը՝
Թուխտ ըմ կա մանչ անաի հնդին·
Թուխտ վոր կ'առնը, կը կարտա,
Կ'ասը. «Ջանըմ, մինք ախպեր ինք,
Ես հիչ խաբար տվիր ի, դի չանիր·
Սանանասր գախտիկ գան ըմ կ'առը·
Յան իս գան կը սպանիմ, յան նա գի»·

6. Բաղդասարը գայտանում ե, ժամ չի գնում. Սանասարն ու Բաղդասարը կռվում են յեվ ապա հաշտվում

Աբլհասն զըմեն կ'իլնին կ'իյան ժամ.
Բաղդասար չերթա ժամ·

Մեկնելիր կ'երթան ժամ, կը տեսնան՝
Զըմեռն ևնա տեխն ի, Բաղդասար չկա։
կ'ըսեն.— Անվրե՛ Բաղդասար չեկը ժամ։
Մեր կ'իլնի կ'երթա, կ'ըսը.— Բա՛ղդասար,
ժամ կ'ըսեն, ժամ չըս եկա. ի՞նչ իլիր քե՝
Բաղդասար կ'ըսը.—Մարե՛, չուտ գընա տուս.
Հոդիս տուս ելի, յան չե քե կը սպանիմ։

Հավարին Սանասար կը գա տուն, կ'ըսե.
— Ախպե՛ր, վրե՛ կ'ըրկիս, վրե՛ չըս եկա ժամ։
Բաղդասար կ'ասը Սանասարին.
— Յան յես քե ը սպանիմ, յան տու պիս
Սանասար կ'ըսը.— Անվրե՛, սարքը ի՞նչ։
Բաղդասար կ'ըսը.— Տու գախտիկ պա մ' կ'անես.
Տու Թուխտ ըմ հերոպկիր իս ան ախճկան,
Անվրե՛ տու ձի խարքը չես տվիր
Սանասար կ'ասը.— Ախպե՛ր, վալե, յես խարքը չեմ.
Յես Թուխտ չեմ դըրիր, յես խարքը չեմ,
Բաղդասար կ'ասը.— Չե, խըլխատն յես, տու ը կռվինք=
Յես, տու ը գալաշ կըպնինք, հիրուր գերկինք.
Յան յես քե ը սպանիմ, յան տու պիս—
Զունքե ենիկ խաստոդամատ ի, դամատ ծուռ ի,
Ենու կ'ըսին Գալու Բաղդասար—

Ելան մե հավչին կռվան
Բաղդասար ասկն վոժ ուներ, կը գերկեր Սանասարին.
Սանասար չգերկեր Բաղդասարին,
Ուր մեռ վե կ'ըսեր. «Բալքե մ' ատաբը ձենե»։
Բաղդասար չատաբը, հուրու կը գերկիր
Սանասար ինք գինք կ'ասը. «Զատ՛ատաբը»։
Վի կ'իլնի զԲաղդասար կը գերկը՝ գեսին,
Վոր կը գերկը՝ գեսին, Բաղդասար կ'ըսը.
— Սանասար, Թուղ, Թուղ, յես ք'ախպերն իմ.
Աբե, բարըշինք, իլինք վե, տու վըր ձի կըտրիճ իս
կ'ըսը, ախպե՛ր, յես քի գատուր ավիր իմ,
Իլի վե, գընա, ևն խանում տու, պի։

7. Սաճառարճ Աւգուստի դիմաց տեսնում է կախարդված մարդկանց յետ ետ ցցից տեղեկանում է աղօթքն առնելու պայմանների մասին

Սանճառը կ'իջնի կ'երթա, կ'ըսը.
— Ախպէր, չուր քաշն որ եկա, եկա.
Ձէ, յես նեղութենէն մեչ կ'իջնիմ,
կ'առնիս, կը գնա ձի ոգնութուն։
Սանճառը կ'իջնի կ'երթա թախ Աւգըրում.
կը գա, կը խառնի Աւգըրումա քաղքի դիմաց։
կ'իրիկնի, կը տիանա, ինչ.—
Ենտեղ քառուն մարթ, Ջահել մարթ, սըմրկիրնա մարթ
Չուր մեչք ինի քիր ատրցած, կայնած Ենտեղ։
Ըսաց.— Պարէվ ձի, մեծ մարթիր, Ջահիլնիր։
Ըսաց.— Աձու պարին, վեղ չուր կնսրնին,
Ջահել ոդա, ատն ալ կ'իջնիս մի հաբրնա։
կ'ըսը.— Ջանըմ, ըսեք՝ ինչ պան իլիր, եսապես իլիր իր։
կ'ասը.— Սանճառը, եսասեղ խառնում եմ կա.
Ենի հնարք ունը՛, սհրըբանդ ը՛.
Ենու գնրգին սան գըլնա վոսկի խնձոր եմ կա գնրկուկ։
վով գա, ծիով գա, եսա խնձոր պիրի տակ,
Տիր մ' ալ ծիով գա, պանցըրնա, ատն ատ տեղ,
կանա գխառնում առնը՛ ատ խառա։
Սանճառը կ'ըսը.— Ինչ ըմ, վոր անցկուն ի,
Եսա գիշեր որ գամ, Ջնրբրվիմ։

8. Սաճառարճ առնում է վոսկի խնձորը

Գիշեր կ'իջնի, կ'երթա գնրգին առիչ։
Ձձին կը տաքացըցը՛, վեղկացը՛, կը Թռնը՛,
Ջվոսկի խնձոր կը պիրը՛ տակ։
Տիր մ' ալ կը տաքացըցը՛, կը Թռնը, կը ատն ատ տեղ,
կը գա, քիրի մարթի մոտ կը ատնձի չուր լուանա։
վոր կը լուանա, կ'իջնի կ'երթա գնրգին մեչ կը կայնը՛,
Ատնըմ կը կանչը՛.— Ա՛յ մարթ, ատ Ջշ կ'անըս եսա տեխ։
կ'ասը.— Ջը խառաը իմ խիլիր։
կ'ասը.— Լավ, ձի խառաը իս խիլիր, կանամ ձի Ջընաը տաս։
Սանճառը կ'ասը.— Լավ։

Ջանըմ կ'ասը.— կը տխանաս դաբդխի գըլուխ ենաս խնձոյը.
Թի պիրիցըը ան խնձոյը տակ, լավ.
Թի չկաբցար, քի կ'անիմ քեր։
Սանասար կը գա, գծին կը խաղցը՝ կը տաքացը՝
Կը թոբցը, կը պանցըընա դաբդխի սան գըլուխ,
Խնձոյը կ'առնը, կը պիրը տակ, ել մ' ել կը տնի ուր տեխ.
Ջանըմ կը կանչը, կ'ասը.— Դե, արի պանցըը։
Սանասար կ'ելնի, կը գա մատ ան։
Որ ըմ երկու մատ ենու կը ճեա։
Ջանըմն ել թաքավորի ախճիկ կ'իլնի, գիտես,—
Կ'ասը.— Ենպես երթանք, վոր քաղաք չհկանը՝.
Վոր քաղաք ականը՝, չըն թը՛դնը, տու ձի տանըս։
Կ'ասը.— Ես չըմ վախանե, ես ցիրեկով տ'երթամ։

9. Սանասար Բաղդասարի ոգեւորյամբ կոտորում է կռվող բաղաքացիներին

Ցիրեկով վոր կ'իլնի, մըչ քաղքին կ'երթան,
Բաղքը՝ մարթիր գըմմեն կ'ականխին,
Խնդրուց կ'իլնին կռիվ, չուրս պատիր կը պռնին.
Դաբդխի առէչ չաբուն կը պռնին, կը կաչխին։
Սանասար անունց մեչ կռիվ կ'անը՝.
Կը կուտուբը՝, կը ճաբտը, ինք կ'երթա։
Բիչ մ' ել կը ճեա, կ'իբիչկը՝, կը տխանա՝
Դաբդխի կողմեն մարթիր կը փախնին, կը գան քաղքի մեչ,
Բաղքի տանեն կը փախնին, կը գան դաբդխի առէչ։
Մեկել կողմեն Բաղդասար կը գա, կը ճաբտը գմարթիր։
Բաղդասար կ'իբիչկը՝ Սանասար կը տխանը, կ'ըսը.
— Ախպեր, հիռճիվ պռնը՝, յիս ըսաոց կը ապանիմ, գամ։
Անցկուն վոր ապանիցին, քաղքի միլաք փախավ.
Ջանպախ պացվից, ելան, ևկան քաղքից տուս։

10. Աղջիկն առաջացնում է կախարդված ուզեկացներին. նրանք հրաժարվում են աղջկա համար կռվելուց։ Սանասարի վարձի՝ Առյուծ Միհերը

ԵՒկան մատ ան մարթիր, ինչ կես իլիր ին քեր։
Սանասար հասց.— Կնիկ, ես մարթիր, վոր ևկած ին,
Տու տ'անես ան ատրճ, ինչ ատրճ վոր ևկած ին.

Ես մարթիր ու ժրացըցիս, երթան ուրինց անիր։
Թէքնաւորը՝ ախչիկ գմարթիր ժրացըցոց։
Մարթիր վոր ժրան, ելան վե, Սանասար ըսաց.
— Ա՛յ մարթիր, ում են խանըմի տպով իք իկիր։
Ըսաս մինք ու կավինք. վով կարը՝ թըղ ու իր խամար առնը՝
Մարթիր ըսին.— Ախպեր, մինք չընք կը՛ռվի.
Կնիկ պիրող իլնի քու խամար։
Տու գմեզ ժրացըցիր, բոլ ը,
Պիրող իլնի քու խամար։
Ասին, ելան տուն, ելան, խասան Սասուն։

Ելան Սասուն, ժամանակ ըմ վերա ընցավ.
Ելավ Սանասարը՝ մեկ տղե մ՝,
Անուն տրին Մհեր.
Անուն տրավ Առուծ Մհեր։

Բ

ԴԱՎԹի ԿՈՒԻՎ ՄՄՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

11. Միհրի վոդիները՝ Մարա ձրագ Միհիր չավ Սասցո ձրագ Դավիր

Մհեր քնասուն տարի թէքնաւորութուն արավ.
Մհեր ըսկըն կը շախեր Սասուն,
Վոր մարթ կը վնախներ, Սասուն մոռխասներ.
Զուրս պիլեր զաֆտեր եր, ու ծեռաց տակ կը պախեր։
Հավք չըր կանա երթեր ննաեխ։

Են մեկ ել որ Մհեր ըսաց. «Տեր Աստված,
Ցիս Սասուն շախեր իմ քնասուն տարի,
Ցիս ժառանգ չունիմ, տղե մ՝ չունիմ»։
Աստուծմըն մեկ ժառանգ ըմ խնդրից.
«Տղե մ՝ իլնի, ելնի վեր Սասնա տաճ»։
Գիշեր երազ մ՝ ախասավ, ըսաց.
«Մհեր, Մհեր, տղե մ՝ ա՛լնի քի.
Ամա չըս ուրախանա վրեն, շուտ ու մեռնիս տու»։
Ասկոն ըսաց, դընաց։

Մըսրա ձայն Մելիք մեռավ։
Մըսրա Մելքի կնիկ, Մըսրա խանըմ, ըսաց.
«Մհեր կաբիճ ես, առուծ ես, Մելքի պես դուխդ ես»։
Խանըմ խաբար հաղորդից Սասուն, ըսաց.
«Մհեր, Մըսրա Մելիք մեռիր. արի, քի առնիմ»։
Մհեր ելավ ’սաց ու կնկան։
Կնիկ ըսաց.— Մհեր, մ’երթաս
Մհեր անկոճ չերաւ, գընաց Մսըր.
Հանդեր Մելքի կնիկ առիւ։
Առիւ, ժամանակ ըմ ընցավ, տղա մ’ ելավ.
Տղի անուն խոի Մելիք։

Տարին թըմըմավ. Մհեր կ’իյա կան գալու.
Տարցավ, եկավ, կայնավ վըր առան.
Տնեն ձեն կը գա, մեր կը խաղցըցը ու տղեն, կ’ասը.

«Մելիք, մեր մեռնի քի,
Սասնա ճըրագ ընցըցը՛.
Մըսրա ճըրագ վառիցը՛»։

Մհեր առան վըրեն կը լը՛.
Վոր կը լը՛, մալհազա կ’անը, կ’ըսը.
«Ոհո, Սասնա ճըրագ ընցըցը՛.
Իս եկա Մըսրա ճըրագ վառիցը՛».
Մհեր վոր կը մտնը առէն, կ’ասը.
— Կնիկ, ել իս ա’երթամ Սասուն.
Ել իս չըմ ճնա ըսաս, Մսըր
Մելքի կնիկ կ’ասը.— Մհեր,
Ճիս կ’ուզես, վոր տղա մ’ իլնես ճի.
Իս կ’ուզես, վոր ժառանգ ըմ իլնես Մըսրա.
Իս կ’ուզես, վոր Մըսրա ճըրագ չընցնես.
Վոր ճի տղա մ’ ելավ, բռլ ի, կ’երթաս, գընա։

Մհեր քոռ-փոշըմեն ելավ եկավ Սասուն։
Վոր եկավ, խասավ առէն, կնիկ ետաց.
— Մհեր, ալ առ ճի իրիկ չես,
Տա ճի պաց թըղիր, գացիր Մսըր.
Ել իս քի չըմ ուզի, առ ճի իրիկ չես.
Ել առ չգաս մա ճի, չե կարիելու։

Մհեր ըսաց.— Ի՞նչըվս անինք, ի՞նչըվս չանինք.
— Պիըինք, ըսին, տերտերնիր բարձավինք,
Գան, ծըղի արծակում անին։
Տերտերնիր պիըին, ժողվիցին.
Պիըին, տարին հաշվիցին մեկ ամիս.
Ամիսն արին մեկ շաբաթ.
Շաբաթն ել արին մեկ օր.
Արին մեկ օր, արծակում ավիցին։

Զուրս-խինդ տարի ճաց,
Նուր ան ընկիկ ելավ աղվէ։
Տղե մ' ելավ, անուն արին Տավիթ։
Մհերն ել մեռավ, կնիկն ել։
Տավիթ ճաց վըր ցըղին.
Մնաց մաս խրտխռիր Մինով Հովհան։

12. Դավիթը Մարա Մելիքի տանը. ճա բռնում, ձգում և Մելիքի հոլը. Մելիքի վախը Նրանից

Մինով Հովհան ըսաց որ կնկանն.
— Կնիկ, վ' ի՞նչըվս անինք, վ' ի՞նչըվս չանինք՝
ԶՏավիթ չընք կանա շախինք։
Հովհանն կնիկ ասաց.— Հիլի, տար Մարը.
Սատնա Մհերի խաթըր՝ խամար
Ան ընկիկ զՏավիթ որ շախը՝։
Առից, տարավ Մարը Մելքի կնկանն մոտ։
Մելքի կնիկ ըսաց.— Մինով Հովհան,
Ան խոր՝ Մհերի խաթըր խամար,
Երկու տարի որ շախիմ. քը՛ղ, ղընա՛։

Երկու տարի Տավիթ ճաց ենտեղ։
Տավիթ որս կը մեծանար։
Մելիքն, որ մարթիր կ'երթեն,
Ամեն որ մեղնի մեչ հոլն կը խաղնա։
Տավիթ ըսաց.— Մարե, Մելքին 'նա, քըղ ձի տանը՝։
Ձիս քամաչա անըմ, տխանամ՝ ի՞նչըվս կը խաղնա։
Մելիք տարավ զՏավիթ տրից վեր են կնգանն,
Ինք եկավ, մեղնի մեչ հոլն կը խաղնա։

Իրիկուն գացին առուն,
Մեր ըսաց.— Տավիթ, թամաշա արիր.
Ասաց.— Ձըմ ուրիր, ձի հետու տեղ մ' իսիր.
Մեր ըսաց.— Մելիք, մոռառուն,
Խըվխուն վոր կը տանիս, քիչ ըմ մոռխաս տիր,
Թըղ տղին թամաշա անիր.
Են մեկել որ ըմ Մելիք տարավ,
Մեկ արտաչափ ըմ զաւը'ն խիր.
Ել մ' ել Տավիթ իրի առուն, պա մ' չտիսավ.
Ել մ' ել մեր ըսաց.— Մելիք, ք'ախպերն ի Տավիթ.
Տար, մոռխաս տիր, թըղ թամաշա անը'.
Մելիք ըսաց.— Լավ, մարե, կը տանիմ.
Կը տանիմ, անիմ են մեյդնի մեչ,
Շիանք թըղ գան, փըրճըղկին, են չան հեթիմ ապանին.
Պիրի, իսի մանչ պազարին, ուրինց խաղալու տեղ.
Մելիք վոր ուր հել եգեր, եկավ Տավիթի մոտ.
Տավիթ առից են կանտա, թալից, քաղքից եկան ուռա.
Մելիք վազկից, եկավ, կանչից.
— Վայ-վայ, են չան հեթիմ ու ապանիմ.
Մելքի ընկիրնիր թաիան վերին, 'սիցին.
— Չայ, Մելիք, զՏավիթ ու ապանիս.
Են հեթիմ ի, մեղք ի— Պաց իթող.

13. Մելիքը փորձում է Դավթին կռակով յեվ վոսկով

Հիրիկուն վոր եկան առուն, Մելիքն ըսաց.
— Մարե, են չան հեթիմի գըլեխ ու կտրիմ.
Են չան հեթիմ ճեղ տի տա.
Տը ապանիս, վոր ենու ժառանգ չիլնի,
Գա, վըր Մըսրա քաղքին բալա իլնի.
Մեր ըսաց.— Մելիք, վրտիր,
Տավիթ երեխա յը, պա մ' չդիտը.
Անդրևա ը, պա մ' չտիսիր ը.
Եսաց.— Վոր անդրևա ը, պի, փորձինք, չարըլինք.
Պի, քանի մ' գործի-կրակ լցինք, քանի մ' վոսկը'.
Տավիթ վոր անդրևա ը, տիանանք՝
Շեև կը սա թախ կրակ, թը' թախ վոսկը'.

Վոր ծեռ տարավ Թմխ կրակ,— անպըճոտ ը.
Վոր ծեռ տարավ Թմխ վոսկին,— ֆեհմմով ը, չմր ը։

Պիրին, քոան մ' կրակ տրին, քոան մ' վոսկը՝։
Տավիթ ծեռ տարավ, վոր տը տաներ Թմխ վոսկը՝,
Մրիշտակ եզեր վըր ծեռաց, տարավ Թմխ կրակ.
Ծեռ պալդից Թմխ կրակ,—ծեռ եղեցավ.
Վոր եղեցավ, տարավ Թմխ պերան.
Լիզուն եղեցավ, եղավ Թլոր.
Եղավ Թլոր Տավիթ։

12. Մհլիքը պատվիրում է ապանել Դավթին. սա հարբում է փահլեվաններին յեվ մթասին վերադառնում են Սասուն

Տավիթն ել որտկան կը մեծաներ։
Ամուր մհլին Մհլիք ըսաց.— Մարե,
Ես չան հեթիմ յան կը ապանիմ,
Յան կը հարդրվիմ Թմխ Սասուն.
Թըզ եղթա, իրիս չխանամ։
Մեր ըսաց.— Մը ապինը, Թըզ եղթա ուրինց առուն։
Հարդրվե՛, կանչը՛ Բաթմանա Բաղին, Ճարտու Ծերըդ,
Թըզ գան, առնին, տանին Թմխ Սասուն։
Վոր պիրին, ճամպահաւ տը անին,
Մհլիք ըսաց.— Բաթմանա Բաղին, Ճարտու Ծերըդ,
Կ'տանիք, կը տանիք վեր Բաթմանա կամընջին,
Կը Թալեք ճաւ, չտանեք Սասուն։

Վրցին զՏավիթ, ընգան ճամպահ։
Վոր եկան, Տավիթ ճամպահաւ խիտ չերթա,
Բեմ եասախս կ'երթեր, բեմ ենասխս կ'երթեր,
Զխոսեր, կ'երթեր ու կ'երթեր...
Վոր գացին, խասան կամընջի մոտ,
Բաթմանա Բաղին եսաց.— Ճարտու Ծերըդ,
Արի, մեկ ընգնինք հիտեվ, մեկ՝ հերթիվ,
ԶՏավիթ առնինք, Թալինք ճաւ։—
Տավիթ խելոք եր, կը խասկըներ ուրուրց միտք։—
Վոր եկան, եկան կամընջի կես,
Մեկ ընցավ առէշ, մեկ հիտեվ,

Գանին գՏաւիթ, վոր թլին ձաք,
Տաւիթ ծեռ ըմ եթալ մեկ Բաթմանա Բաղեն,
Ծեռ ըմ եթալ ձաբառու Ծեղբզ, բսաց.
— Վայ, ատ կ'ուզեք, բզձի թալեք ձի՞ը...
Գանից, վոր գԾեղբզքիր թալի ձաք,
Ծեղբզքիր բսին.— Վայ, Տաւիթ, միզ չԹողիս ձաք.
Ջե մինք քո խոր խզմաթքարն ինք.
Մինք քի կը տանինք Սասնա քաղաք
Եան գացին քաղաք, եկին Սասուն։

15. Դավթի մանկական չարությունները

Տաւիթ խաա ձժիրուն կ'երթեր, կը խաղեր.
կ'առներ զձրժիր, կը տաներ, զծառիր կը կոտեր,
կ'բսեր.— եկէք, զբրընզոզալ տանք
Գացին ասր. Տաւիթ ծառիր կը կոտեր,
ձժիր կը գեն, կը ճառեն ծառիրու վերեն.
Տաւիթ կը քըղներ, ձժիր կ'երթեր.
Մեկ վառ կը կուտրին, ծեռ կը կուտրին.
Մեկ գըլիա կը կուտրին, վիզ կը կուտրին.
Սասնա ձժիր կուտուրից, ամխիամից,
Գեղականք գացին մա Ծինով Հովան գացին.
— Հովան, Տաւիթ գիրծի մ' տար, տիր.
Զգա միր ձժիր ամխիամ։
Տաւիթ Սասնա քաղքի ձժիր գըմեն կուտուրից,

16. Դավիթը գառ ճարած չեվ ճախարդ

Ծինով Հովան եկավ կանչից գՏաւիթ,
Բսաց.— Տա՛վիթ, խրոխպեր կուբրան ը քի,
Աբի, քի անիմ քաղքի գանատած, կ'ուզիա։
— Ամ, խրոխպեր, կ'ուզիմ։
Ծինով Հովան եկավ, պողպըտան սըղ ըմ խաու չինել,
Պողպըտան կըտա ըմ խաու չինել։

Տաւիթ կ'առնը պողպըտան սըղ, պողպըտան կըտա,
Քաղքի գանիր կը տանը տարի գըլխա, կը քըղնը։
Ադվըսքաիր, լաղըտարաքաիր տարից-քարից եկան,

Թուղքն ալ ինց պիտիր, կը փախչին, հա կը փախչին
Տալիթ վազկից անունց հետև,
Բըչից, խպի, եվից մինչ գետնիրուն
Հիրկուն առից, խլի քաղաք
Ծինով հովին գլխից հերճիվ,
Իրիկվից, ախսավ՝ պողպատե սըղ կաբըտվիր ի,
Ինքան կան իվիր ի սարիր-ծորիր
Նսաց.— Տալիթ, խրոխպեր կուբրան ի քի,
Իո՞նչ կ'ըսիս, չըս նեղացիր
Ըսաց.— Խրոխպեր, նսա բալ հուվիր չըն տեսրի.
Նսա բալ հուվիր շատ կը փախչին, դի նեղացըցին
Նսաց. «Եսիկ չեյմ. ոգին խիղճ ը»
— Տալիթ, արի, քե ենինք նախրորգ, գլխա նախիր

Տալիթ նախիր տարալ սարվե
Տիր ըմ վոր կը պուռեր, կը կանչեր,
Արջիր, գելիր, ուշապքիր, պըլընգտիր՝
Ինչինց պիտիեն կը փախին տեսա
Տալիթ գըտը՝ որ տավարնիրն ին,
Կ'եվնի, կ'ըչնը անունց հետիվ.
Ականն կը վազկացը՛, կը ֆըռըցը՛,
Ջանավարքիր լիզունիր կը ֆալին տեսա, կը տեսրին,
Կը պռնը՛, կը պիրը՛, խառնը՛ նախրը մեչ,
Հիրկուն վոր խլը քաղքը մեչ, կանչից.— եկեք,
Վով կով մ' ունը՛, արիր իմ երկու.
Վով երկուս ունը, արիր իմ չուրս.
Վով չուրս ունը, արիր իմ ութ.
Վով խինդ ունը, արիր իմ տասս
Ծըր կովիր շատացըցիր իմ.
Արեք, ծըր տավարքիր տարեք տուն
Ֆանդքի մարթիր կը գան, կ'իրիչկին, կը տխանան՝
Եսիկ տավար չին, եսիկ ջանավարքիր ին,
Փախան, գացին, մտան որինց տուն.
Մեկը չիգա, մանը՛ մինչ տավարին
Վոր մարթ չեկավ, որ տավար տանը՛,
Տալիթ բիճուն բըռնավից վըր իրա,
Մե ճաչ քար իմ հոի գըլխու տակ պըրց,
Ինք կուղ եյավ, պառկավ, քընավ

17. Վ.որսորդություն. խրատատու Պաուլիճ չեվ վորսաճեղ

Աբլխաուն դեղականք նկան մա Հովհան գացընդ,
Ըսիցին.— Մի տավար թըղ չանիը, ալ բան ը՝
Մինավ Հովհան կանչից զՏավիթ, ըսաց.
— Տավիթ, խրոխպեր կուբրան ը քի,
Բան ը, ալ մ'երթա մըտ տավար.
Աբը՛, գընա, նիտ-անիղ ըմ առ,
Գընա, արտիրու մինչ լայր սպանը՛;
Տավիթ գընաց, նիտ-անիղ մ' առից, խոխ՝

Պաուլ պուճուր արտ ըմ կուբրիկ եր ցանե.
Տավիթ մանչ կուբրին կը քաշվալը,
Չկուբրիկ կը փըրճըղիը՛, կը տրուբը՛;
Պաուլ եկավ, տիսավ. ինչ կը տիանա.—
կուբրիկ հըմին ճըխմըռտիր, կուտուբիր,
Ըսաց.— Գըրող-մախ քի տանը՛, Թըլեր Տավիթ,
Տա ծռեռ խս, ատ ինչ կ'անիս՝
Խս խմ, ատ պշուռ մ' կուբրիկ,
Ատ եր իմ ծմատն պաչար,
Ան ել արիր խս գնանուն խոսատ՝
Քի ինչ ա՛տնի ատ պուճուր լայրիր.
Գընա, քա՛ խրոխպեր ըսա՝ քի տանը՛ նեճիր՝
Քա՛ խոր նեճիրն սար կա, Սիվ սար կա, գընա, ըսա՛
Տավիթ եկավ գընաց Մինավ Հովհանի մոտ.
Ըսաց.— Խրոխպեր, ձի տը տանիս Սիվ սար նեճիր՝

Խրոխպեր կը տանը՛ Սիվ սար նեճիր՝
Տավիթ կ'իրիչիը Սիվ սար, կը տիանա՝
Բնգան քեչուկ, գոլգոթա չինուկ,
Հըմին ջին-ջանավար կա հանտեղ՝
Կ'ասը.— Խրոխպեր կուբրան ը քի, Տավիթ,
Ջոլկ, մեկ խատ ըմ քի սպանա՝
Կ'ասը.— Խրոխպեր, եսիկ եղսիր խ՝
Մարթ եղսիր կը գընա, կը սպանա՝
Տավիթ ալ կոխուն կը խանա,
Կը քաշը երկինք վե, կ'ասը. «Հոյ-հոյ»...
Հըմին ջին-ջանավար կը փախչին.

Նոքեն կը գալկէր, վերն ոխշար ըմ կը ապանը՛,
կը պիրէին, կ՚իրէին, կ՚ուտէին
Գիշեր կը մընէր, կը մնար հանապազ, կը քընէին

Խրոխտիր ալ մեռ վե կ՚ասը.
«Վ՚երնչըխ անիմ, վոր Տաւիթի տաճարը՛.
Գիրիմ, անոն վեշ անիմ իմ գլխոս տակ, քընիմ»
Հիչ կը տաճարը* Տաւիթի

18. Մարութա վանքի վերաշինումը

Մութ գիշերվան մեչ կ՚երիշկի, կը տեսնա՝
Զառնուց կանաչ-կարմիր լոս կ՚իջնի, կ՚իճնի, կ՚իչնի, կ՚իճնի
Տաւիթ կ՚ասը. «Վոր խրոխտիր ակռխա, չիքդղնի՝ երթամ»
Ալ տաղտակ կը խանա, ալ քեվնը կը կարի, կ՚երթա
Գրնաց են լոսոս մոտ, տեսավ, իրենչ.—
Մարմար քար պաղվիր ը, են լոս կ՚իջնի, կ՚իճնի
Եկավ եկավ տալ խրոխտիր քընուհ.
Նստավ ուր խրոխտիր գլխոն, ըսաց.

«Վիր իլի, խերախտա խրոխտիր, վիր իլի,
Ինձ չունիմ, երթ խերուքին.
Տեր չունիմ, երթ տիրուքին.
Ախպեր չունիմ, երթ ախպերուքին»*

Ըսաց.— Խրոխտիր կուրցան ը քի, իրենչ կըպի քի
Ըսաց.

«Խերախտա խրոխտիր, երազ մ՚ իմ տեսիր.
Մըչ երազին պահանջիր իմ»*

Չնաց՝ գընացիր իմ, նստց՝ երազ մ՚ իմ տեսիր

«Տիառ՝ մարմար քար պաղվիր եր,
Լոս-կամար կայնիր եր»*

Կ՚երնին կը գան հանտեղ
Տաւիթ կ՚ըսը.— Խրոխտիր, հան քարն իր

* Ցերգ ևն կ. Մ.-ի.

— Ըհ, խրոխտիկը կուրբան ը քի, կ՚ասը՝
Եաա Մարութա Պետրոս Աւաժաժին ի.
Քու խոր վանքն ի, Մըսրա Մելիք եկի, քանգիր ի
Եասց.

«Խնբախնուա խրոխտիկը, խնբախնուա խրոխտիկը,
Քենեն կ՚ուզիմ խինդ խարիր ուսաա, գին, քար կտրին.
Քենեն կ՚ուզիմ խինդ խարիր ուսաա, գին, պատ չարին.
Քենեն կ՚ուզիմ խինդ խարիր մարթ, գին ճար պիրինա։*

Խրոխտիկը ըսաց.— Տաւիթ, խրոխտիկը կուրբան ի քի,
Ես վոր ատ չինիս, անցկուն ատը չինիս,
Վոր մեկ դիշերվան մեչ լսիաս,
Խըվատուն պատարաք մեչ անին։
Շինիցին։ Տաւիթ ըսաց.

«Խնբախնուա խրոխտիկը, խնբախնուա խրոխտիկը,
Քենեն կ՚ուզիմ յոթ խատ վարտապետ.
Քենեն կ՚ուզիմ յոթ խատ երեց.
Քենեն կ՚ուզիմ յոթ խատ ամոզ սարկաւագ»։*

կը պիրին. կը անը վանք, պատարաք կ՚անը.
Ճարտու Յեսրդ, Բաթմանա Քուղեն՝
կ՚անը՝ գարդնվան-նորատար,
Ինք կը գա տուն, քեֆ-ուրախութին կ՚անը։

19. Մարա Մելիքի ճերիզներն խաթիւրյամբ ավերում են վանքը. սարկավագը բոր և բերում, Դավիթը կրկին վերաշինում և վանքը

Ջընաբ կը գընան, Մըսրա Մելիք կը լսը՝
Մարութա Պետրոս Աւաժաժին Տաւիթ շինիր ը՝.
կ՚ասը. «Էն գըդին ճոզ սըվիր ը»։
Կ՚իլնը դիշերով, ու ֆերըզքիր կը կանչը՝,
կ՚ասը.— կ՚ելնիք կ՚երթիք Սասնա երկիր,
Մարութա Պետրոս Աւաժաժին կ՚ավերիք,
Բիթիան կը ճարտիք, կը ապանիք, կը թալնիք, կը դիք։

* Ներդ են Կ. Մ.-ի.

Գիշերվան մեչ կ՚իջնին կը գան Սասուն,
Թաթխլուքընով զվնք կը պնդան,
Մարութա Պետոը Ասլամաձին կը քնդին,
Կը սլսանին զվրտապիտքիր, զերեցքիր, զսարկավագքիր,
Մեկ սարկավագ կը պակսվի խաչուս մեչ,
Ուրիշնք կ՚ելնին, շուտ ըմ կը փախնին։

Սարկավագ խըվտուն ժամու չապիք կը թաթխի արյունի մեչ,
Կ՚առնը չապիք, կը գա մա Տավիթ։
Տավիթն ել խմէր, խմէր, քուռ-սարխոշեր, քընիր։
Սարկավագ կայնավ վըր գըվտուն, ըսաց.

«Տավիթ, վեր իվի, Տավիթ, վեր իվի.
Զվանք թալնիր, մի վրտապիտքիր սպանիր,
Վեղարքիր մըչ վանքին մեջտ Աստիր»...*

Տավիթ ըսաց.
— Ձեռնկն ի պակաս, ծեքն ի պակաս,
Տվիք, սարկավագ տանը՛ վանք։
Սարկավագ տիր մ՚ել ըսաց.

«Տավիթ, վեր իվի, Տավիթ, վեր իվի,
Զվանք թալնիր, մի եղեցտիր սպանիր,
Փիլոնքտիր մըչ վանքին մեջտ Աստիր»...*

Տավիթ ըսաց.—
«Ձեռնկն ի պակաս, ծեքն ի պակաս,
Տվիք սարկավագ տանը՛ վանք։

«Տավիթ, վեր իվի, Տավիթ վեր իվի,
Զվանք թալնիր, սարկավագտիր սպանիր,
Աբանուտ չապիք մըչ վանքին Աստիր»։*

Ըսաց, աբանուտ չապիք թալից Տավիթի առէչ։
Տավիթ շուտ ըմ կ՚իջնի կ՚երթա, տիր մ՚ել զվանք կը չինի։
Տավիթ գիշեր ենտուղ կը Աստ.
Գիշերվա մեչ անոր աչ թիվի վերան կը չինվի՝
Մարութա Պետոը Ասլամաձին, Ասչ Պատրպղին,

* Տես նաև Կ. Մ.-Ո.

Մահ թաչ վըր Տաւիթի աչ թիվին
Աածու խրատանն եր
Որ ըմ երկու ընցալ վերեն.
Տաւիթ ասիր մ՝ եղ գընաց, մանչ կուրկին լաւ կը սպանիր

20. Հարկահանութիւն, խռռտատու Պառավը. Դավիթը պատուհասում է Կուզրադցին յետ ապա Քեռու ողնութեամբ կոտորում է նրա մարդկանց

Մըսրա Մելիք ելալ կանչից ուր ֆերըզքիր,
Ջկուզրադնին, Մալըն Զարխադին, եաց.
— Ելեք, գայեք Սասնա երկիր,
Իմ յոթ տարման խարջ-խարաջ առեք, պիրեք,
Կուզրադին, Մալըն Զարխադին ելեն ճանապախ.
Եկան, խառան Սասնա քաղաք, կանչին Ծինով Հովանն.
Ըսին.— Հէյ, Հովա՛ն, միր խարջ տուր, վոսկը՛ չափը՛,
Ծինով Հովան չիվարալ, կը վախեներ
Տաւիթ ել մըչ կուրկին լաւ կը սպաներ
Ծինով Հովան դմաղադի տակ եպաց,
Առից գչափ, վոսկի կը չափը՛.

Պառավ ելալ գընաց, տխամ՝
Տաւիթ գա մանչ ան կուրկին լաւ կը սպանր՛,
Ըսաց.— Թըլեր Տաւիթ, գըրող-մախ քի առնը՛.
Ես փշուր կուրկիկ եր իմ ծմաան պաշար,
Ես ել եկիր, արիր գետնուն խամաար.
Ելի գընա քու խոր մըղադին.
Գա Կուզրադին, Մալըն Զարխադին եկիր ին,
Զամ տրիր ին, քու խոր վոսկի կը առնըն
Տաւիթ եկավ, գընաց մըղադին. ինչ կը տեսնա.—
Գա Կուզրադին սեռու տրիր, նատիր,
Ծինով Հովանին կը պառա, կ՝ասը.
— Հովա՛ն, դե չաւա վոսկին չափը՛.
Ծինով Հովան մեկ չափ չափից,
Լցից անու ջըվըլնիրու մեչ.
Տաւիթ եկավ, տխամ՝ խրոխտիր քրտնիր ի.
Կանչից, բաց.— Սրթխաեր, ելի վեր, ելի վե՛ր,
Իմ խոր վոսկին չես որ չափիմ.

Տալիթ ըզչափ ասից խրոխտաբմբնեն,
Զչափը՝ պերան եաի գետին,
Վոսկիք խոլ վըր չափը՝ վոռուն,
Փետ կը տեր վըր չափը՝ վոռուն,
Կ'ըսեր. «Եան մեկ, եաս յերկուս...
Կուղբադին եասց.— Հէյ, Հովնե,
Եաս տղեն պիրիր իս, մեզի ծանր կ'անես.
Շատ վոսկին չափը՝ մենք երթանք,
Ըսաց, չամախկը մ' եղերկ Հովնեին,
Արաբասունք աչքից իրե տակ,
Տալիթ հետս թռավ, կայնավ,
Ըզչափ ասից, տփից մըչ Կուղբադնի գըլխուն,
Գնից, անոնք ակընճքոիր քնչից,
Կեսը ճղից, կեսը ճռաց.
Լեզուն ել քնչից, տուս պիրից,
Քնչից, խասցուց ճակտի վերեն,
Բեվետ ըմ գործից վերեն, եասց.
— Գընա, Մելքին ըսա՝ թըղ գա, որ խարջ տանը՝
Կուղբադին, Մալեն Զարխադին գացին Մսըր.

Մելիք վոր տեսավ զԿուղբադին եասպես աչլիչկեր,
Պիրի, դեղեր կը քըսը, կը ժրացըցը,
Քիչ ըմ տակաը կը բանդրավի, կ'ըսը.
— Իլե գընա՛, քու թոլ անուհեն խանս
Մելիք կ'ըսը.— Կուղբադին, գընա, պե.
Քառասուն ախճիկ պի սրմաղան.
Քառասուն կարճ ախճըկտիր պի՝ երկանք ադան.
Քառասուն հերկին ախճըկտիր պի՝ ուղտ պառնան.
Քառասուն ել ախճիկ պի ձի խդամ.
Յոթ տարվան խարջ-խարաջ պի ձի խամար,
Կուղբադին գեղակընեին ըսաց.
— Կ'երթամ, Սաանա կը պիրիմ,
Կարմիր կովեր կը պիրիմ,
Մի խամա կը շինիք յեղ-չորթան.

Գընացին, Սաանա քաղքի մեչ կայնան.
Խարար տարան, տվին Տալիթին,
Տալիթ ել՝ ել Պաովու կուրկի մեչ լեր կը սըպաներ,

Պառավ եկավ, տխասվ, ըսաց.
— Զար գըրծղ քի տանը՛, Թըլոր Տավիթ,
Են փշուր կուրիկ իմ ծմռան պաշար,
Ել մ՛ ել եկիր, արիր գնանին խավսար։
Իլի գնա՛, գո կուզրադին եկիր վեր քի կռիվ։
Ետաց.— Պառավ, շեղբիկ ըմ չկա, տուր ձի, երթամ կռիվ։
Պառավ ետաց.—վալլահ, գնա չունիմ, տամ քե, երթաս կռիվ։
Տավիթ պուճուր ծառ ըմ քեշից, մըզդն եկան տուս։

Տավիթ Քեռի մ՛ կըներ*
Են ել ակնախավ, ծառ ըմ քեշից տուս,
Ամա իրար ելան, գացին կռիվ։
Կռվան, գնակեր կուտուրըցին, սըպանըցին.
Կուզրադին փախավ.— ծիր ըմ կըներ,
Կը մտնա ատ ծիրի նղճիրու մեչ,
Կը պախվա չուր Տավիթ, Քեռին կը տանան,
Են կը փախնը՛, կ՛երթա Մսըր։

21. Մելիքի ակնկալությունը. ծաղրող կանայք

Չըհար գընաց Մելքին, քի կուզրադին եկավ։
— Ո՛, ըսաց, քանաուն ախճիկ կը պիրի սրմադան.
Քանաուն կարճ ախճըկախիր կը պիրի՝ երկանք աղան.
Քանաուն հերկին ախճըկախիր կը պիրի՝ ուդա պանանան.
Քանաուն ել ախճիկ կը պիրի ձի խադամ.
Յոթ տարվան խարջ-խարաջ կը պիրի ձի խամար։

Կնկախիր ելան տուս, ըսին.

«Կուզրադին փխա պերան,
Չձուտ կը գնա լերան-լերան.
Տաի մի կ՛ասեր՝ երթամ Սասուն,
Կարմիր կովիր պիրիմ կթան,
Անիք ձի չեղ ու չորթան։
Հո՞ւր ի քու կարմիր կովիր,
Հո՞ւր ի մի մարթիրը...

* Անունը մոռացել եւ Կ. Մ.-ն.

Եսաց.

«Կացեք, վաղ մեկել որ անձրով կը գա,
Խեղճ կ'իջնը, ճամբ կը բռշանա,
Ծի մարթիրուս ճամ-պլուր կը պիբի,
Կ'ենթք ծի յեղ ու չորթան»։

22. Մելիքի զոռհամարը. Մոր յիշապը յիվ Մելիքի առաւաւոտն ու պատգամը Դավիթն

Մելիք կանչից, եսաց.— Կուզրադին, ինչ իլիր քի։
Եսաց.— Մելիք, մընջև, քի 'սեմ.
Ենամնց նիտիր կը գըներ գելանական.
Ենամնց խոտիրն են կծան,
Ցիս ինչ ա'եներ խըտ ենամնց։

Մելիք ըռկավ, ըսաց.— Թուխտ պիրեք։
Թուխտ պիրին, ամնակ եղեր որ ծեռաց մեչ,
Ալրուն եկավ, լցավ մըչ տաշտին,
Ըսեց.— Թուխտ գըրեք նա իմ ալրունով.
Իլավըցեք պոմանդակ ախշար,
Ականը գա, երթանք վըր Տավթին կռիվ։

Վոր ախշարք կը հավաքվի, Մելքի մեր կ'ըսը.
— Մելիք, մորածն, արի մ' երթա կռիվ։
Եսաց.— Մարե, վրե չերթամ կռիվ։
Եսաց.— Մելիք, երազ ըմ եմ տեսեր.
Տիսա՝ Մըսրա ծին փախեփախ եր,
Սանտա ծին խասեխաս եր.
Մորածն, արի, մ' երթա կռիվ։
Եսաց.— Մարե, յիս չըմ ուզի երթա,
Ամա ականը բիթուն ժողվիր իմ,
Ամոթ ի, յիս ա'երթամ կռիվ։

Ականը քեշից, եկավ մանչ կռվու տաշտին,
Ըսաց.— Ջընաբ տվեք Թըլոր Տավթին,
Իվիր իմ կռիվ, տի քանդիմ Սասնա քաղքին։

23. Դավիթը Պառավի խրատով հարիղբորից առնում է իր հոր սարճն ու ձին չնվ գինեվաճառվում է

Տավիթ գընաց եր ի մանչ Պառավու կուրկին
Պառավ Ջընաք տարավ Տավթին,
Նաց.— Գըլուղ քի տանի, Թըլոր Տավիթ,
Բա՛ս ը, իմ կուրկ անիս խոմատար գետնին.
Ին փշուր կուրկ իմ ծմռան պաչարն ի
Մըսրա Մելիք եկե, կոխվ կ'ուղի,
Ելի գընա կոխվ խա Մըսրա Մելքին
Նաց.— Պառավ, չունիս,
Տու ձի մեկ անթաբուց ըմ,
Տու ձի մեկ խին շիդրիկ ըմ,
Իս ելնիմ երթամ կոխվ
Ըսաց.— Գըլուղ-մախ քի տանը՛, Թըլոր Տավիթ,
Գընա՛, խոսն քու խոր ճակիր
Նաց.— Պառավ, ինչ ունես իմ խոր.
Ճակիր ինչ ունես իմ խոր
Նաց.— Քու խոր ունես Կռունկն Գըլխուն,
Քամարն Ջրեխին, Ջըղմին Վուտքիրուն,
Թուրն ը կեճակին, Քարկու Ջալալին
Նաց՝ գընա, խրոխպոր մոտեն ուղը՛

Տավիթ ելավ գընաց մա խրոխպեր,
Նաց.— Խրոխպեր, տու իմ խոր ճակիր
Նաց.— Խրոխպեր կուրբան ի քի, պա մ չունիմ,
Նաց.— Խեբախուտ խրոխպեր, իլի վի, իլի վի,
Ինչ ըմ աղանձ չինի՝ ուտիմ, իմ աստամքիր կ'եռանա
Ըսաց.— Խրոխպեր կուրբան ի քի, ինչով չինիմ
Ըսաց.— Ճարտու քարով չինի
Խրոխպեր ելավ ճարտու քարիր պիրից.
Վոր պիրից, կրակին պավից, տաքացավ,
Ըսաց.— Խրոխպեր, տու աչքի մ՝ մա պավիր ը
Ծինով Հավան ձեռ խոտ մանչ ու լպան,
Տավիթ եթալ, եսապես գծեռ պռնից
Նաց.— Յամաճա, Տավիթ, իմ ձեռ երեցավ
Ըսաց.— Իմ խոր ճակիր կը տաս

Ըսաց.— Յամառն, պա՛ց թուղ, կը տամ,
Հովհան գընաց, բիթիւն խպեր, խոու Տաւիթին։

Տաւիթ կուտին իսի գըլխէ,
Կուտին եկաւ մընչ ան։ թիվքիր,
Կուտին չտատրի գըլխէ.
Երկու կիսր պամպակ իսի հինև,
Նուբեն կայնաւ ա՛ր գըլխէ։
Զրեխլի Քամար իպը, կապից վըր ուբ,
Յոթ փաթ իկը՝ միճաց պալու.
Զըմհն Վուռքիրուն իպը, խանդաւ,
Ընդկուն ճիչ եր, եկաւ, խասաւ ճըռնիր.
Իրիք կիսր պամպակ իսը հինև,
Նուբեն կայնաւ ա՛ր վուռքիր։
Թուբ կեծակին կապից վըր ուբ,
Մեկ նիսա եճաւ գետին, հանիւցաւ ան։ բաժնից,
Մեկ նիսա եւ գըլխէ հընցաւ։
Ըսաց.— Խրոխպեր, գընա խան Բորկու Զալալին։
Բորկու Զալալին տարեր, կապեր ին խաւու Քառը՝ տակ.
Յոթ տարը՝ կըեր՝ տա՛ւ չխանած, խաւեր ծուխը ևն վրևն։
Ասաց.— Խրոխպեր, քևնե կ՚ուղիմ՝
Իմ Բորկու Զալալին Քամիւղ լմնա։
Խրոխպեր գծին Քամիւղ լմնց, խպեր
Ըսաց.— Խրոխպեր, քևնե կ՚ուղիմ՝
Իմ ծիու Զին Սատանին առնիս, պիրիս։
Զին խպեր, իսի վեր ծիուն։
Ըսաց.— Խրոխպեր, տանք պի, կապիմ։
Մինով Հովհան ըսաց. «Յամաչ, իս տ՚իրիչիմ.
Ենու խեր վոր տանք կըքեր, ծիան երկու վոտ կ՚իչներ.
Իրիչիմ, տիսնամ՝ Տաւիթ իճնչըս տը կըքի»։
Միու տանք առից, խպեր, հաու Տաւիթին։
Տաւիթ վոր կըքից, չուրս վուռն եվ կորաւ գետնուց։
Հովհան քիչ ըմ ուրախցաւ վեր Տաւիթին, ըսաց.
«Տեր Աստուած, տիսա՝ Տաւիթ կորիճ եր»։
Տաւիթ եղեվ գԲորկու Զալալին խիծաւ։
Հովհան հաց. «կուտրիր են մարթու պիրան,
Վոր հսա պտնիր Տաւիթին հաց»։

24. Հարեղբոր ափսոսանքը յեվ խրատը Պողպատե ոյտն յեվ Եաբճիկ ադբյուրի մասին

Ծինով Հովհն եսաց.

«Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս կոտին Գըլխին,
Վոր խանիցին Սասնա տնեն.
Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս Քամարն Զրնխին,
Վոր խանիցին Սասնա տնեն.
Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս Զգմեն Վուտքիրուն,
Վոր խանիցին Սասնա տնեն.
Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս Թուրն ը կնճակին,
Վոր խանիցին Սասնա տնեն.
Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս Քոռիկ Զալալին,
Վոր խանիցին Սասնա տնեն»։

Տավիթ ծխուն վերեն կը մոտծը՝։

«Ափաճա կ՚անիմ, խազար ափսուս Տավիթին,
Եղնիկ Ջընել ելավ գընաց Սասնա տնեն»։

Եսաց.— Խրոխպեր, հոա պանիր վոր ոտ ըսիր ափսուս,
Յիս քի ալ գ՚արկեր, ալ սըպաներ.
Վոր ոտ ձի ըսիր ափսուս,
Յիս քի չըմ գ՚արկի, չըմ սպանի։

Տավիթ վոր ա՚երթեր, Ծինով Հովհն ըսաց.
— Տա՚վիթ, խրոխպեր կուբրան ի քի, շիրաթ մ՚անիմ։
Եսաց՝ Տա՚վիթ, կ՚ելնիս կ՚երթաս մա ոտշտին,
Պողվրան սու մ՚կա մա ոտշտին.
Կը գ՚արկիս Թուրն ը կնճակին,
Ին քա կտրից, գընա կռիվ.
Վոր չկտրից, ոտքդ, արի։
Եսաց.— Տա՚վիթ, կ՚երթաս, կաթնիկ Չախալը կա քա խոր.
Կ՚երթաս, վար ան հախպրին կը նստիս,
Ին ճրով կը վըցկիս, ին ճոր կը խմիս,
Կը պառկիս, կը քընիս, ոտհաթիս.
Քոռիկ Զալալին ել կը խմըսցիս ին ճոր,
Կը թըղնըս հանտեղ՝ երեծա։

---

* Տեսք ևու Կ. Մ.–Ռ.

25. Դավիթը կտրում և Գողվատի այուցը յնվ խմելով Կաթնիկ աղբյուրի ջուրը՝ դառնում և հզոր

Տավիթ ծին քըշից մա ամշտին.
Գընաց, Գողվըտե սուն տխսավ մա ամշտին.
Ֆեշից ուբ Թուրն ը կնծակին,
Տիր ըմ վոր եղաբ, ընցկուն կտրից՝
Կալամ ձեաց վեր կալամին։
Տավիթ ըսաց.

«Վայ, տաճ կուտուր կ՝ենես, ծեռնիկ,
Վոր տաճ զաբկիցիր, չկտրիցիր Գողվըտե սընիկ»։*

790 Են ծեռ քեղցավ, կախավ մոտեն։
Ասծու խրատանքով մեկ հուշիկ քամի մ՝ իրը՝.
Վոր քամի մ՝ իրը, տսից Գողվըտե սուն, ինկավ։
Տավիթ վոր տխսավ, ըսաց.

«Վայ, տաճ կանաչ կ՝ենես, ծեռնիկ,
Վոր տաճ զաբկիցիր, կտրիցիր Գողվըտե սընիկ»։*

Տավիթ ծեռ ել մ՝ ել ժրավ, ծին քըշից, գընաց.
Շատ գընաց, քիչ գընաց, են մեկ տեղ ծին կայնավ.
Ըրքեր եղաբ ծիու կողիր, ծին չերթեր, կայնիր։
Ասծու խրատանքով՝ ծիուն լիզու եկավ,
800 Ասաց.— Տա՛վիթ, ուրքեր մը զա՛րկը ձի.
Ձե քե ըսաց քաճ խրոխպեր,
Կաթնիկ հախպաճր զա ետեղն ը։
Տավիթ ծեռ ըմ եթավ, քար վիրուց,
Ճաճր եղավ, բըղբըղ կ՝երթեր.—
Քար վերեն եր, ճաճր չերթեր։—
Ծին ըսաց.— Տա՛վիթ, են ճաճր քսի իմ բրին,
Իմ կուղ ժրի, ճաճր խմխմ, երեծամ,
Տավիթ ճաճր քսից ծիու կուղ, արցկից։
Տավիթ հիշաց, ըսաց.

810 «Խրոխպոր խուսքիր տը կատարիմ»։
Տավիթ իճավ, վըցկավ, են ճաճր խմավ,
Ընգձավ, քընավ, երկու սընաթ քընավ.

---

* Ցերգ են կ. Մ.-Ո.

Վոր քընուց ակնխաւ, եկաւ վեհ, տխաւ՝
Կուտին գըլխուց թռիր եր մեկ կողմ.
Քամաը Զրեխին պացվիր, թռիր եր մեկ կողմ.
Զրզմեն վուտքիրուց թռիր, պացիր եր մեկ կողմ։
Կուտին Գըլխուն՝ երկու կիտը պամպակ եխան,
Զուռով նուրեն գընաց գըլխ.
Քամաը Զրեխին, վոր յոթ փաթ կապիր եր,
Զուռով եկաւ մեճաց պուլուր.
Զրզմեն Վուտքիրուն՝ իրեք կիտը պամպակ եխան,
Զուռով նուրեն եկաւ վոտաց,
Չալա պուճուր եր անաւ վոտաց։
Տաւիթ կապից ուր թուր, խնծաւ ուր ծին, գընաց։

26. Դավթի վախը բռնամիներից, ձիու հաթաներք, հարձակումն ու կռտրածը

Գընաց, սարի մ' գըլխ կայնաւ.
Իրիշկից կովու ման գա, տխաւ, ինչ.—
Քանի մ' ասող երկինք կա,
Անգկում չադըր-խեվաթ մանչ ման գաին։
Տաւիթ ասաց. «Տեր Աստված,
Ես ախպր իշնի գանման սավա գան,
Յես իշնիս գանման անոթը՝ գել,
Յես չըմ կանա գանանք ուտը՝։
Թ'անանք իշնին պամպակ,
Յես իշնիս պոց-կրակ,
Յես չըմ կանա գանանք վառը՝»։
Ենտեղ Տաւիթ շատ մտածից, վախացավ։

Աստու խրատանքով Քորկու Զալալին լիդու եկաւ,
Ասաց.— Տա՛վիթ, Տա՛վիթ, ատ մի վախանե,
Քանի մ' ատ սըպանիս,
Անգկում յես իմ վուտքիրով ատը սըպանիմ.
Քանի մ' ատ սըպանիս,
Անգկում յես իմ բնինով ա'իցկիմ.
Քանի մ' ատ սըպանիս,
Անգկում իմ պուչ ատը սըպանը՝, ցրվը՝։
Տա՛վիթ, Տա՛վիթ, ատ մի վախանե.

Հիշա Մարութա Գինցը Աւետածին,
Ամէն Պատրաստին վար Տաւթի ու Թիւին,
Քըշը՛ մինչ բուշ խիժըլին։

Ծին տիր մ՚ել կանչիս, ըսաց.
— Տա՛վիթ, տու կանգնա քի վար իմ քամկին պախիս.
Տա՛վիթ, իս քի տը տամ երիքնկան, երիցիս.
Ապա տու ինչըխ ս՚անխս վար իմ քամկին։
Ըսաց.— Իս տը խաղամ քու փուրս տակ։
Ըսաց.— Իս կը ծռնիմ քարեքար,
Ապա տու ինչըխ տը պախիս իմ փուրս տակ։
Ըսաց.— Իս տը խաղամ վար քու քամկին։
Ըսաց.— Տու իմ տիր, չիս քու ծին,
Դե, քըշի մինչ բուշ խիժըլին։
Տաւթի քըշից մինչ անքըրին, կուտուրից, ճարից.
Վար կ՚երթա, կը գա, արուն կ՚իլնը, լիշիր կը տանը՛։

27. Գելոռի խրատը

Մեկ խալխին ըմ «փռշտա, փռշտա» կ՚ըսը
Ու ննդեխեն կը գա մա Տաւթի։
Տաւթի ըսաց.— Ը՛, խալխո՛ւր, ինչ կ՚ըսիս.
Ձիս հալն երեսասարդ իմ, տու ձի՝ «փռշտա» կ՚ըսիս։
Ըսաց.— Ղոզու-արեվուտա մեռնիմ, Տաւթի,
Մէր լիզուն անպես ի, կ՚ըսինք՝ փռշտա, փռշտա,
Յանի՝ ճանապես ատ.... չիս չըմ տսի՝ փուշտա։
Տաւթի ըսաց.— Խալխո՛ւր, ըսա.
Քու ատած ինչ կը, վոր տու եկար մա ձի։
Ըսաց.— Ղոզու-արեվուտա մեռնիմ, Տաւթի,
Ես մարթիր, վոր եկած ին ըսատա,
Կա նուբ քաժա նշանված, տալ փսակված չին,
Կեան ել հալն քաժա փեսա չին,
Կեան ել ընցած տան ճրագ ին.
Վրե՞ կը կուտուբիս. խեղճ ին։
Քու դուշման Մելքի՝ չաղըր գնըկած՝
Գա հան գըրի գըլխս նսախր ի։
Ես մուխ վոր կ՚իլնի, Մելքի պերնի չորանքն ի.
Գրնա ննատեղ, գնա՛ր, քու դուշման սրպանի.

Սըպանիցիր, մինաք քու ժողովուրդն ինաք.
Վոր Աստցինաք, մինաք քու ծառեն ինաք։

28. Մարա Մհիբը Դավթին խարում, ձգում ի հորի մեջ

Տավիթ ձին քըշից, ելավ գընաց չաղըի տեղ.
Տեսավ Մհլիք պառկիր, քընիր եր.
Եսաց.— Դե, շուտ Մհլիք հաշխրիցնեք վեր։
Ըսին.— Մհլիք յոթ որ սը քընի, նուր հաչխրանա։
Ըսաց.— Ձես չըմ կայնի յոթ որ, խանըցնեք վեր։
Ելեն շիշ ըմ կարմըրցըցին, տրին ածեն վոտաց տակ։
Ըսաց.— Ո՞ֆ, ախճըկներ, ինչը՞ իմ տեխ լավ չըք շինիր.
Լու կա իմ տեխ, ըզդի կծիցյ։
Մհլիք և ա՛ել Աստց քընուկ։
Գլըին, գալքնի խուլի կարմըրցին,
Տրին ածեն վուտաց մտանի վերևն։
Ըսաց.— Ո՞ֆ, իմ տեղաց մեչ ինչքան լու կըեր,
Ըզդի կծիցին, չըն թը՛դնի՝ չես քընիմ։
Տավիթ կանչից, ըսից.— Մհլի՛ք, վեր կաց.
Անգըրող, քի գըրող իմ պիրիր։
Անմահ, քի մահ իմ պիրիր։
Մհլիք ըսաց.— Ե՛, Թըլթր Տավիթ,
Զար չատագ ըզքի ասնը՛,
Տեղ հիմի ելար ձիավոր,
Եկար, կայնիր իմ չաղըրի տեսան։
Մհլիք տեսան հանճիվ մի խուր փուրիր եր,
Վոր Տավիթ դա՛, իցկի մանչ՛ ան խուրուն։
Մհլիք ըսաց.— Տա՛վիթ, ձիուց իջի տակ,
Աբի ըսաս, խուսինք, բարե՛լինք։

Տավիթ ձիուց եջավ տակ.
Վոր գընաց, մոտիքացավ չաղըրին,
Դը՛մ... ընկավ խուր վեր, գընա՛ց։
Խուրու մեչ շրխա-շրվան, ողիր արիր եր՝
Ընկավ մեչ, ա՛լ չկա՛ցցավ ասա եղներ։
Մհլիք ըսաց.— Մը խանեք, թըխ գընա՛ շան պես խառնի։

Հիրիկու յս. Մհլիք ընկավ, քընավ։

29. Ջեռով Հովանցի յերազն յով խոսքը ծիերի հետ

Գիշիր Ծինով Հովհան երազ տեսավ.
Տեսավ՝ Տավթի ասպը մըժդավիր եր։
Հովհան կանչից, եսաց.— Կնիկ, կնիկ, իլի վեր,
Եսա գիշիր երազ տեսիր իմ՝
Տավթի ասպը մըժդավիր եր,
Մելքի ասպը լաւ-պիծաս եր։
Եսաց.— Տնավիր, քուն քի քընե, երազ Տավթին տես.
Վեռվ գըտը՝ վորտեղ Տավթի քեֆ կ'անը։
Տիր մ' ել Ծինով Հովհան քընավ։
Ել մ' ել երազ տեսավ, ակնեսավ.
Տեսավ՝ Տավթի ասպը մըժդավիր եր։
Ըսաց.— Կնիկ, իլի վեր, իլի վեր։
Կնիկ ել մ' ել եսաց.— Տնավիր, քընը՛.
Քուն ման կը քընես, երազ Տավթին կը տեսնես։
Եսաց. «Բեզ ը, ուտար տեղիկ ը, սիրտ չցավը.
Իս տ'ելնիմ վե, երթամ, խաոնիմ»։

Հովհան ելավ, գընաց փարդախ.
Իրեք ձի կապուկ եր ենտեղ.
Մեկ բոզ եր, մեկ կաբմիր, մեկ սիվ եր։
Եսաց.— Բե՛զ ձին, քի կը տամ մեկ փութ գարը՛,
Չի հերի տը խասցըցես Մըսրա սարի գըլուխ։
Եսաց.— Երկու սըհաթի մեչ քե կը խասցիմ։
Եսաց.— Երկու սըհաթ...
Իս երթամ, խաոնիմ ենու նաչին, յան ճաչին։
Չեկավ. գընաւ մա կաբմիր ձին։
Եսաց.— Կաբմիր ձին, քի կը տամ երկու փութ գարը՛,
Չի հերի կը խասցըցես Մըսրա սարի գըլուխ։
Եսաց.— Մեկ սըհաթի մեչ կը խասցիմ։
Եսաց.— Մեկ սըհաթի մեչ...
Իս տը խաոնիմ ենու նաչին, յան ճաչին։
Չեկավ. գընաւ մա Սիվ ձին։
Եսավ.— Սիվ ձին, քի կը տամ իրեք փութ գարը՛,
Չի հերի կը խասցես սարը՛ գըլուխ։
Սիվ ձին եսաց.— Վուտ տնես ոըքեր,
Չուր մեկիկ վուտ տնես մեկիկ ոըքեր,

Յիս քի կը խասցիմ են սարի գըլուխ,
Ծխու գըլուխ պաքնից, քըշից, ելալ սարի գըլուխ։

30. Դավիթը Ջենով Հովանցի խրատով չիլնում է հարից

Թուրգում կա, կը անկն պերնին.
Ծինով Հովանն Թուրգում տրից ուր պերնին,
կանչից.— Ո՛... Ո՛... Տա՛վիթ...
Հերկեն կանչից,
Ինչ կանչից, Տավիթ ըսաց.
— Ձըժէը, հըշկացեք ձե մ' կը գա,
Խերանական ձեն կը գա։
Տիր մ' եկ կանչից.— Ո՛... Ո՛... Տա՛վիթ...
Տավիթ լաավ, խրոխտոր ձեն եր։
Ըսեց.— Տա՛վիթ.
Հիշա Մարութա Պանդը Աստածածին,
Խաչ Պատրաստին վեր Տավիթի աչ թխվին.
Ձքի խըլաս անի մանչ նա ճոպնին։
Տավիթ ըսաց.

«Հիշամ Մարութա Պանդը Աստածածին,
Խաչ Պատրաստին վեր իմ աչ թխվին.
Չի խըլաս անիս մանչ նա ճոպնին»։

Ըսաց, պինք վոր չարժից, թամի խոու,
Ձըմեն ողիր կաըրաավ, արցըկվավ խրարից,
Տավիթ կայնավ, թռավ, խուրուց ելալ տաս,
Թռավ, Քորկու Ջալալին խիծավ։

31. Դավթի չիվ Մարա Մելիքի մենամարտը. Դավիթը սպանում է Մելիքին

Եսաց.— Մելիք, լերով մարթ չին սպանի,
Աբի, կայնի ըսաս, պաց կռիվ անինք։
Մելիք եսաց.— Տավիթ, ինչըխ կռվինք։
Եսաց.— Իրեք գաբը ա՛ն գարկ ձիկ,
Իրեք գաբը եկ յես գարկիմ քիկ։
Մելիք եսաց.— Հաոնչ վճռվ սը գարկիս։
Տավիթ եսաց.— Հաոնչ ա՛ն գարկ, վոր կը վախանաս։
Մելիք ըղձին խիծավ, քըշից, գընաց.

Ըսաուց չուբ Եչմիածին դընաց.
Մելիք իրի ուր կունդ եգեր Տավթին.
Վոր գերկից, թող-դուման ելավ, երկինք պահից,
Եկավ, դըպավ գետին, քընդից,
Եսաց.— Ե՛, խուդածին, խուդ եր, խուդ աերցար,
Թող վիրցավ, Տավթի ետաց.— Ե՛, Մելիք,
Իս հալա գի ետեխեն իմ, դի պան չիլիր,
Տիր մ' ել դընաց, չուբ իդդիր գատացավ,
Ետու ծին ել վեցվուտնա յր,
Ենդաց հրըսամիշ ելավ, եկավ,
Գաբրդ մ' ել եգեր Տավթին,
Ե մ' ել թող-դուման ելավ երկինք վե,
Եսաց.— Ե՛, խուդածին, խուդ եր, խուդ աերցար,
Թող վիրցավ, եճավ գետին, ըսաց.— Մելիք,
Հալա յիս ըսաս յիմ, ձի պա մ' չիլիր.
Ախըր, իրեք գերր եգեր, պա մ' չիլավ,
Տավթի եսաց.— Դուր իմ գերն ը, ես որ գերկիմ,
Եսաց.— Մոհլավ, յիս իմ տեղ չինիմ,
Ելավ մտավ են խուր վե,
Յոթ գամշու կաշի տրավ աեր գըլխուն,
Յոթ պողվըտե սալ տրից վեր գամշու կաշիքաիրուն,
Մեկ ճաղչի քեր ել տակ վեր խուրտ պերնին,
Մտավ, տրխային նստավ, հետո եսաց.
— Տա՛վթի, դե գեր քու Թուր.

Տավթի ըղԹուր քաշից, տարավ աեր Թիվ, վոր գերկը՛,
Մըսրա Մելըքի մեր իրի, եսաց.
— Տա՛վթի, չե՞ յիս քի չախե-պախե, ծիծ ըմ տվիր.
Եատա մեկ Թուր տը տաս ձի խաԹըր,
Տավթի ըսաց.— Մարե, ենա մեկ Թուր քի խաԹըր,
Տիր մ' ել Թուր տարավ Թիվ, վոր գերկը՛,
Ենու քաեր վադկից, եկավ, ըսեց.
— Տա՛վթի, վոր տաե պղտիկ եր,
Յիս քի շատ եմ շալկիր, պախիր.
Եատա մեկ Թուր տը տաս ձի խաԹըր,
Տավթի ըսաց.— Ես Թուրն ել քի խաԹըր,
Ըսաց.— իս ինացի, եատա մեկ Թուր,
Ենա Թուրն ել տարավ աեր Թիվին,

Պիբից, խասցուց կեա, ըսաց.
— Եսա կեսն ել Աձու խաթըր.
Եսա կես թուրն ել ալ գնրկիմ Մելքին
Վոր ըզքուր հաժնից, կրակնիր թախավ,
Ճաղէը՛ քար, պողվըտե սալ, գնմշու կաշիք,
Ախըր, գՄելիք կալալ, տապկից երկու կես.
Մելիք չկախավ, վոր կորիր ը,
Խուրուց կանչից, ըսաց.— Տա՛վիթ, դե, գա՛ր—
Մելիք չըր գը՛ալ, թը գանիր եր—
Ըսաց.— Մելի՛ք, մը հա՝ քի հիրաւ տուս
Վոր գինք հիրաւ խուս Մելիք,
Տապակ ըմ են կոդմ գընաց, մեկ՝ են կոդմ,

Տավիթ թուր վիրուց, կանչից ասքըրին, ասաց.
— Ով կը գա, իմ թրի տըկով ընցնի, թըխ գա՛.
Թը չե՝ բիթուն կը կտախմ, ճարտիմ,
Ասքար բիթուն ընցան թրի տըկով,
Բլալան, գընացին աբինց տնիր
Տավիթ տաբցավ, ևկավ Սաուն,

Գ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴԻԹ

32. Դավիթը լսելով ասուդճերի գովքը՝ գնում և խանգութին տեսնելու

Տավիթ ծեն տարտածանավալ, ամեն ախշար լսավ,
Ման գուա խանըմ կ'իլնը. ծնաւ ծեն կը լսը.
Որ ըմ կ'ելնի, երկու աչըդ կը պռնը, կ'ասը.
— Գընացինք, զի Տավիթը խամար գնվացինք,
Բալքը Տավիթ գա, ըզը առնը՛,

Աչըդքսիր կ'ելնին կը գան Սաուն.
Կը գան Տավիթ տուս կը նասին,
Ուրինց ասգիր կը խանին, կը գրկին.
Տավիթն ել ենդեխ նասիր իւ
Սագիր կը չալըն, կը գրկին, կ'ասըն.

«Տավիթ, մե Ման գուա խանըմ ըմ կա.
Ենու ճակատ մեյգան ը.

Եվս աչքիր չինու կիթխա կը նմանը.
Եվս ընքնիր գալամով քաշած ը.
Եվս պերան մովրով պացած ը.
Շատ խորտ իրիանիր ունը՛»։

Աշըղքսիր կը չալըն, կ՛ասըն, Հովին կը լսը.
վոր կը լսը, կ՛ելնի, կ՛ըսը.
— Դե, կայնեցիք. ձի խեր անիծած,
Տա եկիր եք, իմ եղնիկը սըրտ կ՛ավրեք։
Ըսաց, մե՜ռնիկ գնրկից աշըղքսիրուն։
Տավիթ ըսաց.— Խրխպակը, քըղ սազ անին։
Ազու մ՛ ըսըցին, աշըղքսիր գընացին։
Տավիթ եսաց.— Խրխպակը,
վալահ, չես տ՛երթաս, Խանդութ խանըմ տիանաս.
կարելի չը, աշըղքսիր ճիշտ կ՛ըսին։
Տավիթ ելավ, ճամպին ընկավ, գընաց։

33. Գորկու Զալալին ու փահլիվանների ձիերը. Դավիթը ու փահլիվանները

Գընաց. եկավ, Խանդութի գնրգրխի առէչ կայնավ.
Մխուց եճավ, գընաց մանչ հանվչին.
Տևսավ՝ տասնըվեցնոց խաս փահլիվանն
Սուֆրեն տրած սողրաթ կ՛անին։
Տավիթ հա՛ման գընաց, նստավ ենտեխ,
կանչից Խանդութ խանըմի խըզմատ,
Ըսաց.— իմ ձին տարեք փնրգախ։
Անանց խըզմատ տնրցավ, ըսաց.
— Տա՛վիթ, ենգեվ տասնըվեցնոց ձի կա կապուկ։
Տավիթ ըսաց.— Գնա մ՛ չե, իմ ձիու լըղաբ խանն,
Թըղ գընան փնրգախ մա ձիանքսիրուն։
Խըզմատ գընաց, լըղաբ եխան, գնձին եճուղ։
Վոր Գորկու Զալալին մտավ նիրս,
փահլիվանքսիրու ձիանք հրմեն փախան.
Գնրիք, տնրման մնաց, խուղին, փախան։
Գորկու Զալալին մնաց քնհնա, կ՛ուտը՛, կը խմը՛։

Տավիթ նստավ մնչ ան սողրըքին,
*Մանչ ան փահլիվանքսիրուն, վոր եկիր էին,

Եկիր լն, դԽանդութ խանըմ առնին, տանին
Խանդութ խանըմ տխամ վիրի փընջըրից՝
Տավիթ իրի, նատամ մընչ սողըրքին,
Փահլիվանքաիր զըմեն վախացան, տնղացին
Խանդութ տխամ՝ Տավիթ ճիչ եր,
Են փահլիվանքաիր ընդկուն ճժիր մա Տավթին
Տավիթ կանչից.— Խըզմա՛ տքար, գինի պիրնք, խմինք
Տարցամ փահլիվանքաիրուն, ըսաց.— Ես կըթխնք Իշչ լն,
Վոր տու գինի կը խմիք, քնչի կ՚անիք.
Թաս ըմ պիրնք, կուշտ ըմ խմինք
Թաս պիրին, գինի լցին, խման
Փահլիվանքաիր հիրուր կ՚ըսին.
— Ձեռ տվիք, Տավիթ խմա, սարխոշնա.
Ելնինք սպանինք, Թի չե՝ մի պան բռչ ը
Գինի լցին, տվին Տավթին,— խմավ
Անանք տխան՝ Տավիթ սարխոշցավ.
Վոր սարխոշցավ, ար զըլխա կ՚իճուցը վըր ար սրտին,
Նուրնն կը պընցըրցնաը, կը շիակնը*

Խանդութ խանըմ վիրուց կը տխանա,
Վոր Տավիթ ար զըլխա կ՚իճուցը վըր ար սրտին,
Մե ֆընդըխա ըմ վիրուց կը Թալը՝ տակ,
Տավիթ կը հաչարանա, ար զըլխա կը պընցըրցու,
Փահլիվանքաիր կը սըրսըփան, կը տնղան
Խանդութ մե փուֆ ֆընդըխա մե-մեկ եֆալ,
Զուր Տավիթ քիչ ըմ հաչարացավ,
Ելավ զընաց վոտաց ճանապարը
Վոր Տավիթ ելավ վի, զընաց տուս,
Են տասնըվինգ մարթին ել ուրինց Թըվը քաշկցին,
Տրին սուֆրի տակ, ծածկըցին, ըսին.
— Տավիթ վոր կը գա, կը գարկինք, սըպանինք,
Տավիթ ախխավ, Թի անունց սըրտ ավիր ի
Վոր տարցավ, եկավ նիրս, նատավ ար տեղ,
Նատես* չուռ խոռ սուֆրեն,
Ըսաց.— Դե, բռչ ը, խմինք,
Զըլտած Թըվը սուֆրի տակին տըսավ.

* Առաջոդը շարժ ու ձեվերով ցույց և տալիս Դավթի զբաղմունքը Կ. Մ.-Ս.

Ժողվից, ծռից, ծլամբռից ֆրիր, ասաց.
— Իմ ծիուն նալ-բըվնա չկա.
Տանիմ, չինիմ իմ ծիուն նալ-բըվնա,
Փահլիվանքաիր վոր նաա պին ախանը,
Շուտ ըմ ելնե, փախանը հնդից տանա.

38. Թավիթն ու դռնապան Համդոլը. Թավթի չնչ հանդուրժ առաջին հանդիպումը

Խանդութ խանըմ ուրախացավ շատ,
Կանչից, ըսից.— Տա՛վ ֆիթ, արի պինցը.
Մևկևնիր ման՛ըս գընացիք, ելիցիք,
Տավիթ ելավ գընաց վեր խանըմը հնդը՝ տանա,
Տավիթ վոր տուս եպաց, տըսավ՝
Համոլ կայնիր եր վըր տուան,
Ըսաց.— Վա՛յ, Տավիթ, ա՛ա ման՞ս չիս,
Տավիթ ըսաց.— Վա՛յ, Համոլ, ա՛ա ման՞ս չիս—
Ես հետ վախացավ, ես հետ վախացավ—
Տուն եպաց, գընաց, մա խանըմ նստավ.

Դե, ջընվել ուզա չեր Տավիթ,
Վոր նստավ, չոխմացավ, ծեռ ֆալից,
Ջխանդութ խանըմ կիս ըմ գըրկից,
Ճակատ պաքնից, էրես պաքնից.
Տաբցավ են մեկել էրեսն ել պաքնից,
Վոր սըրտն ել պաքնից, խանդութ ըսըկավ.—
Խանդութ խանըմ կռատաչա եր, գիտիս.—
Շամախկի մ՚ եպը Տավիթն,
Տավիթի մոր ծըծը՝ կաթ պընչեն եկավ տուս,
Ըսից.— Տա՛վ ֆիթ, նաա ճակատ պաքնիցիր,
Գեր ճամխուռ խաթըր խամար պաքնիցիր,
Վոր տուն ընցիր, եկիր խա.
Նաա մեկ էրես պաքնիցիր,
Տաս ջընվել ուզա չոխմացար, պաքնիցիր,
Ես ել քի ընցիր իմ.
Նաա մեկ էրես՝ շատ գի սիրըցիր, պաքնիցիր,—
Ես ել քի ընցիր իմ.
Տաս վըր իմ սըրտ պաքնիցիր, հրիր խաչ՝

Վըր ենու Տաւիթ լուկաւ, քըշից ատչաւ մեչ։
Ատանդուտ խանըմ վազկից, ընկաւ հխոխ,
կանչից.— Տա՛վիթ, խոզուտ-արեւուտ մեռնիմ,
Ջի կ'ըսիմ՝ մ'երթա, մ'երթա, մ'երթա...
Ատանըմ շատ լալա եղաւ, Տաւիթ կացնաւ,
Ետաց.— Ատանդուտ, Աստուծմըն կը խնդրվիմ՝
Թաքաւորը ըմ գա վըր քու խոր կռիվ,
Ձիս տըննիմ՝ ատա, քու խեր ի՞շ ա՛ենիք։

35. Դավիթ կռիվը նահգուրի բռնամիներէն հետ

Մնաց. չատա ըմ վերս ընցաւ,
Չինաստանս թաքաւոր ըմ նկաւ կռիվ։
— Վաչ, Ատանդուտ խանըմին...
Թաքաւուրը՝ ասկեր նկաւ, քաղքի պուլըր պռնից,
Ձաղըր տրից, կռիվ ատչս պռնից։
Թաքաւոր չըտաք հաբռղկից Ատանդուտի խոր,
Ըսից.— Ձան տը գա կռիվ, յան Ատանդուտ տը տաս ձիս
Ատանդուտի խեր կանչից ուր փահլիվանքաներ,
Ըսաց.— Դե, գացեք վըր գուշմընին կռիվ։
Ըսիցին.— Վուվ ք'ախճիկ պռքնիր ի, թըզ ես երթաս
Մինք երթանք կռիվ, ես ք'ախճիկ պռքնը՞.
Ձընք երթա, թըզ Տաւիթ դընա։
Թաքաւուր կանչից գՏաւիթ, ըսաց.
— Տաւիթ, կ'երթաս կռիվ ես գուշմանքտիրուն։
Ըսաց.— Վըռ չըմ երթա, կ'երթամ։
Տաւիթ կանչից գԱտանդուտ, ըսաց.
— Ձիս ա՛երթամ կռիվ. եկա, եկա.
Ձեկա, կը գաս մընչ լիշիրուց կը ճուկիս,
կը վիրցուս, կը պիրիս, կը խուրիս
Ըսաց, կապից Թուրն կեծակին,
Ձին խոլ վըր Բաբկու Ջալալին,
Թռաւ, խիծաւ Բաբկու Ջալալին,
Ջիչ, գընաց, ընկաւ մընչ կռիվուն
Տաւիթ ըսաց.

«Հիչաս Մարուքա Գինցր Աւտածածին,
Ատչ Գաւրաղին վըր իմ աչ Քիլինս։

Ըսէց, քեզէց թուրն կեծակին,
Զերկէց մանչ գիշերընի ասքըրին.
Շերտէց, կուտուբէց, արուն կայնավ մըչ ոտքէն։
Տաւիթ ոտ կը գերկեր, հա կը սպաներ։
Գոխ հանաձրավավ. շատ մարթ սպանավավ, քիչ մարթ
փախավ։

36. Դավթի յով նոանդութի հանդիպումը մարտի դաշտում

Տաւիթ շատ հետացավ, չհկավ ոուն։
Ոանդուա խանըմ ելավ, գծին խիծավ,
Գընաց, խոսավ կռվը՝ ոտքա,
Մանչ լիշիրուն իրիշկաց, ոխանա՝
Տաւիթ վեր տեխն ի ընկած սպանուվ։
Ոանդուա գմզրախ կը գերկեր, գլիշիր կը վիրուցկեր,
Կ'աչքեր, ոխաներ՝ Տաւիթ վեր մհկն ը։
Մհկ ոաս խոտ վիրուց, իշկից։
«*Չէ, Տաւիթ չէ,*» *ըսաց։*
Տաւիթ են հնարեն ոխասվ գՈանդուա.
Տաւիթ մանչ արունէն եր, Ոանդուա չճանչըցավ։
Տաւիթ գՈանդուա խանըմ ճանչըցավ,
Ըսաց.— էն, վոր ոտ կան կը գան,
Ես իրեք որ ի, սպանիր իմ մանչ կռվուն։
Ոանդուա ըսաց.— Տա՛ վեր չունն իս, վոր գՏաւիթ սպանես։
Տարցան, հլ մ' հլ կան կը գան։
Ոանդուա հլ մ' հլ աչքից, աչքից, ըսաց.
— Եսա ծին Տաւիթի ծին եր,
Ամա ինք չնըմանիր գՏաւիթ, ես վեուն ը։
Տաւիթ ենտեխեն եսաց.— Ոանդուա, յես իմ, յես իմ։
Նուր իրաւ ճանչըցան, թոռկիցկին, եկան ոուն։

37. Դավթի ամուսնությունն յով վիրապարձր Սասուն

Տաւիթ կը ոտնաս, կ'ասը.— Ոանդո՛ւա խանըմ,
Չի տըսաը, գիմ կռիվ տըսաը, գի խալաը.
Բա, ոտ ձի չամադկե մ' կը գարկես։

Տըսաը՝ ինչըխ գուշըմընը ասկեր կ՝ եռուըըցիր
Ժանդուա կ՝ասը.— Ես, տըսա, խաղնա
Տաւիթ գԺանդուա կ՝առնը՛, խաբանիս կ՝անը՛.
Կ՝առնը, կը գա քեզ Սասնա քաղաք
Կը ձևան Սասուն. Ժանդուա ողով կ՝իջնը՝

38. Դավթի յերկարաձիվ բացակայությունը. վարդին՝ Միհրը գնում և նրան վտռնելու

Ամուր մեկ Տաւիթ կ՝ասը.— Ժանդո՛ւա,
Յես ա՛յլնիմ, երթամ Գալըխատան,
Քի տեսակ ախճիկ ըմ պիրիմ, անըս քի խըդամ,
Տաւիթ ճանապախ կ՝իջնը, կը գընա՝—
Ե՛հ, Տաւիթըն ը, որե մեկ տեխ կ՝երթա,
Մե քաղաք ըմ, մե գող ըմ կ՝երթա՝
Մոռխաս տաս տարի յետացավ՝

Ժանդուա խանըմ պատկավ, ողե մ՝ խալը՛.
Ախուն խալ Տաւիթը՛ խոր անուն՝ Մհեր՝
Մհերն եկ որե կը ճիչաներ, մխծաներ՝
Մհեր կ՝երթեր, մա ճժիրուն կը խաղեր.
Կոըրճուքին կ՝աներ, զճժիր կը գըրկեր, ամխատաեր՝
Ամուր մեկին մե հաւրիչ ողե մ՝ ըսաց.
— Մհեր, ատա խեր չունիս, ատա պիճ իս, յա հեթըմ իս.
Տա ինչըխ կոըրճուքին կ՝անըս՝
Մհեր կը վազկը՛, կը գա տուն, կ՝ասը.
— Մարե, ապա իմ խեր հաւր ը,
Քի կ՝ասըն՝ ատա խեր չունիս, պիճ իս, յա հեթիմ՝
Մեր կ՝ասը.— Տուն, քա խեր Տաւիթըն ը.
Տասը տարը կ՝իջնի, գացիր Գալըխատան,
Քի խամար խըդամ ըմ պիրի, հետացավ՝
Մհեր ըսաց.— Մարե, յես ա՛յլնիմ երթամ,
Ձիմ խեր՝ Տաւիթ կընդնիմ, պիրիմ՝

Մհեր գընաց փնըգախ, ուր ծին եխան,
Ուր ճակիր առից, խիծավ, ընկավ ճանապախ՝

39. Ձմբլուկ Սուլթանի հրավերը ի կռիվ յԵվի Դավթի յերդումը

Տալիք եկավ, խոսավ մանչ ուզեին,
Ձմբլուկ Սըլտան եկավ հերճիվ, ասաց.
— Տալիք, չես, ուր ըսաս որ կռվինք.
Ցիս քու ծեն լիր իմ, քու քաղքին լիր իմ.
Ցիս, ուր ըսաս մանչ ուզեին որ կռվինք,
Տևնանք՝ վերն ի կորիճ՝ չես, քե ուր։
Տալիք ուրցավ, ասաց.— Ձմբլչուկ Սըլտան,
Ըզա ձի կնիկ ըմ կա, ինչըվ որ կռվիմ.
Ձի ժուկ ըմ, ժամանակ ըմ ուռ,
Ցիս երթամ, կնիկ առնըմ ուզեն,
Նուր գամ խա քի կռիվ մ' անիմ։
Ասաց.— Դե, հերդիմ արա, վոր ուր որ գաս։
Տալիք ըսաց.— Ես, որ գամ։
Ասաց.— Դե, հերդիմ արա Ես Պատրաղին,
Վոր ուր որ գաս, խա՛ ձի կռիվ ա՛նես։
Տալիք հերդիմ արավ, եթող, եկավ։
Ի՞ ձեն չըմ ետա, իլի, ձի խնճի։

Մհեր կը խնճոնի, խրոդրեր կը տա ուր հնոջեվ,
կը հան Սըլթան Զմուշկու կովու մեջ։
Ջինով Հովան կ՚ըսի.— Ցես ինչ անեմ,
Մհեր տղայ ի, անհմայ ի, գաա չխնամկանա.
Ցես ել ծերացեր եմ, ձրնեն կռիվ չիգա։
Քաոկիկ Ջալալին կ՚ըսի.
— Ե՛, ախբամ, ի՞չ կը վախենաս,
Ցես՝ իրեք սկամ ասկեր ըլնի, կը կուտորեմ։
Են ինչ բան ի, յեմ պոչի հնոջեվ,
Ցեմ վոռնելու հնոջեվ,
Շնչիս հնոջեվ գինոնք կը կուտորեմ։
Մհեր կ՚ըսի.— Խրոդրեր, մա մինք Սաաման անեն չընք.
Ձի մինք Սաաման անեն ենք։
Մինք մեռնենք, մեր գերեզմի վրեն,
Թագավորներ չըն կենա գա։
Գըշ, հանք, մինք մեր կռիվը անենք։
Ջինով Հովան ու Մհեր մաան կռիվ։
Ջինով Հովան Բոզ մաասակ խնճեր ի,

Ընկկը ի մըչ Սըլթան Զմըչի ասկրին,
կիսասպանել կ'անի, կ'ըսի.— Մհեր, վորդի,
*Ցես կիսասպանել կ'անիմ, դա՛ թըմբե՛։**
Շատ կռիվ արին, չուր հավարին գարկվան։
Խրողըկը կ'ըսի.
— Նսա իմնչ անող բան ի, բանջար կը բրդիմ։
— Խրողըկը, կ'ըսի Մհեր, դա՛ կը բրդես,
Ամա յես ել քինե ուսա, ել անող կը բրդիմ։
Սըլթան Զմըչիու ասկրի քա՛ք կտակին։
Մհեր կ'ըսի.— Ա՛խ-ե՛չ, յիմ խոր թոլ առի։*

Կ'ըլնին, կը գառնան Սասան քա՛ղաք.
Ուրենց Սասան Ջոլ տուն։

Գ

Մ Հ Ե Ր

11. Մհերը չի խաբվում Զենով Հովանի կնոջից յիվ ճրա զրպարտությամբ արտաքսվում և ցնից

Զենով Հովան չամա կ'ուրախանա.
Կ'ըսի. «Փառք քեզ, Աստված,
Ցեմ թոռ Մհեր ձի խասավ. ել չըմ վնխենա»։
Երկու-իրեք որ կը ննան տուն, կը խանգըստանան։
Զենով Հովան կ'ըլնի, կ'նհա Ավազ ասր նեջիր։

Մհեր շատ խորատ տղայ ի.
Տևսակով, քաղցրախոսուն, սըպասակակերպ ի։
Զենով Հովանի կնկա՛ սիրտ վըր Մհերին կ'ավրի.
Կ'ըսի.— Վորդի, ասրե, հևսոր ջա՛ր դի, ձի լոզացըցու։
Մհեր կ'ըսի.— Ա՛յ, մերկին,
Սկոն բան չըլնը, սմա՛թ ի.
Կ'ուզես, յես ջա՛ր դնեմ, դա՛ տասր, լոզացի։
Կ'ըսի.— Մհեր, չըմ դիտի սմա՛թ-սմամա՛թ,
Ջա՛ր կը դնիս, բիբիս, ղընձի կը լոդկըցնես։
Մհերի ճաբ կը կտրի, կ'ըսի.

---

* Ա՛խ-ե՛չ — ոխայ, Խ մ բ.

«Ինքն, ուր Աստված, տանեմ, լոկըցըցեմ»։
Քաւր կ'առնէ, կը հա չոլ, կ'ըսէ.— Արի, լոկըցի։
Կ'ըսէ.— Դուն Քաւր լից վար չեմ գըլխուն, չես լոկանար։
Մհեր իշ կ'անի, ձեռնէն չազատվի։
Ուր աչկեր կը խփի,
Քաւր կը լցի վըր ուր խրողրոր կնկան.
Շեբեփ կը գիտնա մըն խրողրոր կնկան գըլխուն,
Գըլուխ կը կուտրի։

Խրողրոր կնիկ կ'ըլնի, անզգամի նման կը հա,
Կը նստի տուն, ուր գըլուխ կը ծածկի.
Տխնամ՝ Զինով Հովան նեղիւրից եկավ տուն,
Մհերն ել եկավ, գինուց ուր խամար խաղալու։
Զինով Հովան կ'ըսէ.
— Կնիկ, ընչի՞ չըս ըլնի վեր,
Նեղիւր չեմ ձեռնեն առնի,
Կնիկ մարդին խաոնե, խետ խաբար չիտաս։
Զինով Հովան.— Ա՛յ հավաթ, կնիկ,
Եղ ինչ ի կ'անես չեմ գըլուխ հոր չոզուքիանով։
Կնիկ կ'ըսէ.— Յան քու քոռ կը մնա նա տուն, յան չես
կ'ըսէ.— կնիկ, ընչի՞
— Քու քոռ ձեռ կը քաղիր քըխ ձի։
Զինով Հովան կ'ըսէ.— Վայ, կնիկ,
Որ չոզուքինով նա խաչատակութին ի.
Նա իշ ի, դու տուտ կ'ըսիս.
Ցեմ քոռ ակնա բան անի՞
Կնիկ կ'ըսէ.— Ցես չատ ակոն բաներ չըմ գիտի։
Յան չես նա տուն պտի մնամ, չան Մհեր
Զինով Հովան կ'ըսէ.
— Կնիկ, դուն ըլնես, քու Աստված,
Ակոն մ' անի չեմ գըլուխ.
Ցեմ քոռ չեմ ձեռնեն մի խանի.
Դու կը տեսնաս՝ Սասան անուն ևն մեկ գնաց ի Պարսկ։
Սասան տան փակըղնելու քիք մի կտուր.
Ափսոս ի՝ Սասան տան փակըղ եհա, ինի դռներ,
Սասում մնա անառիր։
— Վոր ակոն ի, չես ա՛ըլնեմ, ոը համ,
Մհեր կենա քի խամար։

Զինով Հովան կ'ըսի.— Կնիկ,
Ասյու որենքին մեջ պատկուկ կնիկ թըղնել չըկըր.
Յես Սասման Ջոջ տանեն եմ,
Յեմ նամուսի խաթար ամոթ ի.
Դու, քու Աստված, իլի, գնա շինի, Մհեր թըղ չգա՜»

Մհեր հեվարին կը գա, վոր գա տուն,
Չոռ կը տա դռան, կ'աչկի՝ գնա փակ ի։
Մհեր կը հիմանա.
Կ'ըսի. «Յեմ խրոլըոր կնկան ապածն ի»։

42. Ասատախած Մհերը ծնողների գերեզմանի վրա. ծնողների խոհուրդը

Մհեր կ'ըլնի, կը թըղնի, լալկին կը հա, կ'ըսի.
«Ի՞նչըխ ինձի հետոր Սասման Ջոջ տանեն գրկըցին»։
Կը հա, վըր ուր խոր գերեզմին, կը լա.
Ասաղ կ'ըսի.

«Ախրիկ, քու անուշ քընուց վիր իլի,
Ընձի հետոր Սասման Ջոջ տանեն բերահր են ապած.
Ախրիկ, քու անուշ քընուց վիր իլի,
Ընձի հետոր Սասման Ջոջ տանեն բերահր են ապած»։

Աստուծու խաթանքով Դավիթ կը փոշտա,
Կ'ըլնի, կը նստի մըչ ուր գերեզմընին,
Կ'ըսի խաղով.

«Վորդի, ինչ անեմ,
Գնացի չահվար ձեռնես,
Գին, կերակ թափե հիրխես,
Լա՜ռ կարվե աչկերես.
Ոձ, կարիճ գին գրե վրես»։

Ել մ' ել Դավիթ կը պատկի, գերեզման կը գա հերար։
Մհեր կ'ըլնի, կը հա, վըր ուր մեր՝
Ատնդուխ խանըմի գերեզմընին, կը լա.
Ասաղ կ'ըսի.

«Մարե, քու անուշ քընուց վ'եր իվի,
Հետոր ընձի Սաաման Զոջ անկն բերահր արիր ևն.
Մարե, քու անուշ քընուց վ'եր իվի,
Հետոր ընձի Սաաման Զոջ անկն բերահր արիր ևն»։

Ասաուծու խրամանքով Մհերի մեր՝
Ամանդուխ խանըմ կը վոըշաա,
կը նսաե մըչ ուր գերեզմընին.
կ'ըսի խաղով.

«Վորդի, ինչ անեմ,
Գնացեր չահվաբ ձեռնես,
Գաձն, կերպ կարվի իրիսես,
կարվե ըյս աչկերես,
Ոձ, կարիճ բյն գրե վրես»։

Ասաուծու խրամանքով
Ել մ' ել Ամանդուխ խանըմ կը մանե ուր գերեզմանն.
կ'ըսի.

«Վորդի, դու գնա, դու գնա.
Ին ճանրաես, իչ դու ար հաա,
Բյր քյադած ի, ավազ մադած»։

23. Մհերի ծառակերությունն ու գութան աճելը

Մհեր ձին կը քըշի, կը հա,
Գայթան արող մարդ ըմ կը ասնաա,
կ'ըսի.— Ա՛յ, մարդիր, բարի հաջողում ծե։
կ'ըսին.— Աստուծու բարին քե, Մհեր։
կ'ըսի.— Ա՛յ, աղբերներ, անտիի եմ,
Մե ճոխ խաց չըք ի՞ստ ձի։
Գայթեր տեր կ'ըսի.— Ընչի՞ չընք ի՞ստա.
կա հանն, արաի գըլխե խաց կա. պինա, կի։
Մհեր կ'ըլնի, կը հա, կը ասնաա՝ խաց չատ կա ևնտեղ.
Ցոխ մարդու չլսայ ի, իրիք ավուր, իրիք գանձա։
Ին խաց հըմեն կ'ուտի Մհեր։—
Բա, Մհեր ֆերըդ ի, բա չ'ուտի, ինչ աներ։—
Ինանց մեկ գեղեցե մշակ կ'ըլնի.

Մշակ կ'ըսի.— Ա՛յ, մարդ,
Թո՛ւ մեր յոթ մարդու ջրին,
Իրենք ալճուր, իրենք-իրենք դանվա՜,
Կնաբար ըլլուն մեկ դանվա.
Թո՛ւ կը գա՞ս, մեր գո՛ւքան մե փաթ կան առա՛ր
Մհեր կը հա, Քո՛ռկիկ Ջալալով յոթ փաթ կան կը առա՛ր
Մշակ կ'ըսի.— Ենկ քի հադ չի,
Ենկ Քո՛ռկիկ Ջալալու հնարն եր՛։
Ի՛ջվի Մհեր, յոթ փաթ ել վռանով կան կը առա՛ր

24. Դեսնի բուլացուտը Մհերի առաջ յեվ Մհերի փակվելն Ակրփու ծարի մեջ

Կ'ըլնի, կը խեծնի Քո՛ռկիկ Ջալալին, կը հա.
Գետին հետջով Քո՛ռկիկ Ջալալու վռատց կը ծնդա՛ր
Մհեր կ'ըսի. «Հայ-հո՛, բնչ ի.
Գետինն ել խալխվորցեր ի,
Ցեմ ձիու վռատց տակ չդիմանա»՛
Աստուծու խրամանքով՝ Մհեր կը հա,
կը խառնի Ակրփու քյոր՛
Քյոր կը բացվի, Մհեր, ուր ձիով կը մտնե մըշ քյորին.
Քյոր կը գո՛ փիրար՛

25. Վերջաբան

Կ'ըսին՝ Ըն որ իշ քյոր քյողնե, ավազ մաղնե,
Ենե ժամանակ Մհեր որ գո՛ գա՛ր
Կ'ըսին՝ Դել Մհեր գինքն ել, ուր ձին ել տաղ ի՛ր
Մըկա, կ'ըսին, ենե տեղ արած ի վանքո՛ր
Ամեն տարի Ամբարձման կ'ը հան ենտեղ ուխտ.
Շատերուց ել լսեր ենք.
Ենու ձին՝ ուրբաթե-ուրբաթ ենու ջրվածք կ'ըլնի.
Ենե քյորի հետջով կը թացվի.
Ջամեն մարդն ել ախիր ի՛ր

Քառասուն ոտքամին տանք Սասման Ջոջ տանո՛ր
Շեն ու պոծատ կենա
Մարութա Բանձր Աստվածածին վըր ուր խըմանո՛ր

Հայերի ներկան վիճակը

Ազգասիրական
Հետաքննություն
Մանուկ-Հասակ Հայազգեաց

Ամի աստուծոյ ՌՈՒՀԵ
Հետաքնիչ Հայրենակից մի Հայոց

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումը հանել ենք Եփր. Լալայանի արշավախմբի նյութերից, որոնք պահվում են ՀՍՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտում։

Պատումը պրն յն առել Շատախցի Շահեն Կուժիկյանը, որը՝ ներկայումս ապրելով Սերեմանում, աշխատակցում է Կ. Գ. Ինստիտուտի Ֆոլկլորի և քրդագիտության սեկտորներին։

Պատումն առաջարան չունեցր։ Շեռապրի վերջում կար մեկը հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Շատախու Սակ գյուղացի Բուժոյի կինն Մանուշը (Մանուշակ) 1915 թ. նոյեմբեր 15, Սերեման»։

Բանահավաք Շ. Կուժիկյանի միջոցով անցկացանք, որ պատումիս ասացող Մանուշի աղջիկ Համլիկն ապրում է Սերեմանում և որ նա մոտից ազգրել է «ասել» ու յերգել այս պատումը։

Բանահավաքի առաջնորդությամբ՝ հանդուցյալ յերաժշտագետ Սպ. Մելլերյանն ու յես գնացինք տիկ. Համլիկի մոտ, առաջնինք պատումը, «ասել» տալով կարևոր հատվածները, լրացրինք «խաղերը» նոր փորձիկ հատվածներով և ձայնագրինք վոճերն ու բառերը Համլիկը գրեթե բառացի պատում եր Շ. Կուժիկյանի գրի առածը։

Այդ մասին հիշատակել ենք ծանոթագրություններում։ Համլիկի բոլոր լրացումները մենք մտցրել ենք պատումի մեջ, դիտելով այդպիսիները, որպես մտացածին չգրանցված բնագրային հատվածներ։

Սպ. Մելլերյանը նոտագրել և Համլիկի «խաղով ասած» կտորները։

Մանուշը Շատախի Հին Ննգ գյուղի բնակիչ Միրզո Ջաղո Ջաղոյանի աղջիկն եր 13 տարեկան հասակում նա ամուսնացել է Շատախ Սակ գյուղի բնակիչ Հովհաննես Բուժո Գոդոյանի հետ։ Մի քանի տարի անց նա այրիացել է և ամուսնացել Սերեմանում Համլիկի հոր՝ Ալի Ալիյանի հետ։ Մանուշը Շատախում ունեցել է 3 յերեխաներ։ Սերեմանում ծնվել է 4 յերեխա։ Մանուշը հայերեն գրել-կարդալ չգիտե։

Մանուշը մահացավ 1927 թ., 57 տարեկան հասակում։

Համլիկը չգիտե, թե յերբ և ուրից է ծագել «Թավիլի հեքիաթը»։ Ասում է, թե լինչպես բանտարկյալներն ու հարևանները հավաքվում էին նրա հոր տունը և յերկար գիշերներով պատմում «Թավիլի հեքիաթը»։ Համլիկն

ասելով՝ երբ հորեղբորորդին Ավետիքը (Ավդոն)* շատ լավ գիտեր «Դավթի հեքաթքը։ «Նա կը պատմեր և խաղով կ'ըսեր»,— ասում է Համբիկը։

Մանուշը գիտեր բազմաթիվ յերգեր, խաղեր ու հեքաթներ (հայկական և քրդերեն)։ գիտեր նաև «Ելլէլի Մաջուան», որ քրդերեն եր պատմում և յերգում։

Նա սիրով եր պատմում իր գիտցածը. պատմում եր բոլորին, մանավանդ իր յերեխաներին։ «Ծատով» ասվող կտորները յերգում եր շատ դանդաղ ու անուշ ձայնով։

Մանուշը խոսող-ասող, պատասխան և կատակասեր կին և յեղել։

Ողջվելով ս. Համբիկի և բանահավաք Շ. Կուժիկյանի պատրաստակամությունից, մենք մի քանի անգամ միասին կատղացել ենք այս պատումը և վեր ենք ածել արեվմտահայ ստատգրաձևությունն արեվելահայ գրական ստատգրաձևության։

Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՑԱՆ

Համապատասխան տպագրական նիշեր չունենալու պատճառով, գիրքս տպելիս, մենք ի վիճակի չենք այս պատումի իր լեզվական բոլոր նրբությունները լուսաբանելու։ Լեզվական-քերականական նեղ շրջանակների մեջ հնարավորության սահմաններում մենք տալիս ենք հնչյունական նրբությունները։

Բացի յերկար ձայներից՝ պատումիս տպագրության ամբողջ ծախսը մեր իսկ

ՀԵՂԻՆԱԿԸ

* Տես № 16 պատումի առաջաբանը։ Խ մ բ.

ԴԱՎԹԻ ՅԵՎ ՎՐՆԱՒԻ ԿՌԻՎԸ

1. Աղխատացած Վրիաթը ճախտուդ և դառնում իր յաղթայրենիք՝ Մելիքի յետ Հովանի մոտ

Կ

ընը, կընը, իրենք ախպեր կընը.
Մեկի անուն Մելիք, մեկի՝ Վրնար, մեկին՝ Հովան ևր,
Իրենք ախպերքեր ուրենց կեղրանք պատճռցին.
Ամեն մեկ գընաց վեր ուր կեղին,
Հովան, Մելիք շատ խարուստացան.
Վրնար ախքրտցավ, շատ նեղ ընգավ.
Իրի, ըվինք նեռել մա երկու ախպերքեր,
Ասց.—Յես կը խնթրեմ, յես նեղ տեղ եմ ընգեր,
Յես չկերցա ձի կառավորեր և.
Ձի հարպատմ անեք, ռենջրրրքենը ըմ, պա մ' տաք ձիկ,
Յեմ ըղարեն իլնի.
Ի խովըվրքենից, ի նախրորքըքենից, պա մ' ավեք ձիկ.
Յեմ ըղարեն իլնի,
Երկու ախպերքեր գան արին նախրորք,
Վրնար տավրի վռանեն իշ նալ, ինչ կ'եներ, բանրավեց.
Շուր ուր կանվըլ ինչ ըըմըմավ, ուր հախին եղ առեց,
Հա ուր նալի կռուրքերուն կընաց ուր տուն,
Կընաց մա ուռքեն, ուր նալի կռուրքեր խռուր,
Հալցոց, եղան փեսի ձեր, արաւ գոմի ուր խըմար,

2. Վ.քհարը յավ իր ծառաներ՝ Կուզ Բահդին ու Հասան Բեկը պահում ևն Մելիքին

Անոնք երկու խոլամ կըներ.
Մեկ Կուզ Բահդին քաքամպերան,
Մեկալ անուն Հասան Բեկ եր
Խոլամքերուն ըսաց.
— Ի՞նչ անենք քա յեմ ախպերքերուն, ինչըխ չանենք,
Խոլամքեր կ'ըսեն.— Տոն մի գնասուր տուր,
Մենք գիտենք՝ ինչըխ կ'անենք,
Են ել 'սաց.— Յես ալիր եմ ծեր ծեռ,
Ի՛նչըխ գիտեք, ասկոն արեք,
Խոլամքեր կ'երթան տեղ կը փորեն,
Կը գան, ուբեն աղին կ'ըսեն.
— Երե, ընանք գոռեր,
Բի փաթըթենք, անենք հանատեղ.
Բ'ախպեր* կանչենք, պիրենք,
Ըսենք՝ վ.քհար մեռեր, երե վերեն,
Պիրենք, մտուցենք տեղ, ըսպանենք, մնա գնկ.
Ախպեր տարան, փաթըթըցին, տըին հանատեղ.
Հորոխկըցին, Մելիք պիրին վեր ախպոր,
Մելըքին 'սըցին.— Մա մտի ք'ախպոր տեղ.
Մա խենք՝ անոն բաժնով ի, ինչըխ ի
Մելիք խա մտավ հանատեղ,
Քաքամպերան Կուզ Բահդին
Զամփ ըմ ախպոր կըշտեն առեց,
Եզար մա Մելիքի կըլխուն, մնաց հանատեղ.
Խոզ ալին վերմն, պախըցին, իկին ուբենց տուն.

3. Վ.քհարը պահանջում ե Հալանից Մելիքի կինը յեվ յոր տարվա հարկը. Մելիքի կնոջ սուգը յեվ ուխտը

Գալ ուբենց ժողով տըին.
«Ախա՛ ինչըխ անենք, ինչըխ չանենք»։
Վ.քհար 'սաց.— Յես ա'նհամ, անոն կնիկ պիրեմ ձիկ։
Կ'առնի ուր խոլամքեր, կ'ենա Հալանի տուն.

---

* Զայնավորից առաջ «ք'» — քո, ք'ախպեր — քո ախպեր։ Խ մ ք.

Կ'ըսէ.— Ան Մելքի կնիկ ալ առաւ ձիկ.
Ան յոթ տարուան խըրջ ու խաբայ ալ առաւ ձիկ։
Են 'սաց.— Ցեմ ախազոր կնիկ տղավ չ, չես չըմ ըտաւ.
Ցես յոթ տարուան խըրջ ու խաբայ ավոզ եմ, կնիկ ավոզ չեմ։
Մելքի կնիկ կընայց, մտավ ուր հոդին, առաք պռնեց.
'Սաց. «Զուր մանչ չեմ ոխտին չեմ ոըզին չիլնի, հոր հնչ առնի,
Ցես արեվմտըս չկամ»։

Գ. Մելիքի վոդի՝ Դավթի մանկական չարութիւնները

Ադամ խառը, անոն լամ կըլայ.
Անուն որին Տավիթ։
Տղեն շըտա կը ճոճաներ.
Ըռատամ կը, որն կը ճոճաներ։
Հաւրիշ տղեաներ թի տարի մ' կը ճոճանեն,
Ան որն կը ճոճաներ։
Տղեն կըտայ քըտխոխիկ,
Կ'եներ, խատ ճժերուն ճանն կը խաղեր։
Կեղտկան ճժեր չեն կենա ատեմ առնեն.
Անոնց զըմենանց կը բաշրատիր,
Կը լցեր ուր չոր կը գեր առուն։
Ճժեր զըմեն կ'ենեն ուրենց առուն, կը լեն։
Անոնց մերեր կը գեն մա Հոլան,
Կ'ըսեն.— Աղա, կը խընթրենք՝
Տա թամբի մ' ատի հըրճիվ նա տղին,
Մեր տղեաներ կը ցավցըցի։

Ե. Դավիթը գառնուրած չիլ ճախարդ

Դերխա խրտխտեր կը պիրի,
Կը անի հըրճիվ ուր կառներուն։
Վըտր Տավիթ կ'երթա հըրճիվ կառներուն,
Վըտր կը տանի տար, հինք կառներ կը թըղնի տար,
Կ'ենա խատ ուր քնճիներ։

Կեղտ բերվորքեր կը հառն՝ վոխչար ալ կիլեն.
Կ'աշկեն՝ հայ մըկա, հայ դեմ ել
Տավիթ կառներ պիրի,— Տավիթ չկա։

Խովիվ կ'ելնա, կը կանչէ...
— Հայ, Տա՛վիթ, կառներ պէ՛.
Տաւիթի կ'ինայ սար-քար, իշ ջանաւըը կա,
Յա՛ կառնեըուն կը պլըխ, կը մառւցի մա՛չ վոխչրին,
Բևըվոըքեր կը գա՛ն առւն, կ'ըսին Հավանին.
— Ի՞չ կ'անիս, քա՛ ք'Աատըծուն,
Տաւիթի իշ ջանաւըը կըեր,
Յա՛ կառնեըուն, քանց կառներ չատ,
Իպի, իլից մա՛չ վոխչրին,
Կա՛խ չե մի՛կ* ըսպաներ են, մի՛* կևրեր են.
Կը խնթրինք գա՛ն նատըցըցու.

Հանդա՛ց ըզՏաւիթի նատըցըցող,
Դա՛ր արաւ կևղի նախրա՛թի,
Մա՛ ախ՝ նախրին ինչըխ արաւ։
Դա՛ր նախիր ինչ տարաւ, իջող սար,
Ընգա՛ւ խատ ուր անըդան,
Նախիր կը ըլա՛վի ան սար-քա՛ր.
Հովիրին կ'ինի սար-քա՛ր,
Տաւիթի իշ ջանաւըը կա,
Յա՛ նախրին կը ժողովի,
Կը պլըրե, ըլցի մա՛չ կևղին,
Կևղական կը կա՛ն մա՛ խրոխպեր, կ'ըսին.
— Մինք կը խնթրինք՝ անան մ' անի քա՛ մի՛կ,
Մեր մևկին ոլախ չիկևր, մևկին ջանի չիկևր,
Բա՛նց ջանաւըը, հաւել գա՛ չիկևր մեր առւս,
Դա՛ր հանդուց ևլ ըզՏաւիթի կը նատըցըցի,
Դա՛ր Տաւիթին 'ատց.
— Տա՛վիթ, քը խեր ձեզ մարթի ևր,
Անան մ' անի, մինք կը խնթրինք.
Կևղ մի՛* ոը նատըցըցին վեր. մի ամա՛թ ի։

6. Վ.որոգրդություն. Պառավը չեվ վաճ՚ր վորոտեղուս

Ան ևլ անեղ ըմ տվից.
Դա՛ր համա՛նոր կ'ելներ,
Պառավս մ' կորկի արտի մեչ ըր կը սրպաներ,

* Մի՛կ, մի՛ — մեզ։ Ա ժ ր.

Ուր խամաք հանդի կը խաղեր.
Զուր հեվալին Պաուլու արտ կ'անի կալ՝
Անու խրոխպեր Հովան ելավ 'սաց.
— Տ'ահամ, յեմ ախպոր վանք ըմ կա՝
կընանց, աչք ըմ տա, կա՝

Պառավ ինչ կ'ահա, ուր արտ կը սխանա,
Տավթի առկոն ավրեր,
կ'ըսի Տավթին.— Թըլե՛ր Տավթի,
Թափի քը լեշդ, թափի քը միս,
երբ, քը խրոխպեր կ'երթա՞ քը խոր վանք.
երբ, ատն ել կընա նեձիր խա՞ քը խրոխպոր՝
Տավթի իրի, կը սխանա՝ խրոխպեր ծխանք քեչե ատա՞
կ'ըսի.— Խրոխպեր, յես ել տը գամ խա՞ քիկ՝
Խրոխպեր կ'ըսի.— Յես տ'ահամ նա՞ տարեր.
կիշեր տը ճամ տա՞ս, տա՞ տը վախանաս, տա՞ մի գա՞
Տավթի կ'ըսի.— Յես յեմ Աստուց չվախանի,
Շամախկի մ' տը տա՞, քը վիզ թռներ՝
Խրոխպեր ել ծեն չխանի, կը տանի խա՞տ ուր՝
կիշեր կը ճան վանք, կը քընանա՞

7. Վանքի վերաբնումը

Տավթի կը սխանա, վոր լա՞ կ'իլնի վանքի վերեն.
Տավթի խրոխպոր կը խաբցնի,
կ'ըսի.— Նա՞ ինչ լա՞ ի՝
Խրոխպեր կխոի՝ ինչ կի,
Ալ խոսքըս կը տա Տավթին, կ'ըսի.
— Տավթի, սարի խուվիլ ենք, կրակ կ'անենք,
Անոնց լանք ի, կ'իլնի՝
Տավթի 'սաց.— Ձե, յես կը սխանամ,
Մարթի կրակի նմուշ չի նա՞ կրակ՝
Խրոխպեր 'սաց.— Ձե՝
Ելավ, Տավթի լավանդիք
Եթա՞լ ուր նըշխի տակ, կող ելավ, քընավ՝
Տավթի կիշեր խանջա՞լ եթա՞լ, ճոթեր կտրեց.
Խրոխպեր քընուկ, կատա՞ն վանքին արավ, կընա՞ց՝
Խանջա՞լ եգեր վանք, իրի, տա՞լ խրոխպեր քընուկ.

'Սաց.— Խրոխպեր, մ' իլէ, իլէ վեր,
Լեռցավ, նա կրակ տալ գի կը կպնի։
Դեր խրոխպեր կ'ըսէ.
— Ալ մեռնիմ, Տանվէթ, չե նա սար է.
Շէնն կա, գաւառն կա, նահընդան կա.
Անոնց կրակն է, կը վառվի։
Դեր Տանվէթ 'սաց.— Յես Աստուց չվախանիմ,
Շատախկէ մ' որ գայիկ, քեզ վիզ թռնեմ։
Յես գացիր եմ, իկիր եմ.
Տաւ ձի ինչ խափըս կը տաս, յեմ խոր վանքն է,
Յես կը խնթրիմ, (խաղով կ'ըսէ).

«Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Յես տեր չունիմ, տաւ ձի արա տերութիւն.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Յես խեր չունիմ, տաւ ձի արա խերութիւն.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Յես մեր չունիմ, տաւ ձի արա մերութիւն.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Յես ախպեր չունիմ, տաւ ձի արա ախպերութիւն.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Տաւ կընդի ձի քառասուն սարակ.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Քի քենե պետն է քառասուն ուսթա.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի խըրխպեր,
Քի քենե պետն է քառասուն քեր տիղ.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Քի քենե պետն է քառասուն կամ տիղ.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի խըրխպեր,
Քի քենե պետն է՝ չոպանի չոր չոպանի կայնի յեմ
խոր վանք.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,
Քի քենե պետն է քառասուն վարդապետ.
Տո, խըրխպեր, մեռնիմ քի, խըրխպեր,

---

* Այս յիշիւս տողը չկայ Շ. Կուժիկեանի դրի առածի մէջ. ավելացրել է Համմիկը Կ. Մ.-Ո.

** Այս յիշիւս տողն ավելացրել է Համմիկը Կ. Մ.-Ո.

Չի քենև պետն ի քառասուն երեց.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Չի քենև պետն ի քառասուն փոքրավոր.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Չի քենև պետն ի քառասուն սարկավագ.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Չի քենև պետն ի չնպաթի որ անբիծք, կըրակի պատարագ,*
Ասչ խրիշտակ վեր չեմ ասչ թեվին իչնի.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Չի քենև պետն ի՝ Բաթմանա Բուղեն գաղդալան իչնի»։**

Խրթխպեր տեսավ տղեն՝
Ուր աչք իշկ ուղեց, իպի,
Մեկ չնպթըվան մեչ չնիցին,—
Վըհարն եր ավրեր,—
Պատարագ մեչ արին.
Բաթմանա Բուղեն պիրին,
Տրին հերճիվ առան, իկին ուրենց առուն։

8. Հարձակում վանքի վրա, հարկահանություն, Պառավի խրատը

Տավթի ախր մ՚ էլ կ՚առնի ուր անեղ,
Կ՚ելա Պառավու արտի մեչ լեր սպանելու
Վըհար լսեր, որ վանք շինած ին։
Տը գա, մա խեմ՝ վանք ախր մ՚ էլ չքալնե՞, առնի։
Վըհար կ՚առնի ուր խոլամքեր, կը գա վեր վանքին։
Ի՛նչըխ կ՚անի, չկենի տեմ առնի,
Կը քըղնի, կ՚երթա հետ.
Ուր ժողով խա խոլամքերուն կը տնի։
Խոլամքեր կ՚ըսին.
— Որ չկերցանք վեր վանքին,
Մինք ա՛երթանք, խըրջ-խաչըջ պիրինք։
Դեր քաքաղերան Կուզ Բանդին կը գա

* Համարին այս տողն այսպես է տրված, իսկ Շ. Կուժիկյանի գրքում առաջին «անբիծք իչնի» և «պատարագ իչնի» չկա։ Կ. Մ.–Ռ.

** Ձևերը և Մ.–Ռ.

Այն Հըսկն Բանկին մնա Հովան,
Հովան կը տանի ուր տուն,
Զափ կը տնի մանչ վուսկուն,
Վոր չափի, տա, տանեն։

Պառավ կ'երթա մն ուր պրտկն, Տանվիկն կ'ըսի.
— Թափի քը լեզը, թափի քը մխա,
Երբ, գո եկած՝ յոթ տարվան խաբկ-խաբանկ
Ըը խրոխպոր մռաեն կ'առնեն,
Երբ, մը Թը'դնի... Տու կըտրիճ ես։

9. Դավիթը հարկ չի տալիս յեվ պատուհասում և հարկահանիներին

Տանվիկ կը գա տուն, կ'ըսի.
— Խրոխպեր, ատ իշկ ի կ'անես։
Խրոխպեր կ'ըսի.— Խանկ կը չափեմ։
կ'ըսի.— Խրոխպեր, տու իլի վեր,
Յես կը չափեմ, տու չըս կիտի չափի։
Խրոխպոր ծեռնեն կ'առնի, վոր չափի։
Զափելու խատ՝ մեկ կը գանկի մանչ խոլամոչ կըվռուն։
Խոլամքեր կ'անեն, վոր ոը փախնեն,
կը խասնի մանչ տուն,
Բանքաչերան կուզ Բանդին կը պռնի,
Ատամքեր կը քիշի, երկու ոեզ կը շարի,
կը պըվըռնի անու ճակատ, կ'ըսի.— կընա՞,
Բանասուն տիր ք'աղի կնիկ անում իլնի,
Թը չգա յեմ կուխվ...
Խոլամքեր ճորին Թըդին, փախան,
Գացին, մտան ուրենց տներ,
Ալ աղին ել հերևման չելան։

10. Կուզ Բանդին վըտաքին պատռում և իր գլխին չեկածը

Վըհար, չանգի մ' ընցավ,
Տեսավ, վոր խոլամքեր չերեվացին,
Անրցընեց.— Նա ինչ եղած, ինչ չելած։
Երկու տղա 'սըցին.

— Նա չպատճի ըսի կա՝ եկած, գացած ուրենց տուն։
Ըսաց.— կանչէք, գան յիմ տխմաց.
Նա ինչ բան է, եկած, ձի հիմաց չտված,
Թող կանչըցին, պիրին։
Ըսաց.— Նա ինչ բան է
— Մինք, 'սիցին, տ'նհամնք,
Տը պիրինք հերկեն կնիկ՝ հուգա պատնա,
Պիրենք կոլոտ կնիկ՝ երկանք ագա։
Յեմ թախմին շատ թախմին եր.
Յես չկիտցա քաբ-կապան եր.
Յես յիմ խալխին տաշտ մնգին եր.
Յեմ թախմին տանա թախմին եր։
Գնցի, տեսա Հովան չեր,
Ատնա նորթխանա տղի մ' եր։
Նա ոչխին եկան մեր կըլխի,
Ատնա հուշտունց է տուր...
Թող ալ յիմ կործ չի,
Ջը կործն է, տա'ւ կիտես։

11. Վրիաթի զորահավաքն ու արշավանքը յեվ պատգամը Հովանին

Թող Վրհաթ կ'իլնի, ուր մատ կը ճըղի,
Ուր մատի երընով կիր կը կըրի յոթ քաղաք,
Թի տանե մ' տաքար ձի գոն,
Լատնք յոթ տարի,
Նոր տնտւ տաքըրի պոշ խըլըտավ.
Ատկոմ ինչ տաքար իկին։
Իկին, տրիցին Տաւթի սընոր
Ուրենց խոխաթքեր գործըցին, նատան, վոր կատրտ հորոխկեն.
Թի. «Տաւթի ինչ մարթ է, մինք իկինք, գա մեր կոխվ»։
Թող Վրհաթ երկու խոլամ հորոխկեց մա Հովան,
'Սաց.— Յես իկիր եմ կոխվ,
Մա խոմ ինչ կ'ըսի. չըսի՝ ձի ակախ չարտավ։

12. Դավիթը Պաուավի խորհրդով հարեղբորից առնում է իր հոր ձին ու սարբ յեվ գինավառվում է

Տավիթ եվ մ' եվ, ուր անեվ ծեռ,
Գա մանչ Պաուու կորվին,
Պաուավ եվ ըմ կ'եհա,
Կ'ըսի.— Թըվո՛ր Տավիթ,
Թափի քը լեյր, թափի քը մ[ա],
Ցեմ ամա կ'ավրես.
Երի, գա անքար իվեր վար քը խրոխպոր կոխվ.
Տա զոռա յես, երի, կընա կոխվ։
Ան եվ կ'ըսի.— Մամիկ, հաւր ի։
Կ'ըսի.— Երի, քի շանք տամ։
Տավիթ կը գա։ Ան եվ կ'ըսի.— Գա՛ հաճո։
Տավիթ ծեռ կը տա, բարդի ծառ ըմ կը քեշի,
Կը անի վար ուր թիվին, կ'երթա։
Պաուավ կ'ըսի.— Թըվո՛ր Տավիթ,
Թափի քը մ[ա], թափի քը լեյր,
Ամով ա'հետ կոխվ.
Ձի քը խոր ծի կա,
Ի՞ր խոր ոբմ կա,
Ի՞ր խոր թուր կա,
Ի՞ր խոր հրմանն ինչ կա։
Կըքի վար քը խրոխպոր, վոր տա քիկ։
Մամիկ եվ մ' եվ կ'ըսի.
— *Կընա ախթախանանն, խինդ ծի կապուկ հանաի ի.*
Ծեռ տու քամակ. վարու քամակ եճավ, ան քը խոր չի։
Վար ինչ ծեռ տաս քամակ,
Ականն եզեր պատ, կրակ վոքիրուց ելավ,
Ան քը խոր ծիու մատակն ի։

Դեր իրի մա խրոխպեր խաղով 'սայց.

«Տո, խըրոխպեր, մեռնիմ քի, խըրոխպե՛ր,
Ցես տեր չունիմ, ամա ձի արա տերուքեն.
Տո, խըրոխպեր, մեռնիմ քի, խըրոխպե՛ր,
Ցես խեր չունիմ, ամա ձի արա խերուքեն.

---

* Այս յերկու տողն ավելացրել ե Համիկը։ Կ. Մ.-Ռ.

Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Յես մեր չունիմ, ոմն ձի ասա մերութին.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Յես ախպեր չունիմ, ոմն ձի ասա ախպերութին.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր ծին թամքուկ, վոր
երթամ կռիվ.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր Ծանդը Գերդ.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր Բուղումի Ռըմ.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր Թուր կնձակեն.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր Քամար Մհչկին.
Տո՛, խըրթխպեր, մեռնիմ քի, խըրթխպե՛ր,
Ձի քենե պետն ի յեմ խոր Ջըղմիքն ի վռասց»։*

Խրթխպեր տեսավ, վոր ուրիշ ճար չկա,
Խոր՝ Մելիքի ծին եխան տուս,
Ձոխ տիր լինցին, խուռ քամքել.
Խոր խալըվքեր խանըցին, խոպըցին Տավթին,
Խոր քամար կապըցին Տավթի մեջք.
Քամար ճոճ իրի մեճաց.
Ձոխ փախ փախըրըցին, Նոր իրի խոր կայդ, կապըցին,
Ջըղմիք յոթ կիսոր պամբակ լցըցին,
Նոր իրի խոր կայդ, խագալ,
Ասա՝ Տավթի տալ պտիկ եր,
Խանըցին, խեճըցին խոր ծին,
Խոր ուրմ, գերդ տվին ձեռ
Կաց պարով արավ խրթխպեր, կընաց կռիվ.

13. Քիու խոռան ապրյուռի յեվ Պաղվաշի այան մասին

Կընաց, սարի վերեն գնշմընի տեմաց տատրակ.
Ասավածուքին հիմաստ խուռ, լեզու իրի ծիուն,

* Տե՛ր և Կ. Մ.-Ն.

Ծին 'սաց.— Տավիթ, նա տու դմր կ'երթաս.
'Սաց.— Չէ տու գա կը տխնաս.
Գա յեմ գաշման կայներ է,
Յես տ'երթամ ձնունց կռիվ։
Ծին 'սաց.— Թի տու յեմ խաբրմիվ կ'անես,
Ֆի կռիվ պիրոզ իլնի.
Թի չըս ձնե, չխու տաբրցի, ևհանք տուն։
'Սաց.— 'Սա, քի խաբար տ'անեմ։
Ծին 'սաց.— Հանաեզ, ինչ յես կը կայնեմ,
Չի մը գա'նի, չլսգես, վար ձիկ.
Ֆը խոր խանքամեզմանքն է,
Պովաե սուն ըմ կա, հախպաը գա խա կշտին.
Յես հանաեզ ար տաբրեմ։
Թի տու քը խոր Ֆուր գաբկըցիր,
Մեկ գաբրով կոըրցիր,
կալամ վար կալամի տաբրեմ,
Չխու քը կռիվ պիրոզ իլնի,
Թի չե՝ խո հետ տաբրցի։

14. Մաճուկ Թավիթը գառնում և ուզր յեվ կռում և սյուցը

Հանաեզ Աձու խրամանքով,
Տավիթ իրի ուր խոր կայդ։
Գամբակ չըզմեքարկուց եխան,
Ֆամար ձրցըկից, մեկ փաֆ կապից,
Զըմեն դեխեն իրի խոր կայդ։
Տավիթ ծին քըշից, կընաց մա Գովաե սուն։
Թուր քնշից, եզար, սուն կտրից,
Տատրավ կալամ վըր կալամի, խոր կայդ։
Ծին 'սաց.— Գիրդ իլնի քը կռիվ,
Չվախանաս, համան կընաե կռիվ։

15. Թավթի վախը յեվ ձիու խոռհուրդը

Տավիթ կը քըշի, կ'եհա վար դարի 'մ.
Ծին կը կայնի հանաեզ։
Անու գաշման տեմաց եր։
Տավիթ աչկից, տեսավ, ըսաց.

«Մեռնիմ քի, Աստված, պարթաւած Աստված,
Անունք իշնին պարթակ, յես իշնիմ կրակ,
Յես չըմ կենա անունց վրոխ,
Մեռնիմ քի, Աստված, պարթաւած Աստված,
Անունք իշնին մոխիր, յես իշնիմ քամի,
Յես չըմ կենա անունց տանիս։*
Մեռնիմ քի, Աստված, պարթաւած Աստված,
Անունք իշնին ափաղ, յես իշնիմ անձրով,
Յես չըմ կենա անունց Թանաս։**

Տաւիթ վոր ժժարացավ՝ նա խաղ ըսաց,
Ծին՝ ել ըմ լեզու իրի, ըսաց անոր.
— Տաւիթ, Տաւիթ, ի՞չ կի կը վախանաս.
Քանի մ' ատ քը քրով սրպանես,
Երկու ասկոն յես յեմ պոչի մազերով սը սրպանեմ,
Տաւիթ, Տաւիթ, ատ մը վախանան.
Քանի մ' ատ քը գըրզով սրպանես,
Երկու ասկոն յես յեմ վոտաց նագերով սը սրպանեմ,
Տաւիթ, Տաւիթ, ատ մը վախանան.
Քանի մ' ատ քը խոր ագռով սրպանես,
Երկու ասկոն յես յեմ շնչով սը քեշիմ վի
Ծին ել մ' ել 'սաց անոր.
— Տաւիթ, քի վոսկերք ըմ ել կ'անեմ,
Ալա յեմ խաբրկից չիլնես.
Ինչ կը պիրեն քը տեմ, չկայնես.
Թի խարտնես կը պիրեն քը տեմ,
Թի սաղ կը պիրեն քը տեմ, չկանչնես,
Անունց բանալիշ տաս, ընդրնես,
Թի չի՝ քիզ սը լիրեն, պռնեն։

16. Դավթի հարձակումը թշնամիների վրա յեվ բանվոր ջահուկ պատանի հնարքով

Դեր քըշնց, կըռնաց մեշկիր.
Տաւիթ եղաւ, կոտորեց.
Տաւիթ ուր դեխան, ծին ուր դեխան...

---

* Շ. Կուժիկյան՝ «փչիր», հատկ. «տանիս»։ Կ. Մ.–Ի.
** Վերջին յերեք տողը հավելում հատկիկի, Ձերգ եւ Կ. Մ.–Ի.

Երբեմն կեա կայնավ։

Ջրհաբ տարան վըհաբև կոբին,
'Սըցին.— Երթ, իշ կ'անես.
Երբեմն կեա կայնավ. թայըլը ըմ արա՝
Վըհաբն կոր հարս-փեսա չինեց,
Սազով հարոխկից տեմ, ըսաց.
— Մա խեմ՝ չընք կենի տատըրըցի, պռնի՝
Ասկոն կ'անին, չըն կենա պռնի,
Համա անանց բախըլ կը թալեր, կ'ընցըներ՝
Կրակ թալցին երկնուց ցածըր.
'Սըցին.— Տավթիթ, Տավթիթ,
Երկնուց կրակ եճավ վեր քիկ,
Վաղն երթ, հաբքաշ եհան ուբենց տուն՝
Տավթիթ ան ել չըտավ՝
Ել մ' ել ալաչ չաբին խեա,
Զկերցան պռներ են՝
Դերես ժողովք ըմ տրխցին, ըսըցին.
— Ապա իշ ալաչ անենք՝
Մեկ 'սաց.— Նա մոռու կեղ անհրիրանդ պառավ ըմ կա.
Թե ան ալաչ ըմ անի, թե չի՝ ճար չը'ընի՝
Դեր հարոխկըցին, ան ծըծում խնծող պառավ
Պիրին, հարոխկըցին անա տեմ՝

Տավթիթ ապքեր զըմեն կոտ արեր եր՝
Պառավ իրե, ըսաց.
— Տավթիթ, Տավթիթ, մեռնեմ քիկ,
Մա տատրե. տու նա իշ կ'անես.
Նա զըմեն մարթեր սըպանըցիր,
Ասնե մ' մեխք քի չինըցիր.
Տա չընել մարթ իս, մեր մատաղ քիկ՝
Ասնա պռներ կ'ըսի,
Շեռքեր կը տըրփի վեր ուր սրտին...
Տավթիթ խելք կ'եհա, կ'ընգնի,
Զընջիլ կը թալեն, վոր Տավթիթ կապեն՝

17. Քեռով Հովանն ասդով իմացուտ ի Դավթի վիճակը. նրա խրատով Դավիթն ազատվում ի

Անու թրոխակը անու աստղ կը ճանչըներ.
Տեսավ՝ անու աստղ խոնարխեր,
Ելավ, կնկանն ըսաց.
— *Իլի, չեմ շըրխա առ, եհանք,*
Չի կապի վեր ծառի մ',
Իյամ, մեկ ծենեմ Տաւիթին,
Անու աստղ խոնարխեր.
Ցեմ ադին պա մ' կա...
Ամա անու Ծենով Հովան կ'ըսեն,
Վոր պոռեր, յոթ կեղ կ'ընցըներ անու ծեն,
Անու կը կապեն, վոր անու բողազ չճըդվեր,
Անու կնիկ պան շըրտով կապեց վեր ծառին,
Ծենով Հովան կանչեց, ըսաց.
— *Տաւիթ, Տաւիթ, մեռնիմ քիկ, մեկ ա՝*
Ցա, մեռնիմ քիկ, Մարութա Պանցր Աստածածին,
Մեկ քի թափ առ...
Հովանի ծեն կընաց, տատ Տաւիթի ականջ.
Տաւիթի խելք կըլնա իրի, ըսաց.
«*Ցա, Մարութա Պանցր Աստածածին*»...
Հինք թափ խոռը, զընջըլքեր պըրտըվավ,

18. Դավիթը կոտորում ի բենամիներին, բերում ի Վրիաբի գյուխը. մայրը սգահաս ի լինում

Ելավ, ձեացած ոտքներն ել սըպանեց, մեկ չիթող.
Պատանին ել հանտաղ սըպանեց,
Դեր քըշեց, կընաց Վրհաբն կորի առն.
Կընաց թաթխ Վրհաբն կոր,
Անու առն թաթանեց, խոռը հիրճով ուր, խալի,
Վրհաբն կոր փախավ, Տաւիթ ընդաւ հետի,
Մանչ Քաբե կալին գիրդ ըմ եղեր,
Զուր վիզ կընաց մանչ կալին.
Թուր ըմ եղեր, վիզ կտրեց,

Եզնը արմի ծեր անուն կըլլա,
Ան անուն Թալան-Թուրանին առաց, իբր։

Անուն մեր նոր հանուր անձն ելլավ տալս.
Ուր անդ իբր տեղ։

Սաղ տարան Տալխի տեմաց. սաղով առին, պիրին.
Տրին անուն խոր տեղ. Տալխի ելլավ ճիչ։

Անոնք հանտեղ խասան ալեննց մրագին,
Տուք ել բառնկ խասնևք ծեր մրագին։

Աստղիկի երեք

Հեղինակ Վիլիամ
Տեր-Հակոբյան

Սեռեմբերին 1916 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատումիս ձեռագրի առաջին չերեսի նախ անկյունում բանահավաք Սեն. Տեր-Հակոբյանն ունի ասացողի մասին հետևյալ ծանոթությունը.

«Ջագուռ անունից Գրիգորի (Աստուրի, Սևոյի վոլոի) պառմածքու Հինենց (Շատախ) գյուղից, 60 տարեկան, անգրագետ. հայկենիքից դուրս չերկար ապրած լինելով, պրական բարբառին ընտելացած։ Փոքր հասակում լսել և սովորել է իր հարևղրոջից»։

Ս. Տ.-Հակոբյանը Գրիգորից գրի առած ունի նաև հետևյալ հեքաթները՝ «Բեղրխան Ամիրանը», «Շահ Իսմայիլի հեքաթը», «Զլայըսկ» և այլն։

Մեր հարց ու փորձը և պրպտումները ասացողի կյանքի նկարագիրը ավելի մանրամասնելու և պատմելու արժեքը բնութագրելու նպատակով ապարդյուն անցան։ Ասացողի չեզոն շատ ողնաս է։

Պատումիս ապագային թողի մի չերկու, այլ վարիանտներում չերգվող հատվածներից, ամբողջովին մերն է։

ՀԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ա

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

1. Նախերգանք

Ը ասաւ ոդոբմին,
Տը հիշաւ զոդոբմին Քրիստ Մհերին,
Վոր դու Մհեր իս.
Տը ասաւ ոդոբմին,
Տը հիշաւ զոդոբմին Յանդուստ խաթունին,
Վոր դու խաթուն իս.
Տը ասաւ ոդոբմին,
Տը հիշաւ զոդոբմին եղ Ջինով Հովանին,
Վոր դու Հովան իս.
Տը ասաւ ոդոբմին,
Տը հիշաւ զոդոբմին Թըլոր Դավիթին,
Վոր դու Դավիթ իս։

2. Միհրի վոդի Դավիթն ու սրա խոթ չեղբայր Մարա Միլիքը

Մհեր ուր անդից գնաց Մըսրա տեղաց վըրեն,
վոր առաջ տուրք կը տեր, հետո կոթիցներ.
Եղ պատճառով Մհեր գնաց Մըսրա տեղաց վըրեն.
Վըր Մըսրա տեղաց քաշեց տուր,
Մըսրա Միլիքի կին իր համար իրեր։
Եդոր մեկ տղա կըներ.
Անուն եղի եդի Միլիք։
Հետո ճաց, ժամանակ վըրեն անցավ,
Մհեր Սասմա մեռավ։
Վոր Մհեր մեռավ, Մհերի կին ծոցվոր եր։
Եդոր ժամանակ լցվավ, եդոր տղե մ' ելավ,
Անուն իդիր Դավիթ։

Մհեր վոր մեռավ, Միլիք գնաց իր հայրենիք.
Միլիք ուժեղացավ, կոթիճ լավ թագավոր մ' ելավ։
Ընդուց լավ թագավոր չկար։
Հետուց մի անգամ կայնավ, թուղթ գրեց,
Ուր տեղաց մեկ ցլվեց, ասկեր հավաքեց,
Վոր ուղի երթա Սասմա տեղաց վըրեն։
Սասմա տեղ կոտորեց,
Տաս-քսան մարդ եդ Մհերի տեղեն պրծան։
Վոր Միլիք եռեդց վոչխար, տավար կը տաներ,
Միլիքի մեր ուր տղեն դրկել եր ուր սրտին,
Ջինք պատի առաջն եր տվեր
Դավիթ երեխայ եր, ելավ,
Միլիք իմացավ, վոր իր մեր Դավիթ դրկեր,
Գատի առաջ դադրեր եր,
Ասաց.— Մարե, արի երթանք։
Մարե, ինչ տղայ ե քու դիրկ։
Ասաց.— Միլիք, քու ախպերն ե։
Դավիթ եռոր հետ գնաց, գնաց Մըսրա տեղը։

3. Դավիթը Մելիքի տանը. նա բռնում, ծգում և Մելիքի հոլը. Մելիքի վախը Դավթից

Մելիք կայնավ, ֆիքրըդ-փնջլավան հավաքից,
Ուզեր եր, վոր երթա Քաջբե կալ խաղին.
Դավիթ ուզից Մելիքի խնա երթալ, թամաշա անելը
Մելիք ասաց.— Դավիթ,
Դու երեխայ իս, իմ խնա մի գա,
Մելիք վոր հակառ ասաց, Դավիթ ելաց,
Ասաց.— Պիտի գնամ քու խնա
Մելիք չեթող. մերն ասաց.
— Թ'ախպերն ես, տանը խնա քեզ։

Մեկտեղ գնացին ուր կուրիճ մարդեր.
Ֆիքրըդ-փնջլավան մեկտեղ գնացին։
Գնացին գաշտի մեջ, Քաջբե կալի մեջ հոլից խաղցին։
Դավիթ նռուցին եղ կալի կուշտ։
Վոր հոլից խաղացին, սրեն եկավ վրը Մելիքին։
Դավիթ ուր տեղաց կայնավ, գնաց,
Ուր ախպոր առջից հոլն երթալ երկնուց երեսն վեր։
Իրեք որ գիշեր-ցյուրեկ
Եղ հոլ նոր խառավ երկնուց երեսից գետին։
Մելիք քըրթավ ուր ախպոր մոտից,
Ուզից ուր ախպեր Դավիթ ապաներ։
Եռար մարդիկ, ֆիքրըդ-փնջլավանքներ 'սիցին.
— Մելիք, ինչի կը քըրթես ք'ախպոր մոտեն.
Են ադայ ի, ինոր խելք չեն անեն եղ գործին.
Եղու խառար քու հոլ երթալ վեր երկնուց երեսու
Մելիք ասից.— Պիտ' ոըպանեմ իմ ախպոր, հար չկա ել
Հետո ենու մարդեր 'սիցին.
— Ախը'ր ք'ախպեր ոը սըպանե՞ս,
Երթանք տուն, ք'ախպոր փորձ անենք։
Մելիք ասից մարդկենուն.
— Դու ինչ փորձ ա'նենք իմ ախպոր։
Ասին.— Մելիք, սինի մ' ոսկի, սինի մ' ել կրակ
կը դնես ք'ախպոր հըռջեվ։
Թե վոր ք'ախպեր ձեռ պարզից, երթալ թող ոսկին,

Ք'ահպեր սըպանելու հրաչիվ կ'ընկնեի.
Թե վոր ձեռ պարզեց Թաղ կրակ,
Ք'ահպոր խելք չխանդի.
Ք'ահպեր փոքր երեխայ ի, խելք չեր խանդի,
Ենդուց հոլ եքնալ Թաղ վի երկնուց երեա
Մելիք քոռ սիրա մ' առնի,
Եդ մի անդամ Դավիթ պրծավ ահպոր ձեռնից,

Տարին լմացավ հետ եդ քեֆի որ
Ելի եդ որ Մելիք կոչնավ, ուր մարդեր հավաքեց,
Տիր մ' ել կ'ուզեր երթալ Քաբրե կալ խաղալ
Դավիթ տիր մ' ել ասեց.— Ձեռ տի գամ խոտ քի,
Գամ, ձեր խաղ Թամաշա անեմ.
Մելիք ասաց.— Դավիթ, մեկ որ եկիր իմ խոտ,
Դու խորհուրտ արիր վըր ձի,
Իմ հոլ իմ հրաչիվից փախցուցիր.
Ել չեմ Թողնի գալ խոտ ձի.
Դավիթ տիր մ' ել իլաց. մերն ասաց.
— Մելիք, վորդի, ք'ահպեր Թող գա խոտ քի.
Ասաց.— Ջիմ Թողնի գա խոտ ձի.
Ի՞նչ պատճառով չիմ Թողնի գա,—
Իմ հոլ իմ հրաչիվից կը փախցուցի.
Են կ'ուզի, իմ գլխու դավին անի,
Եդ պատճառով իմ հոլ հրաչիվս կը Թալի.
Մերն ասաց.— Մելիք, վորդի,
Եսոր խելք չեր խասնի, եդուց քոռ հոլ եքնալ
Ես որ ուռ, տար խոտ քի. ամոր գիրի վրեն նստցուր
Ձեռ գա գացիք, Քաբրե կալի մեջ խաղ արիք,
Թըխ Դավիթ են բանձր տեղաց Թամաշա անի,
Ել Մելիք ուր մոր խաթըր չկոտրեց.
Դավիթ տարավ բանձր գիրի վրեն նստցուց,
Եսոնք գացին, Քաբրե կալի մեջ ուզըցին խաղալ
Տիր մ' ել հոլի սրեն իրի վըր Մելիքին.
Դավիթ հայհոյ, աշկեց, սրեն վոր իրի վըր Մելիքին,
Դավիթ ասեց. «Ձեռ գամ, ծնող հոլ հրաչիվից Թալիմ,
Մելիք ինչ վոր կ'անի, Թըղ ըսկուն անի»,
Դավիթ իր ախպոր հոլ եքնալ երկնուց երեա
Մելիք շատ քըրխավ, շատ բարկացավ ախպոր վրեն,

Ըսաց.— Նե՛ սահաթին իմ ախպոր տը սըպանեմ,
Դավիթ եղուց եթող, իրի մատ ուր մնու
Մելիք ըսաց.—Վոր յես եվարին հասա առէն, տը սըպանեմ.

Եղուց եվարին իկին առէն,
Դավիթ գինք ուր ախպոր վերեն պախիր.
— Մարե, Դավիթ տո՛ւր, յես տը սըպանեմ.
Ասաց.— Մելի՛ք, վորդի՛, մը սըպանի ք'ախպեր.
Նոքա վըր մոր բարկացավ, ջգրեց,
Մոր ճար կտրեց, ըսաց.—
— Մելի՛ք, Դավիթ վոր տը սըպանես,
Ա՛ռ, տա՛ր յոթ տարի հետեվ սըպանի,
Վոր հաոր ձեն չառնի իմ ականջ,
Բաղդր ծի՛ծ եմ տվեր, կերեր,
Ջիզե՛րա կը վառվի խեռ.

Ե. Մելիքը պատվիրում է սպանել Դավթին. սա հաղթում է փոխհրաձգութիւն։ Սրամիտ հնարքը թաթախում են ճապաոտակի արյան մեջ եւ տանում են Մելիքին

Մելիք ուր մոր խոսքըր չկոտրեց,
Ելավ, երկու լավ ֆերա-փե՛լավան հընտրեց,
Նա Մելիքն ըսաց հաոս ֆերա-փե՛լավանքներուն.
— Ըզ Դավիթ տանեք յոթ տարով դին, սպանեք,
Հաոր վիրեն չուխա, հետ կըեր,
Մելիք եդ ֆերա-փե՛լավանքներուն ըսաց.
— Վոր ը՛զ Դավիթ սպանեցի՛ք, եդոր հետ
Մեջ երե՛սին թաթխեք, ձը խամար բերեք.

Եդ երկու ֆերա-փե՛լավանքներն ըզ Դավիթ առին, գնացին.
Կ'երթան եդ երկու ֆերա-փե՛լավանքներ,
Կ'ուզին, զ Դավիթ սպանեն,
Բա՛ր չեն տեսնե սպանել զ Դավիթ,
Նկատ զ Դավիթ վոր առին, գնացին,
Նկատ ինչախացան, խաստո վըր Բաթմանա կո՛րմունքին.
Ընդեղ 'սացին եդ երկու ֆերա-փե՛լավանքներ,—
Դավիթ չի հիմանա,—
Ասացին.— Մենք ընդնինք Դավթի առիչք,
Մենք գնանք Դավթի հետեվ.

Վոր էյանք, խառնինք կըմտունջի կեստեղ,
Մեկն հաջևվից ուլըվինք վըր Դավթին,
Մեկն ել հետուց՝ զԴավթի թալինք ջուր, վոր երթա
Մեկն ընցավ, մեկն ետաց Դավթի հետևվ,
Դավթի ’սաց. «Նե ընչո՞ւ չուր մկա երկուսն ել առնչքա էյին,
Մկա մեկն ընցավ առնչքա, մեկն ետաց հետևվա.
Բա մ’ կա ենուղց սրտինց»,
Դավթի իմացավ, թե կ’ուզին, զինք թալին մեչ ջրուն,
Գնացին, խառան կըմըընջի կեստեղ
Դավթին ձեռ մ’ երթալ մեկի դոշին, բռնեց.
Ծեռ մ’ ել երթալ մեկալի դոշին, բռնեց.
Մեկն կոխեց են կուշտ վե,
Մեկալ կոխեց մեկալ կուշտ վե,
Եղոնք ասացին.— Դավթի,
Ք’Աստծու բախտն ենք, զմի չթալես մեչ ջրուն,
Դավթի եղոնց ասավ.— Դու զղրուն չասեք,
Ձեր երկուսն ել թալիմ մեչ ջրուն,
Եղոնք ասացին.— Դավթի,
Բեզի վրա պախինք, Աստծու ինչքի ու պախինք,
Եղ քաֆուր, զալըմ Մելիք,
Զորրաուքինով խոի վըր մեր վղին,
Զմե խոի խըտա քեզ, վոր մենք քեզի ապանինք,
Մենք մեկ քար չտեսանք վըր քեզ,
Մինչեվ հասանք ես կըրմինջի կուշտ,
Մենք մե-մեկի ասեցինք՝
Դավթի տանք մեր կեստեղ,
Դավթի տանինք կըմըընջի մեջտեղ,
ԸզԴավթի թալինք ջուր, թող երթա,
Ք’Աստված քընց մեզ մեծ եր,
Բայ ուժ ըզմեր հաղթեց.
Դայ մեզ կախիր ես կըմըընջից,
Դավթի սրտին մեջ քիչ ըմ դեխճ ընկավ,
Դավթի գետինք քաշեց վե, կանգնան վըր կըմըընջին,
Դավթի ասաց.— Գնացեք,
Եղոնք ասեցին.— Մենք թալիր ենք մեզ քա բախտին,
Դայ քա հելևկն ատա, մենք լաստրակ ըմ ապանինք,
Բայ հելևկ մեջ եղոր երինին թաքխինք,
Վոր տանինք Մելիքին, Մելիք մեզ չապանի,

Վոր Մելիք գիտէ, ինչ գայ ապանովը նա։
Քայ խոր խայրնիք Սասնա տեղն է.
Ինչ շանց կը տանք, վոր գայ երթաս քայ խայրնիք։
Դավիթն իր հեվեկ նխաև, խուռը եղնց։
Դավիթ նէյոզ դնա, գնաց Սասնա երկիր,
Եառնք ձը գան Մըսրա երկիր։
Եղ երկուսն ուղեցին, վոր գնրկին լպտարակ ըմ ապանին,
Վոր Դավիթ հեվեկ մեջ եզոր երինին թաթխեն,
Մըսրա Մելիքի խամար առնին։
Զնրկեցին լպտարակ ըմ ապանեցին,
Դավիթ հեվեկ մըչ լպտարակու երինին թաթխեցին։

Մենք գանք վըր Դավիթի կնասին։

5. Դավիթը Սասունում. նրա մանկական չարությունները

Դավիթ գնաց Սասնա տեղ, ուր հոր երկիր։
Սասնա տեղաց ձիեր ժողվըվեր, ճանաց կը խաղին։
Դավիթ ձիերաց ասաց.
— Նա ինչ խաղ է՝ գայ կը խաղաք։
Եզոնք Դավթին ասացին.
— Մենք ճանաց կը խաղանք։
Դավիթ եղ ձիերու ճաներ ամբողջ բահրավեց։
Դավթին ասաց ձիերուն.
— Եկեք, երթանք խարնագայդն խաղանք։
Ձիեր Դավթին ասացին.
— Խարնագայդն ինչ խաղ է։
Ասաց.— եկեք, երթանք, ձի շանք տամ։
Ձիեր ընկան հրաել Դավթին, գացին։
Դավթին գնաց մեջ բազին.
Մեկ հերկին բարի մ՝ կար հետը։
Դավթին ձեռ երթալ, եղ բարու ձերն կոտեց, խուռ գետին։
Դավիթ ասաց ձիերուն.
— Նախ շարվիք վըր բարին։
Եղ ձիեր շարվին վըր բարին։
Դավթին ասաց ձիերուն.
— Ամեն մեկ ձեր տուն ձի շանք ավիք։
Ձիեր Դավթին իրանց տուն շանք ավին։

Դավիթն ձեռ բարթիցն խիժոց, ըսաց.
— Ամեն մեկ գնացեք ձեր տուն,
Համեն ձիժ տեղ ըմ ցրվան, վողջ չարգվանս։

Պառավ ըմ խաբար տարավ Ջենով Հովանին, 'սաց.
— Մեկ տղե մ' իկիր ա, բանձր բոյլի տղե մ' ի.
Մեր ճժեր հըմեն ջարդից, մեացըցուց,
Ջենով Հովան ասաց.— ընկավ մեջ ուր սրտին.—
«Նը մեր տղեն ի»։

6. Դավիթը գառնարած

Եկավ գնաց նգռեխ, տղին տեսավ,
Ըսաց.— Բա հեւսա կը գնա։
Ըսաց.— Քի ինչ գործ կա խնա։
Ջենով Հովան տիր մ' ել ասաց.
— Քեզ բանիմ գառնարած,
Քա մեր գառներ տը տանիս, արածաս։
Ջենով Հովան նգոր չանք չխաա,
Թե՝ յես քա հոգոխակերն եմ։
Դավիթ 'սաց.— Յես տ'ըլիմ ձի գառնարած։
Դավիթ խըլխասուն եկավ,
Եղ գեղի գառներ հըմեն քշեցին հետջով Դավթին։
Դավիթ տարավ, դաշտի մեջ կ'արածա գգառներ։
Գառներ կուշտ կերան։

Դավիթ զգառներ գոմմից մաղաքն.
Դավիթն գառացավ գառներոց.
Դավիթն նառավ ուր խառար տուն կը շինե.
Դավիթ ակախ չունի գառներոց։
Գառներ անբիացան, մաղալից եյան.
Գառներ ամեն մեկ ուր տեղ ցրվավ արծալու խառար։
Դավիթ ակախ չունի գառներոց։
Մինչեվ եվարին ընկնի ուր տան խնա.
Եվարին նապես ըռըշկից, չուք գ'Դավիթ բռնից։
Դավիթ ըսաց.— Տո, հերը իմ գառներ տվիք մաղալ։
Կայնավ, գնաց մաղալի տակ. մեկ գառ չկա։
Են կող կ'ըռըշկի, գառ չկա.

Ես կող կ'ըռըշկի, գիւռ չկայ,
Կայնալ բռաց, ընկալ եղ սար ու ձոր,
Գիւռ կ'ընկնի հիռչել, կը խավաքի.
Սարի ջանավարքեր կը խավաքի. վրդչ խավաքից,
Ջանավարք են՝ մեկ գեն կը փախին, մեկ մեկալ կողմ,
Դավիթին ել քիր կը զարկի,
Վաչըն կը փախի, վոտ կը կոտրի,
Վոդչ խառ իրերու մեչ, իրի մեչ գեղին,

Դավիթ վոր եկավ, իրեր գեղի մեչ,
Եղ գեղի ժողովուրդ ելան, նայեցին՝
Արչ կա մեչ, գել կա մեչ, խոզ կա մեչ,
Լպղտրակ կա մեչ, կուզ կա մեչ, աղվես կա մեչ,
Գնացին Ձենով Հովանի կուչա, ասացին.
— Աածու սիրուն, ես ինչ գիռնարած ես մեզ խամար բռնի
Դավիթ խաչակացավ, ըսաց.
— Ձեր գլուխն ուտի, ել չեմ իջնի ձեզ գիռնարած.
Ինչ ուիլը իք ձի, առեք խեռուվ։

7. Վարարդություն, արտասեր Պառավը, վորսատեղ

Աբլխառն եղոր խրոխպեր ելավ,
Նետ-անեղ ըմ չինեց Դավիթին,
Դավիթ նետ-անեղ կ'առնի, կ'երթա,
Մեչ Պառավու կորկին լեր կը սպառնի, կը բիրի, ուտի,
Պառավ կ'երթա, կ'ասի.— Քյեր Դավիթ,
Թափի քու մխա, թափի քու լեշ,
Դու իմ ճժերու կուտ կաբեցիր,
Դավիթ չի լըսնի Պառավու խոսքին,
Համին որ սոված ևր, կ'երթեր Պառավու կորկի մեչ,

Հետ մեկ որին Ձենով Հովան ա'երթեր նեճիր.
Դավիթ տիր մ' ել Պառավու կորկի մեչ լեր կը սպառներ,
Պառավ գնաց, ասաց Դավիթին.
— Թափի քու մխա, թափի քու լեշ,
Բան ը, լեր սըպառնիս. իմ ճժերու կուտ կաբեցիր,
Եղ լեր քու մեկ պատճառն ի,
Դու եղպես կարիճ մարդ ես,

Գնա՛ քու խրոխտոր խնա, վիրու քոչ սրպանի,
Ինը, կի, ժոր քնդիկ լավ իլնի։
Ըսաց.— Պառնավ, իմ խրոխտիր ոէր իւ
Ըսաց.— Քու խրոխտիր կ'երթա նեձիր։
Դավիթ Պառվու կորկից ելավ դուս,
Գնաց խրոխտոր ասաց.— Յես ալ գամ քու խնա նեձիր,
Խրոխտիր ասաց.— Դու ապայ իս, չես կանա գո նեձիր։
Դավիթ վըր խրոխտոր բարկացավ, ըսաց.
— Շամախկե մ' կու տամ, քու երես, քու վիզ քեփըն։
Ժոր եղպես 'ասաց, խրոխտիր վախացավ, ասաց.— Աղի խնա ձի։

Մեկտեղ գնացին, գնացին, վիրու քոչ ըմ սրպանիցին։
Վերեն մէնավ, ելավ գիշեր.
Իրանց խամար կրակ կպուցին,
Քաբար չինեցին, կերան, կուշա կերան, նստան եղավ։
Տեսան, լոխ գըլխե կանապէ-կարմիր բաց կ'իլնի, կ'իճնի։
Դավիթ խրոխտորն ասաց.
— Ենա լոխ գըլխե ինչ կանապէ-կարմիր բաց կ'իճնի։
Խրոխտիր գիտի, ինն ուր ախպերն ի,
Գիվերզմանն ի, լուս կ'իլնի գիվերզմիից։
Ձենով Հովան գԴավիթ խաբից, ըսաց.— Կրակ կը կպնի.
Խովիվ ի, նախրորդ ի, գոնեպատած ի,
Յես ինչ գիտեմ՝ վեր մեկն ի։
Դավիթ ուր սրտի մեջ չխամռպավ եղ խոսքին։
Եաու քուն տարավ, կող եղան, քնան։
Եղ Ձենով Հովան ծանապ մարդ եր.
Եղ Ձենով Հովան Դավիթ չուխու փեշ խղի ուր տակ,
Ժոր Դավիթ չերթա, եղ գիվերզման նայի։

8. Պատրաստ վանքի օինումը

Դավիթ աչք ճնաց են տարի վրեն, քուն չտարավ,
Ժոր գիշեր խրոխտիր քնավ,
Դավիթ գանակն եփավ չուխու փեշ կարից,
Ժոր խրոխտիր չակախի,
Ինք երթա գիվերզման նայի։
Դավիթ գնաց, ելավ լուսան գըլխե.
Ելավ գնաց եղ կրակի մոտ,

Եայից.— կրակ չի, գերեզման է.
Ասաց. «Ես իմ խոր գերեզմանն իջ,
Ուր դանակն եղարկ գերեզմանի տեղ,
Եկող, եկավ ուր խրոխտոր մուռ,
Առավոտ քիչ մութով ակախանն
Տիր մ' էլ Դավիթ ըսըչկեց եղ գերեզմանի տեխ, խրոխտոր 'ասց.
— Ես ինչ կրակ է, որ հիրկվանն կ'իլնի, կ'իճնի։
Խրոխտերն գԴավիթ խափեց, ըսաց.— Խովիվի կրակ է,
Դավիթ բարկացավ, խրոխտորն ըսաց.
— Դողրուն ասա. որ դողրուն չասես, քե ալ սպանեմ,
Խրոխտեր վախացավ, դողրուն ասաց։
Ասաց.— Դավիթ, են քա խոր գերեզմանն է.
Սասնա Մհեր, որ կ'ըսին՝ են է։
Դավիթ եղանեխ, եղոր դժար իրի, ըսաց.

«Խրոխտեր, մեռնիմ քի, խրոխտեր,
Ձես իմ չուռնիմ, դա գի անես խերուքին.
Խրոխտեր, մեռնիմ քի, խրոխտեր,
Ձես մեր չուռնիմ, դա գի անես մերուքին։
Տո, խրոխտեր, գի քենե պետք եր խարիր ուտես.
Տո, խրոխտեր, գի քենե պետք եր խարիր քար կրող.
Տո, խրոխտեր, գի քենե պետք եր խարիր քար կտրող.
Տո, խրոխտեր, գի քենե պետք եր խարիր քար ավող,
Վոր յես Մարութա Բանդր Ամամածին չինեմ։
Ես որ ինչ է,— իրևքչարթի,
Զորևքչարթի, հինգշարթի, ուրբաթ որ,
Լուս աս չարաթ որ, պատարագ մեջ մատուցվիս։

Խրոխտերն լըռվ, խամաքեց,
Ենքան վոր Դավիթ ասեր ևր, քըմըմեց.
Վոր քըմըմեց, Դավիթ ասաց.

«Տո, խրոխտեր, մեռնիմ քե, խրոխտեր,
Զի քենե պետք եր խարիր վարգապետ.
Տո, խրոխտեր, մեռնիմ քե, խրոխտեր,
Զի քենե պետք եր խարիր երեց.
Տո, խրոխտեր, մեռնիմ քե, խրոխտեր,
Զի քենե պետք եր խարիր սարկավագ.

Տո՛, խրոխպեր, մեռնիմ քե, խրոխպե՛ր,
Ձի քենեն պետք եր խարիբ վոգբաւոր։
Ես որ խենդ շաբաթ, խըվխաուն ուբբաթ,
Վոր լուս ատա շաբաթ, պատարագ մեջ մատուցվի»։

Խրոխպեր եատնք լե խաւաքեց.
Վոր լուս ավեց շաբաթ, պատարագ մեջ մատուցեց։
Դավիթ քեֆ ենքան եկեղեցու վրա իբի,
Վոր գնաց Բաթմանա Բաղեն իբի,
Վանքի դռան հետեվ խղիր,
Թանբիհ արավ Բաղին, ըսաց.
— Ավեր մարդ վոր կը գա՝ դուռս վերեն չբանաս.
Վոր բհատավոր կը գա՝ շիվար մարդ վոր կը գա՝
Դուռս բաց անես, կերակուրիք,
Քեֆ անես, ուբախութին անես։
Դավիթ եթող, գնաց, նստավ ուր խրոխպոր տուն։

9. Հարկահանություն յեվ խրատատու Պատավը

Մնաց։
Մըսրա տեղաց Մըսրա Մելիք ասաց.
— Ի՞նչ եք լսել Սասնա երկրից.
Ես յոթ տարի մեր խարջ ճնացեր ի.
Տի մեկն երթաք, մեր խարջ բերիք։
Մարդ ըմ կըեր, անուն կողբաղդին քաքաբերան, Մելքին ըսաց.
— Ցես տ՚երթամ, յոթ տարվան խարջ առնեմ, բերեմ։
Մելիքն ասաց.— Դե, գնա։
Եղ ելավ եկավ։

Եկավ Սասնա երկիր, Ջենով Հովանին ասաց.
— Դե, շուտ իմ յոթ տարվա խարջ խաւաքեք, յես երթամ։
Ջենով Հովան ըզկողբաղդին քաքաբերան առից,
Տարավ փարու մաղաղնու
Եահխ կոտով փարա կը չափե առու խամար։
Դավիթ ասիր մ՚ել գնացիր ի,
Պատվու կորկի մեջ լեր կը սըպանիս։
Պատավ գնաց, ասաց.— Դավիթ,
Թափե քու մխա, թափե քու լեշ,

Դու իմ ճժերու կուտ կտրե.
Կողբատղին նկե քու խրոխտոր մաղտղեն,
Ոսկի կը չափե. գնա, մի թողնե
Դավիթ ըսաց.— Մամիկ, երթ իյանք,
Իմ խրոխտոր մաղտղեն ձի շանք առու
Մամիկ առաց, տարավ վըր խրոխտոր մաղտղի դռանու

10. Դավիթը հարկ չի տալիս յնվ կոտը զարկում և Կողբատղիենի գլխին

Դավիթ մտավ ներս, տեսավ՝
Խրոխտիր քրմինք ճակատեն կը թափիր.
Կողբատղին ադիկ մի նստեր եր վըր աթոռին,
Վրա թալեր եր վըր մնկալ վոսաց։
Խրոխտիր վոր ոսկին կը չափեր, կ'ըսեր՝ երկու.
Կողբատղին կ'ըսեր՝ մե՛կ
— Խրոխտեր, ասաց Դավիթ,
Դու նեղացիր ես, դու իլի վե, յես ոը չափիմ։
Խրոխտիր ասաց.— Դավիթ, դու չես գիտի չափու
Ջորբաուքենով խրոխտոր մտեն խլեց կտա.
Կտա կոթծեց, բերան ոտավ գետին,
Ոսկին իլից վըր կոտի քամկինու
Կ'ըսեն՝ մե՛կ, կ'ըսեն՝ երկու, հետըվ ըսաց՝ չորս
Կողբատղին 'սաց.— ե՛յ, եդ ինչըվա կը չափես
Ելավ եդոնց կռիվ։
Դավիթ կտա խփեց մեջ Կողբատղու գլխուն
Կողբատղին ուր ձին խնծավ, փախավ.
Ել Դավիթ չիտեսավ եղու։

11. Կողբատղինը խաբեյությամբ ավերում և վառիը, փոբռավորը բոր և բերում. Դավիթը պատռհատում և Կողբատղիենին

Եվ գնաց Մըսրա Մելքին 'սաց.
— *Ջընհել երիտասարդ ըսի կա,*
Քու խարջ կը կոբի, ել չիտաս
Մելիքն ելավ, խինդ խարիր ձիտավոր հավաքեց.

Կողբաղդին երաւ եղոնց զորապետ,
Կողբաղդին ՚սաց.
«Ցես ո՛իյամ, Մարութթա Բանձր Աւվարտածէն ավրեմ.
Տի Սասմա տեղից հերկեն կնիկ բիրեմ՝ ուղտ բառնան.
Կարճ կնիկ բիրեմ՝ երկանք աղան.
Ազատ աղջկոնը բիրեմ՝ տամ իրկան»,
Կողբաղդին եկաւ, դա՛ռ ու գ՚ա Մարութթա Բանձր
Աւվարտածէն.
Բաթմանա Բա՛ղեն գա՛ռ իրաց, նայեց դաշտի մեջ՝
Բոշայ ի, մարդ ի եղ կողմն կու գա՛ն.
Բաթմանա Բա՛ղեն ասաց.
«Ես ի՞նչ բոշայ ի, եսպես կը գա՛.
Վոր ասեմ՝ ըխտաւոր ի, ըխտաւոր չի.
Ցես պիտի գա՛ռ խիեմ,
Թե վոր ըխտաւոր ի, բարով գա՛.
Թե վոր ըխտաւոր չի, Քոզ տիր մ՚ել գա՛.
Երկու ենքան իլնի, չեն կարա գա՛ռ բանան»,
Խինդ խարիր ձիավոր իկին վըր վանքի դռան.
Աբին, չարին գա՛ռ չըացվավ,
Խելքաւոր մարդ ըմ կըներ եղ ձիավորքերու մեջ,
Ասին.— Մենք ի՞նչ անինք, վոր գա՛ռ բացվի,
Ասաց.— Մենք տի խաղուստ ըմ Դաւիթի խաղուստից
դնանենք,
Ջանկենք լալըպատակ ըմ ապանինք,
Եդոր խաղուստ մեջ երինի թաթխենք,
Փենջերեն վի թա՛լինք, իյա տակ,
Ասենք՝ Բաթմանա Բա՛ղու,
Բ՚ադեն լինք սըպանիր, գա՛ վըրաձգ կը ձնաս.
Եդպես արին, խաղուստ թաթխեցին,
Փենջերեն վի թալեցին, գնաց տակ.
Բա՛ղեն նայեց, ըսաց.— Ես Դաւիթի խաղուստն ի
կուգ ըմ մախիր գցեց իր գըլխի մեջ,
Գա՛ռ բաց արաւ, գինք եթող, գնա՛ց.

Եառնք մտան վանքի մեջ.
Սըպանըցին խարիր վա՛ըգա՛պետ,
Խարիր երեց, խարիր սարկաւա՛գ,
Սըպանըցին խարիրից մեկ պակաս փոքրաւոր.

Ես ինչքա՜ն ելայ, չապտնվավ,
Մտավ ջանդրկներու տակ, պախվավ։
Եղոնք վանք թաղնեցին, վողջ առաքելին գլանք, առին,
գացին։

Եղ փոքրավոր ելավ, ժամու շապիկներ երնաթըթախ գըրկեց,
Դեմ Դավթին արավ, գնաց.
Գնաց, տեսավ՝ Դավթի նատիր ի,
Նատարան դրիր ի, նատիր վըրեն։
Կոպն մ' գինի կը խմի, կոպն մ' խաց կ'ուտի։
Եդպես վոր շապիկ եթալ Դավթի հերջեվ,
Դավթի գարմացավ.— Ա՛յ վորդի,—՚ասց,—
Ձեռնկն ի պակաս, քե՞ ձեթ։
Ըսաց.— Կրակ բռնի քու խուռնկն ել, ձեթն ել.
Նատիր ես ըստեղ, քենի կ'անես, խաբար չես վանքեն։
Ասաց.— Ի՞նչ ե արած։
Ըսաց.— Մըսրա Մելիքի ասկյարն իկիր,
Սպանից՝ խարիր վերդնալու, խարիր երեց, խարիր
սարկավագ,
Խարիրից մեկ պակաս փոքրավոր, ես ել յես,
Մտա ջանդրկներու տակ, ընձի չտեսան։
Ըսաց.— Դու, չուն շան վորդի,
Թե քի խերիզ մը կըներ, իմ վիզ թող առնես.
Եղ ինչ գինջգիլն յես, վոր ձի տվիր.
Դու քու խա՞րջ կըներ, իմ վիզ թող քու խարջ առնես։
Փոքրավոր ՚ասց Դավթին.
— Գնա, ածքերին խասի, քու մալ մոտեն տա։
Դավթի ասաց.

«Իշամս խեր կենդանից,
Մարուխա Բանձր Ամարասին,
Ախչ Գառարագ վըր իմ աչ թեղինա։

՚Ասց, ուր վոտքեր չըլտեց, ուր թիվքեր խոռ վի,
Գնաց, բարտի ծառ ըմ քաշից,
Բարտու ծառ՝ ուր ձեռ քսեց վերեն,
Զլուակացուց, խղիր ուր թիվին, գնաց։
Գնաց, Բաթմանա կամրջի վերեն խասավ ածքըրին,
Կանչից.— Կոզբաղդին, գո՞ր որ փրթնես։
Կոզբաղդին ըզկից հետըվ ուր, տեսավ՝

Դավիթ բարաւ ծառ մէջ ձագըրին ըսպես կը փարատի.*
Կաքաւնէր վերեն ևս կողմե չուռ կը տա ջուր,
Են կողմե չուռ կը տա ջուր
Կողբաղդին ձկնախաւ ձև կողմ.
Դավիթ խաւսավ մոտ, գԿողբաղդին բռնեց,
Իբի, եղու աւամքեր քնեց, եղարկ ճակատ.
Եղոր երկու ականջներ կտրեց, բաց.
— *Նա խինդ խարիր ձիու կ... ք'աղի կընկան պ...*
Թե վոր հնու ուժ կը խաւնի,
Ուր ձագեր չաւնի, գա վըր ձի կոխի։
Դավիթ գԿողբաղդին հիտեվ հիրջեվ կապեց ուր ձիուն.
Կողբաղդին գնաց. Դավիթ դարձավ, իբի
Կողբաղդին բար խուր Մըսրա քաղաք, գնաց։

12. Կողբաղդինի ծաղրող կացայր

Գնաց, խաւսավ Մըսրա քաղքի կուշտ, գետի բերան,
Տեսավ՝ Մըսրա քաղքի կնկաներ եկեր են,
Գետի բերան լվացք կ'անին
Ըսին.

«*Կողբաղդին, Աւտվածքն առն ավրի,*
Գա կ'ըսեր՝ ա'խյամ, հերիկն կնիկ բիրեմ՝ ուղտ բառնան,
Ադաչ աղջկերք բիրեմ՝ տամ իրկան,
*Կարճ կնիկ ել բիրեմ՝ երկանք աղան»։

Կողբաղդին ըդ կնքախրուն 'սաց.

«*Իմ խիալ դաշն եր մեյդան,*
Իս չդիցա, թե քնըն եր կապան.
Գնա ձեր իրկախրու ճուճ-պլոր
*Գա ձի համար յեղ ու չորթան»։

Հիաը իջող Կողբաղդին, գնաց։
Եղ կնքախր գացին, խարաբ տարան Մըսրա Մելիքի համար։

---

* Ձեռքով աջից ձախ ցույց տալով Ս. Տ–Հ.

13. Մարա Մելիքի զոռահավաքը, մոր յերազը. Մելիքի արշավանքը յեվ ճամակը Ջենով Հովանին

Մըսրա Մելիք հոլողկից, գկողբադղին տարավ,
Տհասավ՝ աջալյնկը մարդ մ' եր.
Կողբադղին Դավթի բաներ պատմեց,
Ուրանց արած բաներ պատմեց.
Մելիք գրին իրի, կաղամար իրի, ուր ճկուտ ճղեց,
Կաղամարի մեջ հըլեն արուն արավ, գիրեց.

«Ջի պետք եր խարիր խազար անբեղ, անմուրուտ ածքիր.
Ջի պետք եր խարիր խազար Քուխմուրուտ ածքիր.
Ջի պետք եր խարիր խազար Նորմանուկ տղա.
Ջի պետք եր խարիր խազար սվատկամուրուտ ածքիր»:

Թղթեր գիրեց, ողարկից երկրի մեջ,
Ուղից, վոր ածքիր ժողվելու:

Գիշեր եառու մեր մեջ քնուն երազ մ' տեսավ.
Ըսաց.— Մելիք, վորդի, մի իյա վըր Դավթի վըրեն:
Մելիք ըսաց.— Մարե, ինչու՞ չիյամ վըր Դավթին:
Ըսաց.— Յես երազ մ' եմ տեսեր.
Սատնա տեղ արիվ եր, լիս եր, տաք եր.
Մըսրա տեղ ամպ եր, մուքն եր, մըժ եր անձրիվ կը գիր:
Հեղեղ կայնավ. հեսը եղ Չուր դառավ երեն,
Ջանդըկներ մեջ կը տաներ:
Մելիք մոր 'սաց.— Փուշա, գալրանդենգ,
Քեն քի խամար քինի, երազ ձի խամար տեր:
Սիրտ քու չաճա կը ցավի խոտա Դավթին.
Տ'իյամ վերեն:
Մեր 'սաց.— Իյաս վերեն, տը փըշմընվիս:
Մելիք ըսաց.— Տ'իյամ վերեն:

Մելիք իրիք տարի կես՝
Անջախ ուր ածքիր խավաքից, հիտեվ իյալ
Գնաց Լորա գաշտ, ուր բանակ իղիր:
Նամակ գիրեց Ջենով Հովանի խամար,
Ըսաց.— Շատ Քոխ գա իմ կռիվ,
Ջխո Սատնա քեր, խոզ տանիմ յեսիր:

Ջինով Հովան սրանն չի խանի,
Դավիթին տար՝ իյե կռիվ։

14. Դավիթը Պառավի խրատով հարեպարից առնում և հոր ձին չնվ տարը

Դավիթ գնցիր Պառվու կորկի մեջ լար կը սրպանի։
Պառավ գնաց, ասաց.— Դավիթ,
Թափի քու մխա, թափի քու լեշ,
Իմ ճժերու կուտ կտրեցնը։
Գնա՛ կռիվ։
Մըսրա Մելիք եկիր, քու կռիվ կ'ուզի։
— Մամիկ, են ասքար կե վորտեխ։
Ըսաց.— կե Լորա դաշտ։
Դավիթ վազեց թախ բարտի ծառ։
Պառավ ըսաց.— նա բարտի ծառմի տ'իյաս կռիվ։
Ըսաց.— Բա, Պառավ, ինչմի իյամ կռիվ։
Ըսաց.— Գնա, Քուռկու Ջալալին խան դիս։
Գնաց Մհերին, Թուրն ի կարանին, Գամար Մհերին՝
Ենոնք խան դիս, գնա՛ կռիվ։
Դավիթ բարտու ծառ եվալ ենառնխ, գնաց։
Գնաց, խրոխպոն ասաց.
— Կ'ուզիմ քենե՝ Քուռկու Ջալալին, Գամին Մհերին,
Գամար Մհերին, Թուրն ի կարանին։
Խրոխպոն ասաց.— Դավիթ, հոնտա բերիմ։
Ըսաց.— Շոտ առ, երթ, ել մը խոսի։
Ետեղ Դավիթի խրոխպոր վախացավ, ասաց.
— Գնա ախթախանեն, քոռասուն ձի կա ենառնխ,
Մեկն քի խամար տա, երթ։
Դավիթ գնաց, ձեռ խոտ ձիանքարերու քամկի վերեն.
Վեր ձիու քամկի վերեն ձեռ խոտ՝ նատավ։
Ըսաց. «Ջանըմ, ես ձիանք չի կովու ձի»։
Գնաց, խրոխպոր ասաց.
— Կ'ուզիմ քենե Քուռկու Ջալալին։
Խրոխպոն ըսաց.
— Գնա կե Քառի տակ, բեր քի խամար։
Դավիթ գնաց, պըստի դռեռ ըմ կըներ, եկաց,
Տիտավ՝ երկու ձի ետեղ կապած։

Ձեռ խառ մոր քամկին, մեր քիչ ըմ գըզվաց.
Հետը վոր ձեռ խառ վըր չըվանի քամկին,
Ջուխկին գցեց պատ, կրակ պատից դնաց.
Ձին ասաց.— Դավիթ, եղ ինչ պիտի անես.
Դավիթ ըսաց.— Պիտի քի խնծնիմ, իյամ կռիվ.
Ձին ասաց.— Դավիթ, քի կը տամ արևպական հըրոշիվ, վառվիս.
Դավիթ ըսաց.— կը մտնեմ քու փորի տակ.
Ձին ասաց.— Բի կը թալեմ անտակ ծովը, կորսըցըցնեմ,
Դավիթ ըսաց.— Տի մտնեմ քու քիթ.
Ձին ասաց.— Դավիթ, ղե, դու ձի տեր, իս էլ քի ձի.

15. Դավթի զինավառումը, ելագով ճանապարհ բնկնելը. պառուհանից Մամիկի դուրս նայելն ու պատվերը ձիուն

Դավիթ ձին քիշեց դուս.
Քաոսուն լիսր բամբակ գցեց Գաւակի մեջ.
Նորեն խղի ուր գլխու մեջ.
Քամար Մհերին յոթ փաթ իրեր ուր մեջքի բալոր.
Թուրն ի կաբանին կապեց վըր ուր.
Եղոր բան իրեք գող վըր գլխուն բանձրացավ.
Վոր կը քիշեր, Քրի ձերն գետինն ի քիշ կ'երթեր.
Ուր ձին խնծավ, ըսաց.— Քրոխպեր, իմ կռիվ չգաս.
Քրոխպեր ըսաց.— Ձեմ իդա քու կռիվ.
Դավիթ Մհհերի ջոջ սազ հառ ծնծել,
Ջուռնեն էլ հառ փչել.
Դավիթ գնաց կռիվ.

Դավիթ Մամիկն հերգամ ի արիր եղ վախտը,
Մըսրա Մելիք վոր իկեր Մհհեր սպանել,
Մտիր և տուն վե, արեվ վըր գըլխուն չառեր,
Վոր մեկն էլ եկնի Մհհերի տեղն երթա կռիվ.
Եղ որ վոր Դավիթ սազ հառ ծնծել,
Եղոր փանջրի հերջեվ վե ընցավ,
Մամիկն ըսաց. «Իլիմ դուս,
Ես վա՞վ ի՝ կ'երթա կռիվ».
Գըլուխ փանչարեն վի կախից տակ,
Տեսավ Դավիթ ձիու վերեն,

Փանջրի հիրջեվեն կ՝անցնի,
Կանչից.— Մուրմա,
Դավիթ զարմացավ, ձին կացնավ,
Ըսաց.— Մուրմա, քեզնից կը խնդրվիմ,
Թե իմ նորմանուկ խոր խենքելատեղ վեր դնես,
Որ չհուրքեր չանք տաս,
Ձին ասաց.— Շատ լավ,
Դավիթն ըսաց.— Մամիկ, ճեացիր բարի, յես դնացի,

16. Մտնուկ Դավիթը խմելով հաբնով աղբյուրի ջուրը՝ դառնում և հզոր յեվ կտրում և Պողվատի սյուները

Ձին քշից. ապաիխիկի դայրա կը Քռներ.
Յոթ ավուր դռնախ հրկու սահաթվան մեջ դնաց,
Ձին դադրավ վերը հաղրըրին.
Դավիթ դանդի մ՝ եղարկ ձիուն,
Ձին ասաց.—Դավիթ, եդ ինչ արիր, փալասուն իմ կոտրըցիր,
Դավիթ ասաց.— Բա, ընչու չըս քեվի,
Ձին ասաց.—Դավիթ, չիմացար՝ քե Մամիկն ինչ ասաց,
Դավիթ փայա եղավ,
Ձին ասաց.— Ես քե խոր կաթնով հաղրաբրն եւ
Դավիթ, քե խեր մինչեվ 'ստեղ չեր չմտեր,
Ծաց չուտեր, չի քիներ, չեր իյա կռիվ,
Դավիթն չեր խմավ, խաց կերավ,
Քինավ իրեք որ պիշեր-ցերեկ, նորեն ակախավ,
Տեսավ՝ Թեւտին Մհներին դվռուց Քռեր եր.
Քամար Մհներին, վոր մեջքի վերեն կը կոճկեր, կտրեր եր.
Եղոր Քուր, վոր կապեր եր վըր ուր,
Դավիթ վոր կացնավ, եղոր ծեր
Անջախ խասավ եղոր ծնկան քամակ.
Եղոր կոթն եվ անջախ մի քիչ մեջքից բանձրցավ.
Թեւտին Մհներին քեռուն լիտր բամբակ եքավ,
Իդոր անջախ զոռով մտուց դըլեխ.
Քամար Մհներին, վոր յոթ փաթ եր փաքաքնել,
Նորեն մեկ փաթ իրե մեջքի բելտր, կոճկից,
Ձին խնծավ, քեզից, դնաց, տեսավ՝
Դաշտի մեջ Պողվատե սուն կացնացուցած,

Ջին ասաց.— Դավիթ,
Նա սուն կը տեսնե՞ս, են քո խոր ջրբաքներն ի
իրէ, որ մեկ դարբից կտրիցկը՝ ա՛իյանք կռիվ.
Որ չի կտրիցկը՝ չենք իյա կռիվ
Դավիթն իջավ, թուր քաշից, մեկ դարբից եզարկ.
Թուր Պողվըտե սուն կտրից անցավ,
կալամ վըր կալամի դադրավ։
Ջին ասաց.— Դավիթ,
Քու ձեռն ի կը թողնես,
Քու մեջքն ի կը թողնես,
Որ մեկ դարբից չկտրիցկը.
Քու խոր ջրբաքներն եր
Դավիթ թռլացավ։
Որ մեկ քամին հաժըննից, սուն չուռ եռու։
Ջին տեսավ, որ մեկ դարբին կտրիր եր, ոխնից, ըսաց.
— Ձեռն ի կանաչ աներ են Դավիթի.
Մեջքն ի կանաչ աներ են Դավիթի։
Դավիթ ուժեղըցավ, ուր ձին խնծավ։

17. Դավթի վախը բռնամիճներից. ձիու բաջալերը

Ջին ասաց.— երթանք, երթանք կռիվ։
Գնացին. գնացին, կայնան բանձր սարի վերևն։
Դավիթ թամաշա երավ ասքարին,
Գըլխե թափ խոու, ըսաց.

«Ես ասքար իլի արտ ըմ յոնջա,
Ցես յոթ սարի իլիմ սարակ,
Անջախ քաղեմ, պըրծնեմ։
Նարանք քաղեմ, պըրծնեմ,
Յոթ սարի ել անջախ անեմ խաւրում,
Ախոնք իլին խաւրձ, յես իլիմ դիպող,
Յոթ սարի անջախ պըրծնեմ։
Ցես իլիմ կրակ, եղոնք դեզ, բանիմ եղ դեզ,
Յոթ սարի անջախ կպուցեմ, պըրծնեմ։
Եղոնք իլին մոխիր, յես իլիմ քամի,
Յոթ սարի անջախ դեզը տեղեն վերցուցեմ»։

Ձին ասաց.

«Դավիթ, ինչու՞ ըսկոտ կը վախենաս.
Քեզնի մ՚ դու քու թրով սպանես,
Ասկոմ չես իմ պոչի մազերով ոը սպանեմ.
Քեզնի մ՚ դու քու գեղով սպանես,
Ըսկոմ չես իմ ջնչով ոը սպանեմ.
Քեզնի մ՚ դու քու Քամար Մհներով սպանես,
Ըսկոմ չես իմ վոտաց նալերով ոը սպանեմ»։

18. Դավթի հարձակումն ու կոտորածը. բռնամիների հնարքներ Դավթին բռնելու. Ձնով Հսկաները մարտի դաշտում. Դավթի բռնվելը

Դավիթ ասաց.

«Ինչամս խեր կենդանից,
Մարուքա Բանձր Ամարածին,
Աչ Պատարագ վըր իմ աչ թևին»,

Բշեց մեջ ածքերին, եակոն կորնց,
Երեն կայնավ չանդակիր վըրցոց։
Ածքերն ասաց.— Ինչ անենք.
Ետ Գոհար խանըմին քնասուն խաս փալխան կըներ.
Ետ Գոհար խանըմ մեկ թուխս կրեց, խոռ փալխանին,
Ասաց.— Տար Աչմու թակվորի քնդաք, ոռ Սանասարին։

Փալխանն իպի, տարավ սարի մեչ,
կայնեց Սանասարի, Բաղտասարի կըլխի վերեն.
Իրիշկաց՝ երկուսն ել քնած են.
Չինամաչինա վորն և Սանասար,
Տրեց Բաղտասարի կըլխի պարցի տակ։
Ելան, չորեր խակին.
Բաղտասար տեսավ՝ թուխս ըմ կա պարցի տակ,
Առեց, կարտաց. Քխաի մեչ կրած՝
«Չինըմաչինա թակվոր Գոհար խանըմից
Շատ պարևի Սանասարին, Բաղտասարին, Սանասարին»։
Բաղտասարն ասաց. «Ես ինչ պան ա,
Երկու տեր պարևի կիրև Սանասարին, մեկ տեր՝ ձի։
Լավ, Սանասար ճոճ տախերն ա.
Չատաչ ինորն ա կիրև. են լավ ա.
Ինչու յա երկու տեր կիրև ինոր»։

Սանասար տսից եկավ, պարեվ ավեց,
Բաղտասար չառնց, ասաց.
— Ա՛խպեր, ընչի՞ չես նեղացել
Ասաց.— Ապա ինչի՞
Զինըմաչինա թակվոր Գոհար խանըմ
Երկու տիր պարեվ կիրե քե, մեկ տիր՝ ձի։
Ասաց.— Ա՛խպեր, բա, ինչ անեմ, են ա կիրե։
— Ձե, ասաց, չես, տա՛ տը կավենք։
— Ընչի՞ կավենք, մե տարեկան պարեվի խամաթ։
Ասաց.— Ամ, կավենք։
Ասաց.— Ա՛խպեր, չես չըմ գնալ քե,
Տա՛ գանի, ձիկ ըսպանե։
Ինչքան ասաց, հնարք չելավ ախպոր խետ.
Ասաց. «Երթանք են չիման տեղ,
Մե քիչ խաղամ խետ, ինոր սիրտ իչնի, կը կանք տունդ։
Գուբզ առին, կացին։
Սանասար կացնեց նշանդաչի կլեխ.
Բաղտասար գուբզ առնց, եղար.
Սրտից եղար Սանասարին, վոր ըսպանի.
Գուբզը կնաց կըլխու վերեն.
Սանասար պռնեց գուբզ,
Ցետի եքավ, չխասուց ախպոր մոտ.
Ախպեր առնց, մեկ ել եղար։
Սանասար ել մ' ել պռնեց, մեկ ել եքավ.
Վոժի կնգ չիմացավ,
Գուբզն եքավ, սիրավ ախպոր մեկ վոտաց.
Ձեռք կնաց, ընկնվ հատ տեղ։
Սանասար չկեց ախպոր, պերեց եքավ տուն,
Նատավ, չուբ լոս եղաց։
Լոս պացվավ, ախպոր ուշկ եկավ վերեն, վերկացավ, նատեց։
Սանասար ասաց.— Ա՛խպեր,
Ետ ինչ եղավ, տա՛ հատ ցեղ եղար։
Ասաց.— Վոտս ցավաց, իմ խելք կնաց։
Սանասար ասաց.— Ա՛խպեր, տա՛ կաց ըսատա,
Ցես կ'երթամ հատ չան մոտ։
կաց պարեվ արաց, կնաց։

10. Սանասարը Զինմաչինա բազարի ճանապարհին փարձվում է Գոհարի հովից

Կնաց շատ, քիչ, Ասոված կիտի,
Մեկ էլ Զինմաչինա թակվորի խոզ տուս եկավ,
Տեսավ մեկ խովիվ.—
Մի ասի, նաա խովիվ ես թակվորի խովիվը ա.
Ես խովիվը էլ փալխմանների մեկն ա.—
Ես խովիվ կանչեց Սանասարին, ասաց.— Դոր կ'երթաս
Ասաց.— կ'երթամ Զինմաչինա թակվորի քաղաք
Ասաց խովիվ.— Արի, նասի ըսաս,
կաթ ըմ կիթեմ, կի, նոր էլի, կընաս
Ասաց.— Չե, յես վռազն եմ, յես կ'երթամ:
Խովիվ ասաց.— Ես ճամփեն երթացող իլալ չկա,
Անկաթ ուտել չըմ թողնի երթաս
Չունվ նստացավ.
Մեկ ճոճ տաշտ ըմ կար ինոր խնա,
Վոր չորս մարթ կը լցնկներ մեջն.
Ես տաշտ հըլին կաթ արաց,
Իսի Սանասարի առչիվ խացի խնաս
Ես խովըվու մխանն էլ ինչ ա.—
Կ'ուզի ջոբի խըլխին,
Տեսնանք՝ ինոնց վոժ քանի մ' ա
Ես կաթ ուտելով՝ են կը խասկընա՝ ինոնց վոժնի քանի մ' ա
Ոլ վոր ես ճամփով կ'երթա,
Ես խովիվ նաա ցեղ կ'անի,
Ապա կը թողնի, կ'երթան Գոհար խանըմի մոտ.
Ենտեղ փալխմանների տրանց կը ապանեն,
կլոխ կը կարեն, կ'անեն պերթ.—
Խովիվ տաշտ հըլին կաթ
Վոր իսի Սանասարի առաչ ուտելու,
Չինք կնաց վոչխարի պալոր կան կալ
Մեկ փաթ կան եկավ, Սանասար բոաց.
— Խովիվ, արի, քու կոտ վուրտ. կաց պարծվ, յես ա'երթամ:
Խովիվ եկավ, վոր տեսավ Սանասար կաթ կիրես, կոտ կործնի,
Իրե՛ տեղ տոզաց, ասաց.
— Սանասար, կընաս պարծվ, մի վախենա.
Դոր երթաս, մարթ քե չի հաղթի:

11. Սանասարի կռիվը Բառասուց փահլիվանի հետ

Սանասար կնաց, խասավ Թակավորի սարին.
Բառասուն փալխվաներ եկան, վոր վիզ տը կտրին։
Սանասար ինոր մտիվ մեչ ասաց.
«Խոյնք եկան՝ չըմ վիզ տը կտրին. ապա չես ինչ անեմ։
Ցես չըմ ծին չալիրի, չըմ դուրզ չալիրի,
Ընչով կռիվ անեմ խոյնց հետ.
Թուրը մինակ պիրի»։
Թուրը քաշեց, մայտան կայնավ։
Փալխվաներ եկան, չորս պռոտ պռնեցին։
Գիհար խանըմ փանջարեն կայնեն, Թամաշա կ'անի։
Թուրը եզար փալխվաներին վիզ կտրեց.
Փալխվաներ չըն կա՛նա ինոր մոտխըտնա։
Մինչեվ իրիկուն կռվան,
Բառն փալխվան ըսպառնեց.
Կիշերն էլ փալխվաներ կռիվ արին.
Ասին.— Կը մըննի, մենք կը պահենք,
Ինոր կը սպառենք, կիշեր մուքն ա։
Զուր խըլըսուն տաս փալխվան էլ ըսպառնեց։
Խըլըսվանից մինչեվ իրիկուն կռիվ արին,
Ինոց էլ ըսպառնեց։
Կիշեր ինգիվ չորս պիլեր, չիմանի վերին,
Ախուն կայնեց մեչտեղ։
Սանասար ձիաց արնի մեչ.
Ախուն Սանասարին պռնեց։
Եվ վոչ Սանասար կերցավ արըննից ուս կա,
Վոչ փալխվաներ կերցան Սանասարին սպառնալ։
Մնացին խինդ փալխվան, չորս պիլեր կան կ'իկան,
Զըն կը՛խշնա մոտխըտնա Սանասարին։
Կռիվ հաս ցեղ ձիաց։

Տառնայնք Բաղդասար ախպոր վրեն։

12. Բաղդասարը գնում է Սանասարին օգնելու. հովվից ձեռնհասնում է յեղբոր մահին

Բաղդասար եկավ ուս, տեսավ ամբը մըննել ա.
Եկավ տուն, ասաց.— Մարե,

Ձես ա՛երթամ, չըմ ախպեր նեղ տեղն ա,
Կամ կը ապանեն, կամ կը մեռնի։
Ասաց.— Տա՛ ինչըխ կիսիա։
Ասաց.— Մե խալխոր մարթ ըմ մե շանց խառ.
Ասաց՝ «Ձեվ ես ամըր կը մինի,
Տա՛ երկու ախպեր՝ վոր միևուեղ չենք ըլնի,
Իմացեք, վոր մեկը նեղ տեղն ա.
Իրարու հընդառաջ խաոնեք»։
Ձես կ՛երթամ, մնրնի։
Մերն ասաց.—Կնա, տես, քա ախպեր ծին, գուբդ, պան տարե՛։
Կնաց, իրիչկաց, նկավ, ասաց.
— Մնրնի, մենակ Բուբեն ա տարե.
Ձես շուտ ա՛երթամ, մկա՛ չըմ ախպեր մեռնի։

Ծին խնճավ, մոռցավ, խաց էլ չկերավ։
Կնաց են տարե մեչ.
Էն աժտըհար խովիվ իրիչկաց, տեսավ,
Մեկ ծիավոր ինպես կը կա՛ քամու պես,
Ասաց. «կա՛-չկա ես Սանասարի ախպերն ա»։
Կնաց առչեվ, ասաց.
— Ծիավոր, արի, կաթ ըմ կիծեմ, կի՛,
Նատի, ըռըհաթի, չկարե՛ մ՛ խմեչնք, իլի՛, կնա՛։
Բաղատասար ասաց.— Սատանա՛ յես տա՛։
Չըմ ախպեր մկա մեռե՛,
Տա՛ կ՛ասես՝ արի՛, կաթ կի՛. յես կ՛երթամ։
Խովիվ ասաց.— Հնար չկա,
Ջուր կաթ չուտես, չըմ Թագա ըս տեղեվ երթաս. իլաչ չկա։
Բաղատասար տեսավ, վոր ետեղ կռիվ կ՛ըլնի, նստավ։
Խովիվ ես կոտ հրլին կաթ կիծեց,
Խացի խես խոի Բաղատասարի առչեվ,
Չինք կնաց վոչխարն պա՛ղեր կան կա՛ր
Ձոի փաթ կան եկավ վոչխարն պա՛ղեր,
Նոր Բաղատասար ես կաթ կերավ,
Կոտը կոթծեց կանչեց.— Խո՛վիվ,
Արի՛, կոտ վուրե՛, յես կ՛երթամ։
Խովիվ եկավ, Բաղատասարին ասաց.
— Բաղատասար, քա՛ ախպեր յոթ քա՛ չափ վոժ ունի.
Նրան չըլնեմ խակառ կայնես.

Կնա, քո ախպեր յերևուն խինդ փալխան ըսպանան,
Մնացե խինդ. ին ել ու՞ր կը սպանես,
Ցետ կը տառնեք կ'իկնք.
Մի վախենաք, մարթ չկինա ծն երկու ախպոր վերին։

13. Բաղդասարը վերջացուում ե կռիվը. Սանասարն առնում ե Գոհարին յեվ գնում ե պապի մոտ

Բաղտասար կաց պարնվ արաց, կնաց, մտավ քաղաք։
Կնաց մայտան, տեսավ, վոր խինդ փալխան
Զորս պալլիր կան կը կռվն՝ ախպոր ըսպանինու։
Ախպերն արնի մեչ ճնացե կայնած։
Բաղտասար ծինը քշեց, գուրզ ըմ եվալ,
Իրեք փալխան ըսպանեց, երկուս փախան։
Կնաց ախպոր մոտ.
Արուն ախպոր աչքեր պռներ եր, թուր կը գաներ։
Կանչեց.— Սանասար, մը գնի թուր։
Ասաց.— Բաղտասար, ու՞ր յես։
Ասաց.— Ցեմ։
Կնաց ախպորն արնից քաշեց ու՞ռս,
Տարավ, լողացրեց, ախպոր աչկեր պացվավ, ասաց.
— Ո՞ւր ա, խինդ փալխան ել ճնացեր ա։
— Ցես ենոնց ըսպաներ եմ, ասաց Բաղտասար։
Սանասարին տարավ Գոհար խանըմի մոտ։
Գոհար խանըմին ասին, պերին ինոնց մոր մոտ։
Սանասար ասաց.— Ա՛խպեր,
Ես Գոհար խանըմ ա՛ռ առ։
Ենի կնին եր՝ ձի տեր ըսպանել։
Բաղտասար ասաց.— Ձե, յես ինոր չեմ ճանե.
Ենի երկու տիր պարեվ կիրե քե։
Տո՛ւ տ'առնես, կռիվը ել տո՛ւ ես արե։
Ցես կ'առնեմ են Թակվորի ախչիկ,
Վոր մենք վիշապից ազատեցինք։
Մերն երկու տղին փսակեց։

Սանասար մենակ ելավ, նկավ
Արեվելից Թակվորի մոտ, վոր ինոր քեռկերն եր։
Քեռկերը յեկի տեսավ ինոր Թոռին, շատ խնասցավ,

Ասաց.— Վթարի, դե ասա, տեսնեինք՝
Քե մեր իշխէն ա, քե ախպեր իշխէն ա, վճռեղ եր կռնգն.
Աջմու Թակվորը իշխէն արաց.
Աբա ծե կռիվ արինց.
Տաւ ուրիշ տեղ կռիվ* արիր ես,
Սանասար, ինչ վոր ենոր կլնա եկեր եր,
Ինոր քեռխոր ասաց մեկ-մեկի,
Բեռխեր Սանասարին ասաց.
— կաց մըտ մե, մենք էլ քաւ վերեն խնդանայնք։
Սանասար ինոնց խաթըր չկոտրեց,
Մնաց ինոնց մոտ տարի մ'։

Տառնայնք Բաղտասարի վերեն։

15. Բաղդասարին խաբելով հարցնում են

Աջմու Թակվորի խաներ
Ծորխուրթ արին, վոր իշխ աներ։
Խաներից մեկն ասաց.
— Սանասար կացե, ձեացե Բաղտասար, ինոր ըսպասենք։
Մեկն էլ ասաց.— Մենք չըենք կենա ինոր ըսպասի.
Ինոր կը կանչենք ըսաս, ենքան կը խմացնեինք,
կը տանեինք, կը թալեինք մըչ ենա փոսին.
Փուչ-փալաչ ժողվենք վերեն, թող մեռնի։
կանչեցին Բաղտասարին խաբոնիս։
Ինչքան կինի պիրին, մարթ չխմայ,
Զըմեն տվին Բաղտասարին։
Բաղտասար սարխոշցավ,
Տարան, թալին փոսի մեչ,
Փուչ-փալաչ լցին վերեն։

15. Սանասարն ոգնության հասնելով՝ ազատում է յեղբորը վտանգից, միասին ավերում են Աջմու թագավորի բաղաքը յեվ իրայինների գալիս են Արեվելից թագավորի մոտ

Մեկ որ էլ Սանասար տեսա եկավ ձեր Թաիրին.
Ինոր մոկին մեչ ասաց.

* Դուքս ենք ձգում «կռիվ» բառից հետո ավելած՝ «քան ծեն բառերը» Մեր.

«Ցես իրիկնեմ չըմ ախպոր ամբ, ախանայնք՝ ինչպես ա»։
Իրիկնաց, ամբը մթներ եր,
Եվ լաս չկար ամբի մեչ.
Ելաց, եկավ առուն. քեռեր խարցնեց,
Ասաց.— Սանասար, ընչի՞ կը լաս։
— Քեռեր, չըմ ախպոր ամբ մթներ ա. չես տ'երթամ։
Ասաց.— Ա՛յ Չանըմ, վեզ կաց.
Քի ախպեր մկա ըռահաթ նստե ինոր մոր մոտ,
Կը խնդանա, տա՛ եվ մե խնդացնե։
Սանասար քեռեր չլսեց, ելավ եկավ մոր մոտ։
Մեր ասաց.— Ընչի՞ եսա ցեղ վռազ եկար։
Ասաց.— Մարե, չըմ ախպոր ամբ մթներ եր,
Ցես ենոր ապեվ վռազ եկա։
Մարե, ռէբ ա Բաղտասար։
Ասաց.— Եսոր մեկ ամիս կա,
Բաղտասար Ալմաս թակավոր կանչեց խարսնիս, հրըս չիկե։
Դե նստի, ըռահաթի, խաց կի,
Քա՛ ծին տանենք, դատ տայնք։
Ասաց.— Ձե՛, խաց չըմ ուտի, ծխուց եվ չըմ իկա՛ տակ,
Ցըմ քուր, չըմ գուրդ պի, չես տ'երթամ։
Մերն ասաց.— Ցես չըմ կենա քա՛ գուրդ պիրի, քա՛ քուր պիրի։
Ասաց.— Մարե, տա՛ ծխու կլնե պռնի, չես տ'երթամ պիրեմ։
Մերը ծխու կլնե պռնեց,
Սանասար հնաց, խպի։
Ծինը խնծավ, հնաց քա՛ղքի մեչ, կան եկավ.
Տեսավ, վոր ճոչ տեղ ըմ, փուշ-փալաշ եռ տեղն ա.
Մե քիչ կայնավ, տեսավ, վոր կը պռնցրանա, կը ցածրանա։
Միուց իչավ, եռ փուշեր եթավ դնե, ասաց.
«Ցըմ ախպեր ըսպռնիր են, խորիր են եռ փշերի տակ»։
Փշեր եթավ դնե, տեսավ, վոր դրուստ՝
Ինոր ախպեր փշերի տակ։
Ախպեր խռնեց, խի ծի՛ վերնե,
Տարավ առուն, պառկացուց շորերի մեչ։
Ախպոր մեչ շունչ կըներ. ասաց. «Երթամ կռվեմ,
Վախենամ չըմ ախպեր մեռնի, լեզվի ծին չառնեմ.
Մնամ մըռա չըմ ախպեր,
Տեռնամ՝ ինչըվա կ'ըլնի, նոր երթամ կռվի»։

Մնաց մինչեվ խըլըտուն.
Սարխոշուքյուն եքող ախպորից,
Ախպեր ելավ նստավ,
Սանասար ասաց.— Ա՛խպեր,
Ի՞նչ ելավ քե, տա՛ հատ ցեղ ելար։
Բաղատասար ասաց.— Յես անոշ քներ եր,
Տա՛ ընչի՞ ձի քընա՛ց խանիք վի
Ես անոշ շորերի մեչենա։
Սանասար ասաց.—Վոր յես քե չխաներ վի, տա՛ կը մեռներ։
— Ընչի՞ կը մեռներ։
— Ապա քեզ խմացրիր են,
Տարած են, պառկացրած են փոսի մեչ,
Փուշեր լցիր են քա՛ վերեն։
Ասաց.— Յես պիրի քե,
Թե չես ծվատա, երթայնք փշերի քա՛մ,
Քե շանց տամ, վորանով քա՛ կլնես, վոտներ տրած են։
Ասաց.— Ա՛պա, վոր հատ ցե՛ղ ա,
Իլի երթայնք, քաղաք ավիրենք։
Ասաց.— Դե՛, իլի։

Ելան, խաց կերան, ձին խնծան,
Թուր, գուրզ առին, կացին, խասին քաղաք։
Բաղատասար ասաց.— Ա՛խպեր,
Տա՛ շատ զախմ ես, ձին, Թուր տու ձի,
Յես խնծնեմ, ընկընեմ քաղաքի մեչ, վիղեր կտրեմ,
Տա՛ ել գուրզով տու, քաղաք պըտի։
Պա՛յց, ախպեր, հիշուր կաց, վոր Թաղ, վոր յես կ'երթամ,
են Թաղին մը զանկ, չուր յես տա՛ս կա՛մ, նոր զար են Թաղ։
Եատ ցեղ անելով, քաղաք տուն չՀողին,
Ավիրիցին, ծուխ մտանն կտրնցին,
Տատցան, եկան մոր մոտ։

Մորը, վարԹապետին, խոամին, ինոնց կընկատրին
Ասին, տարան Աբնվելից Թակավորի քաղաք։
Թակավոր հատ տեղ նորից ինոնց վատկեց։

16. Սանասարն ու Բաղդասարն իրենց պապի թուլցելությամբ օբեռում են իրենց համար տուն չնի ժամ

Մեկ տարի ձեաց. Սանասար ասաց.
— Բեռխեր, յես մե պան կը խնթրեմ քենե,
Աստց.— Ի՞նչ։
Աստց.— Մեկ տեղ տաս մե, մեյն չինենք մե տուն։
Աստց.— Վ՛արթի, յես տղա չունեմ.
Յես կը մեռնեմ, իմ թալանվորութին
Ծե կը ձեա, կըլնի ծե տուն։
Աստց.— Ձե, մեկ տեղ տաս մե, թե չե կը թողնեմ, կ՛երթամ։
— Ապա վոր ետա ցեղ ա,
Գնա, յըմ խոզի մեչ կան արի,
Դոր կ՛ուզես, ենտեղ շինի քեզ տուն։

Սանասար, Բաղտասար կացին, կան եկան,
Ետնա տեղին խալեան. քար պիրին, տուն շինին։
Եկան, քաղքից ուսթա տարան, տուն շինի։
Ուսթին տեսավ քարեր, ասաց.— Յես չըմ կենա շինի։
Սանասար կնաց քաղաք, ուրիշ մեկ ուսթա էլ խալի։
Ուսթին տեսավ ճոճ քարեր, ասաց.
— Սանասար, ես ինչըխ տը շաբենք.
Յես չըմ կենա ես քարեր իրար տա։
— Ապա ձվ կենա։
Ուսթին ասաց.— Մարթ չկենա իրար տա։
— Ապա ինչըխ տը շաբենք։
—Յես էլ չըմ կիտի։
Սանասար ասաց.— Դե, տաղ լարեր կապի, տեղեր շիտկի,
Ձի տաս, յես քար տանիմ իրա տեղ։
Ետա ցեղ էլ տուն շինեցին։
Տաս տարի ետա տուն անչախ շինեցին։
Հաչիվ չկա, թե քանի ուսթա ետա տան վերեն մեռավ։

Սանասար, Բաղտասար կացին քեռխոր մոտ,
Կաց պարզվ արին, չնորհակալ եղան,
Վոր հազան տարի ինոնց շախեր եր,
Ինոնց շինած տան ծախան էլ քեռխերն եր տվին։
Բեռխոր, մոր, զըմենին իրար խետ տուին,

Պերին ինանց ֆաժա աուն չնախավօրելն։
Սանասար ասաց.— Քեռխեր, նատնք մինչեվ հերիկուն։
Նատեցին. քեռխեր ասաց.— երթանք ժամ, ադոթք անենք։
Սանասար ասաց.— Քեռխեր,
Ապա ժամ մոռացիր եմ, չըմ չինեն.
Վաթաեղ ադոթք անենք։
Քեռխեր ելավ, ճամբու ութց.
Թակիավոր կնաց ուր սարենս
Սանասար կնաց քաղաք, ուսքա պիրեց.
Ինչպես աներ չինեց, ենացեղ ել ժամ չինեց։

17. Ալիվարք տան աճուրը դնում է Սասուն, իսկ ժամի աճուրը՝ Մարութա Բարձր Աստվածածին

Երկու տարի ժամը չինեց, պրծավ.
Կնաց, կայնավ ճամբեն վերեն,
Ով որ եկավ, պանեց, իպի, ասաց.
— Ձըմ տան անուն արիք։
Մարթ չիմացավ, ինչ ասեր։
Քանի մարթ պերեց հատեղ,
Պիտաններ փակվավ, չիմացան՝ ինչ ասեր։
Մե որ հրեշտակ ելավ խալիվոր մարթու պես,
Եկավ Սանասարի առչեվ։
Սանասար ատրավ, ինոր աուն շանց տվեց, ասաց.
— Պապի, մեր տան անուն ինչ կը տնես։
Պապին ասաց.
— Ձեռ չըմ տեսնա՝ ծեր աուն քանի մ' ա, վոր անուն տնեմ։
Ասաց.— Պապի, արի, յես քե շկեմ,
Մեր տան չորս պուլեր կան կամ,
Տու տես, ետր անուն տիր։
Շկեց, տան պուլեր կան եկավ։
Ասաց.— Ես սասռեն...
Ասաց.— Պապի, մեր տան անուն ինաց Սասուն։
Ապա, պապի, մեր ժամու անուն ինչ կը տնես։
Երթայնք, ժամ տեսնեյնք։
Կնացին, ժամ տեսան։

Պապին ասաց.— Ինչքան պահցը ա.
Ես էլ Մարութա Պահցը Աստվածածինն*
Սանասարն ասաց.— Լավ, պապի,
Ես էլ էլավ Մարութա Պահցը Աստվածածինն.
Դե, տոն էլ կնան։

Բ

ԳԱՎԹԻ ԿՈՒԻՎԸ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

18. Սանասարի յեվ Բաղդասարի վոդիները

Ընցավ մեկ ժամանակ. Սանասարին Աստված տվեց մեկ տղա, Բաղդասարին՝ իրեք։ Սանասարի տղի անունը Մհեր տրին. Բաղդասարի տղեներց՝ մեկի անունն Չոլաքան, մեկին՝ Վերտոս, մյուսի անունն Վարթան տրին։

Մհեր յերբ ճոչացավ, շատ կարճ մարթ տարբյալ. իննըր խամբալ խառավ ամեն տեղ։

Մհեր խոր վոժ առեց. իննըր խոր պռնավորներ, վոր պռներ եր Սասնա մեչ, պահց եվոդ։

Մհեր կարքվավ Սիմամի խևտ, նստավ իննըր խոր տեղ, եվավ Սասնա թաղումդար։

Բաղդասարի տղեներ՝ պատիկ տղեն, վոր անունն Վերտոս եր, ցավոտ եր, չտառնացավ. ճոչ ախպերն էլ, նա տատղաբաշխ եր, տատղեր կը ճանչներ. են էլ կնաց խըտա ուր տատղերի հաշվին։ Մնաց Սասնա մեչ Մհեր, Չոլաքան։

19. Մհերի վոդիները՝ Մելիք ու Թավիք

Մեկ որ Մըտրա Մելիքի կնիկ Թուխտ կիրեց, հարեքևց Սասուն, Մհերին կանչեց իննըր մոտ, Մըրր։

Մհեր եկավ, ծին խնծավ, կնաց Մըտրա Մելիքի կընկան մոտ։

Մհեր ննըր խաբցուց ասաց.

---

* «Մարութա» բառից հետո ավելացնում ենք՝ «Պանցըտ» և տ.

— Ինձ ինչի սարքով ես կանչե՞ւ

Մելիքի կնիկ ասաց.

— Ես կանչել եմ, վոր իմ մոտ պառկես, քեզնից մեկ պահակ ունենամ, քեզի նման կարիճ չկնի։ Նորը սարքով քե կանչել եմ։

Մհերն նորը մոտ պառկեց։ Մելիքի կնիկ նրա մոտեն տղայվավ։ Մհերը վերատարցավ Սասուն։

Յերբ վոր Մհերը վերատարցավ Սասուն, Մհերի կնիկն հիմացավ՝ ինոր մարքը Մըսրա Մելիքի կնկին ծոց պառկեր եր, ինոր մարքն ասաց.

— Ծեր ցեղի մեջ հերքում կա, վոր սուտ չասել, հուրիշ կնկաներաց խնա չխառնվել. վոր խառնվեն՝ որ մեռնեն։ Մկա ասի յիմ մոտ որ չպառկես. վոր պառկես՝ որ մեռնենք։ Մեկ ժամանակ մեկ-մեկու մոտ չպառկան։

Ընցավ մեկ ժամանակ, Մհերը ինոր կնկին մոտ պառկեց. կնիկը տղայվավ։

Ինն ամիս, ինն որ, ինն ահաթ վոր քմբմավ, կնիկը պառկեց, մեկ տղա պերեց. անուն արին Տավիթ։

Տավիթի ծնվելուց մեկ ժամանակ ընցավ. Մհերն ել, կնիկն ել մեռան։ Տավիթ մնաց հերքում։

20. Դավիթը Մսրա Մելիքի տանը. նա բռնում է Մելիքի գուրզը

Ծենով Հովան չկարողացավ Տավթին պահել. հարնեխնից Մըսրա Մելիքի կնկա մոտ։ Տավիթ ենանեղ ապրեց մեկ ժամանակ, ելավ խինդ տարեկան։

Մեկ որ Տավիթ որ տեսնա՝ ինոր ճոչ ախպեր կ'երթա գոլրզ քցելու։ Ինքն ել կ'ընկնի հետեվ, կ'երթա նրա խնա։

Մեծ ախպեր գոլրզ քցելու ժամանակ կ'ասի ինոր մարքերաց.

— Տավթին հետու տարեք, գոլրզ նրան չտիպնի, վոր տիպավ, որ մեռնի—

Տավիթ կնացեր եր, կայներ եր գոլրզ քցելու տեղ։—

Ասացին.— Տավիթ, հետու կնա նոա տեղն։

Տավիթ նրանց խոսքին չլսեց. մնաց ենանեղ, ինոր խաղմար խաղ կ'եներ։

Յերիտը ճոչ ախպեր գիրզ քցեց, Տավիթ նրա գիրզ պռնեց, քցեց, ախպոր մոտեն ընցուց։

Մեծ ախպերը պարկացավ, ուզեց խփեր. Տավիթին ոը սպաներ, Տավիթ փախավ կնաց մոր մոտ։

Եա որվանից Տավիթի ճոչ ախպեր թշնամացավ Տավիթի խեռ, կ'ուզեր սպաներ Տավիթին։

Մըսրա Մելիքի կնիկ տեսավ, որ ինոր ճոչ ոդեն հեր-թում ա արեր, որ Տավիթին ոը սպաներ, ասաց.

— Վ՛ախթի, ենի հալա խելահաս չի, նրա խելք դեռ չի խասնի, ոդն յա, մի զանի ինոր. քի ախպերն ի։

Մերը տեսավ, որ չարա չկա՝ Մելիք ոը սպանի Տավի-թին, ելավ, Տավիթին հերիկից Սասուն։

21. Մելիքը պատվիրում ե սպանել Դավթին. սա հաղթում ե Մելիքի մարդկանց յեվ վերադառնում Սասուն

Մելիքը, ինոր երկու ասպչի մարթեր, մեկի անունը Կլիճ-Բաթման, մեկի անուն՝ Քամուռ-Քաշան, ինոնց ասաց.

— Կը տանեք Բաթմանա կնոջ վերեն, թալեք ձրի մեջ, խեխավի, տարցեք, եկեք։

Տավիթին տանող մարթեր, որ խասան Բաթմանա կար-մունջ, ուզին Տավիթին պռնեն, թալեն ձրի մեջ, խեխավի։ Տավիթ պռնեց, ինոնց ոը թալեր ձեռ։

Քամուռ-Քաշան, Կլիճ-Բաթման ասին.

— Տավիթ, մենք կը խնթրեցնք մե մը թալի կնաս։ Մե քի խոր մշակներ ենք։ Քի խեր մնասավ, նոր մեկ կ'ուցենք Մըսրա Մելիքի առնվե։

Տավիթ խնայեց ինոնց, ազատ թողեց, տարցան Մսըր-ինքն ել կնաց Սասուն, ինոր խրոխտոր մոտ։

22. Վարարդուբյուն. խրատատու Պատավ. Դավիթը պատուհասում ե հարկահաւճներին

Ընցավ մե ժամանակ։

Տավիթ ելավ 20—25 տարեկան, ինոր խոր իշխանու-թին ձեռք առավ, սկսեց երկիրը կառավարել։

Ծենով Հովան Մըսրա Մելիքին խարջ-խարաջ կը տար

Մե որ Տավիթ հնացեր եր ավ-զուշ անելու։ Մտավ
Պառվու կոլկի սրտի մեջ կը պռըտեր, վորս կ'աներ։

Պառավը եկավ, Տավիթին ասաց.

— Կրող քե տանի, Տավիթ, ինչի՞ իմ կոլկի սրտ կը սրտրիս։ Եկեր են, քի խոր տանից կոտեբով վոսկի սը տանեն։ Ինչի՞ եդ տեղ կը պռըտիս։

Տավիթն ասաց.

— Պնռավ, վռրտեղ ա, ընձի ցույց տուր։

Պառավը տարավ ցույց ավեց։

Տավիթ վոր մտավ ներս, տեսավ՝ վոսկի չին չափում, ասաց.

— Տա՛ք չեք կիտի չափել. ավեք, չես կը չափեմ։

Կոտ առեց, կոթծեց, վոսկին լցեց կոտի վոռին, վեռս ավեց, թափեց տակ ու տարտակ կոտ կոթծեց ջվալի մեջ, ասաց.

— Ե՛ս մեկ։

Մելիքի մարթեր վոր տեսան, պարկացան, ասին.

— Ետ ինչ եք անում. ետ երեխան մեզ սրտեք, մեր խարջ չավեք, ավեք։

Տավիթ պարկացավ, կոտով ավեց Մելիքի մարթիկերաց կվխի մեջ։ Մեկին սպանեց, մեկին թողեց, տաճիեր խանեց, չարեց ճակատին, ասաց.

— Կնա, Մելիքին տա, վոր Տավիթ քեզի խարջ-խարջալ չիտա։

Մելիքի մարթ կնաց, Մելիքին պատմեց Տավիթի սրտծքեր։

23. Մելիքի տեսավաճը, Դավթի գիճավառումը, հզարանալը յեվ Մելիքին սպանելը

Մելիք պարկացավ, զորք հավաքեց, եկավ Տավիթի վրեն կռիվ։

Տավիթ տեսավ, վոր Մըսրա Մելիք անթիվ զորքով եկեր եկեր եր իրան վրեն կռիվ, ելավ տավ ինոր խոր ղենքեր՝ Թուր կեծակին, Ջին Տատաֆին, Գուրկու Ջալալին, Գայրդն ու Գոռոզին, եկավ կնաց Մելիքի վրեն կռիվ։

Յերբոր Տավիթ տեսավ՝ Մելիքի զորքի շատութին սրտծոր պռներ եր, վախացավ։

Տավիթ քնաւ. երազի մէջ Մարութա Պանցը Աստուածածինն եկաւ, ասաց Տավիթին.

«Քու թիվի վերեն յարա կ'ըլնի, չվախենաս. ոտ տեղել, յարեն կը ժրի, յարի տեղ խաչ կ'ըլնի»։

Են տեղից Ման Յաչ պատրաստուավ Տավիթի աչ թիվին։ Տավիթ ճոչացաւ, խոր վոժ առեց։

Ձին ասաց Տավիթին։

— Մը՛ վախենաս, ենտնք խողածին են։ Քեզնի մ' ոտ ըսպանես, չորս ըցկուա յըմ վոտների տակ կը տրօրվին։

Տավիթ հատեղ սկըտ առեց, կռվեց, Մելիքի զորքերին ենացեղ կոտորեց, վոր արուն պացրցաւ, ջանդակ առեց տակ։ Սաղ պատգոն ել ցիրուցան եղան, փախան. ինաց մենակ Մելիք քնուվ ինոր չադրի տակ։

Տավիթ ավեց Մելիքի վրեն։ Մելիք եղաւ, Տավիթի խետ արով * կռվաւ։ Մելիք իրեք տըռը զարկեց Տավիթին, ամա ձեռաս չեղաւ։

Սրեն խոսաւ Տավիթին, ասաց.

— Մելիք, զեն ինձ ա. ոտ կայնի, յես զարկիմ։

Մերն հատեղ խնդրեց, ասաց.

— Տավիթ, Մելիքին քցեյնք խուրի մեչ, նոր զարկ։

Տավիթ զայել եղաւ։

Մելիքին իչուցին խուրի մեչ, քոր քաշիցին խուրի պերան, կաշինել լցին խուրի վրեն։

Տավիթ կայնաւ խուրի պերան, Քուռ քաշեց, ասաց.

«Կը հիշաս Մարութա Պանցը Աստուածածին,
Վոր Ման Յաչ պատրաստեց Տավիթի աչ Թիվին,
Վոր Տավիթ Քուռ Թալի, չերքա քոնան ու քամին»։

Տավիթ վոր առաչի տըռը պիտի զարկեր, ասաց.

«Ես յըմ ճոչ ախպերն ա. առաչի տըռը Աստըծուն խաբըր կը ասիմ»։

Յերկրորդ տըռըը՝ մորն ասեց.

— Քեզ կաթ կիերեր եմ, ես ել քե խաթըրն ա։

Յերրորդ [տըռըին խփեց Մելիքին, սպանեց, տարցաւ նորից Աստուն։

---

* Սրով — հերթով։ Յ ժ բ.

գ

ԴԱՎԻԹԻ ՄԱՀԸ

24. Դավիթը՝ յերդվելով խոսք և տալիս Մօտ Սուլթանին՝ նրա հետ ամուսնանալու

Մշու Սուլթան, վոր լսեր եր Տավիթի քաջութենն, թուխա մի կիրեց, հնրնեկից Տավիթին Սասուն. ասեր եր.

«Տավիթ, արե, ընձիկ առ քե կնիկ, յըմ երկիրն ել երա քի հետարով»։

Տավիթ ելավ, ծին խնծավ, ուրին զենք-զրախքիր առնց, կընաց Մշու Սուլթանին խաղնեց, Սուլթանին ասաց.

— Ձես քե կ'առնեմ։

Մշու Սուլթան Տավիթին չատ հնրմաթ կ'աներ։

Տավիթ մի ժամանակ ճնալուց յետո, ելավ, վոր տառնար Սասուն, Մշու Սուլթան Տավիթին ասաց.

— Տավիթ, ինձի իզդար տուր, վոր պիտի կյես, դնրես կընամ։

Տավիթ կայնավ, իրարու խետ հնրտնիմ արին։

Տավիթ ինոր աչ թխլին վերի Մահ Խաչովը հնրտնիմ արաց, ասաց.

«Ես Մահ Խաչ, վոր պատմել ե յըմ աչ թխլին, թող մե մեչ վկա ելնի»։

Ուխտ արեցին, ու Տավիթ կընաց Սասուն։

25. Դավիթը խանգութի ճամակի վրա՝ գնում ե նրան առնելու. նա կոտորում ե խանգութի ուզնկացներին

Մեկ որ Հնդու Ճամանտար թակավորի ախճիկ՝ Խանդութ խանում թուխա կիրեր եր Տավիթին.

«Թե տուն ինձի հախտացնիր, ինչ կ'ուզես, տը տամ»։

Վոր թուխա առավ Տավիթ, կնրտաց, իմացավ՝ Խանդութ խանումն ի կիրեն ելավ, ծին քնչեց տուն, խնծավ, ինոր զենք ու զրախքիր կապեց, ասաց.

«Յա խաց ու գինի, տեր կենքանի»...

Ու կընաց Թեխ Հնդու Յամանաը Թակիվորու խոզ, Խանդիւթ խանըմի կուշու։

Խանդիւթ խանըմ քիւռսուն աժդահա փալխանքսիր ժողվիը ու իւնոր սարայի մեչ, ենոնց կը ջոբեր, թե՝ վեր մեկ վոր կորիճ եղներ, ենոր առներ։

Են ժամանակ Տավիթն ել եկավ, խառամ ենանով։ Տավիթ վոր իմացավ հասցեղ պան կա ենոնց մեջ, ենոնց ամենուն ձեռնեն ենոնց Թրեր խլեց, ժողվեց, մեկտեղ ծալեց, ծալմըլեց, որեց իւնոր Թրի պերան, փրթեց, փշուր-փշուր արեց, վորին սպանեց, վորն ել՝ փախան, Տավիթի ձեռն ալծան, ազատվան։

26. Դավիթը գնում է հսկդուբի բռնամիներէ դիմ. ձանապարհին նա կռուում է Երկաթի սյուներ չեղ հաղթում է բռնամիներին

Հնդու Յամանաը Թակիվոր, վոր հասցեղ պաններ տեսավ՝ Տավիթն հրաց, ասաց.

— Տավիթ, յես յըմ ախճիկ ը տամ քե, ամա մե դիւշմանքսիր կան Պանցը սարի կըլլխա, ենոնց ու սպանես, վոր ոահաթ քի ճանըսա երթաս. Թե չե՝ յըմ ախչիկ տանելիւն՝ քե ը վճացուցնն, յըմ ախճիկն ել ը փախցուցնն։

Տավիթն ասաց.— Դեր ի ինոնց տեղ. ձիկ նչանց տուր, դիրխս յես ա'երթամ։

Հնդու Յամանաը Թակիվոր պատանց նչանց հասւր։

Տավիթ եղավ վե, ծինը խնճավ, մարթեր առեց, կընաց կռիվ։

Տաչաի մեչ տեսավ երկաթե սուն անդուկ, ասաց ինքն իրան.

«Ենա ձի չոբելի խամար են կայնացուցեն»։

Թուրը քաշեց, ասաց.

«Կը հիշամ Մարութա Պանցը Աստվածածին,
Մեզ Խաչ պատրաստեցին Տավիթի աչ Թիվին,
Վոր Տավիթ Թուր Թալի երկաթին,
Չերթա քոնն ու քամին»։

Թուրը հֆալ, սուրը կտրեց.
Սուրը կալամ կալամի վերեն կայնեց,
Տավիթ ասաց.

«Ծեռը կոտրեր Տավիթին,
Աչքը քոռներ Տավիթին,
Վոտը կոտրեր Տավիթին,
Տավիթը Թուր չֆալեր,
Երթեր քոնդ ու քոմֆին»։

Վոր եռացեղ ասաց, եկավ կիռ, ընգավ եռաեռը։
Մեկ սրնաֆ մեաց, քոմֆին եկավ,
կտրած սուրը ընգավ տակ։
Են կանխ իրեր կշտի մարտեր ասացին.
— Տավիթ, տու ինչի՞ քե անիծեցիր,
Քու կտրած սուն ընգավ տակ։
Տավիթ, ծեր ազկի մեչ Աստուծուց տրված ա.
Ինչ վոր ասեն, կը կատարվի.
Քե ոխնի, եկ մ' եկ կը ժրես։
Տավիթ ասաց.

«Ծեռը կանչըներ Տավիթին,
Աչքեր լեռներ Տավիթին,
Վոտներ սաղներ Տավիթին.
Կը հիշամ Մարութա Պանցը Աստվածածին,
Վոր լսի Տավիթի խնդիրքին»։

Տավիթ եկ մ' եկ ժրավ, ծիրը խեծավ, կընաց Հնդու Ցամանար թակավորի դուշմնքաներն վերեն կռիվ։
Վոր եկավ Պանցը սարի կըլեխ, ծեն ավեց.

«Թե քոն եք, վեր գարթեցեք.
Թե գարթուն եք, ակըխացեք.
Եկեր եմ ծեր վերեն կռիվ.
Ջասեք՝ Տավիթ կնդուխենով եկավ մե վրեն կռիվ»։

Սարի մարտեր վեր կացան, տեսան՝
Մե մարտ գի ծիու վերեն կայներ իւ
Ժողվան, եկան Տավիթի վրեն կռիվ։
Տավիթ Թուր քաշեց, ասաց.

«Կը հիշամ Մարութա Պանցր Աստվածածին,
Ման Խաչ պատրաստեցին Տավիթի աչ թիվին,
Վոր Տավիթ թուր թալի,
Չերթա քոան ու քամին»։

Թուրը քաշեց, ետ մարտիրաց խետ կռիվ արեց։
Ինչդադար լինքն սպանեց,
Զորս ըցկուռմ ծին ինոր վոտերով տրորեց։
Ետնից արուն ելավ, պանցրցավ,
Ուրանց չանդակ ծածկեց, կետու պես կընաց։

Տավիթ վոր կռիվ վերճացուց,
Տարցավ, եկավ Հնդու Յամանաը թակվորի կուշտ,
Ասաց.— Յես քո դժշմանքտերաց սպանեցի,
Մկա յես ո՛երթամ Սասուն։

27. Դավթի ամուսնությունը Խանդութի հետ յեվ Միհերի ծնունդը

Հնդու Յամանաը թակվոր Տավիթի քաջուքեն վոր ընց-
կռւմ տեսավ, կանչեց վարտապետեր, կանչեց քահանեք,
կանչեց սարկավագներ, Խանդութ խանըմին փսակել տվեց։
Ոխտն որ, ոխտը քշեր խարտնես ալաց։

Երկու տարուց յետով Տավիթին մեկ տղա կ'ըլնի. անուն
կը տանեն Մհեր։
Տավիթ յեվ կ'երթա, ուր տղին տեսնա, կ'իրիկա՝ աչ
ծեռին մեչ մե կաթ մ' արուն կա։
Տավիթ ետեռ կ'անիծե ինոր տղին, կ'ասե.
«Տե՛ր չորնաս, քեզնից տղա չըլնի»։
Ետացող ել կ'ըլնի։

28. Մհու Սուլթանը սպանում և Դավթին

Տավիթ կնիկ կ'առնի, կը պերի Սասնա տուն։
Կը կա՛ Մշու տաշտով վոր ընցնի,
Մշու Սուլթան կը կա՛ առաչ, կռիվ կ'անի։
Ետ խաչը, վոր հնլտամ արե, ինոր կը վառի,
Ել չկենա Սուլթանի խետ կռիվ անի։

Պերին, հասցեղ արին.
Կախտիկ տարան կարմիջի վերեն.
Տավիթ խաբար չուներ,
Սամսխոի պղինձ շուռ տվին Տավիթի վերեն.
Տավիթի կըլոխ խաշվեց, մեռավ.
Խանդութ խանըմ թողեց, կըննաց Սասնա տուն.
Տավիթի ծին, դուռդ, թուր կնձակին,
Մշու Սուլթան առնց, տարավ ինոր տերեն։

Սկզնական և Բնդհանուր

պատմեց
Գաւիշեցի
Զարեհ Տէր Մխիթարեան

Գրի առաւ 1915 թ.
Գաւիշեցի Կարապետ Բրմահայր

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ո անառատ և Բազդատարշ»-ի այս պատումը պահվում է ՀՄՄՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ֆոլկլորի արխիվում։

Հանդուցյալ ազգագրագետ Յե. Լալայանն ղեկավարությամբ 1915/16 թ. թ. դրի չեն առնվել 1000-ից ավելի հեքաթներ։ Գիտարշավներն մասնակցել են գլխավորապես արևմտահայ բանահավաքները, որոնց շարքում պատվավոր տեղ է գրավում ընկ. Նաբեկ դյուզյանի (Թավշ) ուսուցիչ Աբաջիս Բարսեղյանը։ Սրա գրչին են պատկանում հարյուրից ավելի հեքաթներ, որ նա գրի է առել Թուրքահայ գաղթականներից, մանավորապես, գավաշցիներից, կարկաչցիներից և ուրիշներից։

Աբաջիս Բարսեղյանը (այժմ հանդուցյալ) պաշտոնավարում էր Ամերիկյան հիմնարկներում և դպրոցներում, Լենինականում։ Աչքաթող նա ավանդում էր հայոց լեզու և աշխարհագրություն։

Բանահավաքի անմիջ գրական ժառանգության մեջ (դեպքվիճառական գրվածքներ, վիճակագրական տախտակներ, ազգագրական նկարագրություններ, Պատմական Հայաստանի քարտեզ) մանավանդ աչքի է ընկնում Վանա լճի ավազանի մանրամասն քարտեզը։ Նրա ձեռագրերը պահվում են ազգագրական-նների մեջ։

Այս պատումը, ինչպես նաև մի տասնյակ հեքաթներ, նա գրի է առել իր մորից՝ Զարդար Տեր-Մխիթարյանից։ Թժբախտաբար, նրա ձեռագրերի մեջ չպատահեք Զարդարի մանրամասն կենսագրությունը։ Բրա փոխարեն գրի առած յուրաքանչյուր հեքաթի տակ բանահավաք ժողովն մի կարճ նախադասություն և գրել իր մոր մասին։ Հավաքելով այդ հատուկտորները՝ կազմեցինք սակավ տողով բերված կենսագրությունը։

Պատումիս սակավ՝ Զարդար Տեր-Մխիթարյանը, 50 տարեկան (1915 թ.), Թավշի նաբեկ դյուզյան է, անգրագետ։ Նրա հայրը Շատվանի նշանավոր Մխիթար քահանան է եղել։ Մայրիկը սպարկիրցի է։ Զարդարի թե հայրը և թե մայրիկը շատ բանիմաց և հմուտ պատմող-սակավողներ են եղել։ Զարդարն իր պիտակի մեծ մասը լսել, սովորել է իր հորից և մայրիկից։

Բանահավաք Ա. Բարսեղյանի վկայությամբ Զարդարը գիտեր բազմաթիվ հեքաթներ, խաղեր ու երգեր։ Դիտողները նա պատմում էր վարպետորեն։

Կ. Մ.-ՈՂԱՆՋԱՆՑԱՆ

Պատումի տողատումն ամբողջական մերն է։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

1. Դավաւու փոսի կռապաշտութիւնն եւ Աղթամարի տեառնի աղօթքն. խոհրդատու Վարպետարկա չխիսկոպոս

Դավաւու փոսի մեջ ժամանակ իմ կռապաշտութիւնն էր։
Աստվածապաշտներ էլ կին Հայքին մեջ, Քրիստոս Տէրն էր։
Հայր քիչ են. թակավորութիւն կռապաշտներու ձեռն էր։
Կռապաշտներ որ աստվածապաշտներու մեջ կան կը գնան,—
Մըչ Հայքին մեջ ներսէս իմ կըներ,
են ներսէսչ ախչիկ շատ խորան էր,—
Եսա ախչիկ անուն, մատնեցին թակավորին,
Թե.— Հայքին մեջ ներսէսչ շատ խորան ախչիկ իմ կայ
թակավոր Քրիստոսի երաց հայհոյմարցոց.
«Գիտես, քու առուով քու ախչիկ կը տաս ձի, ուր.
Որ չտաս, քու ազգ հրամեն ալ կտրեմ»։

Ժողով արին ուրենց մեջ, թե՝ իրենք են՝ ամեն, չամեն։
Քրիստոս երին ներսէսչ անվրոյ,
Ինչ Վարդապետարկա իպիսկոպոսն էր,— նկատ։
Եսա անոր խորհուրդը երին։
Իպիսկոպոս ասաց.
— Մեկ խոզու պատճառ ազգ իմ տաք կտրել.
Ջե, եսա մեկ խոզին հրեա երթա. չես կ'երթամ խնդ։
Քրիստոս տվին թակավորին, թե.— Այդ, կը տանք։
թակավորն էլ ուր պատրաստութեն տեսավ, նկատ, ասրմեվ։
Գնեին գընացք հրա քրիստոչ ախչկան խարտնախալեր։

2. Սաճառարի ու Բադդասարի ջրային ծնունդը

Թակավորի նստած տեղն Նոր Գեղա ամչաի մեչն եր.
Ուր կավու տեղն էլ Աղոթկատեղն եր.
Ենտեղ հրմեն կռապաշտոց եր։
Յոթ-ուխ որ ըմ խաբանիս երին։
Իպիսկապոս ուր չադրը, ուր քուրոչ ախչկան՝
Թակավորի չադրից արտաչափ ըմ գնաբն գարկի,
Երկուս գի հոտ չադրի տակն էն։

Թակավորական հրաման ընցկին ա.
«Զուր քոռատն որ թակավոր ուր կնկան կուչտ չկանա երթա»։
Յեռատն էն որ թըմմավ.
Իպիսկապոս խնթիրք մ' երաց թակավորից, ասաց.
— *Վայ աստ հրաման տաս, չես առնիմ իմ քուրոչ ախչիկ,*
Երթամ Հիլի, հախպրներու վերեն սեր,
Մե կան գնամ, առնամ, երթամ իմ տեղ։
Թակավոր ասաց.— Քե հրամեն ա,
Ա'ռ քե քուրոչ ախչիկ,
Գրնա, կեն արի, տանքցիր։
Առեց ուր քուրոչ ախչիկ, գացին Հիլի։
Գացին, Քոռատն Խորան Աստվածածնա մեչ տղոթկ երին։
Ինչ տղոթկ երին, պրծան,
Ժամուց ելան, ելան Հիլի վիրեվ։
Ենտեղ իպիսկապոս մեկ քար ըմ չուռ հոտ,
Քարի տակ ճոլր հոտ տանտ։
Իպիսկապոս ուր ծոցի թաս հոտ հանճիվ են ճրին,
Թասն հըլինավ, հոտ պռուկ։
Ասաց.— Ա'խչիկ, տա ենա ճոլր, խմիր։
Թաս հոտ հանճիվ, մեկ էլ ելից,
Են մեկելի պես չկցվավ։
Քիչ ըմ ձեաց պակաս, քիչ մ' էլ պըղտոր եր.
Են էլ հոտ,— խմավ։
Քար կռածից վերեն, տանքցավ, իբտ քուրոչ ախչկան նկավ։
Իպիսկապոս մախոտա եպե,
Թակավորի չադրի տատն հանճիվ վե ընցուց։
Վըր քոռատն ավերն ա։
Գացին, նստան չադրի տակ։

Իպխակապս ուր քոլոչ ախչկան
Հըմեն պան չանց եառւ
Ելավ, թակավորից հրաման ուզեց, գընաց ուր տեղ։

Մնաց են հիբիկուն, վոր թակավոր ա՛երթա մըտ ուր կնիկ։
Թուխտ համբեխց թակավորին,
Թե. «Են սըհաթին, ինչ յես քոլ չադրի տակո վե ընցա,
Թե քոլ սերն եր, թե քոլ վախն եր,— յես հազացա.
Ել չուր ին ամիս իմ մոտ չըս կանա գա։
Թե 'ս ախատա յել,
Են սըհաթից՝ ինչ քոլ չադրի տակո վե ընցա,
Ասաբ չուր տղեն ելնելու գա՝խ,
Թե կես սըհաթ հանվել-պակաս ելավ հինե, յեմ վիզ գըբ»։
Թակավոր ել են՝որ մոտ չգընաց։
Կը մտածա թակավոր, թե. «Ենտա ինչ տեսակ պան ա.
Կայնե, խեմ, ջըրըմ՝ սուտ ա, թե՞ ոդորթ»։
Մնաց չուր ին ամիս քըմմալ, ջուխտ ըմ լուճ եղե։
Ակընջկլեն տարան թակավորին,
Թե.— Քե ջուխտ ըմ լուճ ելավ։
Թակավոր հիմտատուն եր. եղե ծածուկ, խաբցնեց.
Թե.— Ասաբեք ֆլան որից, սըհաթից չուր մկա,
Յաղնիշ չկա՞ հինե։
— Ջե, քո՛ւ հանվել-պակաս ըմ չկըեր հինե։
Թակավոր միամտավավ։
Ախչիկ ջուխտ երաց քեռուն, ասաց.— Քըխ գա՛։
Քեռին ելավ, եկավ։
Երկու տղեն ել գաղտիկ կընքեց.
Մեկի անուն եր Սանասար, մեկին՝ Բաղդասար։
Զորս-խինդ որ մ' ել Աստ եառ տեղ,
Դառուր առեց, գընաց։

3. Ձեղբայրների մանկական չարությունները յեվ թագավորի վախը նրանցից

Քանի մ' տարի ընցավ։
Եառ ճժեր որըտորեն կը պեատնան.
Ինչ ելան մեկ տարեկան, ինչըվա խինդ տարեկան տղա։
Կ'ելնեն տուս, խըտ ճըժելուն կը խաղեն,

Չհըժէր կը տփեն, կը լացուցեն·
Աւուր մեկին Թակաւոր
Ուր երկու ճժեր կանչեց, տարաւ դիմի մեջ.
Իրիկնէց, եառնց պետութեն վոր տեսաւ,
Եառնց դրոց վոր լսաւ,
Վախեցաւ ենոնց մոտեն.
Ձամբեցաւ, գընաց տուն·
Գանի մ' տարի յետ վերեն ընցաւ·
Ճժեր եկան ուխ տարեկան·
Որ ըմ կը խաղան խըտ են մեկել ճժերուն.
Սիրե մ' կը գանա Սանասար վաղրի լաճուն,
Վիզ կը քաշէր, կը մեա քեզը·
Կ'առնեն ճժեր, կ'երթան գետափ վե, կը խաղան.
Կ'երթեն բաբղի ծառ վե,
Ծերանց կը կոտեն, պերեն տակ,
Ճժեր կը խանեն վերեն·
Բաղդատար կ'ասա.
— Դե, երթք վերեն, տըբնկուդա տվեք·
Ինչ ճժեր կը շարվեն վըր ծառին, ծեր կը թողնեն,
Հըմեն մեկ դեխ ըմ կը բաբա·
Վիր ծեռ կը կոտրե, վիր վոտ, վիր կուռ, վիր գըլուխ.
Վորն կ'ըլնի լաշ, կը տափկընա ուր տեղ·
Ճժեր լալերեն, բառաչեն կ'երթան տուն·
Ծեր-մերեր կ'երթան Թակաւորի մոտ գանգատ, կ'ասեն.
— Եսա ինչ Ասածու բալա յա.
Մի ճիժ չթողին սլամաբ·
Թակաւոր ասաց.— Ձեռ ինչըխ ենեմ·
Ձեռ գինամ՝ ենոնք ջոջանան, տը կախվին յեմ մուրուսիս·
Գացեք, ենոնց խամար բաղրիր ըմ կ'ենենք·

3. Թագաւորն ուզում է յեղբայրներին մատաղ անել կամիրից. վարպետուկա չեպիկոպոսը տանում է նրանց Հիլի. նրանք ձեռ են բերում հրեղեն ձի յեվ յիրու սուր

Ծողով եգի, ասաց.
— Տաս որից յետ մեր կոքեր տանենք վըր հախլրնկրուն սեր.
Ձեռ յեմ երկու լաճն ել տ'ենեմ մեր կոքերուն մատաղ·
Երկու որ ըմ կ'ընցնի, դըսաւ-դընա քըսան կ'ենենն·

Մեր հիմցավ, վոր երկու լաճեր ս'ենեն կոքերուն մատաղ։
Ջուլյեր երաց քեռուն, ասաց. «Աբի»։
Քեռին ելավ եկավ։
Գընաց, Թակավորին ասաց.
— Ըընթըեմ, ում Թոդնես, յես յեմ քաըրոչ ախչիկ, ուր ճժեր,
Մեկ երկու որ երթանք Հիլի, սեր ենենք, ումնանք։
Թակավոր ասաց.— Քե հրամեն ա, մռա, գընա։

Իպիսկապոս առեց ուր քաըրոչ ախչիկ,
Ուր ճժերով, գընաց Հիլի։
Մտան Քաղաուն Ռոբան ադոթիկ։
Երկու սըհաթ հետո տեղ ադոթիկ երին, ելան ումս։
Գընաց են քաըի հանճիվ,
Ինչ ճաար եր ավե ուր քաըրոչ ախչկան։
Ասաց.— Մանասար, Բա'ղդասար, ումք հիշար կացեք,
Եսա քաը յես շուռ կը տամ,
Գամ ըմ կա են քաըի տակ,
Են գամ շուշոտ պռնեք ծի ծեռ.
Քիչ ըմ մնա, քաըի ակեն ճաար կը տա ումս.
Գամ տվեք մըչ ճրաեն, ծի մ' կ'եղնի ումս.
Գամ շուշոտ զարկեք ծիու պերան,
Երկուս մեկտեղ Թռնեք քամակ.
Զվախենեք, կիք ծի պռնեք քամակ.
Քիչ ըմ կը Թռնի վիր-վեր, ծի կը խնապանդի։
Քեռին քաը վիրուց.
Քեռին ինչըխ ասաց, Մանասար ընցկեն երաց,
Թռան քամակ.
Ծին քիչ ըմ Թռավ վիր-վեր,
Դես փախավ, դեն փախավ,
Կայնավ վըր հետին վոռներուն,
Փրփուռ հոռ վըր պերնին,
Զկարցավ ճժեր եցկեր տակ,
Ձեվացավ, կայնավ։
Մանասար ծիու գամ պերնից եխան, ծին գընաց ուր տեղ։
Երկուան էլ գամ պաքեցին, տրին տեղ,
Բան կոռճեցին վերևն։
Իպիսկապոս էլ մ' էլ առեց ուր խորդիք, եկան։
Ասաց.— Տղա, իս կ'երթամ,

Տա՛ գնացեք ծեր խոր խրես, ասեք՝
Մենք խնթիրք ըմ կ՚ենենք քեզնից,
Վոր ուր ինչկանգներ ժողովուրթ կա,
Թըխ հըմեն ժողվա մըչ ասչխին.
Մի ենոնց հանճավ ենա մատալ ուր կոքերուն,
Մեկել վոր ալ գինաք, ծե վոր որ ալ տանեն,
Հենոր գիշերանց երկուսն ել գացեք Հելի,
Իրեք սըհաթ աղոթկ երեք,
Մին խոժեք, ասրցեք. Հետացածը տուք գխտեք.
Գետին խրատ եսու, գընաց.
Գընաց Հախթամար, ժամ-պատարագ երաց,
Երկու թուր ոխնեց,
Ծածուկ հերոդկից Սանսար, Բաղդասարին.
Տրին ուրենց չադրի տակ, պահեցին.

5. Զոհաբերության հանդես. Յեղբայրները կոտորում են կապաշխներին յեվ սպանում թագավորին

Երկու ախպեր են մեկ որ ելան,
Գացին թակավորի երես.
Ասին.— Թակավոր ապրած կենաս,
Մենք լսեր ենք՝ ասե ըզմե ա՛ենես քու կոքերուն մատաղ.
Մենք թակավորի տղա յենք, մե չվնչելու՝
Համա տանես, գաղտիկ-մաղտիկ գինես.
Մենք կ՚ազաչենք, վոր ասե ինչկանգներ ժողովուրթ կա,
Ժողվես, պերես ենտեղ,
Վոր տեսնան, փառք տան կոքերուն.
Թակավոր ասաց.— Շատ աղեկ.
Ինչըխ վոր տուք կ՚ուզեք, ընցկեն կ՚ենեմ.
Հըմեն ել կը ժողվեմ.
Տղեներ տուրցան, եկան ուրենց չադրը.

Խըլխատն թակավոր թուխտ կը ճամբեր,
Բնդաք քնդքով, գեղ գեղով թնփեն Նոր Գիղա տուչու.
Կ՚ասա. «Ցեմ երկու լաճ ա՛ենեմ կոքերուն մատաղ.
Եկեք, փառք տուեք կոքերուն».
Ամպրատոր մարթ եկավ, լցվավ.
Տափատանից պատա չուր ծով, տուչա ու ծոր լցվավ.

Ասեղ թել՝ն, չըր ի՛նե գեամ՝ն
Որ՝ն վոր թըմմավ,
Մըլխասե՛ն ջա՛խա ախպեր ու՛ռ առնե՛ն, ենե՛ն մատաղ։
Խավկանչոցի՛ն երկու՛ ախպեր՝ն ել կ՝ելնե՛ն, կ՝երթա՛ն Հիլի՝
Իրեք սըհաթ կը կայնե՛ն,
Մըչ Քյոռասե՛ն Խորանի՛ն աղոթք կ՝ենե՛ն.
Ժամուց կ՝երթա՛ն, են քյոր չուռ կը առե՛,
Գա՛մ կ՝առնե՛ն, կը պաքե՛ն, կը անե՛ն վըր ենոնց դըլխաւե՛ն.
Քյոռի ակե՛ն քիչ ըմ ճայր կը գա՛.
Գա՛մ կը առե՛ մըչ ճրուէ՛ն, խրնդե՛ն ձի՛ն կը գա՛.
երկու՛ ախպերն ել կը քնե՛ն ձիու՛ քամակ,
կը գա՛ն, Աստվածածնի՛ պատ կը պաքե՛ն,
կաց պարիվ կ՝ենե՛ն, կ՝երթա՛ն.
Թող ըմ կ՝ելնի՛ ձիու՛ վոքիկերուց.
կը գա՛ն, ենոնց չադրի՛ մոտ, կ՝եչնե՛ն,
Թրեր կ՝առնե՛ն ենոնց ձեռ,
կը ուռնան խրտ Հնխթամար։
Աստված, ուրենց քեռու՛ աղոթք կ՝ասպարինե՛ն,
կը քնե՛ն վըր ձիու՛ քամկի՛ն։
Ծիու՛ն լեզո՛ւ կը գա՛, կ՝ասա.
— Սանասար, Բա՛ղդասար, չվախնե՛ք։
Համա դձի՛ քյո՛ք չուր Տախմանց.
Ենտեղե՛ն չուր ծուլ, գնացե՛ք, ևկե՛ք։
Ընցկում ինչ ծեր քիու՛ կտրա աչ-ծախ,
Ընցկում չամ վոտնե՛րու՛ տակ կը կոխկռտամ.
Ընցկում չամ պոչո՛վ կը ապտնամ, ընցկում չամ լեզվով,
Ընցկում ել չամ բնհնով, ընցկում ել չամ քամով։

Թակավոր էրքեր հոխ վըր ակնե՛րուն,
Թամաշա էրտնե՛ր Թափա՛ն.
Մարթ հերնկնկի՛ն, վոր երկու՛ լաճե՛ր պերե՛ն,
Տնե՛ն հոռճով ակնե՛րուն,
Ակ տեր վըր վղթե՛րուն, կտրե՛ր, ենե՛ն մատաղ։
Սանասար, Բաղդասար գձի՛ն քյոքի՛ն խրտ Տախմանց,
Տա՛րցան խրտ ծովմի՛ն.
Տաս տիր գնցի՛ն, ևկան, վերչ պերի՛ն.
կատպաշտնե՛ր, ինչըխ խոխր, փուխան գեամ՝ն։
Տա՛րցան, ձիուց նհա՛ն տակ, ասի՛ն.

— Թանկավոր, տուր գքեզ կոքեր չամ կ'ուղեմ
Թանկավոր պառկեցուցին գետին,
Ամենը ոտին վրը վազին, կոչեցին, երկն մատաղ
Տ'երցան, գացին Հալէպ,
Ուրենց ծին Թողին, գընաց ուր ասդ.
Գամ որ քալի տակ, քար կոտնեցին վերեն
Ելան գացին Հնախթամար
Ջուխը ոտին՝ աստուածապաշտներ ժողվան, եկան.
Ջանդրկներ ժողվեցին ծովէն, ամշտի մեջ.
Ջուրա գար ըմ երալ. մկա ել տեղ կ'երեվա
Գետ կեան որորե, տարե, լցե ծով,
Մեկել կեան՝ հրմեն մարթուն վոսկոս մկա ել՝ ենտեղն ա
Եատ գար խոզեցին, գացին հրմեն-մեկ ուր տուն

6. Սաճատարի ու Բաղդատարի մենամարտը

Մնացին Հնախթամար, ուրենց քեսխոր տան մեչ
Ավուր մեկին վոր եատ քալերու մեչ կը խաղան,
Կը խատնեն խրտ իրար, խեմ՝ զրեմ վոր մեկն ա
Վոր ծեռ թալին հիրարի վոզպատ,
Ջուր հիրիկուն գիրար չըխչըփեցին.
Նա են կանա վրը ենոր,
Նա են կանա վրը ենոր
Հիրիկուն Թողին, եկան տուն
Ելան, ընկկոն մնադա ինկալ մըչ ենոնց սըռտին.
Ճամբեն իրարի կ'տանեն.
— Վադ ել մ' գանք, խատնենք հիրար.
Խեմ՝ վոր ըզվոր սը տնա գետին,
Խըլխուն չոտ ել մ' ել կ'եղնեն, կ'երթան.
Ինչ ըմ պղինձք կը քաղեն, կ'ուտեն,
Ել մ' ել կը խատնեն խրտ իրար
Գալաշ կը պռնեն. չուտ կետրին չըն Թող

Մեր կ'ասե. «Ի՞նչ ելալ, եատնք չեկան»
Վոր տնեն ելալ, եատնց ծեն ինկե քալեր,
Գետին սի՛նդ կ'տանեն
Կ'երթա, կը տեսնա ենոնց հալ,
Ծռնկներ կը տիա, կնգամ կը կոտրի,

Կը նայի, թամաշա կ'ընայ,
Զուր հիւրիկուն կը կռվին,
Նա ես դեն կը հաղթա,
Նա ես դեն կը տանի գետին,
Հիւրիկուն կը թողնեն, կը գան տուն.
Ինչ վոր կ'ասեն, մեր կը լսի
Երկու ախպեր հիւրերի կ'ասեն.
— Վաղ մեր երկրից վեր ըզվոր անա գետին, ըզվիզ կտրած,
Նկիւնդաբ ինչ նեղացած, գիրար տրորած,
Մեկ մեկելի աչքեն հրած,
Կ'ուզեն, մեկ ըզմեկ ապտեն,
Եկան տուն, քնան չուր խըլըսուն,
Ելան, խաց կերան, գացին,
Գացին եր ըմ ուրենց տեղ,
Շեռ թալին խըտ իրար, առին կռիվ,
Մեր գընաց խեռքեր.
Նստավ ենտեղ, չուր կետրին թամաշա երաց,
Տեսավ, վոր Բաղդասար նվաղավ,
Վոժ պակսավ, առեց հաղթվելու
Մեր ելաց, բռնաց ուր ծնոտ, կանչեց.

«Ո՞ տարեր, ո՞ քաշեր, ո՞ թափեր,
Չայ՞ր տարեք քեռուն,
Թըխ գա, խաղի ուր փալվանքաեբուն»։

Մեկ սըհաթ եր թամաշա երաց,
Տեսավ, վոր Բաղդասար գախ ա՝ էնի։
Ելաց ու կանչեց.

«Ո՞ ծուխեր, ո՞ արնդըղներ,
Չայ՞ր տարեք քեռուն,
Թըխ գա, խաղի ուր խորդևքաեբուն»։

Բիչ ա՛ եր ճաց, տեսավ՝
Սանասար Բաղդասար եթալ գետին.
Շեռ պարզեց խըտ թուր, վոր առներ, վիզ կտրեր,
Մեր ձեռը եկան տաս, վազեց, գինք եթալ վերին։
Ասաց.— Մարե, տվի քու ձեռըուն խաթըր, չըմ սպանե։

Ելան, ևնոնց մոր խաթրին
Իրարու գըլխի պաքեցին,
Ելան հառաչվան ախպեր, եկան առուն

2. Ճեղբայրները մի վայրենի կենդանի տեղում օգնում են իրենց համար բեղ. պիվորն անուշը դնում է Սասուն

Գնանք մ' ամխա ևտեղ ընկերն ընդուզին.
Մեկ որ Սանասար ասաց Բաղդասարին.
— Մե չվայելա՝ մենք միանք մըչ հա պատիկ կղղուն.
Մե ծեն հըմեն մարթ առնդ,
Ծոսքեր երթին մեկ, մորից, քեռիքսերուց խաթըր առին,
կաց պարեվ երթին, ելան գացին
Գացին Հիլի, ևնոնց աղոթիկ երթին,
Գացին, քար շուռ տվին,
Գամ տվին ճրա մեչ, ծին եկավ
Երկու ախպեր մեկտեղ ծին խնծան,
Եկան, Գնասուն Ծորանի պատ պաքեցին,
կաց պարեվ երթին, ինկան ճամբեն, քշեցին
Գիշեր-ցերեկ երթին մեկ, գացին,
Մեկ վայրենի երկիր ըմ խաուան,
Գնրատիրքա, ծոր, հանդաձիք, մեչա, արչ ու գազան...
Ետա երկրին շատ խաշնան.
Սախմեցին, ուրենց խամար պերթ ըմ շինեցին
Սանասար պետ-պետ քարեր կը պերեր,
Բաղդասար կը շարեր.
Շինեցին, խանին գըլխ
Դեր չըն գիտնա՝ ետա պերթի անուն ինչ անին

Ելան, երկու ախպեր գացին, կան եկան,
Սրվատակ-մուրուտ պատիկ ըմ տեսան.
Վեցկին ըծեր եր, մըչ վոսոնին վեր կ'եներ
Պատիկ ինչ ետա երկու վոհրևման տեսավ,
Ծեռքեր ելան դոգ, վեր կայնեցուց
Սանասար եկավ, ծեռ եթավ, պատկե թեվ պռնեց.
Ասաց.— Պատիկ, արի, երթանք,
Մենք պի՛ մ' ենք շինե, անուն տի, տերցի

Պապիկ ասաց.— Վազն եկնք ձնեհ,
Ասաց.— Մը վա՛խնա,
Համա արբ, ուսբ, անուշ ութ, ասրբցիր,
Պապիկ գընաց. ինչ մոխխըցան, պապիկ նեղացավ,
Ասաց.— Վ՛ըրտի, խնր ա ձի տանեք, յես նեղացա,
Ամեն.— Պապիկ, հա՜հա մոխխըցանք,
Պապիկ իրիշկեց, տեսավ՝ սար ըմ պի շարած վըր իրարու,
Կ՛ասա.— Ենարէն ա անուշ սը անեմ,
Կ՛ասա.— Ութ,
Կ՛ասա.— Ասոված ծև տուն ավիրա,
Եսա տուն չի, եսա սասեմ ա,
Սանասար կ՛ասա.— Պապիկ, ասրբցիր, գընա՛.
Քընձ եսա հավել ել ինչ անուշ,
Մեր պերթի անուշ մնաց Ասուշ,

Ինչ է Իսկ եր

պատմեց
Գեվորգի
Մարգարիտ Սարգսյան

գրի առավ 1916 թ
Սեդեք Եր – Հակոբյան



Մարգարիտ Սարգսյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմիչս ասացող Մարդաբիտ Մարդայանն մասին չիարդյացանք լրիվ և առույգ տեղեկութիւններ հավաքելու Բանահավաք Սեն. Տեր-Հակոբյանը, դժբախտաբար, կորցրել և նրա մանրամասն կենսագրութիւնը։ Մեր դիմումին համաձայն՝ նա կարդացավ իր հուշատետրից քաղել և վերհիշել մեզի հետաքրքրը։

«Ասացող Մարդաբիտ Մարդայանը ընկել Թավաշցի չու։ Նա ամուսնացած և. պատմելը գրի առնելու ժամանակ ունել և շուրջ քառասուն տարեկան։ Անգրագետ և իմպերիալիստական պատերազմի ժամանակ նա ևս պատգամաբերել և հայրենիքից և համադյուղացիներն հետ, նախ, հատատամել Վազգեչապատում, որտեղ և գրի չի առնվել այս պատումը. ապա վերադարձել Աշտարակում և շրջանի գյուղերում։ Ներկայումս նրա տեղն անհայտ է։

Մարդաբիտը «Քամիի ու Մհերը լսել և սովորել է իր հորեղբորից և համադյուղացի այլ ասացողներից։ Նրա վիպասիրությամբ՝ նրանց առնմի մեջ ունել են մի քանի ասացողներ, որոնք ներկայիս անդամել են այս «հեքաթերը։ Նա լավ ասացողի համբավ է ունեցել։

Մարդաբիտը պատմում էր վոգևորությամբ, որոշ հատվածներ—երբեմն էլ երգում, բայց այս «հեքաթերից» նա դիտեր նաև «Խոստամ Զալո (հայերեն), «Մակաց Մխրձեն», մի երկու տասնյակ հեքաթներ և բազմաթիվ երգեր ու խաղեր։

Պատումն ասդասում՝ բացի երգերով հատվածներից ամբողջապես նոր և կատարված։

Ամբողջությունս՝ հիմք ընդունելով պատումի բնագիրը՝ վերականգնել և լրացրել է նաև բազմահետերով ընդհատված կամ բանահավաքի կողմից չգրանցված, բայց հիշատակված, կրկնվող հատվածներ։

ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ա

ԴԱՎԹԻ ՅԵՎ ՄՈՒԱ ՄԵԼԻՔԻ ԿՈՒՎԸ*

1. Տախերգաւիմ

Ճոնդամ ասամ ոդոմխեն Մանանաթ, Բաղդասաթխեն.
Դոնդամ ասամ ոդոմխեն Ջոյ Մըհնըխեն, Պոտիկ Մըհնըխեն.
Դոնդամ ասամ ոդոմխեն Զինով Հոլմանխեն.
Դոնդամ ասամ ոդոմխեն Թըլոլ Դոմխիխեն

* Բանահավաքն այստեղ ունի միայն «Թլոլ Դոմխի» վերնագիրը։ Խ մ բ.

2. Ձենով Հովաթը վարը Դավրին Քուռիկ Ջալալինի միջոցով ուղարկում է Մարա Մելիքի մարը՝ պահելու. Քուռիկ Ջալալինի վերադարձը

Վախտով մեկ Մըհներ ըմ կըներ անուհով՝ Սասուն
Ան մնաւ Մըհներ. ասու կնիկ ծոցվոր եր
Ժամանակ ըմ ընցավ, ասու կնիկ լաճ ըմ իրը.
Ասու անուն դրին Դաւիթ
Ան էլ վըր տղին մեռավ
Ձենով Հովանն ասեց.
— Մըծմեր ըմ բռնենք, նա տղին տանք ախրել
Մեկ կնիկ ըմ բերին.
Աստ կում ծիծ քաշելուն, ան կնիկ մեռավ
Մեկ էլ բերին, ան էլ անցկում էլավ
'Սիցին.— Բիշ ը, նախ վեհրըդի ձրա ա.
Թու կնիկ չկանա պայմիշ տա

Ժամանակ մ' ան Մըհներ
Մըսրա Մելքի կնկան մարդն ա ելեր
'Սիցին.— Թա են ախրա, ախրա.
Թա չե, մարդ չկանա ախրա
Կ'իլնին.— Վոր տանի, վոր չտանի
Կ'ասին.— Քուռիկ Ջալալին տանի
Ելան, Քուռիկ Ջալալին քնչին, խանիցին Քավվից.
Քուռիկ Ջալալուն աղեկ քիմաթ ըմ ալին,
ՉԴաւվիթ արին կուղդախ, կապեցին վըր քամկին.
Ձենով Հովանն ասաց.
— Քուռիկ Ջալալին, քենե կ'ուզիմ՝ նա տանիս,
Ենա կուղդախ Մըսրա Մելքը՝ մոր Քաւվիմ ենիս
Քուռիկ Ջալալին առեց,
Մընչ երկինք, մընչ գետինք գընաց,

Մըսրա Մելքը՝ մեր ելավ փանչարեն, իրիցց.
Տեսավ՝ կրակ գետնու իրիանն կը աս երկինք
Մըսրա Մելքը՝ մեր ասաց. ենե ամպ չի.
Կա՞չկա Քուռիկ Ջալալու
Ուբաստ կրանն ը, ընցնա կ'ելնիս
Առավ.— Դարպասվանն, գընա, դարբաս բաց.
Գնա ի՝ ձի մ' խառնի եղա դարբասի դուռ

Կ'ասաս.— Հալա, ինչ կա վըր ձիու քամկին.
Հիրաւ չտաս, բիր, ձիկ թաղլիմ եղա, չկանաս։
Դաբդաւման կը խառնի, դաբդաթ կը բառնա։
Տեսալ՝ Քաւռիկ Զալալին խառալ եղա տեղ,
Բան ըմ վըր քամկին կապուկ.
Կ'առնի, կը առնի, թաղլիմ կ'ենա Մըսրա Մելքը՝ մոր,
Մըսրա Մելքը՝ մեր կը բաներ, կը խի, ինչ.—
Դաւլիթն ա. քուզի մ' ել գըրուկ կա խըտա կդաներ.
Ուըր՝ «Դաւլիթ ձագիր վըր ցըղին,
Մեր մեռիր, մարդ չկարցալ տիրեր.
Կա հարուղկեր ինք դա. կը խնդրինք՝ դա տիրիա»։

Եղա տեղ Մըսրա Մելքը կ'ակախի, կ'ասաս.
— Տղեներ, դաբդաներր դաներցիք,
Ուըր Քաւռիկ Զալալին Ջորով ընկեր մեր ծեռ,
Բռներնք մե խառաբ։
Դաբդըրներր գաբկեցին.
Քաւռիկ Զալալին ոը բռներ։
Քաւռիկ Զալալին ասաց.
«Ի՞նչըն ոը պրծնիմ հուռնց մառեն, տեր Աստըված»։
Գընաց դեն, իրի դեն մընչ բաղներ,
Աստց. «Տե՛, ուըյա, յես ոը գաներ ինա բաղներ,
Թի ընցնիմ, թի մեռամ»։
Կը գաներ, գբաստուն դաշ բաղան կ'ընցներ,
Կը թռներ, կ'իյա։
Մըսրա Մելքը ասաց.
— Ուըյա, գընաց Քաւռիկ Զալալին,
Մի ձևռներց պրծավ։
Քաւռիկ Զալալին գընաց։

Զևռով Հովան կա առներ կ'իրիշա.
Կը խի՝ Քաւռիկ Զալալին եկավ, բա մ' չկա խիտ։
Աստց. «Վըր դիտա ուըր տարն ա թաղլիր, ուըր քարն ա թաղլիր»։

Քաւռիկ Զալալին երի, խառավ։
Զևռով Հովան ասաց.
— Մևռներ քի, Քաւռիկ Զալալին,
Դաւլիթ ձուըր տարն ես թաղլիր, ձուըր քարն ես թաղլիր։

Ո՞ւրը գնէն ա կերթիր, ո՞ւրը Ջանավարն ա կերթիր
Կ՚ասա.— Ուրնչ սարն իմ Թաղիր, ուրնչ ձորն իմ Թաղիր.
Ուրնչ գնէն ա կերթիր, ուրնչ Ջանավար
Տարիր իմ, Մըսրա Մելքը՝ մոր Թաղիմ իմ երիր.
Չալա Ջորով պրծիր իմ, Եկիր իմ
Դաբգբեռնիր վըր ձի զարկին, գնէն եր ձի բռնեն.
Ֆաուն գնգ բաղան Թոխր իմ, Եկիր իմ
Ջենով Հովան կ՚ասա.
— Դեհ, ազնկ Թիմար ըմ ալիք, ասրիք, ուր տեղ կապիք
Կ՚ասա.— Ջում Դավիթ չգա, ուր գաբգբեռնիր խողիք.
Էնու խոտ, Ջուր հատրաս վի ալիք
Դաձռանք վըր Դավիթին

3. Դավիթը բռնում և Մսրա Մելիքի հոյը (ջրագացի քարը). Մսրա Մելիքի վախը Դավթից

Դավիթին եր ձիծ կերավ, Ջուջացավ.
Իրանց գիցած տերեցին
Դավիթ դռսեն ֆրոխկա եկավ
Մըսրա Մելքը կ՚երթիր ուր սեյրանատեղ,
Ուր աղքըրներով եվարին կը գիր
Դավիթ են մնկ որ ուր մոր ասաց.
— Եսի իմ ախպեր հրմեն որ դեր կ՚երթա,
Ուրը աղքըրով եվարին կը գա.
Յես կը ինամ մնդակ առեն վի, իմ ասրըը կը կորիր
Կ՚ասա.— Մեր մեռնի քի,
Կ՚երթա ուր սեյրանատեղ, չուր եվարին կու գա
Կ՚ասա.— Մարե, կը խնդրիմ՝ գա իմ ախպոր ասես,
Ձի վազ տանի խլտա ուր
Կ՚ասա.— Մեռնիմ քի,
Ձիանք կը տան վըր քի, դքի կը ճըղտորին
Ջուր մըկա, կ՚ասա, դքի տիրեր ենք,
Մըկա կ՚իչնինք տոռթի տակ
Կ՚ասա.— Մարե, յես կ՚երթամ, գասրն կը կայնեմ
Մըսրա Մելքը՝ մեր չուտ խըլխատն ասրըը կը առ,
ԸղՄելքը կ՚ասա.— Ենա լաճ ասր խլտա քի.
Շատ յեմ իրես վի կը լա

Կ'ասա.— Տո մա, կես ը՞նչըխ ար տանիմ.*
Ձիանք ար տան վըր փորուն, մենք ամոթով կ'ելնինք,
Կ'ասա.— Վորդի, տար, դի բանձր տեղ ըմ,
Կա ճիժ ա, կը ըն, ըտ՛ մ՛ չենիս։

Մըսրա Մելիք մոր խաթրից չելնի, կ'առնի, կը տանի խիտ։
Կը տանի, կը դընի բանձր սարի մ՛ գըլուխ,
Ինք կ'իյա մընչ մեյդինին, ուրախութենե կ'ենինն՝
Ձիանքիուխ կը ծըղնին, գոըզ կը ծալին չուխ ևվարին։
Մըսրա Մելըք գոըզ կը գանա,
Կ'ևրթա* մընչ մեյդինին փուս ըմ կա,
Մընչ ան փուսին կացնի։
Իրեք տիր կը գոնա։
Անու ուժ նա** կը հավըլնա, նա** կը պակսի։
Հիրիկուն ըզ Դավիթ կ'առնի, կը գա տանա։
Մըսրա Մելըքը մեր կ'ասա.
— Դավիթ, մեռնիմ քի, ծամաշա ևրթը։
Կ'ասա.— Մարե, ուրյա, կես ըտ՛ չտեսա չուխ ևվարին.
ԵՒվարին իմ ախալը ջանչ ջաղըզ՛ քար մ՛ եղար,
Գընաց մընչ փուսին. մա, ան ինչ եր։
Մեր կ'ասա.— Մեր տուն, ան ուր ուժն ա կը ջընար՝
Նա կը հավըլնա, նա կը պակսի։
Դավիթ խըլխուն կ'ևրթա, կը նստի մընչ փոսին.
Մեկ ծակ քյոզ մ՛ ել կա գըլուխ։
Կը նստի հինի, խոզ կը չափա ուր քյոզով,
Կ'ասա. «Ենա մեկ»...
Ծանի չափա, կ'ասա. «Ենա մեկ»...
Ել չի կանա ասա՝ երկու։
Չուխ հիրիկուն ենու գոըզի գլխ կը գա,
Ուրը ուր գոըզ ար գանա, կ'ասա.
— Դավիթ, նուա տեղն իլը վե,
Ցես իմ գոըզ ար ծալիմ։
Իրեք տիր կը կանչա.
Դավիթ չխուխանն կը գընը՛ վրը ուր։
Մելիք կ'ասա կախան, Աստանին.

---

* Պետք է հասկանալ «ոչ թե դուրը կ'ևրթա, այլ «կ'ևրթա ջաղըզ՛ քար», այսինքն՝ հոլը. տես ատող 123-ին։ Խ մ բ.

** Նա-նա — «ոչ-ոչ» Խ մ բ.

— Գանք, ճիվ բռնենք, թալենք գո՛ւռ
կակաո, Ալան կ'երթան, ճիվ կը բռնին,
Ինչըվա կ'ենին, չըվին վեր։
Դավիթ հանած խող կը չափա,
կ'ասա. «Ենա մեկ, ենա մեկ»...
Մըսրա Մելըք կ'ասա.— Ծի տըվեք գեղ.
Ցես գիտեմ՝ են իմ գլխակերն ի. ծի տըվեք գեղ։
կակաո, Ալան գուբընք կը տան գեղ.
Մըսրա Մելըք ըզուր գոըզ կը թալը։
Դավիթ ընցկում կ'ակախի,
Գաղաղ ա՝ չաղչը՝ քար գա մընչ գըլխուն։
Հանած ըզճոռ կը տա հիրջիվ, կը թալա.
Ինչ կը թալա, քանց Մըսրա Մելքին յոթ գաղ հավել կ'ընցըցը՝
Մըսրա Մելըք թուր կը չըլտա,
կը լսրա Դավթը՝ հիախի, ուբր վիզ կտրա։
Դավիթ կը փախի, կը գա, գինք կը գանա մոր տեղ։
Մեր կ'ասա.— Դավիթ, են ինչ իլիր։
կ'ասա.— Մաթե, Մելըք գախ ա՝ գա իմ վիզ կտրա։
կասա.— Ընչի ար գա, քո վիզ կտրա։
Դավիթ ուր քըսեն կ'ենա։

3. Մսրա Մելիքը փորձում է Դավթին կրակով յևլ վոսկով

Զուտ են ուր քըսեն ՝կը պըրծնա,
Մըսրա Մելըք կը մտնի ներս, կ'ասա.
— Հիւր ի են քովըր. յես ինու վիզ ար կտրիմ։
Մըսրա Մելքի մեր չատ հիվի կ'ենա լաճուց, կ'ասա.
— Նախ ճիժ ա, ենու խելք քանի չի խաստի։
կ'ասա.— Ջե, հանի իլնա, են իմ գըլխակերն ա.
Ցես ենու վիզ ար կտրիմ։
կ'ասա.— Տղա, Աստըծու սիրուն, կաց բն մ' ենինք.
Թ'ենու խելք կտրից, չըլտա ենու կաթըլ խալալ ա։
կ'ասա.— Ի՞նչ ա՝ենինք։
կ'ասա.— Թևիսի մ' կըտակ, մեկ՝ վոսկի գնինք հաճըվով.
Թ'ենու ձեռ ատրավ խըտա վոսկին, ենու կաթըլ խալալ ա.
Թ'ենու ձեռ ատրավ խըտա կրակ, ենու կաթըլ խատամ ա.
կը հորինդկինք, 'թա* ուր հոր երկիր։

---

* 'թա — նթա — նրթա ՀՄբ.

Թևիսի մ' կրակ, մեկ՝ վոսկի կը դնին հաճդիվ։
Դաւվիթ ձեռ կը տանի խըտա վոսկինու
Խրիշտըկներ ձեռ կը մլնն մընչ կրակին,— ձեռ կ'երեցի.
կրակիաթախ ձեռ կը տանի բնըտան,— լիզուն կ'երեցի։
Անուն կը մնա Թըլել Դաւվիթ։
Մըսրա Մելքը՝ մեր կ'ասա.— Ընկնանք մեզաց տակ։
կ'ասա.— Զըմ գիտի, մարե,
Ենի ար չմնա իմ հաճդիվ։
կ'ասա.— Ամ, կը հրամիզկենք Սասուն, ուր խոր առուն

5. Մարա Մելիքը պատվիրում է ոպացնել Դավթին. ոա հարթում է փահլեվաններին չեզ ճրացը հետ գալիս Սասուն

Մըսրա Մելըք ըզկախան, ըզԱլան կը դնա խիտ։
Մեր Դաւվիթին կ'ասա.— Դաւվիթ, մեր մեռնի քի,
Զուտ հետը քի տեսեցինք, հետը պըտա քու խոր առուն։
կ'ասա.— Ամ, մարե, ա'երթամ։
Են ել ուր մոր ձեռ կը պատա, կաց բարով կ'ինաս։
Մըսրա Մելըքն ել կախանին, Ալանին թամբի կ'ինաս,
կ'ասա.— Տանեք, վըր Բանդի-Մահու կարմիջին թաղնք
գետ, գնք։
կ'երթին կ'առնին ըզԴաւվիթ, կը գան։

Դաւվիթ խըտա ենուշոց չքնար։
Ենուշք հա հաուաջնդիմ կը գան,
Դաւվիթ հա հետևանց, համխակորուս կը գա։
կը գան չուտ վըր Բանդի-Մահու կարմընջին,
կախան, Ալան կը կայնին։
Դաւվիթ կը գա, կը խառնի, կ'ասա.— Ընչի կայնաք։
կ'ասին.— Դու պատիկ ես, կը վախենաս.
Ըզքի նա գետ ընցըցինք, դու չկընես նա գետ։
կ'ասա.— Չե, չուր մըկա դուք վըր ձի չըք կայներ,
Մըկա ել վըր ձի մը կայնեք, դու ընցեք իմ հաճդիվ։
կ'ընցնին հաճդիվ, կը գան, կը խառնին կարմընջի կետ։
Դաւվիթ ձեռ կը թագա մեկ ըզնին, մեզ ըզնին,
կարմընջից կը կախա տակ, կ'ասա.
— Դեհ, սպին ասա, տեսնիմ,
Ընչի չուտ ըտաս դուք վըր ձի չկայնաք, տասի կը կայնեք։

Կ'ասեն.— Քա, ուբլա, Դաւիթ, գա՛ ըզմի մը թալա պիտ.
Մինք իլնինք վո, քի սաղ կ'ըսինք՝
կը խանա գա՛ս, կ'ասին.
— Մի թամբի տրած ին, սասց ին՝
Մինք ըզքի տը թալինք գետ.
Մինք չընք պիտի՝ գա՛ եղա հուհապի տերն եր.
Մինք չըխոմ քա՛ խոր կաբան, Աստան ինք՝
Ինք՝ քա՛ խեր մեռավ, Մըսրա Մելըք ըզմի տարավ յեխեր.
Մինք գոբանն կ'իլնինք քա՛ կաբան, Աստան, քա՛ խուբլամ՝
Եսա տեղ մե-մեկու գըլուխ կը պագնին, կը գան Սասուն՝

6. Սասնա ձրագ Դավիթի դիմավորելը. նոր ժանկական տարուբյուններ

Ջուհար կը բերին Ջինով Հովհաննէն, կ'ասին.
— Դաւիթ եկավ, կաբան, Աստան էլ խիտ՝
Կ'ելնէին, քաղաք քաղքով կ'ելնէին մեկ,
Կ'երթան հանդիպ Դաւիթին,
Ուրախանէին կ'առնէին, կը գան՝

Դաւիթն ա, ասպա ձիժ ա,
Կ'երթա, խըտ ճըժիրուն կը խաղա՝
Շատ քիչ կը մնա, ճանճ կը խաղա խըտ ճըժիրուն.
Ճըժիր հըմնին կը տըփա, կը լացըցա,
Կը ճամբա ուբինց տնիր՝
Գևղական ձին չըն խանա, կ'ասին.
— Ուր քեֆն ա. նա Սասնա ճրագն ա՝
Կը մնա. ավուր մեկին կ'երթան բախչեն,
Բարդի ծառի տակ կը խաղան՝
Դաւիթ կ'ասա.— Տղեք, նկեք, տըրընկոզալ տանք՝
Ճըժիր կ'ուրախանան, կ'ըսեն.— Դեհ, խա տանք՝
Դաւիթ բարդի ծառ կը կոտա,
Ճըժիր գըմնին կը շարվին վերևն՝
Դաւիթ մուդիր ըմ տըրընկոզալ կը տա.
Ջևոքիր կը թըլցի, կ'ասա.— Տա՛, ուբլա, յես տը թըղնիմ՝
Ճըժիր կ'ասեն.— Դաւիթ, յես քա՛ բախա,
Մըկա կաց, յես իշնիմ տակ, նորո՝
Ան կ'ասա, ա՛ն կ'ասա, Դաւիթ համա կը թողնան՝

Մեկ կը դեպնա քարին, ջարդ-փշուր կ՚ելնը՛,
Մեկ կ՚իյնը գետին, կը մնռնը՛։
Ենոնց խերեր կ՚ելնին, կը գան մըտ Ջենով Հովան,
Կ՚ասեն.— Տըփեղուն ուր քեզի ա.
Նա մի ճըժեր գըտեն ջարդ-փշուր արած, գըտեն մեցուց
Կ՚ասա.— Ախա ինչըվ ենիմ.
Իմ ուժ չըտամ ենու չանոխ.
Ակլք խելաց կը տան, կ՚ասեն.— ՂԴաւիթի անունք նախրորդ։

7. Դաւիթը ճախարդ չեվ գառնարած

Ջենով Հովան հիրիկուն կը գա տուն, կ՚ասա.
— Դաւիթ, մեռնիմ քի, չը՞ս ըլնի նախրորդ.
Ձախ ըմ երկու կորեկ առնինք, մինք ուտինք
Մինք ախքըտացիր ինք։
Կ՚ասա.— Խրոխպեր, ընչի՞ չըմ ըլնի.
Ճըլխաուն գալա տու կանչիլ,
Թըղ տասար բերին նախրի տեղ.
Յես կ՚ելնիմ նախրորդ։
Ճըլխաուն Ջենով Հովան կանչա, կ՚ասա.
— Տասար բերեք նախրատեղ,
Թըղ Դաւիթ նախիր տանի։
Նախիր կը բերին.
Դաւիթ նախիր կ՚առնի, կ՚իյա։

Ջում եվարին գեղական կը կայնին տանիս, կ՚ասեն.
— Խիմ՝ նա նախիր որ բերաւ տուն, չըբրա տուն։
Եվարին Դաւիթ նախիր երի. կը խնդ՝ ինչ.—
Գնան տասար ա, գնան արջ ա, գել ա, լապտարակ ա։
Կ՚ասեն.— Ջենով Հովան, նա ինչ ա.
Մեր տասըրներ ուրըն հախտ որ խատնին,
Ուրըն որ ընկեցկուտին։
Ջենով Հովան կանչա, կ՚ասա.
— Դաւիթ, վորն գըտնեն ա, գո՛նա հորդղիլ,
Վորն ապրեն ա, բի տուն։
Դաւիթին ա, փեսա մ՚ ան արջու քամկին,
Փեսա ըմ վըր ան գելու քամկին կը գնա,

Կ՚ասա.— Դըսնեն, գիւս գացեք, տըսնեն, երթանք տուն
Կը չոկա, կ՚առնի ըղնախիր, կը գա տուն
Կը ճնա խըլխուն, եւ ըղնախիր չըն քնդնի
Են կ՚ասա.— Իմ կոճը ա ընկնցկուախիր
Են կ՚ասա.— Իմ կոճը ա խասիր
— Հապա ինչըվա ննինք, ինչըվա չննինք
Կ՚ասեն.— Անենք գառնարած
Կ՚ասա.— Ես, կ՚ելնիմ գառնարած

Խըլխուն գառներ կը տանի, ավարին կը բնայ,
Գառներ կը քոմմա, կը գա տուն
Զինով Հովհան կ՚ասա.
— Դավիթ, մեռնիմ քի, չը՞ս նեղացիր
Կ՚ասա.— Չէ, խրոխպէր, յիս չըմ նեղացիր
Հալա՛ բալիկ ու ըմ կա հինի,
Ցես նզանիր իմ ձի խամար
Համա Զինով Հովհան կը վախենա,
Կ՚ասա.— Ուըլա, ըսասա բա մ՚ կա
Կ՚ասա.— Դավիթ, խամ, ելի, երթանք
Կ՚ելնին, կ՚երթան դոմ
Զինով Հովհան կ՚ասա.— Հէւը իս
Կ՚ասա.— Խրոխպէր, կիհան մասալ ենա պատի ծակ վեր
Խրոխպէր կ՚իրիւա, կը խա, ինչ.— Լապատրակ

8. Զինով Հովհանի կնոջ վերաբերմունքը դեպի Դավիթը. Դավիթը ձեռք ի բերում իր ճիս ու աղեղը

Կը գա տուն, կնկան քոմբի կ՚ենա, կ՚ասա.
— Կնիկ, ել խաց չտաս, Դավիթ ուտա,
Թըղ կենա, սասկի. ենա ինչ...
Մե Սասնա ճրագ ընցեր ա,
Ել են նոր ալ մե Սասնա ճրագ վառա
Կը ճնա խըլխուն, կ՚ասա.— Մարե, յես անուքի իմ
Կ՚ասա.— Մենը՛ մեր, խաց չկա.
Ելար նախրորդ, չկարցար գըլուխ տաննը.
Ելար գառնարած, չկարցար
Դավիթ կը նսոի քորվան չուրքի, չատ կը ճընճըլի
Զինով Հովհանի կնկան զժար կը գա, կ՚ասա.

— Դաւիթ, իլի, նա ցանոցից քիչ ըմ ցան բի, վառինք-
կուա ըմ պախիր իմ, ասմ, գա՛ ուտու՝
կ'ելնի, ցանոցից ընչ ցան ոը բիրա, կը խի՝
ի՛ա մ' եսա պատից կախուկ ա, կուտուկ փետ մ' ա.
կ'առնի, կը բիրա, կ'ասա.— Մարե,
ենա ի՞նչ ա, ենա կուտուկ փետ՝
կ'ասա.— Ըմ գիտա, քա՛ խրոխպիր գիտա՝
կուա ըմ կը սա, Դաւիթ կ'ուտա՝

Ջինով Հովան դառց կը գա՛, կ'ասա.
— կնիկ, չե՞ յես քի ասի՝ խաց մի սա, ուտի.
Թըղ ինա անուքի, սատկի՝
կ'ասա.— Տնաչին, շատ ապարատ, ձի շատ գժար եկավ.
Յեսո ել մեկ կուտ տվի, կա՛ կ'ուտա՝
Թե վոր ձեռ տարավ խիտ վռնկին, վիղ գարկ.
Թե խիտ կրակ, մի սպանիր, գրկի, թող երթա իր տեղ։

Ընդես երաց, դրից տղի ձոզնվե։
Ու տղեն ձեռ որ տաներ խիտ վոսկին,
Հրիշտակնիր ձեռք զներկին ու տարան խիտ կրակ։
Դավթի մատ դիպավ վըր կրակին.
Ու կրակ կպավ իր մատ.
Ու մատ տարավ իր բերան.
Ու կրակ կպավ լիզուն ու լիզուն երեցավ.
Ու իր անուն դրին Թլոր Դավթի։
Մեր ասաց.— Ահա, վորդի, չի՞ իս քի ասի՝ հիժ ա։
Ընդես երիր, իր լիզուն էլ երեցավ։
Մելիք ասաց.— Ջըմ դինա, մարե,
Խըլիսուն տ'երթա իր աշխար.
Ինձի գործ իլնի, իր մոտեն ա։

10. Դավթին ճանապարհ են դնում դեպի Սասուն. Մարա Մելիքը պատվիրում է ճանապարհին պատճել Դավթին. սա հաղթում է փակիավանցիներին յեվ ճոպց հես գալիս է Սասուն. Ջենով Հովանը դիմավորում է ճոպ

Խըլիսուն բարի լուս բացվավ վեր հազընիրուն
Մելքի մեր ելավ, Դավթի եղի ճամբու։
Ու Մելիք Բաթմանա Բուղին, Ճարպատա Քամին եղի խիտ։—
Երկուքն ալ Դավթի խոր փալխանները ին։—
Թամբի արից ընոնց ու ասաց Մելիք.
— Կը տանիք Բաթմանա կարմիջի վերին՝
Մեկ ձոզնվ, մեկ էլ հիտով կը կայնիք,
Կը թալիք դես ու կը դիք։
Ինկեն ճամբես ու գոցին։
Սասնա Ծռեռն ա, բոմ կը վեդա,
Երկու սըհաթի ճամբես կ'երթա,
Ու բազ դիտի, կը ձեա հիտով,
Ընոնք կ'երթան առաջ։
Կ'երթան, կը խառնին Բաթմանա կարմիջի վերին.
Մեկ ընցավ ձոզնվ, մեկ էլ հիտով.
Ձեռ բոմ նիտալ Բաթմանա Բուղին մեջք
Ու մեկել ձեռ Ճարպատա Քամուն թեվքիր,
Կարմիջից կախից նետքով ու ասաց.
— Յան գոք դողրի տ'ասիք ինձի,

Թե ինչու համար մեկ ընցաք իմ ետևիվ, մեկիվ իմ հետևիվ,
Ձան զերկուազ էլ կը թալիմ գետ ու ի՛նքիամ,
երկուան էլ ասին.— Քու խոզուն, քու արևմուն մեռնիմ,
Մինք երկուան էլ քու խոր փալխանիրն ինք.
Մըսրա Մելիք միզ ասաց՝ «Տարեք, թալեք գետ»։
Մինք չդիտցանք, թը դու չանց քու խեր ժոժոլ եր.
Վոր ընցիան ա՝ մինք քու մշակ, դու միր աղեն։
Ինդրից կը դեն Սասուն։

Դավիթ ճամփու մեջ ելավ.
Հեռվանց ինար խորոխպեր տեսավ,
Վոր Դավիթ կը դեր. կը վազեր կորանդրնի արտիրաւ մեջ։
Խորոխպեր կանչիս.— Կնիկ, վիր եվի,
Սասնա ճրագ վառվիր ա։
Տնոնք եվեն վի, գնցին հասնիվ,
Գըլխի պապիցին, ասին, տուն բերին առաք-վառաք։

11. Դավթի մանկական չարությունները. Դավիթը գառնարած, ապա ճախարադ

Դավիթ խորոխպեր գ'Դավիթ եդի արհեստի.
Դավիթ հիչ արհեստ չտրվավ.
Կը գարներ, դրկիցնիրի ճժիր կը տախկատեր։
Ու դրկիցնիր կը գեն մոտ խորոխպեր գեղգեղա, ի՛ասին.
— Ես ինչ ծուռ ի, դու բերիր, եցկիցիր մենչ մի ճժիրուն։

Խորոխպոր հարը վերեն կտրավ, երաց գառնարած։
Գըլխուն գնգական եվեն,
Տնոնց գառնիր բերին ետևիվ Դավթին,
Ու են առից, տարավ տար։
Ինք նստավ, խաղաց, գառնիր բըլլվան։
Եվարին Դավիթ եվավ, տարի մեջ կան եկավ.
Գեղական իրիշկիցին, տիսան, ինչ.—
Երկու տիր տնոնց գառնիրուց շատ ա բերի,
Լըպըտարակ ու աղվես ա բերի։
Գեղական գացին մոտ խորոխպեր գեղգեղա, ասին.

— Ես ինչ ծուռ խա բերիր, երիր մեր գլխուն քաշե՛։
Խոլոխպեր ասաց.— Բան չկա, վաղ կ՚ենենք նախրորդ։

Առավոտուն դեղական ելան,
Տավար թողին, տարան ածելով Դավթին։
Դավիթ քշից, տարավ տար.
Տավարնիր ցրվան տարի մեջ։
Իրիկուն Դավիթ ելավ, տավար տը ժողվեր, բերեր տուն,
Տարի մեջ քանի գել, արջ, տավար կար,
Ժողվից, երի դեղ ու տասց.
— Ե՛յ, դեղական, վեր եղեք,
Ինչ վոր ձեր անձնական մալն ի, տանք,
Մեկել թողեք՝ երթա։
Դեղական տարի ջանավարնելու հախուն
Տուն ու դռնիր շինիցին
Ել մ՚ել գացին մոտ խոլոխպեր ու տային.
— Մենք հիվի կ՚ենենք՝ տա ծուռ մեր տավար, վոխչար
թըխ չանի։
Խոլոխպեր ասաց.— Գնըդ-մախ դեն տանե՛,
Թըխ ձեռ, պարապ կան գա։

12. Դավիթը վոռոդ չեվ խրատատու Պառավը

Դավիթ ըղեաթմանա բուդեն, ճարպատա Քամին եղի տուն,
Ինք առից ենոր նիտ ՚վ անիղ, գանաց նեճիր.
Մեջ Պառվու կորկին լոր կը ապաներ։
Պառավ գանաց, տասց.
— Գնըդ-մախ քի չտանե, Տատոս Ծուռ Շախգըմակիր,
Դա՛ Պառվու կորկի լորլորով տը կշտանաս.
Գընա, տես քա՛ խոր Սիվ տար,
Ըզգա՛լ ապանե, վերի վոխչար ապանե, ջեչրան ապանե։
Ի՞նչ խա ձեռցի ըտաը՛։
Դավիթ կ՚ասե.— Պառա՛վ, իմ խոր Սիվ տար դո՞ւրն ա։
Պառավ կ՚ասե.— Քա՛ խոլոխպեր վիզ պռնե, քի չանք
կը տա։

13. Դավիթը հոհոլբար հնս գնում է իր վոռաձեզը – Սիվ սար

Դավիթ են տեղն եվող, եկավ տուն, ասաց.
— Խորխաթիր, յան Սիվ սար ձի չանք տվիր, յան քու վիղ
կը կտրիմ։
Խորխաթիր ասաց.— Քու տրվեցողի բերանն կոտրի։

Քնան մինչևվ առավոտ.
Ելան գացին, խասան Սիվ սար կհասրին. Ինչ կը տեսնա.—
Սիվ սարի մեջ մեծ բանդան քաղուկ ա. դուռ ըմ կա վերևին։
Դավիթ խարցուց.— Խորխաթիր, ես Ինչ բանդան ա։
Խորխաթիր ասաց.— Քու խոր Սիվ սար ես ա։
Լանդի մ' եգեր, ըզդուռ երեց.
Կը տեսնի՝ ինչկանդեր չանավար կա, են տեղն ա։
Ասաց.— Վաչ, իմ խեր քանի մեղք ա երի,
Վոր սա չանավարներ հրմեն հարս ա երի։
Մեկ քանի խատ ըսպանից, մեկնելունք եվող, գացին։
Ենտեղեն գերձան, վոր ոը գան տուն,
Եկան, կես ճամփեն մընավ վերևնքտիր։
Դավիթ ճամփեն կհասեղ քնավ։

14. Դավիթն սատնում է հոհոլ Պատերազմին. Մարութա վանքի օծումը

Կես գիշերին աքհավ, տխավ՝
Բընց են դեն կրակ ըմ կը վառվի։
Ուղից երթալ ենտեղ,
Հանե ուր փեշ խորոխպոր գըվխու տակն եր։
Դանակ կը թափե, ուր փեշ կը կտրե,
Կ'երթա ենտեղ, կը տեսնի՝ բան չկա։
Գերձավ եվ մ' եվ եկավ, քնավ։
Քնելու մեջ երազ տեսավ՝
Մարութա Բանցրիկ Աստվածածին
Եկավ ենոր երազ, ասաց.

Ի'ան իմ Մարութա Բանցրիկ Աստվածածին,
Ասց-գինին, Աստված կենդանին,
Հոհոլ Պատերազմին վըր Դավիթ աջ թևվինա։

Խըխաւն վիր ելալ, տխաւ,
Վոր Խաչ ինկիր ա վեր թևվին
Խաղով կանչից, ասաց.

«Վեր իլի, խորխոպկոր, վեր իլի.
Միր Մարութա Բանցրիկ Աստվածածին ևկն ձի երազ,
Երթանք, չինինք Մարութա Բանցրիկ Աստվածածին»։

Խորխոպկոր ելալ վիր, գնցին, կ'իրիշկին.
Կը տխանին՝ լուս կը բանցրանա, կ'ևչնի։
Ասաց.— Խորխոպկոր, չիմ գինա,
Շաբաթ որ խիմ բանաս,
Մինչևվ կիրակի պրծնի,
Ու պատարագ մատուցինք մեջ։
Ելան, եկան տուն, խաբար տվին։
Ջինով Հովան ելալ, կանչից ձենով.

«Ով ուր Աստված կը սիրա, թող գա.
Սանան ճրագ վառվիր ա.
Մարութա Բանցրիկ Աստվածածին որ չինինք։
Եկեք, չինինք»։

Ենոր ձեն չուր յոթ քաղաք լսան։
Յոթ քաղքի բանվորնիր, ուսթնք, մարգիր՝
Ելան եկան Դավթի տուն։
Խնդրաց ելան, գնցին,
Մարութա Բանցրիկ Աստվածածին չինին։
Ու սկսեցին խիմ խորիլ.
Ու պրծան յոթ որվան մեջ.
Ու կիրակի պատարագ արին։
Դավթի Մարութա Բանցրիկ Աստվածածնի մեջ
Եղի քանասուն վարդապիտ, քանասուն սեխտեր, քանասուն սարկավագ,
Գանաց, նստավ իր տան մեջ ու գինեխում արաց։
Ու են որից սորա բաթմանա բանգեն, ձարպագա գամին՝
Մարութա Բանցրիկ Աստվածածնի դռան նորատաար արաց։

15. Հարկահանութիւն, խրատատու Պառավը. Դավիթը պատուհասում է հարկահաններին

Ջուար տարան Մըսրա Մելքին,
Թե Դավիթ չինից «Մարութիա Բաննըրիկ Աստվածածին,
Խաց-պէնին, Աստված կենդանին,
Ձայ Պատերազմին վըր Դավիթ աչ Թևլինը։

Դավիթ գանաց նեձիր, մնչ Պառվի կորկին լոր ապանիւ

Մըսրա Մելիք գավիթյիք հորդղիից,
Դավիթի խորոխպոր մառին խարչ ու խարաչ ուղից։
Ուղից քառասուն կարճ կնիկ, վոր երկանք ապան.
Ուղից քառասուն հերկին կնիկ, վոր ուղտիր բառնան.
Ուղից քառասուն որթա կնիկ, վոր խապան խաղ արմապան։

Ելան եկան Դավիթի խորոխպոր տուն, ասին.
— Ախա յոթ տարվան խարչ ու խարաչ կ'ուղիմ քինու
Դավիթի խորոխպեր ասաց.— վերգին,
Գանա, յոթ տարվան խարչ չափիր, տու, ինչ տանին.
Բառասուն կարճ կնիկ, վոր երկանք ապան.
Բառասուն հերկին կնիկ, վոր ուղտիր բառնան.
Բառասուն որթա կնիկ, վոր խապան խաղ արմապան։
Վերգին եկավ, խըղինի դուռ երաց։
Գանանանք վըր Դավթին։

Պառավ գանաց կորկի աչիլու։
Կը ասնա՝ Դավիթ կա մնչ կորկին, լոր կը ապանիւ
Կ'ասի.— Գնդող-մախ քի տանեի,
Սասնա Ծռեռ Շախպըմախիր.
Գանա, ասիչ, եկած քա խորոխպոր մառին՝
Յոթ տարվան խարչ կ'ուղին, կը տանին.
Բառասուն կարճ կնիկ, վոր երկանք ապան.
Բառասուն հերկին կնիկ, վոր ուղտիր բառնան.
Բառասուն որթա կնիկ, վոր խապան խաղ արմապան։
Չափիրով վոսկի խարչի տեղ կը տանին։
Դավիթ կ'ասի.— Պառավ, վորտեղն ի, խիմ՝ ձի չունց տու։
Պառավ կ'ասնի, կը տանի, կ'ասի.— կա, ասիւ—

Քաղնի դուռ չանց կը առ—
Դավիթ կ'իրիկվի, կը տիանի՝
Ձոբս բոլոր քու՜ռան դրած, նստած գավթիյնք,
Քեռին մնջ տեղ վոսկի կը չափե
Տիր մ' ել Դավիթ կը կանչի.— Քեռի...
Քեռին հախտ ցոլց ուր Թումբան
Ասից.— Գնդող-մանե քի տանի,
Տիր ըմ քու խեր կանչից՝ իս վախցա.
Տիր մ' ել կու դու կանչիցիր
Դավիթ ասաց.— Տու, ես կը չափիմ,

Ջեռնեն առից չափ, վոսկիք լցուց վըր չափի վոռուն,
Չափի փետ խոռ, քը՜ռ, տարավ տակ, ասաց.
— Նա մեկ.. երկու... իրե՛ք...
Ջավթիյնքնիրից մեկ ելավ խոտ Դավիթ,
Դավիթ ելավ, մեկի վոռ կոտրից, մեկի թիվ կոտրից,
Մեկելի առաքիր քաշից, զարկից մեկելի ճակատ,
Ասաց.— Դե, գնացիք. Սատնա տուն դել չավիրվի,
Վոր դու եկեր եք, խարջ ու խարտաջ կ'ուղեք
Գնան, Մըսրա Մելքին բարեվ ելրա, ասա՝
Ինչ ուզմենե կը գա, Քըխ Թախտիր չենա

Ջուաբ մեկ մարդ տարավ Մըսրա Մելքին,
Ասաց.— Չալ հալվա՜ղ...
Մելիք չատ բախտակոծվավ

16. Կուզբարդիները խաթիյուրյամբ ավերում և Մարութա վանքը. տերտերը բոր և բերում. Դավիթը կոտորում և զորք չել պատուհասում Կուզբարդիցիս

Կուզբարդին եկավ, ասաց Մըսրա Մելքին.
— Ի՞նչ տաս ձի, իս երթամ, քակիմ Մարութա Աստվածածին,
Սպանիմ մինի հըմեն մախլուխ,
Դավթին ել սպանիմ, ակընջնիր կտրիմ, բերիմ.
Մելիք ասաց.— Եղպես բան մ' ենես, քաղաք ըմ կը տամ քե
Կուզբարդին առից ուր զորք, եկավ
Դավիթ գնաց դիմաքառամ

Կուգրարդին եկավ, համխի մեջ եղար ջնջվար մ' ապանից,
Ականջներ կտրից, եթե ուր ջնր ու եկավ դիխ Մարութա
վանք։

Կը խառնի վանքի մոտիր։
Բաթմանա Բուղին, ճարպատա Քամին եկան առաջ,
Ասին.— Յա-հո, դու դեր տը պրծնես մեր ձեռնեն։
Կուգրարդին ասաց.— Ե՛յ շիվարներ, դու ինչ տ'ինեք։
Ասին.— Մինք չինք Թողնի, դու ներս մոնես։
Կուգրարդին ասաց.— Խեղճեր, ես ձեր տերն իմ ապանի.
Թե դուք չեք ավատար, կի ենող ականջներ իմ ջեր։
Կը խառնի, չանց կը տա ականջներ։
Բաթմանա Բուղին, ճարպատա Քամին վղեր կը կոռին.
Կուգրարդին ներս կը մոնի վանք՝
Կը ապանի քառասուն վարդապետ,
Կը ապանի քառասուն սարկավագ,
Կը ապանի քառասունից մեկ պակաս տերտեր,—
Եվ մեկ տերտեր կը պահվի լիշերու տակ,—
Կը Թալանի վանք ու կ'ելնի, կ'երթա։

Են մեկ տերտեր, որ պահված եր,
Կը վազի, կ'երթա ԴավԹին մոտ։
ԴավԹի քնուց կ'ելնի վեր, կ'ասի.
— Ի՞նչն ա պակաս իմ վանքին։
Տերտեր կ'ասի.— Ձրա պակաս չի.
Ըսպանիցին քառասուն վարդապետ,
Ըսպանիցին քառասուն սարկավագ,
Ըսպանիցին իրասուն ին տերտեր,
Իս մինակ իմ պրծիր։
ԴավԹի կ'ասի.— Վեր ըսպանից։
Տերտեր կ'ասի.— Կուգրարդին
ԴավԹին ել կ'ելնի, կ'երթա.
Մեկ ճոչ ծառ քաշից մղղախառ,
Եզիր իր Թեվի վերեն
Ու գնանց Ջիտաձորիկ առջ բռնից,
Ու ասքեր զրմեն կոտորից։
Կուգրարդինին ել կը բռնի, պռուկնիր կը կտրի,
Առաջիր կը քաշի, կը զարնի ճակատ,
Թեվ մ' ել կը կոտրի ու կը դնի ուր ականջին,

Ու կ'ասի.— Գնանք, Մըսրա Մելքին բարով եկա,
Աման՝ դել Սասնա Ծուռ չմեռնի ա։

17. Կուզբարդինին ծաղրող կանայք

Կուզբարդին գնաց, խասալ գնդի մոտ
Եվար եր. կնկտիր, աղջկնիր կը գան, ջուր տանին։
Տխան Կուզբարդինին, կ'ասին.
— Կա Կուզբարդին ենդեխեն խաղ ասելին կը գա։
Մեկելոնք կ'ասին.— Չե, մինակ ա։
Ծարցնիցկին, ասին.

«Կուզբարդին քաքըրան,
Քա պռուկնիր կ'երթա, կը գա լերան-լերան.
Քա բերան նման կը ա, միր չորթնի թունկի բերան»։

Կուզբարդին ասաց.

«Ես չգիտցա՝ Չխտաձորիկն եր նեղաբերան.
Դավթի նետիր կը գեր ինչըվա գերան։
Վազ Վարդևարին խեղեղ կ'ըլնի,
Չիր իրկնելու զատիր կը րիրա, երեք եղ-չորթան»։

18. Մարա Մելիքի զորահավաքն ու արշավանքը Սասունի վրա

Գնանց, խասալ Մըսրա Մելքի մոտ։
Մելիք տեսալ Կուզբարդինին խաղը-խայտառակ։
Մելիք կ'երթա, մոր կ'ասի.
— *Մարե, ես կ'ասի՝ ոձի ձագ ի,*
Բիր, գնալոս ջանջրխինք, գու չճողիր։
Դե, արի մնրեղ ըմ տուր ես բանին։
Մըսրա Մելիք եկավ, ուր սիրա ճղից
Ու ուր սրտի ուրնով թուղթ ըմ գրից,
Հորդղից, ինչքան աշխարհ կըներ ուր ձեռաց տակ,
Ասաց. «Միլնա վուրուցող թող գա՛. կռիվ ա։
Գնանանք վեր Դավթին։

Դավիթ կ'երթար, մնչ Պաւաւու կորկինն նեձիր ենիւ
Մըտար Մելիք ուր անքաթ կը ժողվի
Ու կը գա, բաց դաշտի մնչ կը գնա,
Ու մարդ կ'որոգիա Դավիթի խորոխպոր Ջենով Հովանին,
Ու կ'ասի.— Աբե, իս նկիր իմ, քիզ խիտ կռիվ ենիմ։

19. Դավիթը Պաւաւի խրատով ձեռ կ բերում Ջենով Հովանից հոր ձին ու սարը. Ջենով Հովանի ախտոտումը. Դավթի զիճավառումը

Պաւաւ կ'երթար, աչ տա ուր կորկինն, կը տեսնի՝
Դավիթ ել ըմ նեձիր կ'ենա ուր կորկի մնչ, կ'ասի.
— Գաբող-մամս քի տանի,
Սանտա Ծուռ Շախգըմակիր, Թլոր Դավիթ.
Գանա, տես Մըտար Մելիք Քաղավոր՝
Քանի մ' անքաթ բիրի քաճ խորոխպոր վերին կռիվ։
Դավիթ ելալ, նլու'վ անիղ առից, վազից։
Պաւաւ ասաց.— Դո՞ւր ս'իյաս։
Դավիթ ասաց.— կ'երթամ կռիվ։
Պաւաւ ասաց.— Ընչի՞վ։
Դավիթ ասաց.— Նիտ-անիղով։
— Գըրող քի տանի, Ծուռ Շախգըմակիր,
Գանա, քաճ խորոխպոր մոտին բան ուղի կռիվ։
Դավիթ ասաց.— Կռիվ բան ինչ ա։
Պաւաւ ասաց.

— Քաղքաճ Մայինս, կայուխ կաղըֆինս,
Ջըրխի Սևմանինս, Քալխու Քանտինս,
Մնջաց Քամարինս, Վոտաց Ջամինս, Քաղիվիկ Ֆիրըզինս,
Թուր կնճակինս, Քաղկաճ Ջալալինս,
Դե, գընա, ուղի։

Դավիթ գընաց, իր խորոխպոր մոտին ուղից։
— Ահա, ասաց Դավիթ, խորոխպեր,
կ'ուղիմ քինի իմ խոր կռվի բանիր։
Խորոխպեր ասաց.— Քաճ սորվցուցոզի բերան կոտրի։
Խորոխպեր գընաց, եխան գաս, ասաց.

«Ինձ ասիա Քաղքին Մային,
Կայուխ Կնդրին, Զրուխ Սկայմին,
Գիլխոյ Գուտին, Մեջց Քամարին,
Վոսաց Զմին, Գիլզիկ Ձերզին,
Թուր Կեծակին, Քոռկոյ Զալալին»։

Քառասուն զրվանքա բամբակ դրից մեջ Զմին,
Ներ ելնել ենոր վոռնով.
Քառասուն վեթ քամար եբի ուր մեջից բոլոր.
Քառասուն զրվանքա բամբակ դրից Գիլխոյ Գուտին,
Ներ ելնել իր գըլխով.
Ա՛խր, մեջ հըմեն քոնելուն,
Քառասուն-քառասուն բամբակ դրին,
Ներ Դավթին զմիչ եկավ։

20. Ջնեով Հռոմոսի խոսոր Կաբեով աղրյուրի մասին

Դավիթ իր խոր քոնելը զըմեն կապից,
Ու ելնել, ուր ձին քըշից գնաց
Քառկոյ Զալալին ինչ անեն գնաց եկավ,
Ոբևնչաց, գըլխս եզար Դավթի սրտին
Դավիթ Քոռով ձիու քամակ, ասաց.
— Մնացեք բարով, սիրելի բարեկամներս
Ու գանաց ենոր ճամբաս
Ծորոքակեր ասաց.
— Ե՛հ, Թառլան Դավիթ, Սասնա ձրագ,
Կ'երթաս սարի մեջ, կաթնով աղբուր կա, վոր քու խորն ի-
Ձին քի կը ասնի ենոր մոտ
Ինչ քու ձին վոռնիր կը գարնի գետին, ենառեղ կենիս տակ-
Մեջ են ջրեն կը լողկանաս,
Քու ձին ել կը լողկըցուցկս.
Ինչու՞ վոր.—քսան տարի կա, քու խեր մեռի,
Քառկոյ Զալալին չլողկըցի
կը խանգստանաս, կը քնիս ու ձին կը խնծնիս, կ'երթաս

21. Դավիթը՝ իմնելով Կաքաւոյ աղբյուրի ջուրը, դառնում է հզոր

Դավիթ ենաթիպեն եկող, գնացը
կը խառնի կաթնով աղբիւրի վերեն.
Ջին վոտքերու ծնկները կը զարկի գետինը
Ենգաթ կ'ելլնի տակ, ձին թամիզ կը լողկըցըցնի,
Ինքն ել կը լողկըննա, կը հագվի ու կը քնի.
Տիր մ' ել մնչ քնուն վիր թռավ, տեսավ՝
Մելջաց Քամար գնխեն ա կորի.
Գու լիսն Գուտին գըլխեն թռի.
Վոտաց Ջամեն վոտքեր կըգի, վոտքեր կը ցավցուցի.
Կ'ելլնի, ենոնց մելչ բամբակները կը թավի,
Ու ջորով կ'ըլնի իր բանգնով, ու կը հագվի.
Կը տխնի Գուտկու Ջալալի տանքեր կըգվի,
Բիչ ճեացի, վոր կորի.
Կ'երթա, կ'արծկի, Քանդը՝ կը կապի.
Ու գըլխեն կը պոգնի, կը Քոնի քամակ, կ'երթա կռվի դաշտ.

22. Դավթի վախը. Գուտկու Ջալալու հաջակերը. թշնամիների բանակին իմաց տալը չկ հարձակումն ու կոտորածը

Կը տեսնի՝ անքան չանց ծովու ափով չատ ի.
Կ'ասի.

«Ահա, ես ըլնիմ կրակ, ենոնք ըլնին բամբակ,
Ըրմ կանա ղենոնք երեցըցի.
Ենոնք ըլնին չոր փուշ, ես ըլնիմ կրակ,
Ըրմ կանա ղենոնք վառի»

Ենգաթ Ասատծու խրամանքով՝
Գուտկու Ջալալուն լիզու եկավ, ասաց.
— Գու ինչ վախեցար, Դավիթ.
Գանի մ' գու կոտորես,
Ենցկում իմ սերտ կը կոտորա.
Գանի մ' գու կոտորես,
Ենցկում իմ վոտքերու տակվ կը կոտորվինը
Հիշա խաց-գինին, Ասատած կենդանին,

Մարուքա Բանցրիկ Աստվածածին,
Ձայէ Պատերազմին վեր Դավթի պէս թեվին,
Քեզի Թուր կեծակին, ընկի մեջ ասքըրին։

Դավիթ հիշից խաց-պինին, Աստված կենդանին,
Մարուքա Բանցրիկ Աստվածածին,
Ձայէ Պատերազմին վեր Դավթի պէս թեվին,
Քեզից Թուր կեծակին, կանչից.

«Ե՛, ով քեն ա, արթուն կացեք,
Ո՛վ արթուն ա, սիլախ կապեք,
Զասեք՝ Դավիթ գող եկավ, գող էլ կ'երթա»։

Քիշից մեջ ասքըրին, չնըդ-փուդ երաց.
Աբրեհ խեղեղ էլավ, լիշիր տարավ։
Ձեվացին են եր, ինչ անեն չեվավ։

23. Զորականի խրատը

Տիր մ' էլ մարդ ըմ էլավ քըրի մ' վերին,
Կանչից.— Փեշտ, փոշտ, փոշտ...
Դավիթ ասաց.— Իս քեզ խոր քըլեն անիծիմ.
Իս անարատ իմ էլի, անարատ ալ մեռնիմ.
Ձի՛ կ'ասիս՝ փուշտ...
Մարդն կանչից.— Բի մեռնիմ,
Ըմ ասի քի՝ փուշտ, կ'ասիմ՝ փոշտ, յանե՝ գնդրեկ։
Անչի վոր ասոնք ենոնց քեֆով չին,
Զոռով ին բիրի կոխի։
Շատիր ենոնց խոր մեկին ին,
Շատիրն էլ ճըժուռ աերն ին.
Չենոնք կը ապանիս, ճժիրու մեղք կ'ընդնի քեզ վիզ։
Գիտե՞, կոհանն քեզ գուշման Ըսպաս Մելիքն ա,
Կե չադրի տակ քնիս։
Քնռատուն ադաղ աղջիկ ենոր ճանճիր կը քշին.
Վոսկի խնձոր ենոր չադրի անից կախուկ ա.
Ինչ ուր նայֆա կը խանի,
Կը բանցրանա դիրմակի դըլեխ.
Ինչ ուր նայֆա կ'ենչնի,

Վռակի խնձոր կ'ելնի վեր ուր բերնին։
Դավիթ կ'ասի.— Ախմ՝ ապի, ձի չանք առա։
Մարդ եկավ, շանք առա։

25. Դավթի յով Մսրա Մելիքի մենամարտը. Դավիթն ապաճուռմ ի Մելիքին յով Մսրը հանձնուռմ ի նրա մորը

Դավիթ խնծալ ձին, գնաց, չապրի ան՞ջևի եկավ.
Բնթևի առու ուր մոր։
Մեր ասաց.— Ծոգուդ-արեվուդ մեռնիմ, Դավիթ, դու եկա՞ր։
— Եկա. քու լաճ խան վեր, ես որ, ենոր,* հարցն ա.
Յան Աասլած ապ տա ձի, յան չի՝ ենոր։
Մեր ասաց.— Ես չեմ կանա խանի վեր.
Գայթնի խոփ ըմ թալ կրակ, թալ ենոր վոտքիրուն,
Ես ա՛ասա՝ իմ տեղ խորտա չըք չինի, լու՛ ձի կծից,
Ետի կը թալին կրակ, կը դնին վոտքիրուն, կ'ափխե։
Դավիթ կ'ասի.— Վեր ելի, ես եկեր իմ.
Քու գլորդն իմ, վոր քու խոզին ա՛առնիմ։
Մելիք կ'ասի.— Սասնա Ծռեխպմակիր,
Դու իմ լակակիրն ես, ի՞նչըվա իմ խոզին ա՛առնիս։
— Ելի վեր, յան Աասլած ապ տա ձի, յան քի։
Ես որն ա, հարց։
Մելիք կ'ասի.— Ի՞նչըվա ապ կռվինք մինք։
Դավիթ կ'ասի.— Պայմանում.
Իրիք գալը գու գալ, գու իմ ճոչ ախպերն ես,
Իրիք ել՝ ես կը գարնիմ։

Ետծալ Դավիթ իր ձին, գնաց, կայնավ մեջտեղ։
Մելիք իր գունդ եգալ, ետ առու վեր Դավթին, ասաց.
— Սասնա Ծռեխպմակիր հող ես, հող գալցավ։—
Դու չասիս՝ ենգամ, ինչ Մելիք գունդ կը գարնի,
Ուրիշանկիր ձեռ կը տան ան՞ջևի գունդին,
Ու կը դիպնի մեկել կող։—
Ինչ ետ կ'երթա, Դավիթ կ'ասի.— Եսառեղն իմ։
Իրիք տիր կը գարնի Մելիք, բան չի կանա անի։
Ինչ պրծավ, նորանք խառավ Դավթին։

* Ենոր — նրանը, նրա որը։ Ա մ բ.

Դավիթ կ'ասի.— Քու հող երթա, իս գարնիմ,
Մըսրա Մելիք քաղաւուն գնգանոց խոր ավի փորիլ.
Մտավ խորու տակ, քաշից վիր ենու քաղաւուն թաղիս,
Քաղաւուն գիմշու կաշի, քաղաւուն էլ ջնդկի քար։
Դավիթ ասաց.— Մարե, նորաթ իմ չի՞,
Եսա մեկ գնըր կը տամ Աստծու խաթըր.
Ենա մեկն էլ կը տամ քու ծըծի խաթըր,
Ինչ վոր գու ձի կաթ իս ավի։

«Կը հիշամ խաց-պինին, Աստված կենդանին,
Մարուքա Բանցրիկ Աստվածածին,
Ձաչ Պատերազմին վեր Դավթի աչ թեվին»,

Բեշից Թուր կնձակին,
Ձարկից Մըսրա Մելիքին.
Կը կտրա քաղաւուն ջնդկի քար,
Կը կտրա քաղաւուն գիմշու կաշին,
Կը կտրա քաղաւուն թաղիս,
Կը դիպնի Մըսրա Մելքի ճակտին,
Կ'երթա, կը խառնի Արդար դեմին,
Կալնամ կը կայնի վեր կալնամին։
Դավիթ կ'ասի.— Դե, թվնք դեն՝
Ջնդկի քարիր, թաղըռնիր ու գիմշու կաշիք,
Տեսնիմ՝ ամեղ ա, թե չի։
Կը թալին կանչից Մըսրա Մելիք, ասաց.
— Իս սաղ իմ, ձի բան չելիս։
Դավիթ ասաց.— Բի չարժի, տեսնիմ։
Ինչ վոր չարժից, կտոր մ' ենդիս գնանց, մեկ՝ ենդիս։

Դավիթ դարցավ, Մըսրա Մելիքի մոր ասաց.
—Մարե, իս Մըսրա քաղաք ավիր իմ քիզ.
Կանչիր քու ժողովուրդ, գնանք ենտեղ,
Նատի, քանի դու սաղ իս։

25. Ձենով Հովանը դիմավորում և Դավթին. Դավիթն իր տանը

Դավիթ խնճալ ուր ձին ու գարցավ տուն։
Խաբար տարան Ձենով Հովանին, ասին.
— Ահա Դավիթ եկավ.

Աչքեր հրմեն ապանից,
Մըսրա Մելիքն ել ապանից,
Ու սաղ-սլամաթ ելավ.
Իմ ականջկըլեն վեր քի,
Դավիթի խորոխպեր ելնավ ելավ ծոջևվ.
Դավիթի գըլուխ պապնից, քլտինք սրբից,
Շնոր ծրնեն չորիր վոխից
Ու առոք-փառոք տարից իր տուն,
Քաւակին Ջալալին ել մաքուր ըմ լվացին,
Տարան, կապից իր տեղ.

Մնգամ, ինչ Դավիթ գնաց, իր տեղ նստավ,
Ասաց.— Դե, մեկ կգամ գինի տվեք ձեկ,
Մեկ փութ գինի լցին, տվին,
Մեկ ել ուղից, են ել խմավ,
Մեկ ել ուղից, են ել խմավ,
Ու պառկավ, քնավ իրիք որ,
Ինչ իրիք որ պրծավ, վեր ելավ, խնծավ իր ձին
Ու գնաց ուր խոր Սիվ սար նեձիր,
Ըսպանից խաղալներ, չայըրաններ ու վերու վոխչարներ,
կապից Քաւակին Ջալալինի վերեն
Ու առից, երիր տուն.

Հովան ասաց.— Աստված Սասնա ճրագ վառից.
Դե, դոր Դավիթ Թող երթա, ախչար կան գա,
Ու ենոր խամար կնիկ ըմ գնգնի.
Դուք հավանութին կը տեք սա խոսքին, ինչ վոր ասի-
իշխաններ կ'ասին.— Ինչե չե.
Թող երթա, ուր քեզով կնիկ ըմ գնգնի իր խամար.

Գ

ԴԱՎԻԹՆ ՈՒ ԽՄՆԴՈՒԻԹՔ

26. Դավիթը գնում է Դևասաց խանգուրի մոտ. Դավիթն ու դուռապան Սևավեղուզգ դևը

Առավոտուն Դավիթ ելավ,
Ուր շորիր խագնավ, ուր բանիր կապից, ուր ձին խնծավ,
Ու կնստա Աստծուն ու Դևասատն քաղաք երաց.

Գինուց շատ քիչ, Աստված գինա,
Տեսալ սիմսակ կնար ըմ մեջ ճամխին։
Դու մ' ասի՝ եգա Խանդուտ խանումի սարևն ու։
Դևվ ըմ կի վնր ևնոր դռան.
Սևավյեղունք դևվ կ'ասին։
ևնոր պռուիներ ևկին, ըզմռուխ ծնցիր։
Դավիթ կ'նրթա, վնր դռան կը գնդրի.
կ'ասի.— Ե՛յ, Սևավյեղունք դևվ, դուռ բա՛ց.
Իս ևկիր իմ Խանդուտ խանումին բերիվ։
Դևվ կ'ասի.— Խմ՝ քու մատ մեռ,
Իս տեսնիմ՝ դու ինչ մարդ իս։
Դավիթ կ'ասի.— Իս ինչ մարդ եղնիմ, քիզ ինչ։
Ա՛խբեր, ձևռ պարզից դևվի ածչևվ։
Կքնց դևվ ըզԴավիթի մատ, Դավիթ չաքխավ։
Դևվ ուր ձևռ ավից Դավիթին.
Ինչ Դավիթ կքնց, ափսուն, ափսնչուր դևվի մատից եվ՛ած։
Դևվ եվող, փախավ, Դավիթ ուր գըլնխ մուց նիրա։
Դուռ, կշտանոցն ել տարավ խիտ ևնոր նիրա։
Խանդուտին խորթար տվին, թև.— Սատնա Ծուռ ևկավ։
Խանդուտ ասաց.— ևկավ, թող գա՛։

27. Գևռկու Զալալին ու փահլևվաննևրի ձիերը. Դավիթն ու փահլևվաննևրը. Խանդուրը հավանում է Դավթին

Դավիթ իր ձին քնշից Թավլախանանն.
կը տեսնի՝ խորիր ձի մեկ փարա ևնտու։
Դավիթ իր ձին բառադի կը թըղնի մեջ են ձիերուն.
են ձիեր կը փախին հըմեն մեկ տեղ.
Դավթի ձին մընակ կը մնա վըր մարին։

Գնա կ'իջնի, շանց կը տան դևվանխանանն Դավթին։
կ'նրթա, դևվանխանի դուռ կը բանա, կը տխնի Դավիթ՝
Հիսունից խորիր փալևվան նստած դևվանխանի մեջ։
Դավիթ անբարևվ, անբարի լուս՝
կ'նրթա, կը նստի հըմենցց վեր։
Ամեն վախտ, խաց կը բերին.
Ամեն փալևվանի համար խաց կը բերին.
Փալևվաններ կը ժողվին վեր խացին։

Դավիթն ել առա-փառ խարիւ փալխանները կը թաղի դէն,
Ենոնց չանախները կը դնի իր ետեւէն ու կ'առաւ։
Կը տեսնի՝ դուր գինի կը բերին։
Ել մ' ել խարիւ մարդու գինիք կը յղի առաջ,
Կը դնա ուր բերնին ու կը խմա։
Ինչ կը խմի, քեֆով կ'ըլնի։
Դավիթ ուր վոտքիր կը պարզի,
Քնի մ' փալխան կար, կը ժողվի,
Կը տանի դիվանխանի քունջ։
Զուար կը տան Յանդուտ խանումին, կ'ասին.
— Մեկ լալ ու կաս մարդ եկիր նստեղ.
Միր հըմենանց բաժին կիր կերալ, գինին խմալ։
Նը գիտինք՝ մարդ ա, նը գիտինք՝ փալխան ա, նը գիտինք՝ դեվ ա։
Ինչ ալաջ տ'ելնի ենոր խիտ։
Յանդուտ խանըմ կ'իլնի, կիր-կիրակուր հաղրից,
Հորոզկից փալխաններուն.
Ջեռք մ' ել բամիզ յաթաղ դրկից Դավթին,
Ասաց.— Ներ ապես տեսա։
Ուր խամ, խիալ եթաւ Դավթի վերեն.
Մեկել փալխաններ աչքից եթաւ։

Գնաւ, խըլխատն ելաւ, գընաց, ուր ձին քաշից դուս,
Թխամար մ' եառ ու ճակատ պագից։
Քաւելի Ջալալին ասաց Դավթին.
— Հիշար կաց, ենոնք խիտ քի խիանաթացած ա.
Ենոնց թրիր չլաւած, դրած յաթխի տակ.
Ինչ գաս քնիս, քի կը սպանին։
Թե չիս ալատա, գնան աչքի. կը տեսնաս։
Դավիթ եկավ, նստավ ուր տեղաց վերեն։
Ուր ունքիր խառավ, տեսավ
Փալխաններ քեֆեր կ'իրիշկին դիս ինք։
Դավիթն ել ուշիկ մ' ելաւ,
Ենոնց թրիր ժողվից, բռնից ուր ձեռ,
Սորա հըմեն կոտրից, ասաց.
— Ենոնք խորթա խոփ կ'ելնի։
Փալխաններ ելան առավոտ,
Թողին, փախան իրենց տեղիր։

28. Խանդուրը հյուրասիրում է Դավիթին. Պապն Ծրանկին— Ձմբլկն Սուլթան զորով գալիս և խանդուրին տանելու. Դավիթը գնում է նրա դեմ չնչ խանդուրի խորհրդով ձանապարհին կռում է Գողվասի այուցը

Խանդուռ խանում ինչ լսավ,
Վոր փալխաններիր փախած ա,
Կ'ելնի, սեղան կը հաղրի
Ու կ'առնի, կը գա մոտ Դավիթ, կը նստի։
Դավիթ կ'առնի, կ'ուտի, կը պրծնի ու կ'ասի.
— Մեկ բաժակ գինի ավիք ձեր։
Գինին կը խմի, կ'ասի.
— Կը խմիմ Խանդուռ խաթունի կենացը։
Մեկ էլ կը խմի, կը քնի.
Իրիք որ Դավիթ կը ճնա քնուկ։

Մինք գնանանք վիր Պապն Ծրանկին,
Անուն Ձմբլկն Սուլթան,
Վոր ասքեր կը ժողվի, կը գա,
Կը դնի մեջ Խանդուռ խաղին,
Վոր Խանդուռ խաթուն առնի, տանի։

Իրիք որ ինչ կը պրծնի, Դավիթ վիր կ'ելնի քնուց.
Չոքքաչ կ'ասին.— Ո՞վ ա'ներթա կռիվ, ձվ չներթաս
Հետո կ'ասին.— Դավիթ ա'ներթա,
Վոր սա իրիք որ կա, Խանդուռի մոտ քեֆ կ'անի։

Ըլևաուն չոտ Դավիթ կ'ներթա, իր ձին կը քնչի դռա,
Կը թռնի քամակ, վոր ներթա կռիվ։
Խանդուռ խանում կը կանչի.
— Դավիթ, քու խոգուն-արևիդուն մևռնիմ,
Կ'ներթաս, մնջ գաշտին Գողվասի սուլ մ' կա.
Քու թռը կը քնչիս, կը զարնիս են դիրակինը։
Են սուն ին կտրից, արդին կ'ներթաս կռիվ.
Թե չկտրից, կը դառնաս, կը գա։
Դավիթ կ'ներթա, թռը կը քնչի ու կ'ասի.

«Թևվիկ, ձի քինև մընաք ի չոմ բադում ժամանակին.
Ձևո կը ճալիմ խիտ թռը կնծակին,

կը զարնիմ Պողվըտաւ դիւրակին,
կը կտրի Պողվըտաւ դիւրակին,
կ'ելլամ կը կայնի վեր կ'ելլամին»։

Զարնիլուն պես կը կտրի,
Ու Դավիթ չակախի ու կ'ասէ.

«Ձեռնէ, պ՛ալ ոտոր կենդանի չուտ բաղուտ ժամանակին.
Մեզքին, պալ թոլ-բոշ կենդանի չուտ բաղուտ ժամանակին.
Ես ինչ եր՝ երթը խիտ Դավթին»։

Թիթեվ քամի մ՛ եղաւ, Պողվատաւ սուն եցկից,
Ու ինքզինք ոխնից, նոր դընաց։

29. Դավիթը վտանգվում և կռվի ժամանակ. Ձենով Հռոմանի յերազը յեվ զրույցը ձիերի հետ

Դավիթ խաստավ կռվի գաշտ. ինչ կը տեսնի.—
Քանց աստղ երկինք, անքիր ժողվի։
Են քշից մեջ անքըրկին ու կոտորից.
Մնաց մեջ արնին գագրուկ։

Գլխիր ա. իր խորոխպեր երազ տեսավ։
— Վեր ելի, կնիկ, վեր ելի,
Սատնա աստղ նժվաղիր ա,
Սատնա ճրագ անցիր ա։
Կնիկ վեր կ'ելնի, կ'ասէ.— Ե՛, ծեռս խալխվոր,
Քանն քի քնի, երազ խլդին տեսի։
Դավիթ մկա Ջանդուտի մոտ քեզ կ'անի։
Խորոխպեր կը քնի։
Նորից երազ կը տեսնի, չուտ վեր կ'ելնի,
Իր կնիկ կը հիշատացուցի, կ'ասի.
— Ձե վոր ես քի ասի՝ Դավիթ նեղուքեննի մեջ ա.
Վեր ելի, ճրագ արա։
Կանչից սըխանիր ասաց.— Բիրեք Բոզ ձին, տեսնիմ։
— Քանի սըտաքի մեջ ձի կը խաստացես Դավթի մոտ։
Ձին ասաց.— Իրեք որ։
Քշից են կոզմ, չի խեծավ։
Կանչից.— Բիրեք Սիվ ձին։

Բիբին. ասաց.
— Քանի՞ սըհաթի մեջ ձիկ կը խասուցնս Դավթի մոտ։
Ասաց.— Իրիք սըհաթ։
Ան ալ չուզից. կանչից, ասաց.
— Բիբիք դուս կարմիր ձին։
Բիբին. Ջենով Հովան ասաց.—կարմիր ձին,
Քանի՞ սըհաթի մեջ ձի կը խասուցնս Դավթի մոտ։
Ասաց.— Մինչև դուռ վոտ դնես գանդուն
Ու խանգըստանաս, կը խասուցնմ։
Ջենով Հովան թռավ ձիուն քամակ,
Դեռ չեր խանգըստացել, խասավ կուվի գաղտ։

30. Դավիթը Ջենով Հովանի խրատով ազատվում և նեղ դրությունից չով ճրա հետ կռտրում և բռնամիներին

Տեսավ՝ Դավթի ձեռ-վոտ կապվիր եր, մեջ ծրընին լոդ
կ'երթեներ
կարմիր ձին կը խրդխընջա, ձեն կը խասնի Դավթի ականջ։
Ճասկըցավ՝ իր ձիանքներու ձեն եր։
Են ժամանակին Ջենով Հովան կանչից.— Դավիթ...
Դավիթ խասկըցավ՝ իր խորոխպոր ձեն եր։
Խորոխպեր ասաց.— Դավիթ,
Հիշիր խաց-պինին, Ասաված կենդանին,
Մարութա Բանդրիկ Ասավածածին,
Ճաչ Պատերազմին վեր Դավթի աջ թևին։
Դավիթ հիշից։
Հիշելուն պես՝ Դավիթ կտրացավ, գնչլենիր կտրից։
Քանդակ Ջալալին թռավ ջրի իրեր։
Մեկ կոդմեն Դավիթ զարկից,
Մեկել կոդմեն խորոխպեր զարկից.
Երեսից թրիր խասան իրար, ճոքեր ցրվավ։

31. Դավթի չով հացդութի մեջամարտը

Վերջ Դավիթ ու իր խորոխպեր Հովան՝
Ինչ լեշերուց գուս եկան, տեսան՝
Ճանդուստ խաֆուն են կոդմեն կը գեր։

Դավիթ ասաց.— Խորխաթեր, քի պախի՛
Խորխաթեր պախիալ փշի հետեվ՛
Խանդուտ եկավ, մտավ լեշերու մեջ, իրիշկից, տեսնի՝
Ալէ Պատերազմին վորի թեվի վերեն ա, նա չի Դավիթ՛
Շատ կ'իրիշկա, բան չի կանա տեսնի՛
Դավիթ են կողմեն կանչից.
— Ո՞վ կ'ուզիս տեսնի, վիր հետով կան կը գնա՛
Խանդուտ ասաց.— Ջեզ ինչ, վիր հետով կան կը գնամ՛
Ասաց.— Ենոր հետով ինչ կան կու գնա, դեն սպանիր իմ՛
Խանդուտ ասաց.— Ո՞վ իս սպանիր՛
Ասաց.— Են վոր թեվի վերեն Ալէ Պատերազմին կաբ,
Սպանիր իմ, Թալիր իմ գիմացի փշի մեջ.
Ինչ կ'անիս, երթ՛
Տիր մ' ել Խանդուտ լցվավ ու են դիխեն եկավ՛
Են ու Դավիթ բալիցին իրար զարնել գալը՛
Դավիթ գեն կը ճանչներ, սրտով չեր գիրնի.
Խանդուտ գդրած սրտով՝ սպանելու կը զարներ Դավիթին՛
Տիր մ' ել Դավիթ կը նեղանա,
Իր քեֆով գալը ըմ կը զարնե
Ու Խանդուտ կը բերե տակ ձիուց՛
Խանդուտ կ'ասե.— Ահա, Ալէ Պատերազմին քու թեվի վերեն ա՛
Ինչ են խոսք ասաց Խանդուտ,
Դավիթ խասավ մոտ Խանդուտ, ձեռքիր Թոթվից
Ու կանչից.— Խորխաթեր, ելի դի՛ւռ
Ինդրաց գնցին Խանդուտի տուն՛

32. Դավիթը յիվ Ջենով Հովաթը խաճդուրին բերում են Սասուն. Դավթի յիվ խաճդուրի ամուսնությունը

Ինչ խասան տուն՝ Խանդուտ կանչից կարավաշնիրուն՛
Եկան կարավաշնիր, Քոռկոն Ջալալին տարան, լվացին.
Դավթի ձրնեն խալաթիր տարան, Թամիզցուցին՛
Դավիթ ու Խանդուտ թեվ-թեվի զարկին, գնցին իրենց տեղ.
Սեղան բերին, երկուս մեկտեղ կիրան՛
Դավիթ գինի կ'ուզե, կը խմի ու կը քնի իրիք որ՛
Իրիք որից յետ՝ վեր կ'երնի, իր ձին կը քաշի գալս,

Զի մ' ել Ֆանդուռի խամար կը քաշին դուռ
Երկուս մեկտեղ ենոնց ձիւր կը խեծնին,
Թիվ կը զարնին թիվի,
Խոլոխպեր կ'ընցնի ենոնց առջեվ,
Ու կ'ելնին, կը գան Սասուն
Ասան Սասուն, խարանիս երին.
Ցոքի որ, յոքի գիշեր քեֆ-ուրախութին երին
Իրինք խասան իրինց մրաղին,
Ֆայ-քրխառոնեն Քող խասնին իրինց մրաղին

33. Դավթի վարդի Միհրի վարարդությունը Բռաիճների հետ յեվ տրնգոզի խաղալով Ջրաց վիրավորելը

Շատ ընցավ, քիչ ընցավ,
Ֆանդուռ խաքուն ելնավ ադով
Աստվածուքին լաճ ըմ հոու ենոր.
Անուն դրին Մհեր.

Ֆանդուռի ախպերնիր եկան զՖանդուռ ասրան խերանց
Մեկ ասրուց յետ Դավիթ գնացց, իր խաքուն երի
Մհեր միշտ կ'երթեր նեձիր.
Ինչ նեձիր վոր կ'ելներ, կը տեր, իր քեռիք կը բերին տուն,
Ինք կը ձիեր հետևանց.
Դավիթ կ'ասի իր անիրքիրուն.
— Ես Մհեր ինչու նեձիր չբերա
Քեռիք կ'ասին.— Ձի ձիժ ի, ինչ նեձիր ա'ենա
Իրիկուն ինչ Մհեր կու գա տուն,
Դավիթ կ'ասի.— Շուն չանորդի,
Փողդի գավմակ ես գա, իմ գայմից չիս,
Վոր չիս կենա նեձիր ենես
Մհեր ես խոսքիր իր միտ բռնից
Ջում առավոտ կ'իջնի կ'երթա նեձիր խիտ քեռիքտիրուն,
Կես ճախմին կը մտնի մեչ ծառիրուն,
Մհեր կ'ասի.— Մինք ատեղ որմնգոդալ խաղանք, նոր
երթանք

Ու ենոր ձեռ կը թնալի, ծառ կը կոռի,
Ու քեռիք կը շարի վեր ծառին.
Երկու անգամ ատես շարժից ու եթող

Թողնելուն պես՝ քեռիք եկան վիր.
Ու չիմ գիտի, ինչպես կը գան գետին,
Մեկի վիզ կոտրած, մեկելի վոտ, ուրիշի մ' գլուխ...
Կը թողնի են հալի մեչ պեռոնք ու կ'երթա նեճիր՝
Շատ խաղալնիր ու վերի վոխշերնիր կը սպանի,
Կը կտիի իր ձիուց, կ'առնի, կը գա տուն։

Դավիթ կ'իրիշկի, կը տեսնի՝ քեռիք չկան։
Ենգեխ կ'ասի Դավիթ.— Կնիկ,
Մհեր ոձի ձագ ի, քեռիք կծիր ի ու մեռած։
Կը գառնա Մհերին կ'ասի.
— Ա՛յ տղա, ձեր ա քու քեռիք։
Կ'ասի Մհեր.— Չիմ գիտի.
Իս ուրիշ կող գացի, ենոնք ուրիշ կող մ'։
Կը քանի Դավիթ Մհերի վերևն.
Մհերն էլ շատ ըմ կը դարնի իր խոր.
Ինչ կ'անիծի իր վորդին։
Ու Մհեր կ'երթա քեռիքնիրու տուն։

34. Ձմբոկն Սուլթանի հրավերն ի մենամարտ. Դավթի յերդումն ու սպանվելը. Խանդութի ինքնասպան լինելը

Ետրից սորա Դավիթ կ'առնի Խանդութ խաթուն
Ու կ'ելնի, կ'երթա կան գալու։
Ինչ վոր կը գառնա, վոր տը գա տուն,
Ճամխին Ձմբոկն Սուլթան կը գա հանդիպ ու կ'ասի.
— Դավիթ, հետըն ա իմ որ, քոն՝ կռիվ մ' ենենք։
Դավիթ կ'ասի.— Ետոր ոլուշաղ կա խիտ ձիկ.
Թող ճնա, երթամ տուն, քոնի որեն գամ քու կռիվ։
Ձմբոկն Սուլթան կ'ասի.— Ին, հերդում երա՝

«Ամց-պինին, Աստված կենդանին,
Մարութա Բանդրիկ Աստվածածին,
Ամչ Պատերազմին վիր Դավթի աչ ճելին,
Իրիք որից սորա կը գամ խիտ քի կռիվ»։

Դավիթ կ'երդնու...
Հենիկ կ'առնի, կը գա տուն, կը մոռնա իր հերդում։

Իրիք որ կ'ըլնի իրիք տալի՝
կ'ինա մխաք, կ'ասի. «Մնացինք հիդումի տակ»։
Կիր ընդիր ի, Դավիթի քեվի Ջաչ Պատերազմին կիրթիր ի։

Կնիկ կ'ասի.— Դավիթ,
Ելի, քու գըլխե լվանք, քի լոզացուցինք.
Ես իրիք տալի կա՝ չիս լոզացի։
Դավիթ ասաց.— Կնիկ, կը լոզանամ,
Հալե ինչ եր, վոր վիր ձի տեսնաս, չտաս իմ իրիս։
Ինչ վոր լոզացավ Դավիթ,
Կնիկ տեսավ՝ կիր ընդիր ի, հնոր քեվ կ'ուտի։
Կնիկ ասաց.— Դավիթ, ես ընչի՞ ընգկնա կլնվի։
Դավիթ կ'ասի.— Ձի՞ իս քի հաղազ ասի՝
Ինչ եր տեսնաս, մ' ասի։

Դավիթ ելնավ, իր խալավ խապնավ, ձին խեժավ, վոր տ'երթիր։
Կնիկ ասաց.— Դա՞ր տ'երթաս։
Դավիթ ասաց.— Տ'երթամ Ջմըշկե Սուլթանի խիտ կռիվ.
Հերդում ճնացիր ի իմ վերինե։
Ու կ'երթա, կը խաղնի կարմունջ, կը լոկկընա։
Ջմըշկե Սուլթան խոփ կը կարմրցուցի,
Կը զարնի ու սիրտ կը ծակի,
Ու Դավիթ կ'ինա դեսի պռուկ։
Ինչ Դավիթ կը մնունի, Քեռակա Ջալալին իր բնբնով՝
Ըղ Դավիթի կը քաշի վիր ուր քամկինն, կը տանի տուն։

Ջանդուտ խանում ինչ կը տեսնի՝
Դավիթ ձրընի մեջ նեկկվիր,
Փանջարից գինք կը քաշի տակ.
Իր գըլխե կը դիպնի վիր ապառաժ քարին,
Ու քար կը փոսկանա։—
Մեկ քիլա խուս կը ծեծին մեջ են քարին։—
Մարդիր կը ժողվին, Դավիթ ու Ջանդուտ կը տանին, քաղին։

Ենոնք քոզ ճնան ենտեղ,
Մինք գնանանք վիր Մհերին։

35. Միհրը Բոխիճների հետ առնում է Գավթի աչյաց վրեժը

Ձմըշկի Սուլթան իր ասքն է կը ժողվի,
կը գա ըզՄհերն ել սպանի։
Ձենով Հոման կը կանչի.— Ո՛, Մհեր, արի,
Սասնոց ձրագ ընցիր ա։
Մհեր քեռուն լսալ ու ելնալ եկավ.
Գիննաց, տեսավ՝ նը՛ խեր կա, նը՛ մեր։
կը քեշի գալ Բանակին Չալալին,
կը խեծնի ու ի՛նքնա, կարմիկի մոտ կը պախկվի։
կը տեսնի՝ Թախուռ-Թախուռ ասքն է՛նքնա դեխ Սասուն։
վերջ մեկ պառավ կը գա, վոր Թոխալ ե։
Մհեր կ՛ասի.— Պառավ, դու դեր ի՛նքնա։
Պառավ կ՛ասի.— Տ՛ինքնա՝ գալդաղ-մանկ դնիմ վեր Մհերին։
Դավիթ երկու լաճ ձի սպանել,
Իս երկու շիրխի գարկել իմ ենոր, իմ սիրտ չխովկել ա։
Ինքնա, շիրխի մ՛ ել գարնիմ Մհերին։
Մհեր պառավ բռնից, ձվից, նիհել գետ,
Ջուար հարդկից ուր քեռիքուրուն, ասաց.
«Եկեք, գացեք, առալին քաշեք սուր»։
Ու կ՛ինքնա։
Ինք Մհեր կը քաշի ուր Թուր, կ՛ինա մեջ ասքն բերին.
Ու հըմեն ել սպանից։
Գրնաց մոտ քեռիք, տեսավ՝
Ենոնք ել հըմեն սրբած։
Ենտեղեն կը դառնա, քեռիքուրու խիտ կ՛ինքնա տուն։

36. Միհրը չի խոսվում հոր կնոջից. արտասված Միհրը ծնողների գերեզմանի վրա. ծնողների խորհուրդը. նա փակվում է վաճա Ագբոս բարի մեջ

Ժամանակ ըս Մհեր կը մնա քեռիքուրու տուն։
Մեկ քեռկնան աչք կ՛ինա ըՄհեր։
Մհեր կ՛ասի.— Ձե՛։
Խիտ ուր ձեռաց չերթա։
Քեռկնիկ կը կանչի,
Մհեր կ՛ինքնա, ջուր կը լցա կնկան գըլխու վերին։
Նեղսատան շիրխի կը դնկնի քեռկնկան գըլխուն։

Քեռկնիկ բերախառնքին կ'ենա.
Ջմհեր առնեն կը մլեն գան.
Մհերն ել կ'երթա ուր խոր ու մոր գերեզմընի վերեն.
Կանչից.

«Ներեկ, վեր ելի,
Ջի Սասնա առնեն մահրում երած.
Երթամ, Սասնա մախլուխ կտրիմ»։

Ներ կ'ասի. «Գընա, վորդի»։
Մհեր կ'երթա մոր գերեզմընի վերեն.
Կանչից.

«Մարթ, վեր ելի,
Ջի Սասնա առնեն մահրում երած.
Ենոնց մարդիր կտրիմ, քեն չեն»։

Մեր կ'ասի.

«Ջե, վորդի, մը կը՛տրի.
Քու ձին խանձի, գընա՛, աշխար կեն արի։
Քընի քու ձին չխըրվի, ազատ կան կը գան.
Ինչ վոր խրվավ, կը ճառա քու տեղ»։

Մհերն ել կան կը գա.
Կ'երթա Վանա ախշար, Ագրու քընրին մեջ կը խրվի.
Ու կը ճառ չուր մկա։

Հովհաննես Թումանյան

Ամբողջ ժողովածու

Պատրաստեց
հրատարակության
Կարապետյան Շահեն

Երևան «Սովետական գրող»

ԱՌԱՋԱԲԱՆ

*Այս պատումի սաղմոցի մասին կա միայն հետևյալ ծանոթությունը՝ «Պատմեց Հայուձորա Անիկ տանտիր Գազարյան Քատնոյ» որի անունն անհայտ է, Սեմիրան Կանայանցին այդ սաղմը և Գյուտ քահ. Ադանյանին,** տպագրել և ոմիկ «Արարատ» ամսագրում (1909 թ. մարտ, մայիս-հունիս համարներում) ուրիշ չկրկու պատումի հետ (№№ Բ և ԳԲ) «Ջոջանց տուն կամ Սասմա ծռեր» ընդհանուր վերնագրի տակ. ապա արտատպվել է 1910 թ. առանձին գրքով մի ընդհանուր առաջաբանով հանդերձ՝ Վազաբշապատում։*

Այս հրատարակության սաղմումը խմբագրությունն է կատարել, բացի մի քանի կտորներից, որ ուրիշ պատումներում չկրկնը նեն։

Գարգ չկրճատ է, որ պատումս սկզբնապես չեղել է բավական կոկ ազատ վոտանավորով, բայց գրի առնողը մնջը խառնել է գրական չկոփված արտահայտություններ, հոդվածական ձևեր, օրինակ՝ «Տավ[ի]թի», փոխանակ ասվորական «Տավթի» ձևի և այլն. ավելացրել և շաղկապներ՝ «վոր», «թե», «և» «բայց», «քանզի», «ու» հոդ. գրել և չգրված «մը», փոխանակ «մ»-ի և այլն, վորով վոտանավորը մասամբ ոչնաշված է։

Գրի առնողի ուղղագրությունը բարբառային արտասանության նկատմամբ ամբողջապես պահված է, բացի մի քանի վրիպակներից և մեծ մասամբ ատարադրի բառերից, վոր վերածված են արևմտյան տառադրության։

Գրի առնողը միահնչյուն ուղղագրություն չի պահած. մինչև իր բառը, նույնիսկ յեռանի յեռանի գանազան տառերով և գրում՝ «ը»—«ո», «ը»—«ու», «ը»—«է», «ը»—«ա», «ջ»—«ճ» և այլն։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

* Տես «Ջոջանց տուն կամ Սասմա ծռեր», 1910 թ. էջ 35։

** Անդ. Սա. Կանայանցի Առաջաբան, էջ Դ. և ԼԱ։

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ *

1. Նախերգանք

«Ո՛րմնյայլ բարեբար Աստված,
Քանամբ շատ եր մեծ թագավորութիւն
Տառնամ ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ Աստղիկ թագավորուհւոյ
Տարիւն ողորմի մը կու տամ, **
Քաղար ողորմի՝ Սանասարինւոյ
Տարիւն ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ Ծուռ Պաղտասարինւոյ
Տառնամ ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ ձոչիկ Մհերինւոյ
Տառնամ ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ Զինով Հովանինւոյ
Տառնամ ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ Թաւրան Վիքոյինւոյ
Տառնամ ողորմի մը կու տամ,
Քաղար ողորմի՝ Տղա Տավիթինւոյ
Տառնամ ողորմի մը կու տամ,

* Գրի առնուն այստեղ ունի մեծայն «Քրիստ Դավիթի խնգամի վիքտաորիայ» մ մ ք.
** Ավելացնում ինք «կու տամ» մ մ ք.

Խաղար ողորմի՝ Պղտիկ Մհերինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ կապտա կողա թագավորուն
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Սաւան խաթունինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Սիւռաթ խաթունինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Կիւլիզար խաթունինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Սիմամ խաթունինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Ճիւա Կիւլակինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Խանումի խաթունինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
Խաղար ողորմի՝ Քանասուն Ճող Ծամինս
Տառնամ ողորմի մը կու տամ,
*Խաղար ողորմի՝ ճրոչն ու պսակինս, մեծն ու մաքուրինս։**

Ջ. Քաջացը թագավորի վրդին առնուած և Սասնա Առոդիկ թագավորի աղջիկ՝ Սաւայիս

*Ժամանակի մեկ** Սասնա քաղքի մեջ*
Մեկ փիր ըզթխար թագավոր մը կ'ելլնի,
Առոդիկ թագավոր
Առոդիկ թագավորուն
Մեկ աղչիկ մը կ'ելլնի չնա տեսակով։
Քաչացոց թագավորուն լաճ
Երազի մեջ կը տեսնա Սասնա թագավորու աղչիկն՝
Վեր իջոր սիրու տեր կ'ելլնի։
Բարեկամութենով Առոդիկ թագավորից
Կ'ուզի ուր խամաթ, չիտար։

---

* Այս խնքանի տողերը, որ տակի ողորմի չասն վերջերում մարդկութեան, մեզք է,—ասաց վարպետը. Բ ա ն ա հ ա յ ք

** Պետք է հասկանալ «ժամանակով» կամ «ժամանակին», այլապէս իր ժամանակ Ե մ բ.

Կ՚ելնէ, ասքեր կ՚առնէ,
Կ՚երթայ վեր Սասնա քաղքին,
Յեղսիը կ՚անէ, կը բերէ ինոր աղջիկն։
Աղջիկն մեկ չեչիտ կլար կ՚իտաս,
Վոր տանէին, պատակ անէին.
Կ՚երթայ, կը մտնէ մեջ յոխտատանին,
Յոխ տուռ կը շինէ, սուտ կ՚անէ։

3. Սանասարի յեվ Բաղդասարի ջրային ծնունդը

Մինչեվ տարի մը երկու կը ձնա մեջ են սուքին,
Յետո վոր չատ կը նեղանա,
Ուր խալայեղին կ՚ասի.
— Պիղչեն տա, երթանք ծովու պռուվ, ուրախութեն անինք։
Ծովու մոտ վոր կը խատնեն՝ չատ կը ծարիքա.
Խալայեղին կ՚ասի.
— Ատածու սիրուն ջուր մը կնտի, վոր խմեմ։
Խալայեղեն չատ կը ֆոտա ջուր չի կնտնի։
Կ՚երթայ, ձիու մը վոտաց տեղ կը դնտնի,
Վոր երկու կուց ջուր կա իներ, կը խմի.
Մեկ թամամ, մեկ կիսատ կուց կ՚ելնէ ջուրեն։
Ելավ, են տեղեն ապտամ՝
Մտավ դներա ուր յոխտատանին մեջ։
Ինեն ամէս, ինեն որ, ինեն սըհաթ վոր լինցավ,
Ատաված երկու աղա խուսր Սասան խաթունին։
Շնած ժամանակ խրնշատակ կու գա, ինոնց անուն կը տնի,
Մեկին Սանասար, մեկին Պաղտասար։

4. Ցեղբայրները մարից հարցնում են իրենց ծագումը

Գնան մ՚ տարին տարա աղեչներ վոր կը ճըոչտնան,
Կ՚ելնէին, կ՚երթան Գնչտնց քաղաքը։
Խետ ճժերաց կը խաղան.

---

* Պահում ենք առաջին հրատարակության տարբեր գրություններըը, ինչպես օրինակ՝ «սուգ»—«սուք», «կնտնի»—«գտնէս», «խալայեղ»—«խալայեխ», «ջուր»—«ջուք», «աղչիկ»—«աղջիկ» և այլն։ Խ մ բ.

Քաչանց ճժեր կը թափեն խոնց վերեն,
Կը ծեծեն, կ'ասեն.— Տաք փիճ եք։
Ձեր բոլոր ինոնց խոսք կը լսեն,
Լալով կ'երթան մոտ ուրենց մեր, կ'ասեն.
— Ցա մեր խոր սալըխն ատւր,
Ցա կ'երթանք, մե կը թալենք ծով։
Մեր կ'ասի.— Վէրտի, ձեր խեր Քաչանց թագաւորն ի։
— Չե, կ'ասեն մոր,— քե վոր մե խեր եղներ,
Խալխ մե փիճ չին ասեր։
Տարի մը ես խոսքով լաճեր կը բըռնպըտի ղեբա։
Տարին վոր կը լմնա,
Լաճերն ել մ' ել կ'երթան Քաչանց երկիր, կը խաղան։
Են տեղաց ոզնք նորեն կը թափեն վերկյաներ,
Կը ծեծեն, քե.— Տաք փիճ եք. տուք ինչի կու գաք մեզ մնդ մնդի։
Գեներա լալելեն կը ատենան, պերեներք կը թալեն մոր պրոգ։
Շատ վոր կու լան, մոր սիժար կու գա, կ'ասի.
— Վէրտիք, տըտարիք չում առավտուն,
Ձե կը տանեմ, ձեր խոր սալըխ կու տամ։

3. Սանասարը ծովից ձեռք և բերում Քաւկու Ջալալին յեվ աղրը

Առավտուն եղավ, խալայխուն ասաց.
— Ա'ռ պիղչան, խեռ տղեյներաց երթանք ծովու պռովն,
Վոր քիչ մը սրտերնիս բացվի։
Յերբ գնացին,
Տղեյներ ուրենցմե գաւառցան ննռեխ խաղալու։
Սանասար տեսավ,
Վոր մեկ կապոտ քոնախ քար մը կըներ ծովու մոտ.
Են քար շուռ խուռ, տկեն ձիու մ' գամ տեղս եղավ։
Վերեն շատ ուրախցավ,
Մոր կանչեց, քե.— Աբի, խորտո բան մը գնաս։
Մեր ասաց.— Տատի, գամ, տեսնամ՝ ինչ ի։
Սանասար ել չտատրավ, վոր մերն խասներ,
Գնաց խզարկ մեջ ծովուն։
Շոլ՝ Առածու խնամքով՝ բացվավ.

Բայց ինչու ձալալին եկավ տուր,
Թամքն Սասունի վերեն պատրաստ.
Կապեն Աթպին, Բամար Ծեհրեին,
Խոտեն Զրին, Խաչն Պատարագին,
Վոր անի վեր ուր աչ ինվին, վոր տըղա չառնի,
Թուրն կնժակին, Քոռ Թրվիկ գոռղեր, ծանոթ ըսմիր՝
Բիթլիսն ծովուց պատրաստ տուր եկավ։

6. Մայրը Սանասարին պատմում և յեղբայրների ջոյին ծագման մասին

Սանասար խոսավ, գոռմն տրեց ձիու բերան, ասաց.
— Մերե, արե, իմ խորն սալըխ տուր,
Ջեհեն՝ քե ծով կը ինալիմ,
Մերն ասաց.— Վերթի, տուր խեր չունես։
Տղեն ասաց.— Ցես խո քոռերի, ինչ տկեն չիմ ելի.
Հալբաթա յես մարտուց ելեր եմ։
Ասաց.— Վերթի, յես մեկ ժամանակ
Ցես իմ խալայեխին եկա հասեղ ուխտ անելու.
Շատ մը ծարվեցա, խալայեխին ասի՝
Մեկ ջուր մ' կնաի ձիկ։
Խալայեխեն են զարբար շատ ջուց,
Ջիու մ' վոտաց տեղ չուր կնասավ,
Ցես ել են ջուր խմա, մեկ կուց ինամամ, մեկ՝ կիսատ։
Ասաված ձե են չրից իսուր ձիկ.
Տուր են ինամամ կցիցն ես,
Ծուռ պաղատասար են կիսատ կցիցն ի։
Թե վոր կը խաղցուցես,
Իմ խոր անեն վոր կուչ իկեր եմ,
Մինչեվ հասր ըսկուն կուչ եմ.
Ցեվ ձեղիկ ծնելու ժամանակն լինաեն մոտ ձիկ չիկի։
Մենակ խրեշտակն եկավ, ձե անուն տրավ։

7. Մայրն ու յեղբայրները գալիս են Սասուն

Տղեն ասաց.— Մենք մեր եյուրեն խմացանք.
Տե՛, արե, ուր քոռ եյուրեն խմցուր մեզի.

Հալբաթա տու խեր ունիս։
Մեր ասաց.— Վերան,
Յես Սասնու Աստղիկ թագավուրու աղջիկն եմ։
Ասաց.— Մարե, տու քու խոր տուն գիտես դոր ի,
Վոր երթանք են տեղը։
— Գիտեմ, ասաց, Սասուն ի։
Վորտեն ասաց.— Տե, արե մեյտեղ խեծնենք, երթանք Սասուն։

Սանասար խեծավ, մերն առից իտել,
Գաղտասարն իսկեց ձիու հաձկով,
Գնացին Սասնու քաղաք։
Վոր քաղքին մոտացան,
Ալնճկլեն տարան Սասնու թագավուրուն,
Թե.— Քրո աղջիկն եկավ, երկու շահզադայ էլ իտու։
Աստղիկ թագավոր չուս են որ
Ըսկուս լացեր եր ուր ախչկան համար,
Վոր աչքեր ջնավեր եր։
Յերբոր լսավ, շատ ուրախացավ.
Ելավ գնաց ախչկան տեմ։
Յերբ տեսավ, վոր ախչկան իտու մարտ չկըներ՝
Մենակ երկու լաճերն ին, շատ տումավ։
Սանասարն ասաց ուր ճրոչ պապոչին.
— Տու ինչի յես տումիր։
Թագավորն պատասխան տվից,
Թե.— Տու՛ք Քաչանց թագավուրու լաճերն եք, շահզադայ եք։
Գետք եր, վոր իտու ձի երկու խարիր ձիավոր էլներ.
Կա-չկա, վոր տու՛ք խոռվեր, իկեր եք։
Ասաց.— Մենք չենք խոռվե.
Մենք վոր կանք, խրնդենից ծներ ենք։
Քրո աղջիկ մինչեվ մկայ էլ կուլա ի.
Ինոր համար մեր մեր իրնասնց իսկեցին,
Մե էլ կ'ասեն, Թե՝ տու՛ք փիճ եք։
Ես խոսքի համար էլանք եկանք ծովու քընար,
Մեր մոր շատ աղաչեցինք, վոր մեր խոր սալըխ տեր։
Մեր մերն էլ ես ջնար խոուր մե։
Մենք մկա իկեր ենք քրո տուս.
Թե մե կը սիրես, մենք քրո գավակներն ենք։
Ըսուց սորա էլ մի վախնա,

Քաչանց երկրից էլ մարտ չի կենա գա,
Քրո աղջիկը հետը անե, տանե։
Ես խոսքի վերեն Թագավոր չատ ուրախացավ.
Մեկ ոգա խոսուր Սանասարին, մեկ՝ Պաղտասարին.
Մեկ էլ խոսուր ուր ախչկան։
Պաղտասարի սանիաթ են եր,
Վոր չում իրիկուն կ'երթեր, ճան կը խաղեր։

Բ

ՍԱՆԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

8. Սուսաթի սիրո ճամակը Սանասարին

Քաչանց Թագավորու ախչիկն՝ Սուսաթ խաթուն,
Վոր քյոռասուն ճող ծամ ուներ,
Մեջ երազին դինք տեսավ Սանասար
Ցավ չատ սիրու տեր ելավ վեր ինոր։
Ախչիկն խմացավ ես բան,
Ելավ ուր սուսաթն գրեց մեջ Թղթին,
Իտու երկու մշակու ձեռք,
Վոր տանեն, Թալեն Սանասարի երտխան վեր։
— Չեզնեմ, չիմանամ, ասաց,
Վոր Թալեք Պաղտասարի երտխան վեր։

Մշակներ վոր տարան, չգիտցան վուրու երտխան էղնելն,
Տարան, Թալեցին Ծուռ Պաղտասարի երտխան վեր։
Պաղտասար առավոտուն վոր քնուց վեր ելավ,
Տեսավ նոա Թղթի վրայի սուսաթն,
Չամա խելքն գնաց, արուն էլ քթից փռթավ, եկավ։
Սանասարն ելավ տուբա, տեսավ,
Վոր ուր ախպոր աստղն նվաղեր եր,
Անդամ կտոր մ' խոդի մնացեր եր մեջ,
Վազեց, գնաց Պաղտասարի հետն.
Սուսաթն վոր հետեղ տեսավ,
Ծալեց, խոր ուր ծոց,
Ախպերն խոսնեց վեր, քիթ բերան լվաց։

Պաղատասարն էլ չխարցուց են պատկերք,
Վազեց, դնաց ճան խաղալ։

Թ. Սանասարք հանապարհին գնալի Քաջացց յերկիրք հանդիպում ի ալեվորին

Սանասար գնաց մոտ մեր.
Ասաց.— Մարե, յեմ պատրաստուքեն տես,
Յես պիտի երթամ Բաչանց երկիր.
Թուղք իկե իմ խոսի։
Մերն ասաց.— Վերտի, մե երթա.
Են երկրեն անջախ փոքանք, եկանք։
Տղեն ասաց.— Ջե, պիտի երթամ,
Թե վոր իմ դլեխեն էլ գնացեր ի։
Մեր պատրաստուքեն տեսավ, պռծավ.
Սանասարն էլ թռավ ձին, խնծավ,
Համա քշեց տեխ Բաչանց երկիր։

Քառավ չորս համխա խառնուրտի մ' մեջ.
Տեսավ, վոր վեր ըղթիար մարդ մը նստե ենռեղ.
Ասաց.— Բարեվ քե, բարքալըխ։
— Առածու բարին քե, Սանասար,— ասաց խալխորն.
Տե, ձիուց իչի վեր, քե խոսք մ' ունիմ ասելու։
— Բարա, ասաց, ասե վեվ ես, վոր ձիկ կը ճանչնաս,
Թե չես Սանասարն եմ։
Ասաց.— Յես եմ խրնչտակն Առածուն,
Վոր նստեր եմ ըստեղ, ճամպախներ կը բաժնեմ։
Դըժար պիտի երթաս, Սանասար։
Ասաց.— Ի'երթամ Բաչանց երկիր.
Ձիկ մեկ բարի ճամպախ մ' նշանց ասար։
Են ել ասաց.
— Թե նստ ճամպախն երթաս, կ'ելնես Բաղտավոր.
Թե վոր մեկալ ճամպախն երթաս, կ'ելնես Բաչջար։
Ամա թե վոր երթաս Բաչանց երկիր,
Ենռեղ ջնաս կը քաշես։
Սանասարն ասաց.— Ենռեղ պիտի երթամ,
Թե վոր պիտնամ իմ վիզ իրենք տեղով կտրին,
Թե վոր ուրիշ խրատ մ' ունիս, ձիկ ասա։
Են ել ասաց.— Վերտի, վոր կ'երթաս,

Ինչոր քե ասաս կու գա՝
Թե քար, թե թուփ, թե հայվան, թե չանավար,
Ըմենուն ալ բարով ասաս, առանց բարիվի չընցնիս.
Թե վոր առանց բարիվի ընցար,
Են երկիր սհրի ի, քե շատ ջնաս կու տար
Սանասարն ասաց.— Մնացիր բարի։
Ելավ, խնծավ, համա քշից սեխ Քաչանց երկիր։

10. Սանասարը մտնում և նստս բախչեն, փախցնում Սուտաթին յեվ կռվում Պաջանց թագավորի զորի հետ

Գնաց չում քաղաք, խառավ թագավորու ծառ բաղչեն.
Տեսավ, վոր Սուռաթ խաթունն
Ծիս քնուն խալայխի վեր ախպրին նստեր եր։
Ելավ Սանասարն տխմաց, տեսավ՝ ըսկուն խորտա եր,
Վեր երազի մեջ տեսածն յոթնատատիկ ավելի եր։
Ասաց.— Սանասար, խազար ափսոս քըս չախելուքինեն,
Վոր ելար եկար իմ խով։
— *Ի՞նչ տխմացով ափսոս կ'ասես։*
Սուռաթ խաթունն ասաց.
— *Են ապրվ, որ կը վախնամ՝ զարնեն, քե սպանեն.*
Ենա երկիր սհրի երկիր մ' ի։
Են ել չուզար տվեց, ասաց.
— *Երկեն խոսք պետք չի,*
Թե վոր կու գնս, բոլ ձիուս վերեն, քե տանեմ.
Թե չես իզա, վերջի խոսք տուր, յես տառնամ, երթամ։
— *Ինչպես չկամ, ասաց Սուռաթ խաթունն,—*
Ձիկ չան մը կա քըս ուղուրին ի։
Ցես քե կանչեցի, բերի, վոր խնա քե գնաս։
Ասաց քե չե, համա քոռավ ձիու քամակ.
Սանասար քշեց, դնացին։

Վեր համխուն ինչոր ըռաստ եկավ,
Բարով խոուր Սանասար՝
Թե քար, թե թուփ, թե չանավար,
Մինչեվ յեղրեց են երկիր։
Ետեկ մեկ մուտատ չանավար մ' ըռաստ եկավ,

Ինոր բարով չիտուր
Են ջանավարն էլ ելալ խնա կրկնուց,
Բանձր ձենով կանչից.— Հա, տարան,
Սանասար Բաղասուն Ճող Ծամ աղջիկն տարավ
Ես ձեն քարն լսից, ալալ թփին,
Թալին՝ ծառին, ծառն՝ հայվանին,
Զուռ ձեն խասալ մեջ քաղքին
Բաղաք քաղքով՝ մեկ-մեկին խապար ալին,
Հեծել խնծալ, բաղմացալ,
Ինգան Սանասարի խումին
Ծովու ափափին խնասր կըներ,
Երկնուց ասաղին խնասր կըներ,
Գետնի բուլսին խնասր կըներ,
Հեծլին՝ խնասր չկըներ
Սանասարն եր՝ աղջիկն տարավ,
Իսի մեկ բանձր սարի մ' գլխ,
Տառցալ տեխ խնծել, քաշից Թուրն կնծակին, ասաց.

«Հիշամ քե, խերն կենսանին,
Մարուքա Բանձր Ասուլածածին,
Ինչն Պատարագին վեր աչն Թևին»

Ցոքն որ, գիշեր-ցերեկ
Անոքի-ծարավ բրտից ետ խնծել

11. Բաղդասարն ոգնություն է հասնում Սանասարին յավ չնաշխելով յեղբորը՝ կռվում է նրա հետ

Ավուր մեկ Պաղտասար ճան խապալու մեջ,
Աչքն խակից վեր Սանասարի ասաղին,
Տեսավ, վոր ախպոր ասաղն նվաղել է
Չամա ճանեքն իքալ,
Վազելավ գնաց ուն՝ մոտ ուր մեր, ասաց.
— Տա՛ յեմ ախպերն դրծր ես ոգորկեմ
Ասաց.— Ցես տեղ չըմ ոգորկես
— Ի՞նչըխ չես ոգորկես.
Ջե՛, կա՛. իմ ախպոր ասաղ նվաղ է,
Մնացե փշուր մը խոպին
Ասաց.— Աղերդն ասեմ.

Քըռ ախպեր դնաց Քաչանց Երկիր։
— Քըռ տուն ավիրի, ասաց Պաղտասար,
Ինչի ձիկ խապար չտվիր,
Վոր յես էլ մեկտեղ երթի։
Տարցավ ասաց. — Մնրե,
Ի՞նչ սիլախ ի Թողի ըսահեղ։
— Մեկ թևթով ըռըմ։

Առավ ուր ըռըմ, պլըլկվավ տեխ Քաչանց Երկիր.
Աչք Թարթելու չափ խառավ ախպեր հավարին։
Զառանց տեսավ մեկ սեվ ձիավոր ըմ,
Վոր արընն մեջ Թաթըխվիր ի,
Ինկե մեջ խնձելին, կը կոթի։
Կանչում մը կանչեց, խոռը վեր սեվ ձիավորին,
Ասաց.— Պատրաստ կաց,
Կա՞չկա, ասե յես իմ ախպերն սպանե,
Քեռ խառա՝ քըռ խոպին Աստծուն Թասիմ կ'անեմ։
Տարավ, իրե մեկ գնող մ' իրարկ մեջ ախպոր սրտին.
Ախպեր ինկավ վեր ձիու առրուն,
Ամա գնաց շուռ Թռավ մեջ Թամքին։
Տարցավ գնող մ' ել իրարկ, Թամքից խոկեց ասե քա.
Ախպերն նորեն շիտկվավ մեջ Թամքին,
Ամա ձեռաց ելավ։
Սանասարն սկսեց յեզանակով մ' ասել.

«Որննյալ բարեբար Աստված,
Քնամք շատ ի մեծ Թալանուրուն.
Դրբինն նման եր մեր Շուռ Պաղտասարին,
Թամբինն նման եր մեր Շուռ Պաղտասարինց։

Ես խոսքի վերեն Պաղտասար ճանչցավ,
Վոր ուր ախպերն եր, ասաց.
— Տե՛ս արնոտվեր ես, քե չճանչցա.
Տե՛ս ինչի զիկ չճանչցար,
Խապար չտվիր, վոր յես քե զրար չիտայի։

12. Պաղտասարը կոտորում է բռնամիցներին. Սաճատարի հարսանիքը

Տարցավ Պաղտասարն ասաց.
— Ախպեր, են անղեն նեճիր բիրիբ ես, չե տառապակ ես իկես։
Ջուդար ավավ, թե.— Բաչանց Թագավորի աղջիկն բիրեր եմ,
կա՛ն ենա բանձր սարի գլոխն իչ
Առաց ուր ախպեր, տարավ մոտ ախչիկն.
Չատանց աչքով արաց ախչկան,
Վոր գա՛ ուր ախպոր ձեռք։
են ել ալիխանչա եկավ Պաղտասարի ձեռք։
Պաղտասար վերեն չատ ուրախացավ։
Ենտեղեն ասաց.— Ամրաս,
իմ ախպոր խաղիներ արուհից լիմ։
են ինացած ասքարն ինաց յեմ վայ։
Ասաց թե չե, համա առաց ուր ըռըմ, տրեց վեր թիվին,
Դնաց, ինգավ մեջ խոժելին, կտրեց յոթն որ.
Մենակ են իթոզ, վոր անեն չեր իկե,
Մեկ խասրաթներ մը չփոխուց։
Տարցավ, գնաց մոտ ուր ախպեր, ինոնց խոժուց,
Ինքն հառաչադեմ գնաց, մոր խասրաթ տարավ,
Թե.— Բաչանց Թագավորի ախչիկն բիրեր ենք.
Նաղարեն-դուռնեն հաղըր եչեի, վոր խարտնիս անենք։
Մերն եր, քաւաուն ձեռք նաղարա-դուռնա բերել տվա։
Բաղքցիք զըմեն ժողվեց.
Բաւաուն որ, քաւաուն գիշեր խասնիս արին,
Ախչիկն պահեցին վեր Սանասարին։

Գ

ԴԱՎԹԻ ՅԵՎ ՄՄՐԱ ՄԵԼԻՔԻ ԿՈՒԻՎԸ

13. Սաճատարի վոդիները

Ժամանակից սորա
Ասված իրեք տղա իտու Սանասարին.
Առչնեկ Մհեր, միչնեկ Ջենով Հովան, պատիկ ել Թաւլան
վեքռնա-

Մհերն յերբ չափն առնց,
կարգվեցավ Սինամ անվոր ախչկան մը հետ
Մեկել ախպերներ իրարու խոխվեն խաստեն.
Ջինով Հովան պահկվավ խետ կռվիդար խաթունին,
Թառլան վնքրն ել խետ ճռռա կռլակինա

15. Մհերի վոդիները՝ Մելիք յեվ Դավիթ

Ժամանակ անցիր ևր,
Մարթա թագավորուն տղա ծնած չեր.
Ոլոխկեց Սասնա քաղաք,
կարիճ Մհերն կանչեց ուր մաչկա, ասաց.
— Մհեր, դիտե՞ս, քե ինչ ապով եմ կանչե
— Չե, ասաց, թագավոր ապրած կինա, չեմ դիտե
Թագավորն ասաց.— Իմ յաչն ընցեր ի,
Չում եսոր Ասոված ձիկ զավակ չավե.
Յես չըհել կնիկ մ' ունիմ,
Տռռ ես պիշեր պիտի երթաս իմ կռղվենք,
Վոր ձիկ տղե մ' ելնի,
Իմ թագավորութին պահի,
Իմ դռշմանքաիկաց դեմ կայնի
— Ետա չեղած բան ի, ասաց Մհեր.
Տռռ անորա տաճիկ ես, յես քրիստոնյա,
Ինչպես կանամ ժանե քրո կռղվենք
Թագավորն ասաց.— Մհեր, յես քե սիրեր եմ,
Խաթրով ելե, պիտի երթաս,
Չորով ելե, պիտի երթաս
Մհերի չարեն կտրավ,
Գնաց իրոր կնկին մոտ
Առավոտուն յերբոր ելավ,
Իզին ուզեց թագավորուց, գնաց ուր քաղաք
Ինն ամիս, ինն որ, ինն սըհաթ վոր քմըմավ,
Թագավորու կնկին տղե մ' ելավ.
Անուն իտիր Մելիք

Մհերին ել չում հն որ պատուղ չկըներ
Վեց տարին ասրա Մհերին ել տղե մ' ելավ.

Անուն խոի Տավիթ,
Տավիթի քաոսունք տել չեր լցվի, Մհերն մեռավ։

15. Սիճամի սուգ մռնելը

Սինամ՝ Տավիթ մեր, կոնդակ իջող մեջ տախտին, ասաց.
— Իռնվ Մհերին սրեվալոս ձիկ խարամ եչնի։
Յոթոտով ներս մտավ, սուգ պահնց։

16. Դավիթը Մսրա Մելիքի տանը. ճա բռնում ե Մելիքի հոլը

Ելան Տավիթ, վոր շատակեր եր,
Ուրնք էլ ծիծ չունեյին,
Իռոր խամար տվին երկու մշակի քամակ,
Վոր տանեն Մսրա Մելիքի մոր շախելու։
Մելիքի մեր ասաց.— Ծագմեր բարով եք իկեք.
Ես էլ իմ գավակն ի, կը շախեմ։
Յերբ ծիծն իռոր բերան,
Տաճկի ծիծ եչնելու խամար՝ Տավիթ չծծեց։
Սերն էլավ, տավրի կաշ լցուց մեջ կուռշին, Տավիթին կերցուց.
Ջուռ Տավիթն էլավ իրենք տարեկան, կաթից կտրեց։

Են ժամ Մելիքն եչեր եր կարիճ ջրհել։
Քաոսուն կիռոր արճիճ արեր եր ուր հոլ,
Որ իրենք տեր կը գարներ, կը տաներ տալի գլոխ,
Ջիավորներ կ'երթին, կը բերին։
Տավիթ խարցուց ուր մոր.
— Իմ ախպեր Մելիք գըմր կ'երթա հըմեն որ։
Ասաց.— Կ'երթա հոլ խաղալ։
Տավիթն ասաց.— Ձես էլ պիտի երթամ, սենր անեմ։
Մելիք եկավ տուն, տեսավ, վոր Տավիթ կու լեր։
Լալու պատճառն մոր խարցուց։
Ասաց.— Վռնտեր, կ'ասի՝ պիտի երթամ,
Ախպորս խաղն սենր անեմ։
Մելիքն ասաց.— Մարեխ, թող չիգա։
Են մեր գլխուն պատուխաս պիտի եչնի։

Տավիթն՝ չում իրենք որ միչտ լալուն խամաթ,
Մերն ասաց.— վ՛րտաի, թող մշակներ չկեն,
Բիրեն, սհեր անի, զարմր չունի։

Ցերր Մելիք հաղ կը զարներ,
Գետին սելի աղուբի պես կը ճղվեր։
Տավիթ գնաց, մտավ են աղուբի մեջ։
Մելիք չորս մարտ ողորկեց, վոր Տավիթ վերուցնե.
Ենչափ ջախտ արին, չկարցան։
Ինչ վոր մարտ մ՛ չի կանա ծառն ուր քոքից տուր քաշել։
Ասաց.— Թող ավեք, յես իմ հաղ պիտի զարնեմ.
Թե վոր տիպավ ինոր՝ ինչըխ կ՛ելնի, թող ելնե։
Մելիք վոր հաղն իզարկ,
Տավիթ ձեռ թալեց, հաղն բռնեց,
Տրավ ուր ծնկան տակ, պահեց։
Զիավորներ շատ փուռեցին տաշտի մեջ, չդնատան։
Տավիթն են ժամանակ հաղ խառնեց տուրս, թալեց մեյդան։
Մելիքն վոր տեսավ, են ժամ արդոխավ, գնաց տուն։

17. Մելիքը փորձում է Դավթին կրակով յեվ չամչով

Մերն եկավ, ասաց Մելիքին.
— *Վ՛րտաի, ինչի՞ յես բարկացե։*
Ասաց.— Ձի յես քե ասի,
Են չանորտին մի ողորկի մոտ ձիկ.
Իմ հաղ բռնեց պահեց, քեզի կոտրեց։
Ջում են տղան չդինեք,
Ցես ինոր արուն չխմեմ,
Իմ սիրտ չի խոլնա։
Մերն ասաց.— Վ՛րտաի, են տղայ ի, հիմար ի,
Ուր արածին խելք չի խանդի։
— Թե վոր ըսկուն ի, ասաց Մելիք,—
Ամեն մ՛ չամչեր, ամեն մ՛ եր կլրակ տիր առջեվ.
Թե վոր ձեռ տարավ տեխ կրակ,
Ցես կը պիտանամ, վոր հիմար ի.
Թե վոր տեխ չամչեր տարավ, խելացի ի։

Զամիչ ինան կրակ տրին Տավթի առնել։
Տավթի ձեռ պիտի պարզեր տեխ չամիչ,
Յրեշտակներ ձեռ բռնեցին,
Յոթնեցին մեջ կրակին։
Կրակ կտավ մաղը, ձեռն իրիցավ.
Տարավ, տրավ բերան, լեզուն ել իրիցավ։
Ինոր խամար Թլոլ Տավթի կ'ասվի։

18. Մելիքը պատվիրում է մեակներին սպանել Դավթին։ Երանի չեն սպանում չեզ ճապատակի արյուն են տանում, տալիս Մելիքին

Մերն ասաց.— Տեսար, տգե,
Ինչըվա ձեռ տեխ կրակ տարավ։
Մելիքն ասաց.—Չե, մարև,
Յես տեսա, վոր ձեռ տարավ տեխ չամիչ,
Ամա խրեշտակներ բռնեցին, տարան տեխ կրակ։
Զում ինոր գլոխ չկարնք,
Մեկ գիմշու կուտոշով ինոր արուն չխամեմ,
Յեվ ինոր շապիկ չում չխաթխանք մեջ արընին,
Զքսնք իմ իրևա՝ իմ սիրտ չի խուվտա։
Մերն ասաց.— Թող ինոր խոր մշակնները
Առնեն գինք, տանեն տաշտ, գինեն,
Ինոր ձեն չինի իմ ականճ ու յես պատռեմ։

Մշակներ առին, տարան տաշտ.
Տրին վեր կաթեճին, վոր պիտի գինեյին,
Տավթին ասաց.— Ի՞նչ կ'անեք։
Ինոնք ել ասին.— Քե պիտի գինենք,
Քրտ արուն տանենք Մելքին, խոմե, վոր սիրտ խուվտա։
Տավթին ասաց.—Յես անտեր, խեղճ տղա յեմ, ձիկ մեք գինե.
Իմ տեղ ուրիշ ջանավար մը գնտեք, գինեք,
Տարեք, Թող Մելիք խոմե, սիրտ խուվտա։
Ես խոսքին խավնեցան, իրիշկեցին,
Տեսան, վոր ջանավար մ' չկըներ են տեղրանք,
Տավթին տեսավ, վոր ենտեխ լապտրակ մ' կա, կը փախնե.
Ելավ, փոթավ խոնվին,
